

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՄՆ-ՈՒՄ

Երևան
2010

ՀՏԴ 001:941 (479.25)
ԳՄԴ 72+63.3 (2Հ)
Հ 307

Հ 307 Հայ համայնքն ԱՄՆ-ում - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2010.
- 220 էջ:

Աշխատությունում լուսաբանվում են ԱՄՆ հայության ներկայիս գիտական ներուժին, գիտակրթական ոլորտի զարգացման գործում հայ գիտնականների ու հայագիտական կենտրոնների ունեցած ներդրումներին առնչվող հարցեր:

Ներկայացվում է Միացյալ Նահանգներում լոբբինգի ինստիտուտի ձևավորման և հետագա զարգացման իրավաքաղաքական հիմքերի վերլուծությունը: Ուշադրություն է դարձվում ԱՄՆ հայկական լոբբիստական խմբերի ու կազմակերպությունների գործունեությանը, ԱՄՆ որոշումների կայացման գործընթացի վրա հայկական լոբբինգի ազդեցությանը վերաբերող խնդիրներին: Համեմատականներ են անցկացվում երկրում գործող հայկական և այլ էթնիկ լոբբիստական խմբերի (թուրք-ադրբեջանական, հունական, հրեական) գործունեությունների միջև:

Գիրքը նախատեսված է վերլուծական հանրության և ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀՏԴ 001:941 (479.25)
ԳՄԴ 72+63.3 (2Հ)

ISBN 978-9939-825-06-9

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2010
© «Նորավանք» ԳԿՀ, 2010

Գիրքը հրատարակվում է
ՀՀ Միջուկային նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» ԳԿՀ փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա

Հեղինակային խումբ՝
Կարեն Վերանյան
«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների
կենտրոնի ավագ փորձագետ

Հայկարամ Նահապետյան
ԱՄՆ-ում Հ1 հեռուստաընկերության
սեփական թղթակից

Արեստակես Միմալոյան
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական
կենտրոնի ղեկավար

Տիգրան Ղանալանյան
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական
կենտրոնի փորձագետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----|
| ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ | 7 |
| ԳԼՈՒԽ 1. ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ | 11 |
| ԳԼՈՒԽ 2. ԱՄՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ | 33 |
| ԳԼՈՒԽ 3. ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՄՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ՀԱՅԱԶԳԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ | 46 |
| Ամերիկյան լրատվամիջոցներում աշխատող հայազգի լրագրողները | 62 |
| ԳԼՈՒԽ 4. ԼՈՐԲԻՆԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ. ԼՈՐԲԻՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ | 70 |
| Լորբինգի ինստիտուտը | 70 |
| Լորբիստական խմբերն ու նրանց գործունեությունը | 75 |
| Էթնիկ լորբիստական խմբեր | 83 |
| Լորբինգի իրականացման տեխնոլոգիաների շուրջ | 88 |
| Լորբիստական գործունեությունը ԱՄՆ նահանգային մակարդակներում | 91 |
| Միացյալ Նահանգների լորբինգի ինստիտուտի իրավաքաղաքական հիմքերը | 94 |
| ԳԼՈՒԽ 5. ԱՄՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐԲԻՆ. ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄՆ ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԼՈՐԲԻՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ | 113 |
| Ամերիկայի հայկական համագումար (Armenian Assembly of America) | 115 |
| Ազատության աջակցման ակտի 907-րդ բանաձևը | 119 |
| Հումանիտար աջակցման միջանցք ակտը | 124 |
| Հայ-ամերիկյան քաղաքական գործողությունների հանձնաժողով (The Armenian-American Political Action Committee) | 126 |
| ԱՄՆ-Հայաստան հասարակական հարցերով հանձնախումբ (U.S.-Armenia Public Affairs Committee-USAPAC) | 128 |
| ԱՄՆ հայ ազգային կոմիտե կամ Հայ դատի հանձնախումբ (The Armenian National Committee of America-ANCA) | 129 |
| Հայկական ազգային կոմիտե քաղաքական գործողությունների Հանձնաժողով (The Armenian National Committee-Political Action Committee-ANC-PAC) | 131 |
| Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախումբը (Congressional Caucus on Armenian Issues) | 132 |

| | |
|--|-----|
| Որոշ տվյալներ արցախյան լոբբիի վերաբերյալ | 147 |
| Թուրքական լոբբի | 148 |
| Թուրքիայի և Միացյալ Նահանգների թուրքերի հարցերով կոնգրեսական հանձնախումբ («Congressional Caucus on Turkey and Turkish Americans»-Turkey Caucus) | 154 |
| Թուրքիայի հարցերով կոնգրեսական հետազոտական խումբ (Congressional Study Group On Turkey) | 160 |
| Ադրբեջանական լոբբի | 163 |
| Ադրբեջանական կոնգրեսական հանձնախումբ | 164 |
| Այլ ազդեցիկ լոբբիստական կոնգրեսական խմբեր. Հունական լոբբի | 169 |
| Հրեական լոբբի | 172 |
| Հնդկական կոնգրեսական հանձնախումբը | 176 |
| Վրաստանն ակտիվացնում է լոբբինգն ԱՄՆ-ում | 177 |
| Հավելված 1. ԱՄՆ և Կանադայի հայ բողոքական համայնքները | 182 |
| Հավելված 2. ԱՄՆ և Կանադայի հայ կաթոլիկ համայնքները | 190 |
| Փաստաթուղթ 1. Statement on Signing the FREEDOM Support Act October 24, 1992 | 196 |
| Փաստաթուղթ 2. H.R.942 -- Humanitarian Aid Corridor Act (Introduced in House - IH) | 199 |
| Փաստաթուղթ 3. Text of H. Res. 252: Affirmation of the United States Record on the Armenian Genocide Resolution | 202 |
| Փաստաթուղթ 4. Testimony by Van Krikorian, Counselor, Armenian Assembly of America, Inc. Subcommittee on State, Foreign Operations and Related Programs Committee on Appropriations, U.S. House of Representatives, March 25, 2009 | 209 |

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայերն ԱՄՆ-ում հայտնվել են դեռևս 17-րդ դարի առաջին կեսին, սակայն համայնքը ձևավորվել է 19-րդ դ. 70-ական թթ. վերջին: Հայերը զանգվածաբար ԱՄՆ են գաղթել 1890-ական թթ., Օսմանյան կայսրությունից, սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը (1914-1918թթ.) ԱՄՆ-ում բնակվում էր 60 հազ. հայ, 1915թ. Մեծ եղեռնից հետո (1920-1924թթ.) ԱՄՆ է գաղթել շուրջ 21 հազ. հայ, ներգաղթի նոր ալիք է եղել Երկրորդ համաշխարհային պատերազմից (1939-1945թթ.) հետո, ապա՝ 1950-ական թթ., որը մեծ ընդմիջումներով շարունակվում է ցայսօր: 1994թ. ԱՄՆ հայերի թիվը հասել է 1 միլիոն մարդու, 2003թ.՝ 1.200.000-ի, 2006թ.՝ 1.270.000-ի¹: Աշխարհի ամենահայաշատ երկրների թվում ԱՄՆ-ը զբաղեցնում է (2003թ. տվյալներով) 3-րդ տեղը՝ զիջելով միայն Հայաստանի Հանրապետությանը (3,1 մլն) և Ռուսաստանի Դաշնությանը (2,8 մլն):

Հայերը հիմնականում կենտրոնացած են այնպիսի նահանգներում, ինչպիսիք են Կալիֆորնիան, Մասաչուսեթսը, Նյու Յորքը, Նյու Ջերսին, Ռոդ Այլենդը, Միչիգանը, Ֆլորիդան, Փենսիլվանիան, Օհայոն, Վիրջինիան, Տեխասը, Լուիզիանան և այլն:

Միացյալ Նահանգների հայության համայնքային կյանքի կազմակերպման ու համակարգման առաջին լուրջ աշխատանքներն իրականացվել են 19-րդ դարի վերջերից, երբ ԱՄՆ արտագաղթած հայությունը սկսեց ներկայանալ որպես համայնք: Միացյալ Նահանգներում բնակվող հայության առաջին


¹ Մալխասյան Մ., Հայերն աշխարհում, Երևան, 2007, էջ 94:

կազմակերպությունների շարքում առանձնացվում է առաջին հերթին Հայկական միությունը, որը ստեղծվել է 1886թ. Նյու Յորքում՝ Միացյալ Նահանգների հայության կազմակերպման, համախմբման ու ազգային ինքնության պահպանման նպատակներով: Այդ ժամանակաշրջանում են նաև սկզբնավորվում ԱՄՆ հայության քաղաքական ինքնակազմակերպման առաջին հիմքերը. 1890թ. հիմնադրվեց Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, իսկ 5 տարի անց՝ 1895 թվականին, գործունեությունը սկսեց Հայ հեղափոխական դաշնակցության ԱՄՆ տեղական կազմակերպությունը: Ավելի ուշ՝ 1919թ., հիմնվեց Ազգային ռամկավարական միությունը, որը 1921թ. դարձավ Ռամկավար ազատական կուսակցություն:

Ստորև ներկայացվում է Միացյալ Նահանգների հայության թվաքանակի զարգացման դինամիկան 1890-2006թթ.:

Պատկեր 1

Հայությունն ԱՄՆ-ում 1890-2006թթ., հազար բնակիչ¹



¹ Armenian American, Number of Armenian American population, http://en.wikipedia.org/wiki/Armenian_American

1908թ. գործունեությունն սկսեց նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության ԱՄՆ շրջանային վարչությունը, որն իրականացնում է կրթական, մշակութային, բարեգործական, մարզական և այլ բնույթի հայանպաստ գործունեություն: Հիմնվեցին հայության այնպիսի հեղինակավոր կազմակերպություններ, ինչպիսիք են Հայ օգնության միություն կազմակերպությունը (Նյու Յորք, 1910թ.), Ամերիկայի հայ ազգային միությունը (Բոստոն, 1917թ.), Հայ դատի հանձնախումբը (Ուոթերթաուն, 1918թ.), Միացյալ Նահանգների մտավորականության գիտակրթական ներուժի համախմբման և ԱՄՆ հայությանը հայեցի կրթելու նպատակներով ձևավորված Ամերիկահայ ուսանողների միություն կրթական և բարեսիրական կազմակերպությունը (Նյու Յորք, 1910թ.) և այլն¹:

ԱՄՆ հայության ինքնության պահպանման, համայնքի զարգացման հարցում կարևոր դեր են կատարում 1972թ. Վաշինգտոնում հիմնադրված Ամերիկայի հայկական համագումարը և Հայ դատի հանձնախումբը, որոնք, մասնավորապես, ներկայացնում են Հայության և Հայաստանի շահերն ամերիկյան պաշտոնական աստյաններում: Ամերիկյան տարբեր քաղաքներում մասնաճյուղեր ունեն Թեքեյան, Համազգային, Նոր սերունդ մշակութային միությունները՝ իրենց գեղարվեստական խմբերով, ակումբներով, դպրոցներով:

Միացյալ Նահանգների մի շարք համալսարաններում՝ Կալիֆորնիայի (Լոս Անջելես, Ֆրեզնո), Հարվարդի, Միչիգանի, Կոլումբիայի, Փենսիլվանիայի և այլն, գործում են հայագիտական ամբիոններ և դասընթացներ: Հայագիտական կարևոր կենտրոններից են Կալիֆորնիայի պետական համալսարանի Ֆրեզնոյի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը, Հայագիտական համազգային ընկերությունը (*NASSR*), Հայագիտական ուսումնասիրությունների և վավերագրերի Զորյան ինստիտուտը (երկուսն էլ Քեմբրիջում), Միչիգանի համալսարանի

¹ Հայ սփյուռք հանրագիտարան, «Ամերիկայի Միացյալ Նահանգներ», Երևան, 2003թ.:

Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը (Դիրբորն), Հայագիտական ընկերակցությունը (SAS) Բոստոնում և այլն:

Հարկ է նկատել, որ հայաստանյան ընթերցողը միշտ չէ, որ համարժեք տեղեկատվություն է ստանում ԱՄՆ հայկական կառույցների և անհատների գործունեության վերաբերյալ: Այդ համատեքստում ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կատարված այս հետազոտությունն ընդամենը փորձ է՝ ուրվագծելու այն հայկական մտավոր-քաղաքական ռեսուրսները, որոնք առկա են Միացյալ Նահանգներում: Նման շեշտադրումը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ Հայաստանում տեղեկատվությունն այդ ոլորտի վերաբերյալ, թերևս, առավել սակավ է: Ըստ մեզ, Հայության հիմնախնդիրների լուծման և կազմակերպման խնդիրներում մեր մտավոր-քաղաքական ներուժը որոշիչ նշանակություն և առաքելություն պետք է ունենա և այդ պատճառով արժանի է հատուկ ուշադրության:

Հետազոտությունում տեղեկատվական անդրադարձ է կատարվել նաև ԱՄՆ և Կանադայի հայ բողոքական և կաթոլիկ համայնքներին, որոնք ներկայացված են հավելվածներում:

Անշուշտ, ներկայացված նյութերն ամբողջական լինելու հավակնություն չունեն: Կարծում ենք՝ անգամ զուտ մեթոդաբանական տեսանկյունից ակնհայտ է, որ նման հետազոտությունները պետք է կատարվեն ԱՄՆ-ում բնակվող մեր հայրենակիցների հետ համատեղ: Այս իրողությունը մասամբ փոխհատուցվել է այն հանգամանքով, որ գրքի հեղինակներից մեկը՝ Հայկարամ Նահապետյանը, արդեն երկար ժամանակ կատարում է ՀՀ հեռուստաընկերության թղթակցի պարտականությունները Միացյալ Նահանգներում: Միևնույն ժամանակ, համոզված ենք, որ տվյալ հրատարակությունը կնպաստի նման համագործակցության ձևավորմանը, և ԱՄՆ հայությանը վերաբերող հետազոտ ուսումնասիրություններն ավելի համալիր բնույթ կկրեն:

ԳԼՈՒԽ 1.
ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

ԱՄՆ ժամանակակից հայ համայնքի գիտական ներուժը, ընդհանուր հայ համայնքի համապատկերում, քիչ է ուսումնասիրված, թեև որոշակի հետաքրքրություն ունի տարբեր տեսանկյուններից՝ սկսած հայագիտությունից մինչև Հայաստան-Սփյուռք-արտերկիր գիտական կապերի կամրջում և գործընկերություն:

Քիչ ուսումնասիրված լինելու օբյեկտիվ պատճառներից է այն փաստարկը, որ վերջին տարիներին ամերիկահայ գիտական համայնքը դինամիկ փոփոխություններ է ապրել՝ կապված Հայաստանից գիտական ոլորտի ներկայացուցիչների ԱՄՆ փոխադրվելու, այս կամ այն չափով դիրքի և հաջողությունների հասնելու հետ: Այս նորագույն փաստերը հետազոտելու և փաստագրելու ժամանակ և հնարավորություն, ըստ էության, չի եղել:

Այսպիսով, արդի ամերիկահայ գիտական համայնքին նվիրված բաժինը պատրաստելու համար համապատասխան գրականությունը մեծ չէ, և հետազոտությունը մեծ մասամբ կառուցվել է ինտերակտիվ տարբերակով՝ հիմնված ԱՄՆ-ում բնակվող հայագի գիտնականների հետ հարցազրույցների վրա: Ներկայացվել են գիտնականների կենսագրական տեղեկությունները, զբաղեցրած պաշտոնները, ինչպես նաև առանձին անդրադարձ է կատարվել այն թեմային, թե տվյալ մասնագետն ինչպես կարող է օժանդակել Հայաստանում գիտական մտքի զարգացմանը, հայ-ամերիկյան գիտական կապերի խո-

րացմանը, Հայաստան-Միյուոք գործընկերության զարգացմանը գիտության ասպարեզում: Հատկանշական է, որ մեր հայրենակիցները հիմնականում հակված են առաջարկներ ներկայացնել վերջին հարցադրման շուրջ: Շեշտվում է Երևանի հետ համակարգված աշխատելու անհրաժեշտությունը, ինչպես նաև այն մտահոգությունը, թե եթե աջակցեն, արդյոք օժանդակությունը կհասնի հասցեատիրոջը, թե՛ տեղ կգտնեն կոռուպցիոն երևույթներ:

Միացյալ Նահանգների մայրաքաղաք Վաշինգտոնը պաշտոնապես գտնվում է Կոլումբիայի շրջանում (*DC – District of Columbia*), սակայն ֆիզիկապես Վաշինգտոնն արդեն դուրս է եկել *DC*-ի տարածքից և ձգվում է դեպի սահմանակից Մերիլենդ և Վիրջինիա նահանգների բնակավայրեր: Ու թեև վարչական առումով այս տարածքները չեն գտնվում Վաշինգտոն մայրաքաղաքի սահմաններում, սակայն ֆիզիկապես հանդիսանում են մեկ օրգանիզմ, մեկ տարածք: Այս առումով ձևավորվել է «Մեծ Վաշինգտոն» (*Greater Washington* կամ *Washingtonian Metropolitan Area*) հասկացությունը, որն, ըստ էության, ձգվում է հարավում Վիրջինիայի Սաքքլեյն կամ Վիեննա բնակավայրերից մինչև հյուսիսում Մերիլենդի Ռոքվիլ կամ Գեյթհիսբուրգ ավանները, որոնք 20-30 կմ հեռու են բուն *DC*-ից:

Այսպիսով, Մերիլենդի Բեթեզդա բնակավայրում գտնվող Առողջապահության ազգային ինստիտուտի կենտրոնակայանը (*NIH, National Institute of Health*), թեև վարչական առումով Վաշինգտոնում չէ, սակայն փաստացի համարվում է մայրաքաղաքի կենտրոնական գիտահետազոտական հաստատություններից մեկը: *NIH*-ը բաղկացած է 27 մասնաշենքերից, 2010թ. բյուջեն կազմում է \$31 մլրդ, ընդ որում՝ նախորդ տարվա համեմատ բյուջեն աճել է 2,3%-ով¹: *NIH* կառույցում են աշխատում մի քանի տասնյակ հայազգի գիտաշխատողներ:

Արթուր Պետրոսյանն աշխատում է *NIH*-ի Բժշկական ազ-

¹ <http://nexus.od.nih.gov/nexus/nexus.aspx?ID=369&Month=01&Year=2010>

գային գրադարանի ենթակառուցում որպես բիոինֆորմատիկայի գծով դրամաշնորհ տրամադրող գլխավոր գիտաշխատող (*chief scientific review officer*): Ա.Պետրոսյանը համակարգում է *NIH*-ից բիոտեխնոլոգիաների գծով դրամաշնորհների տրամադրման ծրագրերը: Երևանցի Ա.Պետրոսյանը ԱՄՆ-ում հաստատվել է 1992 թվականից, *NIH*-ի կառուցում աշխատում է 2003 թվականից, 2006-ից ղեկավարում է նշված բաժինը: Ա.Պետրոսյանի հետ հանդիպումներում սփյուռքի ներուժի միջոցով Հայաստանի գիտությունը զարգացնելու, սփյուռքահայերի միջոցով գիտական ասպարեզում կապերն ընդլայնելու թեման հաճախ է քննարկվում: Ա.Պետրոսյանը նշում է, որ պատրաստ է ՀՀ-ում դասախոսություններ կարդալ ԱՄՆ գիտական հաստատություններից և, մասնավորապես, *NIH*-ից դրամաշնորհ ստանալու թեմայի, դիմում-նախագծերը լրացնելու հիմնախնդրի շուրջ: «Նույնիսկ բարձրորակ գաղափարը պետք է կարողանալ ճիշտ ձևակերպել», - նշում է մեր հայրենակիցը՝ ընդգծելով դրամաշնորհի դիմելու ընթացքում հայցադիմումը որակյալ ձևակերպելու կարևորությունը: Այս առումով մտահոգություն են հայտնել ԱՄՆ-ում գործող հայազգի այլ գիտնականներ ևս, և խնդիրն, իրոք, որոշակի հրատապություն ունի: Կարևոր է հստակ պատկերացնել, թե հայաստանյան համապատասխան գիտական հաստատությունը ԱՄՆ որ կառույցի կամ գիտական հիմնադրամի հետ կարող է համագործակցել և ինչպես ձևակերպել դիմումները: Մասնավորապես, բիոտեխնոլոգիաների գծով Հայաստանից առայսօր *NIH*-ում հաղթող դիմումներ չեն եղել:

Արթուր Պետրոսյանն առաջ է քաշել Գիտության հայկական պորտալի գաղափարը և կատարել նախագծի իրականացմանն ուղղված աշխատանքներ: Նպատակն է, որ աշխարհի հայ գիտնականների համար ձևավորվի առանձին կայք, որտեղ գրանցվելով՝ հայազգի գիտնականները կարողանան ներկայացնել իրենց գիտական կարողությունները, հրապարակել գիտա-

կան հոդվածներ՝ նշելով հոդվածների աղբյուրը, հղումները և այլն: «Հայաստանում ավանդական հզոր գիտահետազոտական համայնքի աջակցության հարցում Միյունքի ու նրա կենսական կապերի կարևորությունը հնարավոր չէ գերազնահատել: Այդքանով հանդերձ, հայ գիտնականների և հետազոտողների համար առայսօր գոյություն չունի որևէ կենտրոնացված շտեմարան գիտական հրատարակումների և փորձագիտական տվյալների բազայի համար», - գրում է Արթուր Պետրոսյանը:

2007թ. հաջողվեց ձևավորվել *Armenian Science Portal* կայքը: Նրա էլեկտրոնային հասցեն էր scienceportal.am, գտնվում էր ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի սերվերային բազայի վրա: Առաջին էջին ՀՀ ԳԱԱ շենքի լուսանկարն էր, Անանիա Շիրակացու, Հովսեփ Օրբելու և Վիկտոր Համբարձումյանի նկարները: «Գրանցվելով այս կայքում՝ գիտական համայնքի ցանկացած անդամ հնարավորություն կստանա ունենալ էլք դեպի աշխարհի հայ հետազոտողների և գիտնականների ամենաընդգրկուն շտեմարանը», - նշված էր կայքի առաջին էջին: Շտեմարանն ուներ որոնման համակարգ, որը հնարավորություն էր տալիս արագ պարզել՝ արտասահմանյան տվյալ երկրում կա՞րողո՞ք նշված ասպարեզի հայազգի մասնագետ, թե՞ ոչ, և առկայության դեպքում կապեր ստեղծել նրա հետ: Ինչպես նաև հակառակը՝ արտասահմանի հայ մասնագետը պարզեցված տարբերակով կարող էր գործընկեր գտնել Հայաստանում, գործընկերությունը երկկողմանի բնույթ էր կրելու: Միաժամանակ, երիտասարդ հայ գիտնականներին մատչելի էր դառնում արագ կողմնորոշվել և գտնել, թե հայազգի որ գիտնականը կարող է ինչ-որ օժանդակություն տրամադրել իր հետազոտական աշխատանքին կամ աջակցել արտասահմանում ուսանելու, գիտական հոդվածներ տպագրելու առումներով: Կայքը գործել է միայն երկու շաբաթ և փակվել է տեխնիկական պատճառներով: Վերագործարկելու փորձերն առայսօր արդյունքի չեն հանգեցրել: Վերջին շրջանում Արթուր Պետրոսյանի հետ այս ուղղու-

թյամբ որոշ աշխատանքներ է սկսել Հայաստանի Ամերիկյան համալսարանը, սակայն հեռանկարները դեռ վերջնականորեն հստակ չեն: Խոսքը, ըստ էության, Հայաստան-Մփյուռք, Մփյուռք-Մփյուռք կապերի ակտիվացմանն ուղղված մատչելի ծրագրի մասին է:

NIH կառույցում հռչակավոր հայազգի գիտնականներից է Ալբերտ Կապիկյանը: «Ալբերտ Կապիկյանի (albert.kapikian@nih.gov)՝ ֆիզիկոսի, բժշկագիտության զարգացման առաջամարտիկի և վարակիչ հիվանդությունների հետազոտողի կարիերան 47 տարիների անցյալ ունի, այդ ընթացքում նա մեծաթիվ շրջադարձային բժշկագիտական հետազոտություններ է կատարել: Նա հռչակվել է «ռոտավիրուսի վակցինի հայտնագործությամբ»,¹ նշված է Ալբերթ Սեյբինի հուշամեդալով մեր հայրենակցի պարգևատրման առիթով թողարկված գրքուկի 1-ին էջին¹: Ռոտավիրուսն աղիքային բնույթի հիվանդություն է, որ տարածված է երեխաների շրջանում:

Ալբերտ Կապիկյանը Միացյալ Նահանգների անվանի հայազգի գիտնականներից է: Ամերիկյան աղբյուրը նրան անվանում է «Գաստրոէնտերիտիսի վիրուսի հետազոտման հայրը»: Մեր հայրենակցը 1956թ. ավարտել է Նյու Յորքի հռչակավոր Քորնելի համալսարանը և մեկ տարի անց աշխատանքի անցել *NIH*-ի համակարգում: Ներկայում զբաղեցնում է *NIH*-ի ենթակառույցի մեջ մտնող Ալերգիկ և վարակային հիվանդությունների ազգային ինստիտուտի վարակաբանության մասնաճյուղի տնօրենի պաշտոնը: Մեր հայրենակիցը 2008թ. մասնավոր այցով ժամանել է Հայաստան, մասամբ հայախոս է, անձնական զրույցի ընթացքում նշել է, որ արբանյակային կապի միջոցով պարբերաբար դիտում է Հայաստանի Հանրային հեռուստաընկերության հաղորդումները:

Մասաչուսեթսի համալսարանում է աշխատում ֆիզիկայի

¹ Albert Z. Kapikian: 2005 Albert B. Sabin Gold Medal Recipient, by HR Shepherd, May 2005, Baltimore, MD.

պրոֆեսոր Ադրիան Պարսեգյանը, որը ևս երկար տարիներ աշխատել է *NIH*-ում: «Բիոֆիզիկայի ասպարեզում առաջատար մասնագետ ճանաչված Պարսեգյանը դոկտորական ատենախոսություն է պաշտպանել Հարվարդի համալսարանում 1965թ., ապա Մասաչուսեթսի Տեխնոլոգիական ինստիտուտում 2 տարվա հետդոկտորական նշանակումից հետո միացել է *NIH*-ին՝ որպես ֆիզիկայի ասպարեզի գիտաշխատող», - նշված է Մասաչուսեթսի համալսարանի կայքում: 1994-1997թթ. մեր հայրենակիցը *NIH*-ի կառուցվածքային կենսաբանության լաբորատորիայի վարիչն էր: Շուրջ 200 գիտական հոդվածների հեղինակ է, 2006թ. լույս է ընծայել «Վան դեր Վաալսի ուժերը. ձեռնարկ կենսաբանների, քիմիկոսների, ճարտարագետների և ֆիզիկոսների համար» գիրքը¹:

Հայ ժողովրդի որևէ ներկայացուցիչ, ցավոք, առայսօր Նոբելյան մրցանակի չի արժանացել: Նոբելյան պատվավոր պարգևի արժանանալուն մոտ էր նյույորքաբնակ Ռեյմոնդ Դամադյանը: 2003թ. Նոբելյան հանձնաժողովը *MRI*-ի (*Magnetic Resonance Image*) հայտնագործության համար հրաժարվեց Նոբելյան մրցանակ տալ մեր հայրենակցին: Մրցանակակիրներ էին ճանաչվել Փոլ Լոթերբուրը և Փիթեր Մենսֆիլդը, թեև Նոբելյան մրցանակի կանոնադրությունը թույլ է տալիս, որ պարգևը կիսվի մինչև 3 անձի միջև: Մեր հայրենակիցը հայտնագործել էր *MRI*-ի նախատիպը՝ *NMR*-ը (*Nuclear Magnetic Resonance*) կամ «միջուկային մագնիսական ճառագայթման» սարքը, իսկ Լոթերբուրը և Մենսֆիլդը զարգացրել էին այս հայտնագործությունը՝ ստանալով *MRI*-ը: Դամադյանի մեթոդը և ստեղծած սքաները հնարավորություն էին տալիս միջուկային ճառագայթման եղանակով զանազանել մարմնի ներսում գտնվող ուռուցքները: 1977-ին նա, առաջին անգամ հաջողությամբ փորձարկելով իր ապարատը, մեկ տարի անց հիմնեց ընկերություն՝ *FONAR*

¹ NIH Scientist V. Adrian Parsegian Named to Gluckstern Professorship of Physics at UMass Amherst 14.09.2009 <http://www.umass.edu/newsoffice/newsreleases/articles/90679.php>.

(*Field Focused on Nuclear Magnetic Resonance*), որը զբաղվում էր միջուկային ճառագայթում իրականացնող սքաներների արտադրությամբ և վաճառքով: Ընկերությունն այսօր էլ գործում է Նյու Յորքի նահանգի Մելվիլ քաղաքում¹:

Մեր հայրենակիցն ընկերության խոշոր բաժնետեր է. բաժնետոմսերի 8%-ը պատկանում է նրան, որոնց արժեքը 6 միլիոն դոլարից ավելի է: Կազմակերպության կայքէջում զետեղված է տեղեկություն 2003թ. Նոբելյան մրցանակի հանձնման հետ կապված՝ «Նոբելյան մրցանակն ընդդեմ պատմական ճշմարտության» խորագրով: Երբ Նոբելյան կոմիտեն մերժեց մրցանակ հանձնել նաև մեր հայրենակցին, «Դամադյանի բարեկամներ» կազմակերպության պատվերով *Washington Post*, *New York Times* և *Los Angeles Times* կենտրոնական թերթերում, ինչպես նաև շվեդական *Dagens Nyheter* կենտրոնական օրաթերթում լույս տեսան մի ամբողջ էջ զբաղեցնող հայտարարություններ, որոնցում դատապարտվում էր այդ որոշումը: Ինքը՝ Դամադյանը, Լոթերբուրին և Մենսֆիլդին կոչ արեց հրաժարվել մրցանակներից՝ մինչև որ որոշումը չփոխվի: Մեր հայրենակցին աջակցեցին անվանի ֆիզիկոսներ և *MRI*-ի մասնագետներ Ջեն Թրոք Վաթսոնը, Յուջին Ֆեյզիլտոնը, Ադրիան Պարսեգյանը, Դևիլիդ Սթարքը և Ջեյմս Մաթսոնը: Հետաքրքիր է, որ Նոբելյան հանձնաժողովի որոշումից 2 տարի առաջ մեր հայրենակցին՝ որպես *MRI*-ի սքաները հայտնագործողի, հանձնվել էր Ջերոմ Լեմելսոնի և Մասաչուսեթսի տեխնիկական ինստիտուտի համատեղ մրցանակը²: Ինքը՝ Դամադյանը, վերոնշյալ՝ Նոբելյան հանձնաժողովի որոշման առիթով այսպես է արտահայտվել. «Եթե ես չձնվեի՝ *MRI*-ը գոյություն կունենա՞ր: Չեմ կարծում: Իսկ եթե Լոթերբուրը ծնված չլիներ, ես վերջնարդյունքում կհասնեի այնտեղ, ուր նա էր հասել»: Աշխարհահռչակ մեր հայրենակցին պատվել է նաև ամերիկահայ համայնքը. 2003թ. Նյու

¹ www.fonar.com.

² http://en.wikipedia.org/wiki/Raymond_Vahan_Damadian

Յորքում գործող Վարդանանց ասպետների միության «Տարվա մարդը» մրցանակը հանձնվել է Ռեյմոնդ Վահան Դամադյանին:

Միացյալ Նահանգների մայրաքաղաքի Ջորջ Վաշինգտոնի համալսարանի (*GWU*) Սրտաբանական կենտրոնն աշխարհի խոշոր սրտաբանական կենտրոններից է: Բուժման նպատակով այստեղ են այցելում ԱՄՆ քաղաքական ղեկավարները: Կենտրոնի հայաստանցի երկու աշխատակիցներից մեկն է Նարինե Սարվազյանը: «Ես կարող եմ միջնորդել մեր հիվանդանոցի և Հայաստանի համապատասխան գերատեսչության միջև կապեր հաստատելու համար», - նշում է նա: Հայաստանը վերջին տարիներին վերածվում է տարածաշրջանային սրտաբանական կենտրոնի, ինչը Հայաստանի բժիշկների և երկրի բյուջեի համար եկամտի հեռանկարային աղբյուրի կարող է վերաճել: Տեխնիկական հագեցածության գործոնի կողքին շատ կարևոր է նաև մարդկային գործոնը: «Ի վերջո, վիրահատում են ձեռքերը, իսկ հայ բժիշկներն ունակ են», - նշում է տիկին Սարվազյանը:

GWU-ում 3-5 տարին մեկ անգամ տեխնիկական թարմացվում է: «Միգուցե հնարավոր է ուսումնասիրել սարքավորումները Հայաստան փոխադրելու տարբերակը, դրանք կարող են համարվել մայրաքաղաքի կամ մարզերի բժշկական կենտրոնները», - նշում է Նարինե Սարվազյանը: Մեր հայրենակցի կարծիքով՝ ֆինանսավորման դեպքում արդյունավետ կարող են լինել նաև հայ սրտաբանների գործուղումները *GWU*:

Վարդան Գրիգորյանը ներկայում ամենաբարձր պաշտոնը զբաղեցնող ամերիկահայ գիտնականը կարող է համարվել: Նա Նյու Յորքի Քարնեգի կորպորացիայի նախագահն է: ԱՄՆ-ում գործող գիտական դրամաշնորհներ տրամադրող հնագույն ընկերությունը գալիք՝ 2011թ. կնշի հիմնադրման հարյուրամյակը: Այն հիմնվել է գործարար և բարեգործ Էնդրյու Քարնեգիի 135 միլիոն դոլարի նվիրատվությամբ, որը ներկայիս հաշվարկով հավասար է մոտ 2 միլիարդ դոլարի: Անցնող 99 տարիների ընթացքում Քարնեգի կորպորացիան գրեթե մեկ և կես միլիար-

դի դրամաշնորհ է տրամադրել: Մեր հայրենակցի ղեկավարած հաստատությունը գործունեության նպատակներ է հռչակել հարատև «միջազգային խաղաղությունը և գիտելիքի ու կրթության առաջընթացը»¹:

Վարդան Գրիգորյանը ծնվել է Իրանի Թավրիզ քաղաքում 1934թ. ապրիլի 8-ին: Հայ օգնության միության նյութական օժանդակությամբ փոխադրվել է Լիբանան՝ կրթություն ստանալու, հետագայում հաստատվել է ԱՄՆ-ում: Կալիֆոռնիայի Սթենֆորդի համալսարանում (ԱՄՆ 10 հեղինակավոր համալսարաններից մեկն է) կրկնակի պաշտպանել է դոկտորական թեզ պատմության և հումանիտար գիտությունների ասպարեզներում: 1974թ. Փենսիլվանիայի համալսարանում հիմնել է արվեստի և գիտությունների ֆակուլտետը՝ դառնալով առաջին դեկանը, 1981-89թթ. Վարդան Գրիգորյանը Նյու Յորքի հանրային գրադարանի տնօրենն էր (համարվում է մոլորակի 10 խոշոր գրադարաններից մեկը): 1989-1997թթ. Ռոդ Այլենդի նահանգի Բրաունի համալսարանի նախագահն էր: Այդ ընթացքում մերժել է Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանը գլխավորելու առաջարկը (Կոլումբիայի համալսարանը ևս ԱՄՆ լավագույն բուհերի տասնյակում է)՝ աշխատանքը շարունակելով Բրաունի համալսարանում: 2009-ից ղեկավարում է Քարնեգի կորպորացիան: Մեր հայրենակցի բազմաթիվ հաջողությունների թվում նշենք Ազատության նախագահական մեդալը՝ տրված նախագահ Ջորջ Բուշի կողմից 2004թ., Նյու Յորքի ժամանակակից արվեստի թանգարանի վարչական կազմում հանդես գալու, նախագահ Բարաք Օբամայի հրամանագրով Սպիտակ տանը խորհրդատվական պաշտոն զբաղեցնելու փաստերը: Վ.Գրիգորյանը 2003թ. հեղինակել է «Ճանապարհ դեպի տուն. իմ կյանքն ու ժամանակները» ինքնակենսագրական գիրքը՝ անգլերեն²:

2009-ից Նյու Յորքի Հոգեվերլուծության ամերիկյան ինս-

¹ <http://carnegie.org/about-us/mission-and-vision/>

² <http://www.loc.gov/locvideo/gregorian/>

տիտուտի Քերրն Հորնիի անվան կենտրոնի ղեկան է նշանակվել ամերիկահայ Ջեք Դանիելյանը: Ինստիտուտը գտնվում է Մանհեթենում, հիմնվել է 1941թ. հոգեվերլուծաբան Քերրն Հորնիի կողմից և Նյու Յորքի խոշոր հոգեվերլուծական կենտրոններից է¹: Ջեք Դանիելյանը նաև Հոգեվերլուծության ամերիկյան ամսագրի (*The American Journal of Psychoanalysis*) խմբագրական խորհրդի անդամ է և մոտ 3 տասնյակ գիտական հոդվածների հեղինակ:

Մեր հայրենակիցը ծնունդով Մասաչուսեթսի նահանգից է, ներկայումս բնակվում է Նյու Հեմփշիրում, աշխատանքի բերումով հաճախ այցելում է Նյու Յորք: Ջեք Դանիելյանը մասնագիտանում է հոգեբանական տրավմաների և հոգեբանական տրավմատիկ իրավիճակներից ապաքինման գործընթացների ուղղությամբ: Վերջին գիտական հոդվածը՝ «Լռության դարը. Հայոց ցեղասպանությունը և ահաբեկչությունը» վերնագրով, լույս էր տեսնելու Հոգեվերլուծության ամերիկյան ամսագրում 2010թ. սեպտեմբերին: Առաջին դեպքն է, երբ նշված հանդեսը տպագրում է հոդված Հայոց ցեղասպանության թեմայով: «Հայոց ցեղասպանության չարագուշակ մերժողականությունը լուրջ ազդեցություն է ունեցել այս հինավուրց ժողովրդի հոգեբանության վրա: Շատ հայեր մինչև օրս լուրջ երկյուղ ունեն իրենց պատմության մասին կարդալու կամ հրապարակավ խոսելու առումներով: Քանի որ Հայոց ցեղասպանության փաստը ենթակա է շուրջ մեկ հարյուրամյակի թուրքական մերժողականությանը, այն հանդիսանում է ուսումնասիրության կարևոր առարկա, այն առումով, թե ինչպես են տրավման և մերժողականությունը ներագրում միմյանց վրա», - նշված է ամերիկյան հեղինակավոր հանդեսում հրապարակվելիք հոդվածում²:

Ջեք Դանիելյանն ընդգծում է, որ պատրաստ է ոչ միայն

¹ <http://www.aipnyc.org/>.

² «A Century of Scilence: Terror and the Armenian Genocide», by Jack Danielian, PhD, «The American Journal of Psychoanalysis», 09/2010.

անձնական ռեսուրսով, այլև Նյու Յորքի Քերըն Հորնիի հոգեվերլուծության կենտրոնի և Հայաստանի համապատասխան հաստատության (ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևանի պետհամալսարանի հոգեբանության ամբիոն և այլն) միջև գործընկերության տարբերակով ներառվել Հայաստանում գիտական մտքի զարգացման և հայամերիկյան գիտական կապերի խորացման աշխատանքներում: Հոգեբանական տրավմայի խնդրի արդիականությունը և ապաքինման աշխատանքները Հայաստանի պարագայում նկատելի են ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ հետագայում երկրաշարժի, նաև Սումգայիթի, Բաքվի և մյուս ոճրագործությունների հետ կապված:

Ամերիկյան հոչակավոր *NASA*-ի (*National Aero Space Agency*) կենտրոնակայանը Հյուսթոնում է, այն ունի 7 ինստիտուտներ: Վաշինգտոնի մերձակա Գոդարդ տիեզերական կենտրոնը, որը կրում է ամերիկյան հրթիռաշինության առաջամարտիկ Ռոբերտ Գոդարդի անունը, *NASA*-ի ենթակառույցներից է: Այստեղ է աշխատում Վլադիմիր Հայրապետյանը: Նա նաև աստղագիտություն է դասավանդում Մեծ Վաշինգտոնի տարածքում գտնվող Ջորջ Մեյսոնի համալսարանում, որը պաշտոնապես Վիրջինիա նահանգում է: Միաժամանակ *on-line* դասավանդում է Ֆլորիդայի Էմբրի-Ռիդել ավիացիոն համալսարանում: Վլադիմիր Հայրապետյանը Հայաստանից է, 1982-1992թթ. աշխատել է Բյուրականի աստղադիտարանում, Տեսական աստղագիտության բաժնում, որի ղեկավարն էր Վիկտոր Համբարձումյանը, ապա աշխատել է Ղրիմում, Գերմանիայում, Դանիայում: Ներկայում Գոդարդ կենտրոնում ուսումնասիրում է արևի ֆիզիկան, այլ մոլորակների տիեզերական պլազմաների համակարգչային մոդելավորման հարցերը, բունկվող աստղերի ֆիզիկական մեխանիզմները: Վլադիմիր Հայրապետյանը ևս նշում է, որ պատրաստ է մասնավորապես ինտերնետի միջոցով դասախոսություններ և սեմինարներ կազմակերպել հայկական կողմի

համար: Նա նաև գտնում է, որ ուսանողների և թեմայով հետաքրքրվող անձանց համար պետք է նկարահանել գիտաուսումնական հանրամատչելի ֆիլմեր և պատրաստ է ներգրավվել այդ աշխատանքներում:

Ուշագրավ են Վլադիմիր Հայրապետյանի դիտարկումներն արևի ֆիզիկայի վերաբերյալ. արևը 4,5 միլիարդ տարեկան է: Սակայն արևը հավերժ չէ: Վլադիմիր Հայրապետյանը նշում է, որ արեգակին ընդամենը... 6 միլիարդ տարվա չափ կյանք է մնացել: Արեգակի վրա 15 միլիոն ջերմաստիճանի պայմաններում ջրածինը փոխակերպվում է հելիումի, բայց 6 միլիարդ տարի անց ջրածինը կվերջանա, և արևը կսառչի մի քանի հարյուր հազար տարով, այնուհետև հելիումը կսկսի այրվել, և ջերմաստիճանը նորից կբարձրանա: Այս «կարճատև ընդմիջման» ընթացքում արևի էներգիայի բացակայության պատճառով երկիր մոլորակի վրա կյանքը կարող է վերանալ: Վլադիմիր Հայրապետյանի դիտարկումները հաստատում են նաև այլ աղբյուրները¹:

Միակ հայազգի տիեզերագնացն առայժմ Ջեյմս Բադյանն է: Ծնվել է Ֆիլադելֆիայում 1952թ.: Տրապիզոնցիների զավակ Ջեյմս Բադյանն ասում է, որ արմատներ ունի նաև Լեռնային Ղարաբաղում²: Օդագնացության նկատմամբ նրա սերը պատահական չէր: Հայրը՝ Ֆիլիպ Բադյանը, ծառայել է ԱՄՆ ռազմաօդային ուժերում՝ մասնակցելով Երկրորդ համաշխարհայինին: Բադյանը տիեզերք է թռել երկու անգամ՝ 1989թ. և 1991թ. *STS-29* և *STS-40* տիեզերանավերով: Առաջին դեպքում մեր հայրենակիցը տիեզերքում է գտնվել 5, 2-րդ դեպքում՝ 9 օր: 1995թ. հեռանալով *NASA*-ից՝ նա դառնում է Վետերանների առողջապահական վարչության (*Veterans Health Administration*) բարձրաստիճան աշխատակիցներից և Միչիգանի նահանգի Դեթրոյթ քաղաքի

¹ Сѣу Физическая энциклопедия,

http://www.femto.com.ua/articles/part_2/3751.html<http://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%BE%D0%BB%D0%BD%D1%86%D0%B5>

² “From Metsamor Upward: A look back at space minded Armenians”, Aris Ghazinyan, www.armenianow.com 12.10.2007

գիտական կենտրոնի վարչական խորհրդի անդամներից մեկը:

Մինչև 2002թ., շուրջ 30 տարի, *NASA*-ի համակարգում է աշխատել նաև դ-ր Առնոլդ Նիկողոսյանը՝ զբաղեցնելով առողջապահական և տիեզերական բժշկության հարցերով *NASA*-ի ղեկավար կազմի ավագ խորհրդատուի պաշտոնը: Ներկայում մեր հայրենակիցն աշխատում է Մեծ Վաշինգտոնի տարածաշրջանի Ջորջ Մետոնի համալսարանի Միջազգային բժշկական քաղաքականության և պրակտիկայի հետազոտական կենտրոնում՝ որպես Բժշկական քաղաքականության գրասենյակի ղեկավար: Նա «Սոյուզ-Ապոլո» առաջին միջազգային տիեզերական թռիչքային նախագծի առանցքային աշխատակիցներից է եղել: 2000թ. Առնոլդ Նիկողոսյանը *NASA*-ի կառույցում հիմնել է առողջապահական կենտրոն՝ դառնալով դրա առաջին ղեկավարը:

2005թ. ամերիկյան հեղինակավոր «Ֆորչըն» (*Fortune*) ամսագիրը *Applied Materials* ընկերությանը հատկացրեց ԱՄՆ 500 խոշոր ընկերությունների ցանկի 270-րդ հորիզոնականը¹: Այնուհետև վարկանիշը նվազեց, և 2009-ին *Applied Materials*-ը հանգրվանեց 421-րդ հորիզոնականում: «Ֆորչընը» նշում է, որ *Applied Materials* ընկերության եկամուտը 2009-ին կազմել է \$5 մլրդ²: Ընկերությունը գործում է Կալիֆորնիայում, հռչակավոր Սիլիկոնային հովտում, Սանտա Կլարա քաղաքում:

Գևորգ Ալաջաջյանը երևանցի է, 1980-ից ԱՄՆ-ում է և գիտական ասպարեզում մեծագույն հաջողությունների հասած ամերիկաբնակ հայաստանցիների թվում է: Նա զբաղեցնում է *Applied Materials* ամերիկյան գերզոր ընկերության փոխնախագահի պաշտոնը: 6 տարի գիտահետազոտական բնույթի աշխատանք է կատարել, ավելի ուշ սկսել է վարչական աշխա-

¹ “Fortune - 500, 2006 – Our Annual ranking of America’s largest corporations”
<http://money.cnn.com/magazines/fortune/fortune500/snapshots/116.html>
http://money.cnn.com/magazines/fortune/fortune500_archive/companies/2005/

² Fortune – 500, Our annual ranking of America’s largest corporations – 2010
http://money.cnn.com/magazines/fortune/fortune500/2010/full_list/401_500.html

տանք վարել՝ այդ ընթացքում պաշտպանելով մագիստրոսական թեզը գործարար վարչարարության ասպարեզում (*MBA*):

Ներկայացնելով կազմակերպության գիտաարտադրական հիմնական ուղղությունները՝ մեր հայրենակիցը նշում է. «*Applied Materials*-ն արտադրում է այն գիտահետազոտական գործիքները, որոնցով արտադրվում են միկրոչիփերը և ֆլաթ էկրաններն ու մոնիթորները»: *VLSI research* ընկերությունը, որն արդյունաբերական շուկան ուսումնասիրող խոշոր ամերիկյան ընկերություններից մեկն է, նշում է, որ *Applied Materials*-ը 2009-ին ճանաչվել է միկրոչիփեր և կիսահաղորդիչներ արտադրող խոշոր ընկերություն¹: «*Applied*-ն այս ցուցակը գլխավորում է 1992-ից և հեշտությամբ պահպանեց առաջնային դերը նաև 2009թ.: Մինչդեռ *Tokyo Electron*-ը, որ սարքավորումների վաճառքի սանդղակում իջել էր 3-րդ հորիզոնականը 2008-ին, վերադարձավ 2-րդ տեղ», - գրում է ամերիկյան մամուլը: Այսպիսով, մինչ այլ ընկերությունները փոփոխական դիրքեր ունեն, Գևորգ Ալաջաջյանի ընկերությունը կայուն կերպով 1-ին հորիզոնականում է մոտ 2 տասնամյակ: Ընկերությունը նաև մասնագիտանում է արևային էներգիայի արտադրության ասպարեզում: «*Catellus*» ընկերության հետ իրականացրել է «Արևածաղիկներ – էլեկտրոնային այգի» ծրագիրը, որը Տեխասի նահանգի մայրաքաղաք Օսթին քաղաքի Մյուլեր համայնքում տեղադրել է արևային էներգիա ստանալու և փոխակերպելու սարքեր, ինչի արդյունքում Մյուլեր համայնքի արևմտյան հատվածն ապահովվել է էլեկտրաէներգիայով²: Այս նախագիծը նաև արժանացել է Օսթինի զարգացման նախագծերի «*Liveable city*» ամենամյա մրցույթի 2010թ. մրցանակին³:

¹ Applied ageing top gear vendor amid 2009 turmoil, www.eetimes.com, 10.03.2010
<http://www.eetimes.com/news/latest/showArticle.jhtml?articleID=223500040n>

² “Sun Flower – an Electric Garden – Growing solar in the Texas Sun”,
<http://muellersunflowers.powerdash.com/>

³ <http://www.liveablecity.org/>

Applied Materials-ի արևային էներգետիկային վերաբերող նախագծերն անմիջականորեն Գևորգ Ալաջաջյանն է տնօրինում: Նա է ղեկավարում նաև Գերմանիայում և Թայվանում իրականացվող գիտահետազոտական և արտադրական աշխատանքները: «Արդեն տեսանելի ապագայում բնակարանի սովորական ապակիները կարող են արևային էներգիան փոխակերպել էլեկտրաէներգիայի: Սա հսկայական գերշահույթներով նախագիծ է լինելու, և արդեն աշխատում ենք այս ծրագրերի իրականացման ուղղությամբ», - նշում է մեր հայրենակիցը:

«Հայաստանում այս ուղղությունների զարգացման համար կան և՛ բավարար քանակությամբ արև, և՛ բավարար մասնագետներ են եղել, համենայնդեպս՝ այն Հայաստանում, որտեղից մեկնել եմ», - նշում է հայազգի գիտնականը: Ըստ Գևորգ Ալաջաջյանի՝ ավելի էժան է զարգացնել արևային էներգիան, քան կառուցել նոր ատոմակայան: Ի դեպ, Գևորգ Ալաջաջյանն անվանի գրող Ստեփան Ալաջաջյանի եղբոր որդին է:

1986թ. Իտալիայի Նեապոլ քաղաքում տեղի ունեցավ Հեղուկ բյուրեղների օպտիկա (*Optics of Liquid Crystals*) կազմակերպության հիմնադիր ժողովը: Այն կարևոր դերակատարում ունեցավ օպտիկական պրոցեսների զարգացման գործում, որից հետո որոշում ընդունվեց ժողովներն իրականացնել 2 տարին մեկ անգամ: Ֆրանսիայում, Միացյալ Նահանգներում, Հունգարիայում, Մեքսիկայում և այլուր համաժողովների կազմակերպումից հետո 2011թ. սեպտեմբերին տեղի ունենալիք համաժողովը որոշվել է անցկացնել Երևանում: Որոշման հիմքում նախկին երևանցի, գիտնական Նելսոն Թաբիրյանի աշխատանքն է: Մեր հայրենակիցը ներկայում բնակվում է Ֆլորիդա նահանգի Օռլանդո քաղաքում: Նրա գիտահետազոտական աշխատանքի հիմնական ուղղությունը լազերային տեխնիկան է: Նելսոն Թաբիրյանը նաև մասնավոր ընկերություն է հիմնել, որը պետպատվերով իրականացնում է գիտահետազոտական ուսումնասիրություններ լազերային տեխնիկայի ասպարեզում: Մեր հայ-

րենակիցը 2 անգամ նախագահել է *Optics of Liquid Crystals* համաժողովներին՝ 2005թ. (11-րդ համաժողովը Ֆլորիդայի Քլիր-ուոթեր քաղաքում) և 2 տարի անց (Մեքսիկայի Պուերթա քաղաքում), գործընկերոջ՝ Ռուբեն Ռամոս Գարսիայի հետ միասին¹:

Լազերային տեխնիկայի ասպարեզում է աշխատում նաև Նելսոն Թաբիթյանի կինը՝ նախկին երևանցի Աննա Թաբիթյանը: Դոկտորական թեզը պաշտպանելուց հետո աշխատանքի է անցել *Northrop Gunman* ընկերությունում: Հայ մասնագետները նշում են լազերային տեխնիկայի հեռանկարային կարևորությունը մասնավորապես բժշկական, ինչպես նաև ռազմարդյունաբերական ոլորտներում: «Հայաստանում ժամանակին խոշոր մասնագետներ են եղել լազերային տեխնիկայի ասպարեզում, Երևանում խորհրդային տարիներին հաջողությամբ գործում էր Լազերային ֆիզիկայի ինստիտուտը: Այս ուղղության զարգացման համար Հայաստանում, ըստ էության, մասնագետներ կան, արդիականացումը հնարավոր է կազմակերպել համեմատաբար արագացված մեթոդներով: Լազերային բժշկությունը հեռանկարային է աչքի վիրաբուժության, կնճիռների հարթման, պիգմենտացիայի վերացման և շատ այլ ուղղություններում, նման տեխնոլոգիաների, հայ-ամերիկյան համատեղ հնարավոր գիտական նախագծերի իրականացումը կարող է տնտեսապես շահութաբեր լինել», - նշում են մեր հայրենակիցները: Աննա և Նելսոն Թաբիթյանները շեշտում են, որ Հայաստանից ստացվող դրամաշնորհային հայցերը կազմված են ոչ արևմտյան չափանիշներով, մասնավորապես՝ Աննա Թաբիթյանն իր հնարավորություններով փորձել է օժանդակել երևանյան ինստիտուտներից մեկի հայցն արևմտյան չափանիշներին առավել մոտեցնելու գործին:

Վաշինգտոնի ամերիկյան համալսարանում է աշխատում Աննա Ամիրխանյանը: Նա Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի շրջանավարտ է, Հայաստանից

¹ <http://www.opticsofliquidcrystals.org/OLC-history.html>

ԱՄՆ է փոխադրվել 1999թ.: Թեկնածուական թեզը պաշտպանել է ԱՄՆ-ում ծերանոցների մասնավորեցման թեմայի շուրջ: «Ես այնքան էլ լավ չեմ պատկերացնում ներկայիս Հայաստանը: Պատրաստ եմ անվճար դասավանդել, բայց պետք է ավելի վստահ լինել, որ կոռուպցիա չկա, որ կրթություն ստացող ուսանողները հետագայում կաշխատեն ըստ մասնագիտության», - նշում է նա:

Ամիրխանյանի խոսքով՝ երբեմն Հայաստանում առավել դժվար է հետազոտություն անցկացնելը, քանի որ հասարակությունն ու տարբեր պաշտոնյաներ որոշակիորեն կաշկանդված են: «Այլապես կարող ենք հետաքրքրված լինել ՀՀ-ում հետազոտություն անցկացնելու ուղղությամբ», - նշում է նա:

Գիտական ասպարեզի ամերիկահայ ներկայացուցիչները նաև ինքնակազմակերպման աշխատանք են կատարում: 1983-ին Գլենդեյլում հիմնվել է Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցությունը: Նախապես կալիֆորնիաբնակ մեր հայրենակիցներ Հակոբ Փանոսյանը և Ստեփան Միմոնյանը, ինչպես նաև Ջորջիայի նահանգի մայրաքաղաք Ատլանտայում բնակվող Ջորջ Ադումյանը մտածում էին Հայ գիտնականների համաշխարհային միություն ստեղծելու մասին: Մինչ ամերիկահայ գիտնականները փորձում էին կապեր ստեղծել համայն աշխարհի հայ գործընկերների հետ՝ 1983-ի հունիսի 30-ին Կալիֆորնիայի Բրբանք քաղաքում հաջողվեց կազմակերպել ամերիկահայերի առաջին հավաքը. 23 հայազգի գիտնականներ դրեցին *Armenian Engineers and Scientists of America*-ի կամ *AESA*-ի հիմքը: 1989թ. օգոստոսի 3-5-ը տեղի ունեցավ հայ գիտնականների առաջին համաշխարհային կոնգրեսը՝ 250 մասնակիցներով, որոնք ներկայացնում էին Միացյալ Նահանգները, Ավստրալիան, Եվրոպական աշխարհամասը և Հայաստանը:

Երկրորդ նման հավաքը տեղի ունեցավ 1993թ. սեպտեմբերի 6-9-ին Փարիզում, *UNESCO*-ի կենտրոնակայանում: 1993-1996թթ. կառույցը կազմակերպել է նաև գիտաժողովներ ԱՄՆ-

ում և Հայաստանում էներգետիկայի, տրանսպորտի թեմաներով: Ներկայում կառույցի նախագահն է Ռուբեն Նալբանդյանը: Կառույցը ներկայացուցչություն ունի նաև ԱՄՆ արևելյան ափին՝ Վաշինգտոնում (Խաչիկ Ժակ Գոյումճյան – kooyoomjian.jack@aesa.org) և Նյու Յորքում (Արամ Սեթյան – setianah@gmail.com, ինչպես նաև Միչիգանում (Էդմոնդ Մեդերյան – edmond.megerian@aesa.org) և հյուսիսարևելյան Նոր Անգլիայի տարածաշրջանում (Ջոզեֆ Դադդիդյան – joseph.dagdigian@aesa.org): Նյույորքյան գրասենյակը մեկ տարեկան է: 2010թ. դրությամբ ունի 12 անդամ: Արամ Սեթյանը բուլղարահայ է, ծնողները ջարդի տարիներին փոխադրվել են Բուլղարիա, ինքը 1965-ին հաստատվել է ԱՄՆ-ում: «Մեր նպատակն է օգնել հայ ճարտարագետներին և գիտնականներին և օժանդակել ՀՀ-ում գիտության զարգացմանը: Նաև զբաղվում ենք ամերիկաբնակ հայ երիտասարդ գիտնականներին աշխատանքով ապահովելու հարցերով»,- նշում է Արամ Սեթյանը: *AESA*-ի Միչիգանի մասնաճյուղը հովանավորել է ԵՊՀ մի քանի դասագրքերի հրատարակությունը: Կառույցը նաև ֆինանսապես օժանդակում է շնորհալի հայ երիտասարդ գիտնականներին:

Ներկայում *AESA*-ի՝ Հայաստանի հետ համատեղ իրականացվող երկու առանցքային ուղղություններն են *CRD (Cosmic Ray Division)* և *Care for Sevan* ծրագրերը:

Care for Sevan-ը մեկնարկել է 2009թ. հունիսին: Նպատակն է օժանդակել Սևանի մերձակա գյուղերի կոյուղագծերի վերանորոգմանը: «Գյուղերում կոյուղաջրերի հեռացման սխալ համակարգը պատճառ է դառնում, որ կոյուղաջրերը հոսեն դեպի բնություն՝ խառնվելով տեղի գետերին, առուներին, խմելու ջրհորներին»,- տեղեկացնում է կազմակերպության կայքը՝ նշելով, որ *AESA*-ն նախատեսում է օժանդակել յուրաքանչյուր գյուղի ջրամաքման և կոյուղիների հիմնախնդրի կարգավորման հարցերին¹:

CRD ծրագրի շրջանակում արդեն մոտ մեկ տասնամյակ

¹ <http://www.aesa.org/index.php?x=3&y=36&z=122>

աջակցություն է ցուցաբերվում Երևանի ֆիզիկայի ինստիտուտին՝ Արագածի երկու հետազոտական կայանների արդիականացման համար: Նորացված սարքավորումների շնորհիվ հայ ֆիզիկոսները կարող են մինչև մեկ ժամ առաջ կանխատեսել արևային փոթորիկները: 2004թ. Միջիգանից Արագածի լանջեր փոխադրվեց երկու ձևամեքենա՝ ֆիզիկոսների տրանսպորտային հարցերի կարգավորման նպատակով:

AESA-ի միջոցով իրականացվող և այլ ծրագրեր փաստացի ապացույցն են այն բանի, որ սփյուռքահայ և արտասահմանաբնակ հայաստանցի գիտական գործիչների ռեսուրսը որոշակի մեխանիզմների ձևավորման և կազմակերպչական աշխատանքի պարագայում կարող է նպաստել Հայաստանի գիտական առաջընթացին, ընդհանուր զարգացմանը: Որևէ հիմք չկա պնդելու, թե *AESA*-ի իրականացված մի քանի ծրագրերը միակ նախագծերն են, որոնք կենսագործվել են Հայրենիք-Մփյուռք գիտական կամուրջների շնորհիվ, ինչպես նաև որևէ հիմք չկա պնդելու, թե այսքանով ռեսուրսները սպառված են: 21-րդ դարում պետք է նաև դիտարկել ոչ թե զուտ բարեգործական բնույթի գործընկերությունը, այլև գիտական գործակցությունը և արտերկրի հայազգի գիտնականների օժանդակությամբ արտասահմանի գիտական շրջանակների հետ կապերի զարգացումը:

Վերջին շրջանում Անկարայի ուշադրության կենտրոնում է հայտնվել Մասաչուսեթսի համալսարանի տեխնոլոգիական ինստիտուտի տնտեսագիտության պրոֆեսոր, հեղինակավոր հայազգի տնտեսագետ Տարոն Աջեմօղլուն: Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն աշխարհահռչակ տնտեսագետ, հայազգի Տարոն Աջեմօղլուին հրավիրել է ապրել և աշխատել Թուրքիայում: Այս մասին հայտնի տնտեսագետն ասել է թուրքական *Milliyet* օրաթերթին տված հարցազրույցում: Թուրքական պարբերականի հաղորդմամբ՝ Ահմեթ Դավութօղլուն ցանկանում է, որ Աջեմօղլուն կարևոր դերակատարություն ստանձնի Թուրքիայի տնտեսության մեջ¹:

¹ <http://tert.am/am/news/2010/09/10/taron/>, Հայազգի տնտեսագետը՝ Անկարայի ուշադրության կենտրոնում, 10.09.10թ.:

Տարոն Աջեմօղլուն ծնվել է 1967թ. Ստամբուլում: 1986թ. ավարտել է Գալաթասարայի վարժարանը, որից հետո՝ Անգլիայի Յորք համալսարանի տնտեսագիտության բաժինը, գիտական աստիճան ստացել է Լոնդոնի տնտեսագիտական համալսարանում, որտեղ և դասավանդել է 1992-1993թթ.: 1993-ից դասավանդում է Մասաչուսեթսի համալսարանի տեխնոլոգիական ինստիտուտում: *IDEAS/RePec* տնտեսական հետազոտությունների կենտրոնի կազմած՝ աշխարհում ամենաշատը վկայակոչվող տնտեսագետների վարկանիշային աղյուսակում Տարոն Աջեմօղլուն զբաղեցնում է 8-րդ տեղը, այն դեպքում, երբ Նոբելյան մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Փոլ Կրուգմանն այդ աղյուսակում 13-րդն է¹: Հայազգի տնտեսագետը տասնյակ գիտական հոդվածների և հետազոտությունների հեղինակ է, որոնք նվիրված են ինչպես գլոբալ ու տարածաշրջանային տնտեսական, այնպես էլ աշխարհաքաղաքական զարգացումների ու առկա հիմնահարցերի լուսաբանմանը: Տարոն Աջեմօղլուի էլեկտրոնային հասցեն է՝ daron@mit.edu-ն:

Հարվարդի համալսարանի Ջոն Ֆ. Քենեդու անվան Կառավարման դպրոցի շրջանակներում գործող Բելֆերի գիտության և միջազգային հարաբերությունների կենտրոնի գիտաշխատակիցներից է Սիմոն Սարաջյանը: Նա կենտրոնի անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերով փորձագետ է: Հայազգի վերլուծաբանը նախկինում աշխատել է *The Moscow Times* թերթի խմբագրությունում՝ որպես գլխավոր խմբագրի տեղակալ: Պարոն Սարաջյանը մի շարք աշխատությունների ու հետազոտությունների հեղինակ է, որոնք նվիրված են ահաբեկչության ու անվտանգության (այդ թվում և Ռուսաստանին վերաբերող) հիմնահարցերին: Նրա հոդվածները տպագրվել են «*Annals of the American Academy of Political and Social Science*», «*The Times of London*», «*The Daily Telegraph*», «*International Relations and Security Network*» և այլ հեղինակավոր ամսագրերում

¹ Նույն տեղում:

ու պարբերականներում¹: Միմոն Սարաջյանի էլեկտրոնային հասցեն է simon.saradzyhan@ksg.harvard.edu:

Քաղաքագիտության ասպարեզում միջազգային հեղինակություն է վայելում Մասաչուսեթսի Իսթոնի Սթոնհիլ քոլեջի հետազոտող, պրոֆեսոր Աննա Օհանյանը²: Նա 2002-2004թթ. Հարվարդի համալսարանի Ջ.Քենեդու անվան Կառավարման դպրոցի, իսկ 2007թ.՝ Վուդրո Վիլսոնի անվան Գիտնականների միջազգային կենտրոնի գիտաշխատակից է եղել: Աննա Օհանյանը հեղինակել է մի շարք ուսումնասիրություններ, որոնք նվիրված են հասարակական ու միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև հետհակամարտությունների գլոբալ կառավարման մեխանիզմների համացանցերի հարցերի լուսաբանմանը: Փորձագետը հետազոտություններ է հրատարակել Կոսովոյի, Բոսնիա-Հերցեգովինայի, Աֆղանստանի ու Աբխազիայի հետհակամարտային օջախներում խաղաղության հաստատման հարցերի վերաբերյալ: Աննա Օհանյանը գիտական գործունեության հետ միաժամանակ խորհրդատվական ծառայություններ է մատուցել նաև մի շարք միջազգային հեղինակավոր կազմակերպություններին, ինչպիսիք են ՄԱԿ-ը, Համաշխարհային բանկը, ԱՄՆ Պետքարտուղարությունը, Քարթերի կենտրոնը, ԱՄՆ Զարգացման միջազգային գործակալությունը և այլն: Աննա Օհանյանի էլեկտրոնային հասցեն է aohanyan@stonehill.edu:

Մեմ Չարլզ Սարքեսյանը Չիկագոյի Լոյոլայի համալսարանի ռազմական սոցիոլոգիայի պատվավոր պրոֆեսորներից է (*Professor Emeritus of Political Science*): Հայազգի պրոֆեսորը մի շարք գրքերի հեղինակ է, որոնցից են՝ «*America's Armed Forces*», «*America's Forgotten Wars*», «*U.S. Domestic and National Security Agendas*», «*U.S. National Security Policy and Strategy*» և այլն: Մեմ Սարքեսյանը ծառայել է ԱՄՆ հատուկ նշանակության զորքերի

¹ http://belfercenter.ksg.harvard.edu/experts/1897/simon_saradzyhan.html:

² <http://www.stonehill.edu/x9051.xml>

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՄՆ-ՌԻՍ

հրամանատարությունում (ԱՄՆ օդուժ)՝ որպես սպա: Նա ԱՄՆ նախկին նախագահ Ռոնալդ Ռեյգանի նախագահության շրջանում Ձինված ուժերի և հասարակության միջհամալսարանական սեմինար-ֆորումի (*Inter-University Seminar on Armed Forces and Society*) նախագահն է եղել (1982-1989թթ.)¹:

¹ <http://www.iusafs.org/about/AboutUs.asp>, Inter-University Seminar on Armed Forces and Society

ԳԼՈՒԽ 2. ԱՄՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Այսօր ԱՄՆ-ում գործում են մի շարք հայագիտական կենտրոններ, որոնք կարևոր նշանակություն ունեն բնագավառի զարգացման մեջ:

Միացյալ Նահանգների հայագիտական կենտրոններն ունեն բազմաթիվ յուրահատկություններ, որոնք պայմանավորված են պատմական, աշխարհագրական, քաղաքական, հասարակական, մշակութային, կրթական բազմաթիվ գործոններով: Այսօր ԱՄՆ հայկական համայնքի առջև ծառայել են բազմաթիվ մարտահրավերներ: Առավել բնորոշ խնդիրներից են ազգային ինքնագիտակցության պահպանման, հայկական համայնքի միավորման, որպես քաղաքական գործոնի հզորացման և այլ հիմնախնդիրներ: Այս հարցերի լուծումից են կախված ԱՄՆ-ում բնակվող հայության պահպանումը, ձուլման վտանգի չեզոքացումը, մասնակցությունը Հայության առջև ծառայած մարտահրավերների լուծմանը: Հայկական համայնքն ունի չափազանց կարևոր նշանակություն, ինչը կապված է և՛ համայնքի մեծության, և՛ ունեցած քաղաքական ազդեցության հետ¹: ԱՄՆ հայագիտական կենտրոնները կարևոր առաքելություն ունեն վերը նշված խնդիրների լուծման գործում:

ԱՄՆ-ում գործում են հայ գիտնականների մասնագիտական կազմակերպություններ: Մի շարք համալսարաններում և քոլեջներում հիմնվել են հայագիտական դասընթացներ ու ամբիոններ, որտեղ հայ և օտար հայագետները կազմակերպում են հայոց լեզվի, գրականության, պատմության, ազգային հոգևոր և

¹ Այս համատեքստում առավել նշանակալի է ԱՄՆ հայկական համայնքի դերը Հայոց ցեղասպանության միջազգային և, մասնավորապես, ԱՄՆ-ի կողմից ճանաչման ու դատապարտման մեջ:

աշխարհիկ երաժշտության, մշակույթի, արվեստի, ճարտարապետության պատմության և հայկական ուսումնասիրությունների առանձին դասընթացներ, թերավարտ (*Undergraduate*) և շրջանավարտ (*Graduate*) ծրագրերին առնչվող այլ դասընթացներ, շնորհվում են արվեստի պսակավորի (*B.A.*), գիտության պսակավորի (*B.S.*), ինչպես նաև արվեստի մագիստրոսի (*M.A.*) և փիլիսոփայության դոկտորի (*Ph.D.*) գիտական աստիճաններ: Հայագիտությունն ԱՄՆ-ում զարգանում է նաև հայկական ուսումնասիրությունների և հետազոտությունների կենտրոններում, որոնց նպատակն է խթանել հայոց պատմությանը, լեզվին, գրականությանը, մշակույթին, արվեստին, կրոնին, կրթությանը, ազգային, ընկերային, տնտեսական ու քաղաքական կյանքին առնչվող նյութերի ուսումնասիրությունը, հրատարակությունն ու տարածումն օտարության մեջ: Հայագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունները և հետազոտական կենտրոններն ունեն երկլեզու (անգլերեն, հայերեն) բազմատպաքանակ պարբերական հրատարակություններ¹:

ԱՄՆ հայագիտական կենտրոնները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. **Հայագիտական ինստիտուտներ.** Այս խմբի մեջ են մտնում ԱՄՆ այն հայագիտական հաստատությունները, որոնք զբաղվում են գիտահետազոտական աշխատանքով: Սրանց գործունեությունը, անշուշտ, նպաստում է հայագիտական առարկաների դասավանդմանը, սակայն զուտ կրթական գործունեությամբ այս կենտրոնները չեն զբաղվում: Առավել նպատակահարմար ենք համարում այս խմբում ընդգրկել նաև Դիրբորնի Միչիգանի համալսարանի հայագիտական կենտրոնը, որը, չնայած գործում է համալսարանի կազմում, սակայն կրթադաստիարակչական խնդիրներ չի լուծում, այլ հիմնականում բավարարվում է գիտահետազոտական աշխատանքով:

¹ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 68:

2. **Հայագիտական ընկերակցություններ.** ԱՄՆ հայագիտական ընկերակցություններն առավելապես զբաղված են կրթական, գիտական կազմակերպչական աշխատանքներով:
3. **Հայագիտական ամբիոններ.** Հայագիտական ամբիոններում դասավանդվում են հայագիտական տարբեր առարկաներ: Ամբիոնների գործունեությունը չի սահմանափակվում հայագիտական դասընթացների կազմակերպմամբ, այլ նաև ընդգրկում է գիտահետազոտական, հրատարակչական գործունեություն:
4. **Հայագիտական ծրագրեր.** Հայագիտական ծրագրերը կազմակերպում են Հայոց պատմությանը, լեզվին, գրականությանը, մշակույթին նվիրված դասընթացներ, միջոցառումներ, դասախոսություններ, հրատարակում իրենց գործունեությունը լուսաբանող պարբերականներ, ինչպես նաև ուսումնական գործընթացին օժանդակող ձեռնարկներ: Այս խմբի մեջ են մտնում ԱՄՆ տարբեր համալսարանների կազմում գործող հայագիտական ծրագրերն ու դասընթացները:

Հայագիտական ինստիտուտները

ԱՄՆ-ում հայագիտության զարգացման մեջ կարևոր ներդրում ունեն Կոմիտաս, Զորյան և Հայկական ազգային ինստիտուտները: Այստեղ կատարվող գիտահետազոտական աշխատանքները, մենագրությունների, ժողովածուների, պարբերականների հրատարակությունները գիտական մեծ արժեք են ներկայացնում: Հատկապես աչքի են ընկնում հայոց պատմության ուսումնասիրման ուղղությամբ կատարվող աշխատանքները:

1982թ. Քեմբրիջում հիմնադրվեց Զորյան ինստիտուտը¹ (Ժամանակակից հայագիտական ուսումնասիրությունների և փաստագրման Զորյան հիմնարկություն): Զորյան ինստիտուտն իրականացնում էրեք հիմնական գիտական նախագծեր՝

¹ Մանրամասն տե՛ս <http://www.zoryaninstitute.org>

1. Մփյուռքի ուսումնասիրություններ
2. Ցեղասպանության փաստագրում
3. Բաց համալսարան (անցկացվում են սեմինարներ, դասախոսություններ, գիտաժողովներ Հայաստանի և հայերի վերաբերյալ):

Ինստիտուտի մասնաճյուղեր են գործում Լոս Անջելեսում, Տորոնտոյում, Փարիզում: Զորյան ինստիտուտը գործնական կապեր ունի ինչպես Մփյուռքի, այնպես էլ Հայաստանի հայագիտական մի շարք կազմակերպությունների և անհատ գիտնականների հետ:

Հայաստանի և Հայության, մասնավորապես, հայոց պատմության վերաբերյալ հրատարակություններ է իրականացնում Կոմիտաս ինստիտուտը¹: Այն հիմնվել է Փրինսթոնում 1992թ.: Ինստիտուտը կազմակերպում է ցուցահանդեսներ, դասախոսություններ, գիտաժողովներ, իսկ 1998-ից հրատարակում է «*Armenian Forum*» հանդեսը:

Վաշինգտոնում է գործում Հայկական ազգային ինստիտուտը² (*Armenian National Institute, ANI*), որը զբաղվում է Հայոց ցեղասպանության ուսումնասիրմամբ:

Շեռազոտական աշխատանքներ են կատարվում նաև Դիրբորնի Միչիգանի համալսարանի Հայագիտական կենտրոնում: Այս կենտրոնը, ի տարբերություն ԱՄՆ մյուս համալսարանների հայագիտական հաստատությունների (ամբիոնների ու ծրագրերի), զերծ է դասընթացներ կազմակերպելու գործառույթից: Այստեղ կատարվում են գիտահետազոտական աշխատանքներ: Դիրբորնի Միչիգանի համալսարանի հայկական հետազոտության և հրատարակության կենտրոնը հիմնադրվել է 1985թ.: Հիմնադիր տնօրենն է Դ.Փափազյանը: Կենտրոնում ուսումնասիրվում են հայոց պատմության, մշակույթի, լեզվի,

¹ <http://www.gomidas.org>

² <http://www.armenian-genocide.org>

գրականության զանազան խնդիրներ: Կենտրոնն աջակցում է հայագիտական ուսումնասիրություններին վերաբերող գիտա-
ժողովների կազմակերպմանը, հրատարակում է «*ARC Newsletter*» պարբերականը¹:

Հայագիտական ընկերակցությունները

ԱՄՆ-ում Հայագիտության զարգացման մեջ կարևոր ներդրում ունեն Հայագիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգային և Հայկական ուսումնասիրությունների ընկերակցությունները:

1955թ. Բելմոնդում 60 հայ մտավորականների և Հարվարդի համալսարանի պրոֆեսորների նախաձեռնությամբ հիմնադրվեց Հայագիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգային ընկերակցությունը (*National Association for Armenian Studies and Research, NAASR*)²: Կենտրոնը Քեմբրիջում է: *NAASR*-ն աջակցում է ԱՄՆ մի շարք համալսարաններում հայագիտական ամբիոններին ու դասընթացներին: Մասնավորապես, ձեռք է բերվում հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին նվիրված գրականություն, որը տարածվում է ԱՄՆ-ում: *NAASR*-ը կազմակերպում է հայագիտական դասախոսություններ, օժանդակում հայագիտական ուսումնասիրությունների հրատարակմանը: Ընկերության դրամահավաքների շնորհիվ հայկական ուսումնասիրությունների ամբիոններ են բացվել ԱՄՆ տարբեր համալսարաններում: *NAASR*-ը հիմնել է «Հայկական ժառանգության հրատարակություն» («*Armenian Heritage Press*») տպարանը: Ընկերակցությունը հրատարակում է «Հայկական ուսումնասիրությունների հանդես» («*Journal of Armenian Studies*») հայագիտական հանդեսը (1975 թվականից) և «*NAASR Newsletter*» քառամսյան:

¹ <http://www.umd.umich.edu/dept/armenian/>

² <http://www.naasr.org>

1974թ. պրոֆ. Ռ.Հովհաննիսյանի նախաձեռնությամբ Կալիֆորնիայի, Կոլումբիայի, Հարվարդի համալսարանների մի խումբ գիտնականների կողմից հիմնվել է Հայկական ուսումնասիրությունների ընկերակցությունը (*Society for Armenian Studies, SAS*): Այն Դիրբորնի Միչիգանի համալսարանից տեղափոխվել է Ֆրեզնոյի Կալիֆորնիայի համալսարան: Ընկերակցության նախագահն է դոկտ. Կ.Բարդակջյանը: Անդամակցում են ավելի քան 200 գիտնականներ և ուսանողներ: Ընկերակցության նպատակն է խթանել հայոց պատմության, մշակույթի, գրականության, ընկերային, քաղաքական հարցերի տարածմանը, հայկական ուսումնասիրությունների վերաբերյալ սիմպոզիումների, գիտաժողովների կազմակերպմանը: Ընկերակցությունը հրատարակում է «*SAS Newsletter*», ինչպես նաև մի շարք այլ գիտական պարբերականներ¹:

Հայագիտական ամբիոնները

ԱՄՆ մի շարք համալսարաններում գործում են հայագիտական ամբիոններ:

Կոլումբիայի համալսարանի հայագիտության ամբիոնը հիմնվել է 1965 թվականին Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանում: Ամբիոնի վարիչն է Մարկ Նշանյանը: Դասավանդվող առարկաներն են՝ հայոց լեզու, գրականության պատմություն, հայ ժողովրդի պատմություն, արվեստի պատմություն: Ամբիոնը հրատարակում է հայագիտական ուսումնասիրություններ, կատարում թարգմանություններ²:

Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի Նարեկացու անվան հայագիտության ամբիոնը հիմնվել է 1969թ., համալսարանի Մերձավոր Արևելքի լեզուների և մշակույթների ֆակուլտետում՝ Ավետիս Սանճյանի ղեկավարությամբ: Դասավանդ-

¹ <http://armenianstudies.csufresno.edu/sas/>

² Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 69:

վում են գրաբար, հայ գրականություն, լեզվի և մշակույթի պատմություն, պատմագրություն: *UCLA*-ի հայագիտական ամբիոնը հովանավորում է մասնագետներին և ուսանողներին՝ մասնակցելու միջազգային գիտաժողովների, կազմակերպում դասախոսություններ, հազվագյուտ հայկական ձեռագրերի և հատուկ թեմաներով պատրաստված նյութերի ցուցադրություններ: Ամբիոնն ունի գրադարան, ուսանողներին պատրաստում է մագիստրոսի և դոկտորի գիտական աստիճանների համար: Ամբիոնի վարիչն է Փիթեր Քաուին: Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարան, Հայ կրթական հիմնարկության Արդի հայոց պատմության ամբիոնը [*University of California, Los Angeles (UCLA) - AEF (Armenian Educational Foundation) Chair of Modern Armenian History*] հիմնվել է 1988-ին, *UCLA*-ի պատմության ֆակուլտետում: Նույն ուսումնական ծրագիրը 1962 թվականից ի վեր՝ նախքան ամբիոնի ստեղծվելը, Ռ.Հովհաննիսյանի ջանքերով իրականացվել է պատմության ֆակուլտետի կազմում: Ծրագիրն ընդգրկում է հայոց հին, միջնադարյան, արդի պատմությունը, Կովկասի պատմությունը, պատմագիտությունը, բանավոր պատմությանը վերաբերող թեմաներ: Ուսանողները ստանում են մագիստրոսի և դոկտորի աստիճան: Ամբիոնի վարիչն է Ռիչարդ Հովհաննիսյանը: Ամբիոնի գործունեության շրջանակներում պարբերաբար հրավիրվում են գիտաժողովներ, հրատարակվում գիտական հետազոտություններ¹:

Հայագիտական ծրագրերը

Հարվարդի համալսարանի հայագիտական ծրագիրը հիմնվել է 1960թ.՝ Հարվարդի համալսարանի (Քեմբրիջ) արևելյան լեզուների բաժնում: Ծրագիրն ընդգրկում է հայոց լեզվի, գրականության և պատմության դասընթացներ: Ծրագրի ղեկավարն է հայագետ Ջեյմս Ռասելը²:

¹ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 69-70:

² <http://www.fas.harvard.edu/~nelc/armenian.html>

Էնն Արբորի Միչիգանի համալսարանի հայագիտական ծրագիրը հիմնվել է 1976թ., Միչիգանի համալսարանի սլավոնական լեզուների և գրականության ֆակուլտետում՝ արևմտահայերենի և հայոց պատմության դասընթացներով: Հայագիտական ծրագրերը համակարգում են 1981-ից պատմության ֆակուլտետում գործող Ալեք Մանուկյանի անվան հայ ժողովրդի արդի շրջանի պատմության և 1987 թվականից՝ Սլավոնական լեզուների և գրականության ֆակուլտետում՝ Մարի Մանուկյանի անվան հայոց լեզվի և գրականության (1997-ից՝ Մերձավորարևելյան ուսումնասիրությունների ֆակուլտետում) ամբիոնները: Ամբիոնները պարբերաբար հրավիրում են գիտաժողովներ, կազմակերպում դասախոսություններ: Դասավանդում են հայոց պատմությանը, լեզվին, գրականությանը, մշակույթին վերաբերող բազմաթիվ առարկաներ: Ամեն տարի Երևանում Հայոց լեզվի ամառային ինստիտուտն իրականացնում է հայոց լեզվի արագացված ուսուցման ծրագիր: Հրատարակվում է տեղեկատու պարբերաթերթ¹:

Ֆրեզնոյի Հայկական ուսումնասիրությունների կենտրոնը՝ Կալիֆորնիայի նահանգային համալսարանի Հայագիտական ծրագրի շրջանակներում, սկսած 1970-ական թվականներից անցկացնում է հայագիտական դասընթացներ: Հայագիտական ծրագիրը պաշտոնապես հիմնվել է 1988թ.՝ Տ.Գույումճյանի նախաձեռնությամբ, Հայկ և Իզաբել Բերբերյանների նյութական աջակցությամբ: Ընդգրկում է հայոց լեզվին, գրականությանը, պատմությանը, մշակույթին, եկեղեցուն, ճարտարապետությանը, ամերիկահայ գաղութին, Հայաստանի այսօրվա վիճակին վերաբերող թեմաներ: Ծրագիրը հովանավորում է Սահակյան գրադարանին և Ավեդյան արխիվներին: Ֆրեզնոյի Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի ջանքերով գործում են «Հայ ուժ» և «Ամեն ինչ հայերեն» ռադիոծրագրերը, հրատարակվում է «*Hye Sharzhoom*» պարբերականը: 1992թ. Կալիֆորնիայի նա-

¹ <http://www.umich.edu/~iinet/asp/AboutUs/Program%20Information/history.html>

հանգային և Երևանի պետական համալսարանների միջև կնքվել է դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագիր: Ֆրեզնոյի Հայագիտական կենտրոնը դասընթացներ է անցկացնում նաև Հայաստանում¹:

Կալիֆորնիայի պետական համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ծրագիրն ունի համացանցային կայքէջ (armenianstudies.csufresno.edu): Դրանում, բացի Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի բազմաբնույթ գործունեությանը վերաբերող տեղեկություններից, մանրամասն ներկայացված են հայոց արվեստը՝ ճարտարապետությունը, մանրանկարչությունը, քանդակագործությունը, կերամիկան, մետաղագործությունը, դրամահատությունը, զարդագործությունը, գորգագործությունը, ասեղնագործությունը, երաժշտությունը, գրքարվեստը: Կայքէջը պարունակում է ճարտարապետական կոթողների և արվեստի այլ գործերին վերաբերող հարուստ նյութեր ու լուսանկարներ, ինչն օգնում է ավելի ամբողջական պատկերացում կազմել արվեստի կոթողների վերաբերյալ²:

Հայկական ուսումնական ծրագիր. Կալիֆորնիայի պետական համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ծրագրի շրջանակներում դասավանդվում են հայոց պատմություն, գրականություն, արվեստ, ճարտարապետություն և կինո: Հայկական կրթական ամբիոնի դասընթացները՝ հայոց լեզու, գրականություն, պատմություն, դասավանդվում են արտասահմանյան լեզուների ու գրականության և պատմության բաժիններում: Դասընթացները բաղկացած են 2 մասից՝ հայոց լեզու և հայկական գիտություն:

¹ Մանրամասն տե՛ս *Ղանալանյան Տ.*, Հայերն ԱՄՆ-ում (Ֆրեզնոյի Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի օրինակով)

<http://www.noravank.am/am/?page=theme&thid=6&nid=1803>

² armenianstudies.csufresno.edu

Կրթաթոշակները. ամեն տարի Կալիֆորնիայի պետական համալսարանի (Ֆրեզնո) Հայկական ուսումնասիրությունների կենտրոնն ավելի քան \$60.000-ի կրթաթոշակ և դրամաշնորհ է տրամադրում համալսարանին՝ Հայաստանով և հայերով հետաքրքրվող ուսանողներին աջակցելու համար: Կրթաթոշակները ոչ միայն հայկական ծագում ունեցող ուսանողների, այլև բոլոր նրանց համար են, ովքեր անցնում են Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի դասընթացները: Կրթաթոշակներից բացի, Հայկական ուսումնասիրությունների կենտրոնն իր վրա է վերցնում ուսումնական բոլոր ծախսերը: Բացի այդ, առանձին հետազոտական դրամաշնորհներ հանձնվում են Հայկական ուսումնասիրությունների ծրագրի այն ուսանողներին, որոնք ունեն միջինից բարձր գնահատական, հետաքրքրվում են հայոց պատմության, արվեստի կամ գրականության հետազոտություններով:

Հայկական ռադիոծրագրեր. Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում, Բոստոնում, Փրովիդենսում, Մաուֆֆիլդում, Նորդվիլում գործում են հայկական ռադիոհեռուստածրագրեր՝ հայերեն և անգլերեն¹: «Ամեն ինչ հայերեն» ռադիոծրագիրը շաբաթական մեկ անգամ մեկ ժամ տևողությամբ պատրաստվում է Կալիֆորնիայի պետական համալսարանի, Ֆրեզնոյի Հայկական ուսումնասիրությունների ծրագրի կողմից: «Հայ ուժ» ռադիոծրագիրը հեռարձակվում է՝ սկսած 1991-ից: Այն ներառում է հայ երաժշտության բոլոր տեսակները՝ դասական, ժամանակակից, ժողովրդական և այլն: Կատարվում է կարևոր աշխատանք հայկական երաժշտությունն ամեն շաբաթ հեռարձակման պատրաստելու համար: «Հայ ուժ» ռադիոծրագիրը հեռարձակվում է ամեն շաբաթ:

¹ Հայերն աշխարհում, հանրագիտական համառոտ բառարան, Երևան, 1995, էջ 23:

Հայկական ուսումնասիրությունների ծրագրի դասընթացները Երևանում. Կալիֆորնիայի պետական համալսարանի, Ֆրեզնոյի Հայկական ուսումնասիրությունների ծրագիրը կազմակերպում է դասընթացներ Հայաստանում՝ նվիրված հայոց լեզվին, պատմությանը, արվեստին և ժամանակակից իրադարձություններին: Ծրագիրը բաղկացած է հինգ դասընթացներից. հայոց լեզու, հայ արվեստ և ճարտարապետություն, Հայաստանն այսօր, հայագիտություն, անկախության շրջան: Դասընթացների ծրագիրը կազմված է Կալիֆորնիայի պետական համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ծրագրի կողմից¹:

Կալիֆորնիայի պետական համալսարանի Ֆրեզնոյի Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի գործունեությունը նպաստում է ԱՄՆ հայկական համայնքի և, մասնավորապես, Կալիֆորնիայի գաղթօջախների բնականոն զարգացմանը: Այս կենտրոնի գործունեության շնորհիվ հայագիտությունը զարգանում է ոչ միայն ԱՄՆ-ում, այլև ամբողջ աշխարհում: Բացի գիտական գործունեությունից՝ Ֆրեզնոյի Հայկական ուսումնասիրությունների կենտրոնը նպաստում է ամերիկաբնակ հայության կրթության գործին: Ի վերջո, կենտրոնը նպաստում է ոչ միայն գիտության զարգացմանը, այլև իր լուծման է ներդնում ԱՄՆ հայկական համայնքի հայապահպանության գործում: Ֆրեզնոյի Հայկական ուսումնասիրությունների կենտրոնը հայրենիքից դուրս, օտար աշխարհում հայագիտության զարգացման յուրօրինակ կազմակերպություն է: Գլոբալացվող աշխարհում սփյուռքի հայկական գաղթօջախներում հայապահպանության հարցը դարձել է չափազանց արդիական, որի լուծմանն են ուղղված Հայաստանում և սփյուռքում գործող բազմաթիվ կազմակերպություններ, միություններ, կենտրոններ: Այդ կազմակերպությունների շարքում ուրույն տեղ է գրավում Կալիֆոր-

¹ armenianstudies.csufresno.edu

նիայի պետական համալսարանի Ֆրեզնոյի Հայկական ուսումնասիրությունների կենտրոնն իր կառույցներով:

1994թ. Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի Սլավոնական և Արևելյան Եվրոպայի ուսումնասիրությունների կենտրոնում հիմնադրվեց Վիլյամ Սարոյանի անվան հայագիտական ծրագիրը: Սահմանափակ պարապմունքներով սկզբնավորված այս ծրագիրն այժմ ընդարձակվել է՝ ընդգրկելով հայագիտական առարկաների գծով դասընթացներ և դասախոսություններ: Ծրագիրը ղեկավարում է Ստեփան Աստուրյանը:

Հայագիտական դասընթացները Նորթրիջի Կալիֆորնիայի նահանգային համալսարանում սկսվել են 1983թ. ժամանակակից և դասական լեզուների բաժանմունքում: Հայոց լեզվի և մշակույթի դասընթացների կազմակերպման գործում նշանակալի ավանդ ունեն համալսարանի Հայ ուսանողների միությունը և Հերմինե Մահսերճյանը: 2000թ. ծրագիրը պաշտոնապես ճանաչվել է համալսարանի կողմից և կցվել Արդի և դասական լեզուների և գրականության բաժնին: 2004թ. կապեր հաստատվեցին Երևանի պետական համալսարանի հետ¹:

Աստվածաբանական բարձրագույն ճեմարանի Աստվածաբանության հայկական բաժանմունքը հիմնվել է 1983թ. Փասսադենայում, ամերիկյան Աստվածաբանական ճեմարանում՝ Գ.Հալեբյանի ղեկավարությամբ: Շրջանավարտներին շնորհվում են մագիստրոսի և դոկտորի կոչումներ²:

Այսպիսով, ԱՄՆ հայագիտական կենտրոններն ունեն կարևոր նշանակություն այս պետությունում հայագիտության զարգացման, հայագիտական առարկաների դասավանդման, հայագիտական գրականության հրատարակման գործում: Դրանք պատրաստում են հայոց պատմության, լեզվի, գրականության, մշակույթի մասնագետներ: Հայագիտական բազմաթիվ

¹ <http://asbarez.com/59153/csun-celebrates-25th-anniversary-of-armenian-studies-program-honors-former-director-hermine-mahseredjian/>

² Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 70:

կենտրոններ զբաղվում են նաև գիտահետազոտական աշխատանքով, հրատարակում գիտական պարբերականներ, հանդեսներ, գրքեր: ԱՄՆ հայագիտական կենտրոններն ունեն գարգացման մեծ ներուժ: Այս կենտրոնների ակտիվ համագործակցությունը հայաստանյան գիտական ու կրթական կազմակերպությունների հետ կարևոր նշանակություն ունի: Հայաստանում կատարվող հայագիտական աշխատանքներին ԱՄՆ հայագիտական կենտրոններին հաղորդակից դարձնելը, փորձի փոխանակումը ևս առաջնակարգ նշանակություն ունեն: Դրանք կարող են էապես ընդլայնել իրենց գործունեության շրջանակը՝ առավել կազմակերպված, միավորված գործելու, ինչպես նաև Հայաստանի հետ կապերն ամրապնդելու շնորհիվ: Այս առումով մեծ անելիքներ ունեն ինչպես ԱՄՆ հայագիտական կենտրոնները, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կրթական և գիտական միավորները:

ԳԼՈՒԽ 3.
ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՄՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ
ԱՇԽԱՏՈՂ ՀԱՅԱԶԳԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ

ԱՄՆ-ում հայկական լրատվամիջոցներ են գործում երկրի թե՛ արևմուտքում, թե՛ արևելքում, հատկապես Մասաչուսեթս նահանգում և Նյու Յորքում, ըստ էության, հայերով խիտ բնակեցված շրջաններում: Առավել զարգացած է տպագիր մամուլը՝ «Ասպարեզ», «*Armenian Weekly*», «Հորիզոն», «*Armenian Reporter*», «*Armenian Mirror Spectator*», «*California Courier*», «Հայ կեանք», «Նոր կեանք» շաբաթաթերթեր, «Նոր օր», «*Yerevan*» հանդեսներ: Գործում են նաև «Հորիզոն», *ARTN Shant*, *AABC*, *AMGA*, *USArmenia* հեռուստարևիկայությունները և այլն:

ARTN հեռուստաալիքը Հայաստանում գործող Գյումրիի «Շանթ» հեռուստաալիքի հետ համատեղ է եթեր ապահովում՝ հեռարձակվելով հիմնականում հարավային Կալիֆորնիայում: *ARTN*-ը հեռարձակում է «Շանթի» պատրաստած հաղորդումների և սերիալների մեկ մասը: Այն հիմնվել է 1985թ.: Հեռուստաալիքի եթերը երկլեզու է՝ հայերեն և ռուսերեն: Առկա է նաև օնլայն հեռարձակում կայքի միջոցով՝ <http://www.artn.tv>:

Լոս Անջելեսում և Սան Ֆերնանդոյի հովտում հեռարձակվում է *AMGA* հեռուստաալիքը, որը հիմնվել է 1995թ.: 4 տարի անց տեղի ունեցան վերակազմավորման աշխատանքներ, զգալիորեն ավելացավ հաղորդումների տեսականին, նախկինում շաբաթական 5 օր հեռարձակվող *AMGA*-ն ամենօրյա ռեժիմով

օրական 19 ժամ եթեր է ապահովում: Հեռուստատեսության *www.amga.tv* կայքը նշում է, որ մինչև կես միլիոն հեռուստադիտող ունեն:

USArmenian առավել հայտնի է մասնավորապես Հայաստանում, քանի որ ՀՀ-ում գործող *Armenia* հեռուստաալիքի ամերիկյան գրասենյակն ու ստուդիան է: Տեղակայված է Լոս Անջելեսի Բրբանք թաղամասում, որտեղ տասնամյակներով հաստատվել են ամերիկյան խոշոր հեռուստաալիքների ստուդիաներն ու գրասենյակները: Հեռուստաալիքը եթերում է 24 ժամ, *USArmenia*-ի պատրաստած տեսանյութերը պարբերաբար տեղադրվում են նաև *usarmeniatv.com* կայքում և *Youtube*-ում:

Նյու Ջերսիի տարածաշրջանում է գործում «Արձագանք» ստուդիան, որը եթեր է ապահովում շաբաթական մեկ անգամ երկու ժամով, նահանգի հանրային հեռուստաալիքներից մեկով:

Հայերեն ծառայություն ունի ամերիկյան *Voice of America (VOA)* պետական ռադիո և հեռուստաընկերությունը: Սառը պատերազմի շրջանում 10-ից ավելի աշխատակիցներ ունեցող հայկական ծառայության անձնակազմի թիվը ներկայում ավելի քան կրկնակի նվազել է: *VOA*-ը հեռարձակում է նաև «Արձագանքի» պատրաստած տեսանյութերը: Ինչպես *VOA*-ի, այնպես էլ «Արձագանքի» պատրաստած տեսանյութերի մի մասը հեռարձակվում է նաև *USArmenia*-ի միջոցով:

2007-ից Լոս Անջելեսում, իսկ 2008-ից՝ նաև Վաշինգտոնում ներկայացուցչություն ունի Հայաստանի Հանրային հեռուստաընկերությունը: Հայաստանի Առաջին ալիքը դարձավ առաջին և առայժմ միակ հայաստանյան հեռուստատեսային ընկերությունը, որը պաշտոնապես գրասենյակ բացեց ԱՄՆ մայրաքաղաքում:

ԱՄՆ հայկական լրատվամիջոցների զգալի մասն առնչություն ունի հայկական ավանդական կուսակցությունների հետ: 1908թ. Ֆրեզնո քաղաքում սկսել է հրատարակվել «Ասպարեզը»: Նախորդ դարասկզբից մինչև մոտավորապես 50-ական թվա-

կանները Ֆրեզնոն արևմտյան ամենահայաշատ քաղաքն էր, քանի որ Գլենդելի և Նորթ Հոլիվուդի «հայացումն» ավելի ուշ շրջանի հետ է կապված: «Ասպարեզը» ՀՅԴ Արևմտյան Ամերիկայի Կենտրոնական կոմիտեի պաշտոնաթերթն է: Մոտ 60 տարի այն միայն հայալեզու էր, այնուհետև 1970թ. մայիսի 1-ին լույս տեսավ «Ասպարեզի» անգլերեն բաժինը: 70-ականներին թերթի խմբագրությունը փոխադրվեց Կալիֆոռնիա, Լոս Անջելեսի մերձակա Լիթլ Արմենիա բնակավայր, Հոլիվուդի տարածաշրջան: Ներկայում թերթի հայերեն և անգլերեն բաժինները համատեղ են լույս տեսնում: Անգլերեն էջերի խմբագիրն է Արա Խաչատրյանը, հայերենինը՝ Ափո Պողիկյանը: 1994թ. սկսեց տարածվել «Ասպարեզի» էլեկտրոնային տարբերակը, իսկ 1997թ. հիմնվեց կայքէջը՝ www.asbarez.com: ՀՅԴ թերթը լինելով «Ասպարեզը. գործնականում կապեր ունի թե՛ ԱՄՆ, թե՛ Հայաստանի և թե՛ այլ պետությունների դաշնակցական լրատվամիջոցների հետ, ինչը համացանցի հետաքրքիր և ինքնատիպ օրինակ է հայ իրականության մեջ: «Կապ ենք պահպանում ԱՄՆ Արևելյան ափի, Ֆրանսիայի, Կանադայի, Ավստրալիայի, Հունաստանի համապատասխան լրատվամիջոցների հետ»,- հեռախոսագրույցում նշել է «Ասպարեզի» գլխավոր խմբագիր Արա Խաչատրյանը: Թերթը սերտորեն գործակցում է «Հորիզոն» հեռուստաընկերության հետ և հեռուստաալիքից որոշ տեսագրություններ է տեղադրում իր կայքում:

Compete.com էլեկտրոնային հասցեն հնարավորություն է տալիս համեմատելու, թե որքան այցելու ունի տվյալ կայքը ԱՄՆ-ում: Այսպիսով, Compete կայքի միջոցով նկատելի է, որ 2010թ. օգոստոս ամսվա ընթացքում «Ասպարեզի» կայք այցելել են 68 հազար անգամ, իսկ ունիկալ այցելուների (*unique visitors*) թիվը 11 հազարից քիչ ավելի է, այսինքն՝ 24 ժամվա ընթացքում «Ասպարեզի» կայքին դիմած համակարգիչների թիվը կազմել է 11 հազարից ավելի: Սա ամերիկահայ համայնքային տպագիր մամուլի ամենաբարձր հաճախության ցուցանիշն է: Թերթը

լուրեր և վերլուծական-հրապարակախոսական հոդվածներ է հրատարակում Հայաստանի և ամերիկահայ համայնքի վերաբերյալ, ինչպես նաև անդրադառնում է Թուրքիային, Ադրեջանին, Վրաստանին, առանձին ենթավերնագրերով՝ նաև Արցախին և Ջավախքին:

Թերթի առաջնահերթ նպատակներից է բջջային հեռախոսներով «Ասպարեզի» օրինակները մատչելի դարձնելու նախագիծը: «Պետք է ուժեղացնենք էլեկտրոնային ներկայությունը, պատրաստվելու են հեռախոսների համար համապատասխան ապլիկացիաներ», - նշում է Ա.Խաչատրյանը: Սպիտակի երկրաշարժից հետո, Հայաստանի անկախության շրջանում, Արցախյան պատերազմի ընթացքում, հոկտեմբերի 27-ի ահաբեկչական գործողության առիթով, Հայոց ցեղասպանության օրինագծերի օրակարգ գալու կամ արձանագրությունների առնչությամբ «Ասպարեզի» մեջբերումներ են կատարել նաև ամերիկյան լրատվամիջոցները: Մասնավորապես, ակտիվ են *Los Angeles Times*-ը և Վաշինգտոնում լույս տեսնող *Politico* օրաթերթը:

1958թ. Ֆրեզնոյում հայազգի Ջորջ Մեյսոն-Էլմայանը և Ռիս Քլեգհորնը հիմնեցին «*California Courier*» անգլիալեզու լրագիրը: Այն ԱՄՆ առաջին հայկական, բայց անգլիալեզու հանդեսներից էր: Ավելի ուշ Քլեգհորնը փոխադրվեց ԱՄՆ արևելյան ափ՝ դառնալով Մեծ Վաշինգտոնի տարածաշրջանում գտնվող Մերիլենդի համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանը: 1983թ. թերթում աշխատանքի անցավ Հարութ Սասունյանը, որը նույն թվականից թերթի գլխավոր խմբագիրն ու հրատարակիչն է, ամերիկահայ համայնքի ճանաչված գործիչներից մեկը: Հարութ Սասունյանը միաժամանակ Միացյալ հայկական հիմնադրամի գործադիր տնօրենն էր, ներկայում՝ նախագահը և Լինսի հիմնադրամի ավագ փոխնախագահը:

Մեր հայրենակիցը թերթի խմբագրությունը փոխադրեց Գլենդեյլ: Թերթը լույս է տեսնում յուրաքանչյուր հինգշաբթի: Հարութ Սասունյանի վերլուծական հոդվածները թարգման-

վում են հայերեն և պարբերաբար լույս տեսնում Հայրենիքում («Նոյյան տապան» գործակալություն, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, «Ազգ» օրաթերթ, *Pan-Armenian* և *Panorama* կայքեր և այլն):

Վերջին տարիներին Հ.Սասունյանի շաբաթական հոդվածները կանոնավոր թարգմանվում են առնվազն 5 լեզուներով՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, թուրքերեն և այլն: Թարգմանաբար հոդվածներ է տպագրում թուրքական «Ռադիկալը»: Միաժամանակ, առնվազն ամիսը մեկ անգամ հոդվածներ են տպվում նաև *The Huffingtonpost* ամերիկյան հեղինակավոր կայքում (www.huffingtonpost.com): Վերջինս ԱՄՆ ամենահեղինակավոր բլոգներից է, որի ընթերցողների թիվն անցնում է մի քանի միլիոնից: Մասնավորապես, *Huffingtonpost* կայքում 2010թ. ընթացքում հրատարակած հոդվածները վերաբերել են Ադրբեջանում և Թուրքիայում ԱՄՆ դեսպանի թեկնածուներ Մեթյու Բրայզայի և Սեմ Բրաունբերի թեկնածությունների արգելափակմանն ԱՄՆ Սենատում, Թուրքիա-Իսրայել հարաբերություններին, Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդրին և այլն:

«Ս.թ. հուլիսին Բրայզայի թեկնածության լուսմների ընթացքում մի շարք սենատորներ կոնկրետ հարցեր ուղղեցին Արցախյան կարգավորման միջնորդ աշխատելու ժամանակաշրջանի վերաբերյալ: Նրանք նաև ներկայացրին լուրջ մտահոգություններ շահերի հակասության հնարավորության առիթով, որ առնչվում էր կնոջը և այն նվերներին, որ գույզը ստացել էր Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաներից ամուսնության կապակցությամբ: Սենատորներ Բարբարա Բոքսերը, Ռոբերտ Մենենդեզը, Ռաս Ֆեյզուլը, հանձնաժողովի նախագահ Ջոն Քերին, Սենատի մեծամասնության ղեկավար Հարի Ռեյդը բավարարված չէին Բրայզայի ոչ ամբողջական և անորոշ պատասխաններից: Սա դրական ոչինչ չէր խոստանում Բրայզայի դեսպանական հավակնություններին, քանի որ 5 սենատորներն էլ դեմոկրատներ

էին և ըստ ընթացակարգի պետք է որ սատարէին դեմոկրատ նախագահի առաջադրած թեկնածուին»,- *The Huffingtonpost*-ի էջերում նշում է մեր հայրենակիցը¹: Ի դեպ, նույն բլոգում ժամանակ առ ժամանակ հրապարակումներով հանդես է գալիս նաև Նյու Յորքում գործող Ժողովրդավարության և համագործակցության ինստիտուտի տնօրեն Անդրանիկ Միհրանյանը²:

Ամերիկյան հեղինակավոր բլոգում Սասունյանի և Միհրանյանի հոդվածների հրապարակումը կարևոր դեր ունի ամերիկյան լրատվական դաշտում հայկական թեման օրյեկտիվ և ընդգծված կերպով ներկայացնելու, հայ հեղինակներին ամերիկյան աղբյուրներում ներկայացնելու տեսանկյունից:

Կալիֆորնիայում է հրատարակվում «ԱՄՆ Հայ կեանք» և գուգաիեռաբար անգլերեն *USA Armenian Life* հանդեսը: Թերթը հիմնվել է 1985թ. հոկտեմբերին, ոչ կուսակցական լրատվամիջոց է: «Ազատ լրագրություն, ազգային արժեքների պահպանում, մասնակցություն ազգային գիտակցության զարգացմանը և հայկական օրիենտացիայի քաղաքական մտածելակերպ»,- այսպես է գլխավոր խմբագիր Ափո Ջաբարյանը բնորոշում թերթի հիմնական նպատակները: Թերթը թղթակիցներ ունի նաև ԱՄՆ արևելյան ափին և Հայաստանում:

Արևմտյան ափին՝ Գլենդեյլում է գտնվում նաև *Yerevan* ժամանցային բնույթի հանդեսի խմբագրությունը: Անգլերեն բաժնի խմբագիրն է Ռաֆայել Հակոբջանյանը³:

Արևելյան ափին համամասնորեն ամենահայաշատ քաղաքը Մասաչուսեթս նահանգի Ուոթերթաուն քաղաքն է: Այն նաև երրորդ ամենահայաշատ քաղաքն է ողջ երկրում՝ Գլենդեյլից և Ֆրեզնոյից հետո: Ուոթերթաունի քաղաքապետարանի կայքի տվյալներով՝ քաղաքի բնակչության թիվը 32 հազար 986⁴ է:

¹ Obama can now replace Bryza with a new nominee as ambassador to Azerbaijan, Harout Sasounian, www.huffingtonpost.com 10.01.2010

² <http://www.huffingtonpost.com/andranik-migranyan>

³ <http://www.yerevanmagazine.com/contact/>

⁴ <http://www.ci.watertown.ma.us/index.aspx?NID=340>

Տարբեր հաշվարկներով՝ քաղաքի հայերի թիվը 7-10 հազար է¹:

Քաղաքի Քուլիջ սքուեր կոչվող հատվածը հայտնի է նաև Լիթլ Արմենիա անվամբ: Այստեղ են կենտրոնացած «Հայրենիք», *The Armenian Weekly*, *The Armenian Review*, *The Armenian Mirror-Spectator* թերթերի խմբագրությունները: Տասնամյակներ շարունակ Ուոթերթաունում լույս է տեսել նաև «Պայքար» հանդեսը, որը ներկայում չի հրատարակվում, թեև գործում է «Պայքար» հասարակական կազմակերպությունը: «Հայրենիքի» և *The Armenian Weekly*-ի խմբագրությունները միննույն շենքում են: Այստեղ են նաև ՀՅԴ կուսակցության արխիվները: Վերը նշված լրատվամիջոցները ԱՄՆ ՀՅԴ Արևելյան ասիի Կենտրոնական կոմիտեի տպագիր օրգաններն են:

«Հայրենիքը» հիմնվել է 1899թ. Բոստոնում: Աշխարհում ամենահին հայկական լրատվամիջոցն է, որ շարունակում է հրատարակվել: Հիմնադրումից հետո 14 տարի «Հայրենիքը» լույս է տեսել իբրև շաբաթաթերթ, 1913-ից հրատարակվում էր շաբաթը 3 անգամ: 1909-1911թթ. թերթի գլխավոր խմբագիրն էր Սիամանթոն, 1911-1914թթ.՝ հետագայում անկախ Հայաստանի վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը²: Ժամանակի ընթացքում լույս են տեսել նաև «Հայրենիք» ամսագիրը և նույնանուն եռամսյան: 20-ականներին թերթի խմբագրատունը փոխադրվել է Ուոթերթաուն: Այսօր թերթի գլխավոր խմբագիրն է Ջավեն Թորիկյանը: Թերթի կայքէջն է www.hairenik.com: 2005-ից *online* տարբերակով գործում են նաև «Հայրենիք» ռադիոկայանը և հեռուստաալիքը, վերջինս՝ ոչ մշտական հիմունքներով:

Armenian Weekly հանդեսը հրատարակվում է 2000-ից, ներկայում գլխավոր խմբագիրն է Խաչիկ Մուրադյանը: Նախկինում լիբանանաբնակ Խ.Մանուկյանը 2000-2007թթ. «Ազդակ» հանդեսի գլխավոր խմբագիրն էր: Մեր հայրենակիցը նաև գիտական և գրական գործունեությամբ է զբաղվում: Մասնակցել է

¹ http://en.wikipedia.org/wiki/Watertown,_Massachusetts

² Տե՛ս «Hairenik», <http://www.armeniapedia.org/index.php?title=Hairenik>

հայ-թուրքական հարաբերությունների թեմաներով գիտաժողովների Նյու Յորքում, ժնևում և այլուր: Ցեղասպանագետների միջազգային միության (*IAGS-International Association of Genocide Schollars*) անդամ է: Նաև բանաստեղծ Խ.Մուրադյանը հայերեն է թարգմանել Պաոլո Կոելյոյի «Ալքիմիկոսը», որ լույս է տեսել 2004-ին, իսկ Երևանի պետական լսարանում տեղի ունեցած շնորհանդեսին ներկա էր հեղինակը¹:

The Armenian Weekly-ն այն եզակի հայկական լրատվամիջոցներից է, ուր հրապարակումներով հանդես են գալիս ազգությամբ թուրք հեղինակներ: Այստեղ լույս են տեսել թուրք սոցիոլոգ Թաներ Աքչամի, իրավապաշտպաններ Այշե Գյունայսուրի, Էրեն Քեսքինի հոդվածները: *Armenian Weekly*-ն ևս որոշակիորեն հետաքրքրում է ոչ հայկական շրջանակներին: *Compete.com* կայքի վիճակագրությամբ, 2010թ. օգոստոսի ընթացքում *Armenian Weekly*-ի այցելուների թիվը կազմել է 17 հազար, իսկ *unique visitor*-ների թվով՝ 8 հազարից քիչ ավելի:

The Armenian Mirror-Spectator-ը ևս Ուոթերթաունում հրատարակվող հայկական շաբաթաթերթ է, այն հայ ավանդական կուսակցություններից Ռամկավար Ազատական կուսակցության Արևելյան Ամերիկայի կոմիտեի տպագիր օրգանն է: Թերթը ևս մատչելի է *on-line* ձևաչափով՝ www.mirrorspectator.com: *Boston Glob* հեղինակավոր օրաթերթը տեղադրել է *The Armenian Mirror Spectator*-ի *link*-ը: Թերթի տպաքանակը 1500-2000-ի չափ է: Գլխավոր խմբագիրն է Ալին Գրիգորյանը, փոխխմբագիրը՝ Արամ Արևունը: Դեթրոյթցի գրող, հրապարակախոս Երվանդ Ազատյանը ևս վարչական խորհրդի կազմում է: Ազատյանը նաև «*Heritage of Armenian Culture*» (Հայ մշակույթի ժառանգություն) ռադիոժամի ղեկավարն է: Նախկինում 20 տարի Միչիգանի նահանգի հանրային ռադիոյով, իսկ ներկայում 10 տարի *WMZK FM* հաճախության ռադիոկայանով շաբաթական մեկ անգամ հեռարձակվող հայկական ռադիոժամի ընթացքում

¹ <http://khatchigmouradian.blogspot.com/>

սփռվում է հայկական, առավելապես՝ դասական երաժշտություն: Հայկական ռադիոժամը պատրաստում են պրն Ազատյանը և Սյուզի Քանթարջյանը:

«Ամերիկահայ մամուլը և ռադիոն 90 տոկոսով հայապահպանության համար են աշխատում: Պետք է արդիականացնել մեր միջոցները: Անձնակազմ է պետք: Ժամանակը միջոցներու բարելավում կուզե», - հեռախոսագրույցի ժամանակ նշել է Երվանդ Ազատյանը:

Բերելով «*Armenian Mirror Spectator*»-ի օրինակը՝ Երվանդ Ազատյանը նշում է, որ թերթի խմբագրակազմը պրոֆեսիոնալ է, սակայն միջոցների սակավության պատճառով աշխատակիցների ներգրավման խնդիր կա, և աշխատակազմը գերազանցապես գործում է ոչ այնքան նյութական շարժառիթներով, որքան գաղափարային հենքի կամ խմբագրի անձնական ջանադրության արդյունքում, սակայն վերջնարդյունքում դա աշխատանքային առումով սահմանափակումներ է առաջացնում: Ուշագրավ են պրն Ազատյանի դատողությունները ԱՄՆ հայ համայնքի նյութական ռեսուրսի վերաբերյալ. «Նոյեմբերյան պարբերական հեռուստամարաթոնի ընթացքում հավաքվում է մոտ 15 միլիոն դոլար: Մի կողմից ուրախալի է, որ ցուցանիշն աճում է, մյուս կողմից, կարող եմ Ձեզ վստահեցնել, որ ԱՄՆ-ում ունենք հարյուրավոր հայեր, ովքեր կարող են մեկ չէքով դուրս գրել 15 միլիոնը: Չեմ ասի հազարավոր, սակայն՝ հաստատ հարյուրավոր»: Պրն Ազատյանը նկատում է, որ հայկական ներուժի մեկտեղումը որոշակի ժամանակ է պահանջելու, նաև որոշակի աշխատանք բուն համայնքի ներսում՝ ներառելով նաև Հայաստան-Սփյուռք շփումների ուղղությունը:

Ուրթերթաունում է լույս տեսնում նաև «*The Armenian Review*» հանդեսը: Ինչպես նշել էինք, 20-ականներին հիմնվել էր «Հայրենիք» հայալեզու ամսագիրը, որը տպագրում էր ինչպես գիտական բնույթի հոդվածներ, այնպես էլ գրական գործեր և պոեզիա: 1947թ. հիմնվեց զուգահեռ անգլիալեզու «*Armenian Re-*

view»-ն: Ավելի ուշ հայալեզու ամսագիրը դադարեց հրատարակվել, անգլերեն տարբերակը պահպանվեց: Մինչև 70-ականները հանդեսը շարունակում էր գրական-գեղարվեստական ուղղվածությունը, սակայն նախորդ դարի վերջին քառորդում աստիճանաբար գիտական ուղղվածությունը սկսեց տիրապետող դառնալ և ներկայում ամբողջովին գիտական հանդես է, ԱՄՆ 2 գիտական բնույթի հրատարակություններից մեկը:

2008թ. գլխավոր խմբագիր դարձավ Ասպետ Կոչիկյանը: Ծագումով լիբանանահայ մեր հայրենակիցը երկար տարիներ բնակվել է Հայաստանում, ներկայում Մասաչուսեթսի նահանգի Բերքլիի համալսարանում քաղաքագիտության պրոֆեսոր է: Նա խմբագրի պաշտոնում փոխարինեց Հայկ Օշականին, որն ականավոր գրող Հակոբ Օշականի թոռն է:

Հանդեսը նախկինում լույս էր տեսնում տարին 4 անգամ, ավելի ուշ պարբերականությունը խախտվեց, վերջին երկու տարիներին հրատարակվում է տարեկան 2 համար: Հանդեսի բաժանորդների թվում են հայագիտական կենտրոններ և անհատ հայագետներ, գրադարաններ, գիտնականներ, առավելապես ավագ սերնդի ամերիկահայեր: Հրատարակվում է մոտ 1500 տպաքանակով: Տասնամյակների ընթացքում ամերիկահայ հանդեսում հրապարակումներով հանդես են եկել Վիլյամ Մարոյանը, Ռիչարդ Հովհաննիսյանը, Ռոնալդ Սյունին, Ժիրայր Լիպարիսյանը, որը մոտ մեկ տասնամյակ նաև խմբագիր է եղել, Կլոդ Մուրաֆյանը, Ռուբեն Շուգարյանը և ուրիշներ:

Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաքում է գտնվում մեկ այլ ամերիկահայ գիտական հանդեսի խմբագրությունը՝ *Journal of Societies of the Armenian Studies*. այն լույս է ընծայում Ֆրեզնոյում գտնվող Կալիֆորնիայի պետական համալսարանի Հայկական հետազոտությունների համայնքը (*California State University, Society of Armenian Studies-SAS*): SAS-ը հիմնվել է 1974թ. Կալիֆորնիայի, Կոլումբիայի (Նյու Յորք) և Հարվարդի (Մասաչուսեթս) համալսարանները ներկայացնող անվանի գիտնական-

ներ Ռիչարդ Հովհաննիսյանի, Տիգրան Գույումջյանի, Նինա Գարսոյանի, Ավետիս Սանջյանի և Ռոբերտ Թոմսոնի կողմից¹: Վերջինս բրիտանացի է, երկար տարիներ եղել է Հարվարդի համալսարանի Հայագիտության ամբիոնի նախագահը:

Ներկայում *SAS*-ի նախագահը Գևորգ Բարդաքչյանն է: 1984թ. Ալեք Մանուկյանի դրամաշնորհով սկսվեց գիտական հանդեսի տպագրությունը: Հանդեսի գլխավոր խմբագիրն է Ջոզեֆ Քեշիշյանը: Վերջին տարիներին այն լույս է տեսնում տարեկան 2 անգամ: Հիմնական բաժանորդներն են ԱՄՆ-ի, Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնները, գրադարանները, անհատներ: Օրինակներ են առաքվում Հայաստանի Ազգային գրադարան, ՀՀ ԳԱԱ և այլն, նշում են հանդեսի գլխավոր խմբագրությունում:

ԱՄՆ-ում հանրահայտ հայկական լրատվամիջոցների թվում է Վաշինգտոնում լույս տեսնող *The Armenian Reporter* շաբաթաթերթը (*reporter.am*): Թերթը հիմնվել է Նյու Յորքում 1967թ., ժամանակավորապես փոխադրվել է Պարամուս քաղաք (Նյու Ջերսի), ավելի ուշ 2006թ. թերթը գնել է *CS Media* ընկերությունը, որ ղեկավարում են ամերիկահայ Ջերալդ Գաֆեսյանը և հայաստանաբնակ մեդիա-գործարար Բագրատ Սարգսյանը: 2006-2007թթ. *Armenian Reporter*-ի գրասենյակներ բացվեցին Վաշինգտոնում, Լոս Անջելեսում, Մինեսոթա նահանգի Մինեապոլիս քաղաքում, ուր բնակվում է անձամբ Գաֆեսյանը, և Երևանում, փակվեց Նյու Ջերսիի գրասենյակը: Մինչև 2010թ. հունվար գլխավոր խմբագիրն էր իտալահայ լրագրող Վինսենտ Լիման, նստավայրը՝ Երևան, իսկ 2010թ. սկզբից գլխավոր խմբագիրն է Էմիլ Սանամյանը: Մեր հայրենակիցը ծնունդով Բաքվից է և վերջին 18 տարիներին բնակվում է ԱՄՆ-ում: Էմիլ Սանամյանը նաև անձնական բլոգ ունի:

Ներկայում *Armenian Reporter*-ը չունի տպագրություն, այլ գործում է բացառապես էլեկտրոնային տարբերակով: Է.Սանա-

¹ <http://armenianstudies.csufresno.edu/sas/>

մյանի խոսքով՝ այն նախկինում 4000-ի չափ տպագրություն ուներ: Ամերիկյան մամուլը ևս մեջբերումներ է կատարում վաշինգտոնահայ թերթից, որոնցից են՝ *Washington Examiner*, *Washington Times*, *Los Angeles Times*, *Boston Globe*, թերթի տված տեղեկատվությունից օգտվում են ավելի հաճախ հայաստանյան, ինչպես նաև, թուրքական և ադրբեջանական լրատվամիջոցները, քանի որ, ինչպես հասկանալի է, մեր թեման հետաքրքրական է տարածաշրջանային երկրներին, նշում է Սանամյանը:

Վաշինգտոնում տեղակայված լինելը *Armenian Reporter*-ի առանձնահատկություններից մեկն է: Եթե ամերիկահայ մյուս լրատվամիջոցները ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդրին, ԱՄՆ-Հայաստան քաղաքական-տնտեսական հարաբերություններին առնչվող թեմաները լուսաբանում են՝ հիմնվելով հիմնականում Վաշինգտոնում գործող ամերիկահայ կազմակերպությունների տեղեկատվական հաղորդագրությունների վրա, ապա *Armenian Reporter*-ի թղթակիցը հնարավորություն ունի տեղում օգտվել տարբեր աղբյուրներից, այցելել Կոնգրես, Պետքարտուղարություն, հանդիպել կոնգրեսականների հետ, պատրաստել հարցազրույցներ, հանդես գալ տարբերակված մոտեցումներով:

«Մամուլի դերն առաջին հերթին տեղեկացնելն է, սակայն համայնքային բնույթի մամուլը որոշակի առանձնահատկություն ունի: Մի կողմից՝ համայնքային մամուլը գրում է բոլոր անգլիալեզու հայերի համար և փորձում փոխանցել, թե ինչ զարգացումներ կան Վաշինգտոնում, ինչպես նաև ԱՄՆ հայ համայնքի շրջանակներում, մյուս կողմից՝ համայնքային մամուլը նաև հայելի է, որի միջոցով աշխարհը ճանաչում է հայ համայնքը», - նշում է Էմիլ Սանամյանը:

ԱՄՆ-ում գործող և լայնորեն ճանաչված հայկական տեղեկատվական ռեսուրսների ցանկում է *Groong*-ը: 1988թ., Ղարաբաղյան շարժման ծավալման օրերին, Լոս Անջելեսում մի խումբ ամերիկահայեր սկսեցին տեղեկատվական բնույթի էլեկտրո-

նային նամակներ փոխանակել: Այն ժամանակ տեղեկատվական հոսքը դեռևս գոյություն ունեցող ԽՍՀՄ-ից մեծ չէր, և ամերիկահայերի ընկերախումբն օգտագործում էր առկա հնարավոր միջոցները տեղեկատվություն ստանալու և միմյանց միջև տարածելու համար: Նախնական փուլում *Groong*-ի էլեկտրոնային նամակ-բյուլետենների բաժանորդները միայն Լոս Անջելեսի Հարավային Կալիֆորնիայի համալսարանի հայազգի ուսանողներն ու աշխատակիցներն էին, սակայն 1990թ. այն սկսեց ընդլայնվել և բաժանորդներ ձեռք բերել ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ արտերկրում: *Groong*-ն առաջ էր ընթանում նույն տարիներին ինտերնետի արագընթաց զարգացմանը զուգընթաց, այսինքն՝ ինտերնետի առավել տարածումը ևս օժանդակում էր *Groong*-ի վարկանիշի աճին: 1993թ. գործարկվեց groong.usc.edu կայքը Հարավային Կալիֆորնիայի համալսարանի սերվերային բազայի վրա: Ներկայում նույն կայքը գործում է նաև www.groong.org հասցեով: Այն ամեն օր թարմացվում է՝ ներկայացնելով տասնյակ տեղեկություններ հայաստանյան և արտասահմանյան մամուլից: *Groong*-ը չունի վճարովի աշխատակիցներ, ամբողջովին հիմնված է կամավորության վրա: Հայազգի կամավորներն աշխարհի տասնյակ պետություններից բնագիր օրինակով կամ թարգմանաբար տեղեկություններ են ուղարկում groong@usc.edu հասցեին, որոնք այնուհետև, նպատակահարմար լինելու դեպքում, տեղադրվում են կայքում: Փաստացի, յուրաքանչյուրը կարող է աշխատել *Groong*-ի համար:

Կայքի ղեկավար Ասպետ Պետրոսյանի խոսքով՝ ներկայում ամեն օր 1200 հասցեատերերի ուղարկվում են տեղեկատվական բյուլետեններ, միաժամանակ բուն կայքի այցելուների թիվն անցնում է տասնյակ հազարներից: Որպես կայքի բարձր հեղինակության ապացույց՝ Ա.Պետրոսյանը ներկայացնում է հետևյալ միջադեպը. մի անգամ, 2001թ., երբ ավտովթարի ենթարկվելու պատճառով ինքը մեկ օր չէր աշխատել, զանգահարել էին կոնգրեսականներից մեկի գրասենյակից՝ հետաքրքրվելով,

թե ինչու է ուշանում հայկական *Groong*-ի էջի թարմացումը¹:

Ամերիկահայ ՁԼՄ թեմայի շրջանակում առանձնահատուկ տեղ ունի *huliq.com*-ը: *Huliq*-ը, թերևս, աշխարհի միակ լրատվամիջոցն է, որը հանդես չի գալիս որպես հայկական ՁԼՄ, սակայն գործնականում տնօրինվում է հայ ընտանիքի կողմից և հայանպաստ տեղեկատվական-քարոզչական աշխատանք է իրականացնում: Կայքի թեմատիկան զուտ հայկական ուղղվածության չէ, *huliq.com* կայքի այցելուները կարող են տեսնել մեծ թվով հոդվածներ *General Motors* ամերիկյան ընկերության կողմից Կադիլակ *SRX* մոդելները հետ կանչելու, ականավոր ամերիկացի բեյսբոլիստ Ռոբերտո Ալոմարի առողջական վիճակի կամ Սենատի գալիք ընտրությունների վերաբերյալ և այլն, և այլն: Ամերիկյան և միջազգային անցուդարձը լուսաբանելու արդյունքում կայքն ամսեամիս գրավում է, առանց չափազանցության, հարյուր հազարավոր ընթերցողների: *Huliq*-ը հանդես է գալիս որպես աճող վարկանիշով ամերիկյան լրատվամիջոց: Օտար ընթերցողը կարող է նկատել, որ թերթը հաճախ անդրադառնում է Հայաստանին և հայկական թեմատիկային: Յուրաքանչյուր ամիս առնվազն երկու-երեք հոդված է լույս տեսնում, որոնցում շոշափվում են հայկական կողմի հետաքրքրությունները: Փոքրիկ կոնտենտ-մոնիթորինգի տարբերակով փորձենք պատկերացնել, թե հարյուր հազարավոր ընթերցողները տեսականորեն ինչ հրապարակումների կարող են հանդիպել կայքում:

«*Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը* հաջողությամբ իրականացրել է խորհրդարանական ընտրություններ... Երկրորդ անգամն է, որ թուրքական «Հյուրիեթը» Լեռնային Ղարաբաղը չի ճանաչում որպես Ադրբեջանի մաս և տարածաշրջանը կոչում է վիճելի»²:

«Այն զբոսաշրջիկները, ովքեր այցելում են Հայաստան որպես հնադարյան երկիր, գեղեցիկ և էժան ընտանեկան հան-

¹ http://www.armeniapedia.org/index.php?title=Asbed_Bedrossian

² More Than 100 Intl Observers in Karabakh, Hurriyet Calls Region Disputed, 05-24-2010. www.huliq.com

գիստն անցկացնելու վայր, որը տեղակայված է հարավարևելա-եվրոպական անկյունում, նաև օգտագործում են առիթը՝ այցելելու աշխարհի ամենագեղեցիկ վայրերից մեկը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն»¹: «Կոստվոյի ճանաչման ֆոնին Լեռնային Ղարաբաղի անկախությունն արդարացված է»²:

«Թուրքիան իրեն շատ անպատեհ վիճակի մեջ է դրել Հայաստանի հետ հարաբերությունների առումով: Մի կողմից՝ նախաստորագրված համաձայնագրերը Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման տեսանկյունից որևէ խոսք չեն պարունակում Ադրբեջանի հետ հարաբերությունների և Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, մյուս կողմից՝ հայտարարվում է, որ մինչև ԼՂ հիմնահարցը չկարգավորվի, թուրք-հայկական սահմանը չի կարող բացվել»³:

Huliq մեդիա-ն տեղակայված է Հյուսիսային Կարոլինայի նահանգի Հիքլորի քաղաքում: Այն պատկանում է Հարեյան ընկերությանը, մասնավորապես՝ լրագրող Արմեն Հարեյանին: Նախկինում հայաստանաբնակն այժմ նույնպես ՀՀ քաղաքացի է:

Դիմելով *compete.com* կայքին՝ փորձենք ամփոփել *Huliq* կայքի վարկանիշի միջոցով. ընթացիկ տարվա հուլիսի 20-ից օգոստոսի 20-ը կայքի *unique visitor*-ների թիվը կազմել է 223 հազար 771: Դեթրոյթ քաղաքի *detnews.com* կայքի այցելուների թիվը կազմել է 1 միլիոնից ավելի, Ֆրեզնո քաղաքի «Ֆրեզնո Բի» թերթը այցելել են 279 հազար 104 հոգի: Սակայն հունիսի 20-հուլիսի 20 հատվածում «Ֆրեզնո Բի» ամերիկյան թերթի և *Huliq*-ի վարկանիշները գրեթե հավասար էին՝ տարբերությունը հոգուտ Կալիֆորնիայի լրատվամիջոցի կազմում էր ընդամենը մոտ 3000:

¹“Nagorno Karabagh to develop tourism”, 17.06.2009, www.huliq.com

²“In Light Of Kosovo Recognition of Nagorno Karabakh Independence Justified”, 04.12.2008, www.huliq.com

³“Armenia to Turkey: Normalization not linked to Karabagh”, 19.09.2009 written by Suren Musayelyan, ArmeniaNow Reporter.

Այսինքն՝ Հարեյան ընկերության կայքը գործնականում միակն է, որ մրցունակ է ամերիկյան ՁԼՄ-ի հետ: Ի դեպ, ինչպես տեղեկացնում է Արմեն Հարեյանը, *Huliq*-ի վարկանիշն ավելի բարձր է, քան արտացոլում է *compete* կայքէջը: *Huliq*-ի և հայկական համայնքային լրատվամիջոցների ուղղակի համեմատությունը, թերևս, ճիշտ մեթոդաբանություն չի լինի, քանի որ Հյուսիսային Կարոլինայի լրատվամիջոցը համայնքային ՁԼՄ չէ: Սակայն ամերիկյան հանդես լինելով՝ այն որոշակի խնդիրներ է լուծում ամերիկյան հասարակությունում՝ ի նպաստ հայկական կողմի: Այսպիսով, սա կարելի է համարել առաջին ուշագրավ փորձը, և, թերևս, կարելի է աշխատանք տանել նման ծրագրեր զարգացնելու ուղղությամբ: Գործնականում ժամանակի հարց է հարևան Ադրբեջանի կողմից նմանօրինակ ծրագրերի իրականացումը:

Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ արևելյան և արևմտյան թեմերը (ինչպես Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսությունը, այնպես էլ Մեծի տանն Կիլիկո առաջնորդարանները) ևս ունեն տպագիր հրատարակություններ: Մասնավորապես, ԱՄՆ Արևելյան Ամերիկայի առաջնորդարանները հրատարակում են, համապատասխանաբար, *Armenian Church* և *Outreach* հանդեսները: Էջմիածնի կաթողիկոսության Սբ. Վարդան եկեղեցու հարևանությամբ գտնվող առաջնորդարանում գործում է նաև լրատվական ծառայություն, որտեղ պատրաստվում են նաև տեսանյութեր (հասանելի են www.armenianchurch-ed.net կայքում): Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդարաններն իրենց հերթին հրատարակում են երկլեզու «Մայր Եկեղեցի-*Mother Church*» (Բրբանք, Կալիֆորնիա) և «Ձայն-*Voice*» (Ֆրեզնո, Կալիֆորնիա) հանդեսները: Հրատարակություն ունի նաև Հայ Առաքելական եկեղեցու երիտասարդական կազմակերպությունը՝ *Hye Hokin*, որը լույս է տեսնում տարին 4 անգամ: Ամերիկահայ շատ եկեղեցիներ ևս ունեն տպագիր հրատարակություններ:

**Ամերիկյան լրատվամիջոցներում
աշխատող հայազգի լրագրողները**

Աշխարհի շատ, այդ թվում նաև ամերիկահայ լրատվամիջոցներում զգալի հաջողության են հասել մեր հայրենակից լրագրողները: Ինչպես տպագիր մամուլում, այնպես էլ ինտերնետային աղբյուրներում, բլոգներում, ռադիո կամ հեռուստատեսային ընկերություններում աշխատում են հայ կամ կիսով չափ հայ լրագրողներ: ԱՄՆ ամենահեղինակավոր հայազգի լրագրողներից պետք է նշել «Վաշինգտոն Փոստ» թերթի փոխխմբագիր Դևիդ Իզնատիուսին, *The Weekly Standard* շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Ֆիլիպ Թերզյանին, Նյու Յորք Թայմսի առաջնակարգ լրագրող Նիկոլաս Դոնաթեթ Քրիստոֆին, ֆոտոլուսանկարիչ Ալեքսանդրա Ավագյանին և ուրիշների:

Ֆիլիպ Թերզյանի անձին առանձին անդրադարձ կա Վիկիպեդիա շտեմարանում: Ծնվել է Մերիլենդ նահանգի Քենսինգթոն քաղաքում, 1950թ., աշխատել է *Anniston Star* թերթում, *US News and World Report* և *Reuters* գործակալություններում, այնուհետև խմբագրական ղեկավար պաշտոններ է զբաղեցրել *Los Angeles Times*-ում և *Providence Journal* հանդեսներում: Թերզյանի պապերն արմատներով Արևմտյան Հայաստանի Արաբկիր քաղաքից են: Ֆիլիպ Թերզյանը 2 տարի՝ 1978-1979թթ. ԱՄՆ պետքարտուղար Կայրուս Վենսի սփիչոյթերն է եղել: Աշխատելով տարբեր ՋԼՄ-ներում՝ նա նաև ներկայացվել է Պուլիցերյան հեղինակավոր մրցանակի և հասել մինչև եզրափակիչ: Նշենք, որ այս հեղինակավոր մրցանակին ժամանակին արժանացել է նաև Վիլյամ Սարոյանը: Ներկայում մեր հայրենակիցը *Weekly Standard* հանդեսի գլխավոր խմբագիրն է, բնակվում է Վաշինգտոն մայրաքաղաքի մերձակայքում, գրասենյակը քաղաքի կենտրոնական հատվածում է:

Դևիդ Իզնատիուսի անունը հատկապես հայտնի դարձավ 2009թ. փետրվարին Դավոսյան խորհրդաժողովի օրերին, երբ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը, խախտելով կանոն-

նակարգը, վիճաբանություն սկսեց Իսրայելի վարչապետ Շիմոն Պերեսի հետ, ինչին ի պատասխան՝ մողերատոր Դևիդ Իգնատիուսը ստիպված եղավ միջամտել: Նա «Վաշինգտոն Փոստ» հեղինակավոր օրաթերթի փոխխմբագիրն է: Հայրը՝ Փոլ Իգնատիուսը կամ Պոդոս Իգնատոսյանը, ԱՄՆ դաշնային կառավարությունում ամենաբարձր պաշտոնի հասած ամերիկահայ գործիչն է: 1967-1969թթ. Փոլ Իգնատիուսը ԱՄՆ ռազմածովային ուժերի նախարարն էր, ավելի վաղ զբաղեցրել է ԱՄՆ պաշտպանության փոխնախարարի պաշտոնը: Նա նաև աշխատել է որպես *The Washington Post* թերթի նախագահ և *The Washington Post Company* հոլդինգի փոխնախագահ: Դևիդ Իգնատիուսի մայրը՝ Նենսի Իգնատիուսն ամերիկուհի է: Նշենք, որ Դևիդ Իգնատիուսը նաև մեկ տասնյակի չափ գեղարվեստական գրքերի հեղինակ է: Գրքերից մեկը, որ վերնագրված է «Սիրո» (*Siro*), ներկայացնում է ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության գործունեությունն ընդդեմ ԽՍՀՄ ՊԱԿ-ի: Գրքում իրադարձությունների մի մասը ծավալվում է Խորհրդային Հաստատանում, ինչպես նաև Մոսկվայում, Ստամբուլում և Անկարայում: Հետաքրքիր և լարված սյուժեով գրքում անդրադարձ կա նաև Հայոց ցեղասպանության թեմային:

«Լրագրողական ասպարեզում չկա որևէ մեկը, գոնե ԱՄՆում, որ այսքան աշխատանք կատարեր պարզելու, թե ինչպես են կարողանում ապրել երկրագնդի չունևոր բնակիչները, ինչպիսին է նրանց ներուժը: Ցանկացած ամերիկյան քաղաքացի, ով հետաքրքրված է այս հարցով, պետք է խորապես երախտապարտ լինի, որ մեր լրատվական ասպարեզում կա մեկը, որը հոգատար է և շրջում է աշխարհով մեկ՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվում: Ես անձամբ իրեն պարտական եմ, և մենք բոլորս նույնպես»։ այսպես է 42-րդ նախագահ Բիլ Կլինթոնը բնորոշել «Նյու Յորք Թայմսի» հեղինակավոր լրագրող Նիկոլաս Քրիստոֆին¹:

¹ Bill Clinton, Clinton Global Initiative 2009 Annual Meeting plenary session on building human capital, Sept. 24, 2009.

Քրիստոֆը միայն մեկ քառորդով է հայ, թեև հաճախ է նշում իր հայկական ծագման մասին և բազմիցս խոսել է Հայոց ցեղասպանության թեմայով: Հայրը՝ Լադիս Քրիստոֆը կամ Վլադիսլավ Քրիշտոֆովիչը, միջնադարում Տրանսիլվանիայում հաստատված հարյուր հազարավոր հայերի շառավիղներից է: Հայկական և լեհական ծագմամբ Լադիս Քրիշտոֆովիչը ծնվել էր Ավստրո-հունգարական կայսրությունում, ապա Երկրորդ համաշխարհայինի տարիներին կնոջ՝ Ջեյն Քրիստոֆովիչի հետ փոխադրվել է ԱՄՆ: Երկար տարիներ ամուսինները դասախոսել են Օրեգոն նահանգի Պորտլենդի պետական համալսարանում¹:

Մեր հայրենակիցն իր հրապարակումներում ուշադրության տակ էր պահում նաև Դարֆուրի ցեղասպանության թեման: Նրան ուղղված նամակներում բազմաթիվ ամերիկացիներ գրել են, թե Դարֆուրը կարևոր է, բայց Միացյալ Նահանգները կարևոր այլ խնդիրներ ունի: «Պատմության դասերից մեկն էլ այն է, որ ցեղասպանությունը չի համարվում առաջնահերթ խնդիր: Հայոց ցեղասպանությունը ևս դրա կատարյալ օրինակն է», - *Armenian Weekly*-ին տված հարցազրույցում նշում է Քրիստոֆը²:

Ավելի վաղ «Նյու Յորք Թայմսում» «Թուրքիան և ցեղասպանությունը» խորագրով հոդվածում Քրիստոֆը գրել էր. «Մարդիկ հաճախ են հարցնում, թե ինչու ՄԱԿ-ը չի կարողանում կասեցնել Դարֆուրի ցեղասպանությունը: ...Այս շաբաթ պարզ դարձավ, որ ՄԱԿ-ը չի կարողանում առերեսվել նույնիսկ 1915թ. տեղի ունեցած ցեղասպանության հետ»³:

Քրիստոֆը դատապարտել էր ՄԱԿ կենտրոնակայանում ցեղասպանություններին նվիրված ցուցադրությունը Թուրքիայի ճնշմամբ չեղյալ հայտարարելու համար: Քրիստոֆը լուսաբանել է Չինաստանի Տյանանմին հրապարակի բախումները 1989-ին և

¹ http://en.wikipedia.org/wiki/Nicholas_D._Kristof

² “An interview with Nicholas Kristof”, 05.04.2008 Armenian Weekly.

³ “Turkey and Genocide”, New York Times, <http://kristof.blogs.nytimes.com/tag/genocide/page/2/>, 04.2007

մեկ տարի անց ստացել Պուլիցերյան հեղինակավոր մրցանակը: 1994թ. Տյանանմինի բախումների մասին գիրք է հեղինակել, իսկ 2006-ին ստացել է երկրորդ Պուլիցերյան մրցանակը Դարֆուրի վերաբերյալ հոդվածաշարի համար:

Քեն Դիլանյանը երկար տարիներ աշխատել է *USA Today* օրաթերթում, հոդվածներ է հրապարակել Կոնգրեսում ծավալվող իրադարձությունների, քաղաքական քարոզարշավներում և քաղաքական կյանքում դրամաշրջանառության և կոռուպցիայի վերաբերյալ: Մեր հայրենակցի հրապարակումները *USA Today*-ի առաջին էջին տեսնելը սովորական իրողություն էր: Ավելի վաղ աշխատել է *Philadelphia Inquirer* հանդեսում, գործուղվել է Իրաք, երկար տարիներ աշխատել Հոմում: 2007թ. հաղթող է ճանաչվել «Քեյսիի վաստակավոր լրագրողի մեդալ» ամենամյա մրցույթում՝ Ֆիլադելֆիայի քաղաքային իշխանությունների կողմից քաղաքի երեխաների պաշտպանության և նրանց նկատմամբ հոգատարության հարցերում թերանալու վերաբերյալ լրագրողական հետաքննության համար: Ճանաչված ամերիկահայ լրագրողը 2010-ից աշխատակցում է *Chicago Tribune*, *Los Angeles Times* և *Baltimore Sun* թերթերին:

Ամերիկյան *ABC* հեռուստաընկերությանը կից գործում է *Politico* քաղաքական օրաթերթը: Այն ԱՄՆ 10 ամենահեղինակավոր քաղաքական լրատվամիջոցների ցանկում է: Այստեղ է աշխատում մեր հայրենակից Չարլզ Մահդեյանը: Նա մեծ փորձառություն է կուտակել հասկապես ընտրությունների հետ կապված թեմաներում, առավել մասնագիտացած է Կոնգրեսի ընտրությունների ուղղությամբ: Չարլզ Մահդեյանը նաև «Ամերիկյան քաղաքականության ավանախ» տարեգրքի համահեղինակներից է և խմբագիրը: Մեր հայրենակիցը տիրապետում է հայերենին:

Քարոն Դեմիրջյանն աշխատում է *Associated Press* գործակալությունում, հոդվածներ է հրապարակում նաև *Chicago Tribune*, *Congressional Quarterly*, *The Christian Science Monitor* թերթե-

րում և հանդեսներում, աշխատակցել է ԱՄՆ Հանրային ռադիոյին (*National Public Radio*), ինչպես նաև *CSPAN* հեռուստաալիքին, որն իրականացնում է ԱՄՆ Կոնգրեսում, պաշտոնական շրջանակներում ծավալվող և մամուլի համար մատչելի իրադարձությունների ուղիղ հեռարձակումը հեռուստատեսությամբ և ինտերնետի միջոցով: Քարուն Դեմիրջյանն աշխատել է նաև ՄԱԿ համակարգում, ավարտել է Հարվարդի համալսարանը և Թաֆթսի համալսարանի Իրավունքի և դիվանագիտության Ֆլեչերյան դպրոցը: Ըստ առկա տեղեկությունների, Քարուն Դեմիրջյանը վերջին ամիսներին բնակվում է Մասաչուսեթս նահանգում:

2005-ից սկսած՝ *NBC* հեռուստաալիքի լրատվական ծառայությունում է աշխատում լրագրող Ժանետ Շամյանը: Ծնվել է 1964թ. մայիսի 14-ին Իլինոյսի նահանգի Փարք Ռիջ քաղաքում: Հաղորդումներ է պատրաստում *The Today Show* և *NBC Nightly News* հաղորդաշարերի համար: Լրագրողական կարիերան սկսել է Միչիգանի նահանգի *Wood TV* հեռուստաալիքում, այնուհետև աշխատել է Տեխասի նահանգի Հյուսթոն քաղաքի հեռուստաալիքներից մեկում, ժամանակավոր աշխատել Չիկագոյում, նորից վերադարձել Տեխաս, ապա 1997թ. թողել է լրագրողի աշխատանքը՝ ընտանիքին ավելի շատ ժամանակ տրամադրելու նպատակով: 2004թ. վերադառնալով լրագրողական ասպարեզ՝ Ժանետ Շամյանը դարձել է *NBC*-ի թղթակիցը: Ամուսնացած է, ունի 5 երեխա, բնակվում է Հյուսթոնում: Շամյանը լուսաբանել է Քաթրինա փոթորկի թեման, 2010թ. ներառված է եղել Վաշինգտոնի նահանգում անցկացված գեղասահքի համաշխարհային առաջնության լուսաբանման աշխատանքներում¹:

ESPN երաժշտական և սպորտային հեռուստաալիքի *Baseball Tonight* և *Sports Center* հեռուստահաղորդումների բեյսբոլի առաջնությունների վերլուծաբան է Թիմ Քյուրքյանը: Մեր հայրենակիցը բնակվում է Մերիլենդ նահանգի Բեթեզդա քաղաքում (Վաշինգտոն մայրաքաղաքի սահմաններում): Ավարտելով Մե-

¹ <http://www.msnbc.msn.com/id/15238906/>

րիլենդի համալսարանը՝ աշխատանքի է անցել *Washington Star* թերթում: 1981թ. «Տեխաս Ռեյնջերս» բեյսբոլի թիմի խաղացողները ծեծի ենթարկեցին տեղի *Dallas Morning News* թերթի սպորտային մեկնաբանին: Կադրային բացը լրացնելու նպատակով թերթն աշխատանքի հրավիրեց Թիմ Բյուրքյանին, որն այստեղ աշխատեց 5 տարի: Աշխատել է նաև *Baltimore Sun* թերթում, 1996-1997թթ.՝ *CNN Sports Illustrated* հեռուստաալիքում: 2000 և 2007թթ. հեղինակել է 2 մենագրություն՝ «Ամերիկայի մեծ խաղը» և «Իմ 25 տարիները բեյսբոլի աշխարհում»: Դասախոսություններ է կարդացել մի շարք համալսարաններում, այդ թվում նաև հարազատ Մերիլենդի համալսարանում¹:

1997-2006թթ. ընթացքում *CBS* հեռուստաալիքում որպես սպորտային լրագրող է աշխատել Արմեն Քեթեյանը: Մեր հայրենակիցը ծնվել է 1953թ. Միչիգան նահանգի Դեթրոյթ քաղաքում: Քեթեյանը 10 անգամ արժանացել է Ամերիկյան հեռուստատեսային ակադեմիայի *Emmy* մրցանակին, որը տրվում է սպորտային և ժամանցային ժանրի լրագրողներին: 2006թ. նա փոխել է լրագրողական աշխատանքի ուղղությունը և նշանակվել *CBS*-ի հետաքննող լրագրողների ծառայության տնօրեն: Հիմնականում աշխատում է *CBS*-ի երեկոյան լրատվական հաղորդումների և Բոբ Սայմոնի հեղինակավոր «60 րոպե» հաղորդաշարի համար:

National Geographic-ի աշխատակցուհի Ալեքսանդրա Ավագյանի լուսանկարները հրապարակվել են *The New York Times*, *Time*, *Life* և այլ հանդեսներում²: Վաշինգտոնում բնակվող մեր հայրենակցուհին բազմիցս այցելել է Հայաստան և ԼՂՀ: 2008թ. լույս է տեսել նրա «Հոգուս պատուհանները» լուսանկարների ժողովածուն, որտեղ առկա են լուսանկարներ նաև Արցախից: Ալեքսանդրա Ավագյանն իրանահայ է: Ավագյաններն Իրան են փոխադրվել Թբիլիսիից:

¹ http://en.wikipedia.org/wiki/Tim_Kurkjian

² <http://www.alexandraavakian.com/>

Կոլորադոյի նահանգի Բուլդեր քաղաքում գործող *Alternative Radio FM* կայանի հիմնադիրն ու տնօրենն է Դևիդ Բարսամյանը: Նա հայտնի է ցեղասպանագետ և հրապարակախոս Նոամ Չոմսկու հետ բարեկամական հարաբերություններով և հեղինակել է «Քարոզչությունը և հասարակական կարծիքը. երկխոսություն Նոամ Չոմսկու հետ» մենագրությունը¹: Նահանգի մայրաքաղաք Դենվերի ռադիոկայանում է աշխատում Ռեմի Խաչատրյանը: Երկար տարիներ ԱՄՆ մամուլում է աշխատել Թոմ Վարդապետյանը: Նյու Յորքում բնակվող մեր հայրենակից Հակոբ Թանգյանը (ականավոր ռոք երաժիշտ Սերժ Թանգյանի հորեղբայրը) տասնամյակներ զբաղվել է ժուռնալիստիկայով, *Courire Della Sera* իտալական առաջնակարգ թերթի թղթակիցն էր ԱՄՆ-ում, աշխատել է արաբական երկրների ՋԼՄ-ի հետ, առժամանակ հրատարակել է *Armenian Digest, Armenian Times, Arap Digest* անգլիալեզու հանդեսները, հայերեն «Ուրարտու» շաբաթաթերթը:

1920թ. Մարաշում ծնված Հայկ Բաղդիկյանը պատմում է. «Ես ծնվել եմ հայերի սպանդի ժամանակ, և իմ հայրը և 4 ավագ քույրերն ինձ ձեռքի վրա տարել են սառցակալած լեռներով՝ փախուստի ճանապարհին»²: 1941թ. արդեն Միացյալ Նահանգներում Բաղդիկյանն արդեն որպես Բեն Հայկ Բաղդիկյան՝ սկսել է զբաղվել ժուռնալիստիկայով և 1970-ականներին դարձել «Վաշինգտոն Փոստի» լրատվական բաժնի խմբագիրը: Ներկայում 91-ամյա մեր հայրենակիցն ընտրվել է Կալիֆորնիայի համալսարանի լրագրողական դպրոցի ցկյանս դեկան: 1983-ին մեր հայրենակիցը հրատարակեց «*The Media Monopoly*» հետազոտությունն այն մասին, թե ամերիկյան մամուլը որ խմբերի և ընտանիքների կողմից է վերահսկվում: Գիրքը դարձավ բեսթսելլեր և վերահրատարակվեց 6 անգամ:

Ռոջեր Թաթարյանը, ինչպես և Վիլյամ Սարոյանը, բիրթիսցի էր և նույնպես ապրել է Ֆրեզնոյում: 80-ականներին նա *UPI*

¹ <http://www.southendpress.org/authors/1>

² <http://www.harvardsquarelibrary.org/unitarians/bagdikian.html>

(*United Press International*) հեղինակավոր լրատվական գործակալության գլխավոր խմբագիրը և փոխնախագահն էր: 34 տարի աշխատելով *UPI*-ում՝ Ռոջեր Թաթարյանը Հռոմի և Լոնդոնի թղթակցական բյուրոների տնօրենն է եղել: Թոշակի անցնելով մեր հայրենակիցը վերադարձել է Ֆրեզնո և դասավանդել քաղաքում գտնվող Կալիֆորնիայի պետական համալսարանում: Մահացել է 1995թ.:

Մեր օրերում «Նյու Յորք թայմսում» ժամանակ առ ժամանակ հրապարակումներով հանդես է գալիս Վրաստանից մեր հայրենակից Օլեսյա Վարդանյանը: Նյու Յորքում է աշխատում Ֆլորանս Ավագյանը: Հայտնի է, որ Մերիլենդի նահանգում, որը մեծ Վաշինգտոնի տարածաշրջանում է, գործում է հայ հեռուստալրագրող, ծագումով հայ է *CQ Quarterly*-ի թղթակիցը Պենտագոնում, «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի անգլերեն ծառայությունում վերջերս աշխատանքի է անցել Շանթ Շավրիկյանը, *Fox News* հեռուստաալիքի տեխնիկական կազմում աշխատում է ամերիկաբնակ հայ մի երիտասարդ և այլն: Ամերիկահայ մամուլի և ամերիկյան ԶԼՄ-ում աշխատող հայազգի լրագրողների ներուժի ուսումնասիրությունը կարևոր դեր կարող է ունենալ ԱՄՆ-ում ինչպես հայանպաստ տեղեկատվական աշխատանքի կազմակերպման, այնպես էլ ընդհանրապես ամերիկահայ համայնքի և հայության ներուժի բացահայտման դիտանկյունից:

ԳԼՈՒԽ 4.
ԼՈՔՔԻՆԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՄԻԱՑՅԱԼ
ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ. ԼՈՔՔԻՍՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԸ

Լոբբինգի ինստիտուտը

«Լոբբինգ» եզրը առաջացել է անգլերեն *lobbyism* (հիմքը՝ *lobby*) բառից, որը նշանակում է «կուլուարներ», «միջանցք»: Մասնագետների մի մասի կարծիքով, «լոբբինգ» եզրը առաջին անգամ կիրառվել է դեռևս 19-րդ դարի 20-ական թթ., երբ սենատորները խորհրդակցությունների ընդմիջման ընթացքում հավաքվում էին Ներկայացուցիչների պալատի լոբբիում՝ սպասասրահում և քննարկում այս կամ այն հիմնահարցը կամ որոշումը: Այդ մասին գրել է ամերիկյան թերթերից մեկը 1820թ.¹: Մասնագետների զգալի մասը, սակայն, հակված է այն տեսակետին, ըստ որի՝ «լոբբինգ» եզրը առաջին անգամ կիրառվել է 19-րդ դարի երկրորդ կեսին, ԱՄՆ 18-րդ նախագահ Ուլիս Սիմփսոն Գրանտի (*Ulysses Simpson Grant*, 1869-1877թթ.) նախագահության ժամանակաշրջանում: Վաշինգտոնի *Willard* հյուրանոցի սպասասրահում ԱՄՆ նախագահը, նախարարներն ու սենատորները հանդիպում էին տարբեր մարդկանց հետ, լսում նրանց խնդրանքներն ու ցանկությունները՝ պետության քաղաքականության հարցերի հետ կապված: Հավաքված մարդիկ փորձում էին հա-

¹ *Майкл Бернстам*, «Музыка в США заказывают лоббисты», 30 октября 2008г., http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid_7695000/7695523.stm

մոզել երկրի նախագահին ընդունել կամ մերժել այս կամ այն որոշումը՝ դրանով իսկ որոշակիորեն ազդելով պետության ներքին կամ արտաքին քաղաքականության վրա:

Լոբբինգը քաղաքական համակարգի յուրահատուկ ինստիտուտ է, որը մասնավոր ու հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների, արհմիությունների, կորպորացիաների ազդեցության մեխանիզմ է տվյալ պետության կառավարության, խորհրդարանի կողմից որոշումների ընդունման գործընթացի վրա:

Սկզբնական շրջանում Միացյալ Նահանգներում իշխանության մարմինների հետ լոբբիստների փոխհարաբերությունները կրել են կոռումպացված բնույթ, ինչի պատճառով ամերիկյան իրականությունում լոբբիստի մասնագիտությունը երկար ժամանակ համարվում էր անվայելուչ: «Ամերիկյան քաղաքականության բառարանի» (*Dictionary of American politics*) առաջին հրատարակությունում (1892թ.) տեղ գտած «լոբբի» եզրի սահմանման համաձայն, «լոբբին» վերաբերում է այն մարդկանց, ովքեր իրականացնում են օրենսդիրների վրա կոռումպացված եղանակով ազդելու բիզնես: Անհատները կոչվում էին լոբբիստներ»¹:

ԱՄՆ-ում ընտրողների ու իշխանության ներկայացուցիչների միջև անշահախնդիր միջնորդության ավանդույթը սկսեց տարածվել միայն 19-րդ դարի վերջերից: Երկրի լոբբիստական գործունեության կոռումպացված մեխանիզմները փոփոխությունների ենթարկվեցին լոբբիստի մասնագիտության պրոֆեսիոնալացման գործընթացի արդյունքում: Որոշումների կայացման գործընթացի վրա զգալի տարածում գտած կոռուպցիոն ավանդույթների ազդեցությունից առաջինը հետքայլ կատարեց հայտնի լոբբիստ և հռետոր Սեմ Ուորդը (*Sam Ward*, 1814-1884թթ.), որը կազմակերպում էր բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ ընթրիքներ, գործընկերային հարաբե-

¹ Kathryn Allamong Jacob, "King of the Lobby", The Johns Hopkins University Press, 2010.

րություններ հաստատում սենատորների և պետքարտուղարների հետ: Սեմ Ուորդը համոզում էր պաշտոնյաներին ու սենատորներին ոչ թե գումարով, այլ՝ խոսքով, ինչը հեղափոխություն առաջացրեց ամերիկյան լոբբիստական իրականությունում: Եթե նախկինում լոբբինգը ենթադրում էր գումարի փոխանցում՝ ըստ ծանոթության կամ հաստատված կապերի, այժմ այն հանդիսանում է տեղեկության փոխանցում և սեփական ճշմարտացիության համոզմունք: Արդյունքում՝ լոբբիստական գործունեությունը դարձավ առավել բարդ, քանզի համոզելն անհամեմատ բարդ գործընթաց էր, քան ուղղակի գումար հանձնելը. անհրաժեշտ էր ապացույցներ և փաստարկներ բերել, հաշվի առնել այն մարդու հոգեբանությունը, ում փորձում էս համոզել: Լոբբիստական տեխնոլոգիական ավանդույթում «համոզելու» հնարքի մեծ վարպետ էր նույն ինքը՝ Սեմ Ուորդը, որին կոչում էին «*Rex Vestiaris*»՝ «լոբբիի թագավոր»¹:

ԱՄՆ-ում իրականացվող լոբբիստական գործունեությունում կոռուպցիոն գործարքներն արմատախիլ անելու գործում հետագայում զգալի է եղել նաև 1930-ականներին ԱՄՆ սենատոր, դեմոկրատ Հյուգո Լաֆայետթ Բլեքի (*Hugo LaFayette Black*, 1886-1971թթ.) ներդրումը: Սենատորը պայքարում էր հատկապես վաշինգտոնյան լոբբիստական գործունեությունում կոռուպցիայի դեմ՝ հաստատելով լոբբիստների գրանցման, նրանց եկամուտների ու ծախսերի, ինչպես նաև լոբբիստական գործողությունների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման անհրաժեշտությունը²:

Արդյունքում՝ «անշահախնդիր» լոբբիստների շնորհիվ լոբբիստի մասնագիտությունն աստիճանաբար դարձավ հարգելի և բարձր վարձատրվող: Զգալիորեն մեծացավ լոբբիստների ու լոբբինգով զբաղվող գործակալությունների ու կազմակերպությունների թիվը:

¹ Նույն տեղում:

² *Craig Holman*, “Origins, Evolution and Structure of the Lobbying Disclosure Act”, Public Citizen, 2005.

Միացյալ Նահանգներում լոբբինգի ինստիտուտի զարգացմանն էապես նպաստեցին նաև տարբեր ժամանակաշրջաններում իրականացված օրենսդրական բարեփոխումները: Հիշատակելի են 1960-70-ականներին ԱՄՆ պետական մարմինների և, մասնավորապես, Կոնգրեսի բարեփոխումները, ինչի արդյունքում Կոնգրեսը հասարակության համար դարձավ առավել բաց: Կոնգրեսում ձևավորվեցին բազմաթիվ հանձնաժողովներ, որոնք վերահսկվում էին շահերի խմբերի կողմից (*interest groups*): Արդյունքում՝ լոբբիստական կազմակերպություններն ու լոբբիստներն առավել ներգրավված դարձան իշխանության օրենսդիր մարմինների որոշումների կայացման գործընթացում:

Փորձենք առավել հանգամանորեն անդրադառնալ լոբբինգի՝ որպես պետության իրավաքաղաքական համակարգի կարևոր բաղադրիչի նշանակությանը, լոբբիստական գործունեության առանձնահատկություններին:

ԱՄՆ-ում լոբբիստական գործունեությունը զարգացած սոցիալական, քաղաքական երևույթ է, որն իր սուբյեկտների՝ ճնշման խմբերի և շահերի խմբերի հետ միասին կազմում է պետություն-լոբբիստական խումբ յուրահատուկ հարաբերությունները: Ամերիկյան իրականությունում (ինչպես և այլ արևմտյան զարգացած երկրներում) լոբբիստները բարձրակարգ մասնագետներ են, որոնք ի վիճակի են հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն և իշխանության կառույցներին ուղղել հոգուտ այն խմբի որոշման ընդունմանը, որի շահերը նրանք պաշտպանում են: Լոբբիստներն այսպիսով միջնորդի դեր են իրականացնում շահերի խմբերի և քաղաքական գործիչների, իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչների միջև՝ դրանով իսկ զգալի ազդեցություն ունենալով տվյալ երկրի ներքին ու արտաքին քաղաքականության վրա: Այս տեսանկյունից լոբբինգը էական տեղ է զբաղեցնում երկրի ժողովրդավարության մեխանիզմում և տվյալ պետության ժողովրդավարության կարևոր ցուցիչներից է հանդիսանում: Դա հնարավորու-

թյուն է տալիս «ցածր էշելոններին» իրենց պահանջներն ու բողոքները հասցնել երկրի բարձրաստիճան մարմիններին և, որն ամենակարևորն է, հասնել դրական արդյունքների:

Տվյալ պետության իրավաքաղաքական, կառավարման համակարգերում լոբբիստական գործունեության դրական նշանակության կողքին մասնագետները նշում են նաև լոբբինգի բացասական կողմերը: Օրինակ, երբեմն գտնվելով լոբբիստների ճնշման տակ՝ ԱՄՆ կառավարությունը պատրաստ է լինում բավարարել մասնավոր շահերը, որոնք կարող են այնքան էլ չհամապատասխանել պետության շահերին: Մյուս կողմից, բավական տարածված է այն տեսակետը, ըստ որի՝ լոբբինգը զգալիորեն խթանում է կոռուպցիան, ինչի մասին արդեն նշվեց: ԱՄՆ լոբբիստական գործունեության պատմության մեջ եղել են նաև աղմկահարույց դեպքեր, որոնք հանգեցրել են այս կամ այն ազդեցիկ քաղաքական գործչի հրաժարականին ու անվանարկմանը: Կարելի է առանձնացնել 1990-ական թթ. սկզբներին տեղի ունեցած միջադեպը՝ կապված Միացյալ Նահանգների բարձրաստիճան դեմքերից մեկի՝ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակ (1987-1989թթ.) Ջիմ Ռայթի անվան հետ: Խնդիրն այն է, որ երբ սպառվել էին քաղաքական գործչի ֆինանսավորման հիմնական միջոցները, լոբբիստները համոզեցին Ռայթին, որ վերջինիս քաղաքական վարկանիշի բարձրացման գործում զգալի դեր կարող է ունենալ Ռայթի հեղինակած որևէ գրքի հրատարակումն ու դրա ֆինանսավորումը լոբբիստների կողմից: Ռայթը գրեց քաղաքական հուշեր (*«Reflections of a Public Man»*), որի դիմաց բավական լավ վարձատրվեց լոբբիստների կողմից¹: Գիրքը, սակայն, այդպես էլ չհրատարակվեց, քանզի գործարքը բացահայտվել էր Ներկայացուցիչների պալատի «Պաշտոնյայի վարքականոնի չափորոշիչների հանձնաժողովի» (հայտնի է որպես Էթիկայի հանձնաժողով) հետաքննության արդյունքում և մեծ աղմուկ առաջացրել՝ հանգեցնելով Ջիմ Ռայ-

¹ James Claude Wright Jr., http://en.wikipedia.org/wiki/Jim_Wright.

թի հրաժարականին: Վերջին ժամանակների մյուս միջադեպը կապված է հայտնի լոբբիստ Ջեք Աբրամովի անվան հետ (2006թ. հունվար), որի արդյունքում Աբրամովը և մի քանի կոնգրեսական, ինչպես նաև նախկին նախագահ Բուշի վարչակազմի պաշտոնյաներ (Ջեք Աբրամովը Ջ.Բուշ կրտսերի վարչակազմի առանցքային դեմքերից ու լոբբիստներից մեկն էր) ձերբակալվեցին՝ պաշտոնյաների կաշառելու և ԱՄՆ հնդկական լոբբինգին խաբելու մեղադրանքով: Ջ.Աբրամովը զգալի աշխատանք է կատարել ամերիկյան խոշոր կազմակերպություններին հարկերից ազատելու ուղղությամբ, կարողացել է հասնել հատուկ տնտեսական պայմանների Մարիանյան կղզիների համար՝ ազատելով վերջիններիս ամերիկյան աշխատանքային օրենսդրությունից: Որոշ տվյալներով՝ Աբրամովը լոբբիստական ծառայություններ է մատուցել նաև ռուսաստանյան «Сибнефть» ընկերությանը (1997թ.):¹

Լոբբիստական խմբերն ու նրանց գործունեությունը

Պետության իրավաքաղաքական համակարգում լոբբիստական գործունեության բնույթը, ընդհանուր առանձնահատկություններն ու առաջադրված նպատակները պայմանավորված են ինչպես այդ երկրի իրավաքաղաքական, պետական կառավարման համակարգով, այնպես էլ լոբբինգի սուբյեկտի ներուժով և օբյեկտի հիմնական առանձնահատկություններով: Լոբբիստական գործունեության օբյեկտներն են իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինները, իսկ սուբյեկտները՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք (ԱՄՆ)²: Լոբբիստական գործունեության տեսակները տարբերակվում են հետևյալ գործոններից կախված՝

¹ *Майкл Бернстам*, «Музыку в США заказывают лоббисты», 30 октября 2008г., http://news.bbc.co.uk/1/hi/russian/international/newsid_7695000/7695523.stm.

² Գերմանիայում լոբբիստական գործունեության սուբյեկտ են հանդիսանում միայն իրավաբանական անձինք:

- լոբբինգի օբյեկտից (օրենսդրական, գործադիր կամ դատական լոբբինգ),
- լոբբինգի սուբյեկտից (քաղաքական, տնտեսական, սոցիալական, տարածաշրջանային, օտարերկրյա լոբբինգ),
- լոբբինգի օբյեկտի և սուբյեկտի փոխհարաբերություններից,
- նպատակներին հասնելու մեխանիզմներից (ուղղակի կամ անուղղակի ազդեցության միջոցների գործադրում),
- գործողության ժամանակից (երկարաժամկետ, կարճաժամկետ և այլն)¹:

Լոբբիստական գործունեությունը փոխազդեցության մեջ է այն օբյեկտների հետ, որոնց ուղղությամբ իրականացվում է լոբբինգը: Լոբբիստների և լոբբիստական խմբերի որդեգրած ռազմավարությունը կարող է ձևավորվել երկրի օրենսդրական դաշտի առաջադրած հանգամանքներից ու առանձնահատկություններից ելնելով և այս կամ այն չափով պայմանավորել լոբբիստական խմբերի ռազմավարությունը (մարտավարությունը, գործողությունների պլանը)²: Եվ հակառակը, ակտիվ և զգալի ներուժ ունեցող լոբբիստական կազմակերպությունները կարող են ազդել երկրի օրենսդրական դաշտի կազմակերպչական աշխատանքների, ռազմավարության զարգացման ու նպատակների ձևավորման և ուղղորդման գործընթացների վրա³:

Ժողովրդավարական հասարակություններում լոբբիստական խմբերի գործունեության առաջին գիտական ուսումնասիրությունների շարքին են դասվում ամերիկացի քաղաքագետներ Արթուր Ֆ.Բենթլիի և Դավիթ Տրումանի հետազոտություն-

¹ *Минченко Е.Н., Студеникин Н.В.*, «Современные тенденции в технологиях лоббизма», 21 мая 2004г.

² *Jennifer Nicoll Victor*, "Strategic Lobbying: Demonstrating How Legislative Context Effects Interest Groups' Lobbying Tactics", Chocago, 2002

³ *Randall S., Kroszner and Thomas Stratmann*, "Interest Group Competition and the Organization of Congress: Theory and Evidence from Financial Services' Political Action Committees", American Economic Review, 1998.

ները: Ա.Բենթլիի՝ 1908թ. հրատարակած «Կառավարության գործընթացը» (*The Process of Government*) գիրքը համարվում է կառավարական ոչ ֆորմալ, հանգուցավորված գործընթացների առաջին լուրջ գիտական ուսումնասիրությունը: Հետագայում՝ 20-րդ դարի կեսերին Դ.Տրումենը, զարգացնելով թեման, լուրջ գիտական հետազոտություն կատարեց՝ նվիրված ժողովրդավարական հասարակությունների քաղաքական գործընթացներում շահերի խմբերի նշանակությանը (1951թ.՝ «Կառավարական գործընթացը» գիրքը/*The Governmental Process*): Նրա գնահատականով, «յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակություն կարող է դիտվել որպես խմբերի «խճանկար»՝ ներկայացնելով խմբերի տարբերակման ու փոփոխման գործընթացները, խմբերում ներառված անհատների հավաքական վարքագծի տարբերակումն այլ խմբերի անհատների վարքագծից»: Տրումենի բնորոշմամբ, խմբերը կարող են տարբերակվել էլնելով իրենց հիմնական գործառույթներից (օր.՝ ընտանեկան, տնտեսական խմբեր, կրոնական կամ քաղաքական խմբեր) կամ էլ իրենց կազմակերպչական կառուցվածքի ու չափերի հիման վրա (ակումբներ, կազմակերպություններ, միություններ և այլն)¹: Մեկ այլ գիտնականի՝ Լյուիս Ֆրոմանի բնորոշմամբ (*Lewis Froman*)՝ «շահերի խմբերը ոչ միայն նպաստում են դրանցում ներառված անդամների շահերի աջակցմանը, այլև լայն իմաստով ծառայում են որպես կառավարության պաշտոնյաների և հասարակության միջև կարևոր կապ»²:

Լոբբիստական գործունեությամբ կարող են զբաղվել ինչպես անհատ գործիչները, այնպես էլ քաղաքական, տնտեսական ու սոցիալական խմբերը, կազմակերպություններն ու շարժումները, հասարակական-քաղաքական, պետական ինստիտուտները: Նշված սուբյեկտները լոբբիստական գործունեու-

¹ David B. Truman, "Groups and Society", in Joseph C. Palamountain, Jr., Ed., *Voting. Interest Groups and Parties* /Glenview: Scott, Foresman, and Company/, 1966, p. 49.

² Lewis A. Froman, Jr., "Some Effects of Interest Group Strength in State Politics", 1966. American Political Science Association.

թյամբ տարբերակվում են միմյանցից իրենց առջև դրված նպատակներով, այդ նպատակներին հասնելու միջոցներով, գործունեության դաշտով ու տեխնոլոգիաներով: Այսպիսի խմբերն ընդունված է անվանել լոբբիստական խմբեր, մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք նաև ճնշման խմբեր, շահերի խմբեր հասկացություններին: Այս կամ այն շահերը հետապնդող հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական կամ մշակութային ընկերությունը համարվում է լոբբիստական խումբ՝ հետևյալ մի քանի հիմնական հատկանիշներից ելնելով՝

1. տվյալ խմբում ներառված անհատների միջև որևէ գաղափարի կամ նպատակի շուրջ փոխհամաձայնության առկայություն,
2. նպատակի հասնելու համար տվյալ խմբում ընդգրկված մարդկանց ինքնակազմակերպվածության առկայություն,
3. կազմակերպությունը հետևում է առաջադրված սոցիալական կամ այլ տեսակի շահերի պաշտպանության քաղաքականությանը,
4. խումբը տիրապետում է առաջադրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ տեղեկատվական ու տեխնոլոգիական ռեսուրսների,
5. կազմակերպությունը չի ձգտում գալ իշխանության,
6. խումբը տիրապետում է իշխանության գործադիր կամ օրենսդիր այս կամ այն ինստիտուտի, պաշտոնյաների վրա ազդելու մեխանիզմներին, ունի հստակ մշակված ռազմավարական ծրագիր կամ գործողությունների պլան:

Շահերի խմբերը հիմնականում կամավոր միություններ են, իսկ որոշ դեպքերում՝ մի շարք մարդկանց կողմից հատուկ նպատակներով ստեղծված կազմակերպություններ՝ իրենց պահանջներն ու բողոքներն արտահայտելու և պետության գործադիր կամ օրենսդիր մարմիններին դրանք հասցեագրելու համար՝ ակնկալելով իրենց շահերին համապատասխան որոշումներ: Մասնակցություն ցուցաբերելով շահերի խմբերում՝ քաղաքացիները սոցիալական ակտիվությունից քայլ են կատարում

դեպի քաղաքական ակտիվություն: Շահերի խմբերը, որոնք իրականացնում են լոբբիստական գործունեություն երկրի քաղաքական-հասարակական տարբեր ոլորտներում, տիրապետում են պետության ու իշխանության մարմինների վրա ազդելու հսկայական ռեսուրսների: Լոբբիստական խմբերից, ելնելով գործունեության բնույթից և ուղղվածությունից, կարելի է առանձնացնել, օրինակ, արհմիությունները, հասարակական կազմակերպությունները, մասնագիտական խմբերը իրավաբանների կամ բժիշկների միություն, այլ երկրում գործող լոբբիստական էթնիկ խմբեր, որոնք հետապնդում են իրենց հայրենիքի շահերի պաշտպանությունը բնակչության տվյալ երկրում և այլն:

Մասնագիտական գրականությունում շահերի խմբերի գործառույթների շարքում առանձնացվում են՝

- շահերի վերաձևակերպում. հասարակական, սոցիալ-հոգեբանական դժգոհությունների վերաձևավորում որոշակի քաղաքական պահանջների տեսքով,
- շահերի միավորում կամ պահանջների համաձայնեցում, այդ հիմքի վրա միացյալ նպատակների մշակում, քաղաքականապես առավել նշանակալի պահանջների հստակեցում ու առաջադրում,
- տեղեկացում. շահերի խմբերը իշխանության մարմիններին հասարակական կյանքի այս կամ այն հիմնախնդրի իրադրության վերաբերյալ տեղեկատվություն են հասցնում. հասարակական կարծիքի հաղորդում,
- քաղաքական էլիտաների ձևավորում. հնարավորություն ունեն իրենց անդամներին աշխատանք առաջարկել պետական կառույցներում, կառավարական և այլ պետական կառույցներում աջակցել որոշ գործիչների՝ ազդեցություն գործել որոշումների ընդունման գործընթացին մասնակից կադրերի ընտրության հարցում¹:

¹ *Джордан Г.*, «Группы давления, партии и социальные движения: есть ли потребность в новых разграничениях?», *Мировая экономика и международные отношения*, 1997г., 1; *Перегудов С.П., Лапина Н.Ю., Семененко И.С.*, «Группы интересов и российское государство». М., изд-во УРСС, 1999; Salisbury R.U.

Շահերի լոբբիստական խմբերը կարող են դասակարգվել նաև ըստ իրենց գործունեության առանձնահատկությունների և առաջադրված նպատակների: Այդ դասակարգման հիման վրա կարելի է առանձնացնել հետևյալ 4 հիմնական հատկանիշները՝

1. ըստ այդ խմբերի առաջացման և կազմակերպվածության մակարդակի.

- անեմիկ միություններ, որոնք առաջացել են որպես այս կամ այն իրադրության ուղղակի արձագանք կամ հետևանք: Անեմիկ միությունների դեպքում, որպես կանոն, բացակայում է մշտական և համակարգված կազմակերպվածությունը,
- ինստիտուցիոնալ միավորումներ, որոնք ունեն որոշակի կազմակերպչական կառուցվածք, կայացած գործառույթներ և պրոֆեսիոնալ կադրային աշխատակազմ:

2. Ըստ գործունեության մասնագիտացման.

- չասոցիացված խմբեր, որոնք ոչ ֆորմալ և ոչ կամավոր հիմունքներով միավորումներ են՝ ձևավորված բարեկամական, կրոնական, սոցիալ-մշակութային հիմքերի վրա (օր.՝ ուսանողական միություններ): Նման խմբերի գործունեությունը մշտական չէ,
- ասոցիացված խմբեր՝ կամավոր միավորումներ կամ ընկերություններ են, մասնագիտացված են շահերի ներկայացման հարցում և հետապնդում են որոշակի խնդիրների լուծման քաղաքականություն (արհմիություններ):

3. Ըստ գործունեության բնույթի.

- մեկ նպատակ հետապնդող խմբեր, որոնք ձգտում են ապահովել տվյալ պետության խորհրդարանում որևէ օրենսդրական ակտի ընդունումը կամ մերժումը: Նման խմբերը ձևավորվում են և գոյություն ունեն միայն տվյալ նպատակին հասնելու համար, իսկ դրանից հետո, որպես կանոն, լուծարվում են կամ վերաձևավորվում այլ լոբբիս-

տական խմբերի՝ ըստ իրավաքաղաքական իրադրության հրամայականի,

- բազմանպատակ խմբեր, որոնք վարում են բազմաբնույթ գործունեություն, չեն սահմանափակվում այս կամ այն տեսակի խնդրի կարգավորման շրջանակներում:

4. Հստ հասարակության կառավարման ոլորտների, տարածքային բաժանումների, գործունեության մակարդակի ու մասշտաբների¹:

Լոբբիստական խմբերը կարելի է դասակարգել նաև ըստ նրանց իրականացրած լոբբիստական գործունեության ուղղվածության: Այս դասակարգման համաձայն, առանձնացվում են քաղաքական, սոցիալական, տնտեսական, տարածաշրջանային, օտարերկրյա և հատուկ լոբբիստական խմբեր²: Փորձենք հակիրճ անդրադառնալ նրանց բնութագրին ու հիմնական առանձնահատկություններին.

1. *Քաղաքական լոբբիստական խմբերն* առաջին հերթին ֆինանսատնտեսական և սոցիալական ընկերություններ են, որոնք ձգտում են հասնել տվյալ երկրի գործադիր և օրենսդիր իշխանության վրա անհրաժեշտ ազդեցության՝ քաղաքական պայքարում և նախընտրական արշավներում մասնակցություն ցուցաբերելու միջոցով. Արևմտյան Եվրոպայում լոբբիստական գործունեության այս սուբյեկտի վառ օրինակ կարող է ծառայել Իտալիայի գործող վարչապետ Միլվիո Բեռլուսկոնիի՝ 1994թ. ստեղծած «Առաջ, Իտալիա» շարժումը, որը ներկայացնում է ֆինանսաարդյունաբերական խոշոր ընկերությունների և խմբերի շահերը³:

¹ Interest Groups // Non Governmental Politics Handbook of Political Science (F.I.Greenstein and N.M.Polsby eds.). Reading, Mass., Addison-Wesley, 1975; Ball A., Millward F. Pressure Politics in Industrial Societies. L., Macmillan, 1986; Wilson G. Interest Groups. Oxford, Blackwell, 1990.

² Перегудов С.П., Семенов М.С., «Лоббизм в политической системе России», Мировая экономика и международные отношения, 1996г., N 9.

³ Минченко Е.Н., Студеникин Н.В., «Современные тенденции в технологиях лоббизма», 21 мая 2004г.

2. *Սոցիալական խմբեր*, որոնց շարքին դասվում են արհմիությունները: Սոցիալական լոբբիստական խմբերի լոբբիստական պոտենցիալն ուղղակի համաչափ է տվյալ ճյուղի տնտեսական նշանակությանը, որը նրանք ներկայացնում են: Օրինակ, նավթային ոլորտում ներգրավված լոբբիստները, սոցիալական այլ ոլորտի ներկայացուցիչների համեմատությամբ (օր.՝ գիտություն, կրթություն) տիրապետում են իրենց շահերը լոբբինգի ենթարկելու անհամեմատ զգալի ռեսուրսների: Սոցիալական լոբբիստական խմբերի շարքին կարելի է դասել նաև վետերանների, կանանց, երիտասարդական բնապահպանական կազմակերպությունները: Սոցիալական լոբբիստական խմբերն էական ազդեցություն ունեն հատկապես զարգացած երկրներում, որտեղ լոբբիստական գործունեության իրականացման համար առկա են իրավաքաղաքական ազատ և բարենպաստ պայմաններ՝ ժողովրդավարության բարձր մակարդակի արդյունքում:
3. *Տնտեսական լոբբիստական կազմակերպություններ*, որոնց համար պետական որոշումների կայացման գործընթացի վրա ազդեցության լծակներից տիրապետող են տնտեսական գործոնները: Տնտեսական լոբբիստական խմբերի շարքին են դասվում ֆինանսաարդյունաբերական խմբերը, կորպորացիաներն ու ճյուղային ընկերությունները, որոնք շուկայում զբաղեցնում են մենիշխան կարգավիճակ: Տնտեսական լոբբիստական խմբերն ունեն նաև սեփական ֆինանսաբանկային կառույցներ, ՋԼՄ, ներկայացուցիչներ իշխանության գործադիր և օրենսդիր մարմիններում, ինչպես նաև երկրի քաղաքական կուսակցություններում¹:
4. *Տարածաշրջանային լոբբիստական խմբեր*, որոնք ձգտում են ստանալ որոշակի արտոնություններ և առավելություններ իրենց տարածքներում կամ նահանգային շրջաններում:

¹ *Бятец М. В.*, «Лоббизм в правотворческой деятельности», журнал «Правоведение», 1998, № 1., с. 46–52.

5. *Օտարերկրյա լոբբիստական խմբեր* («ճնշման խմբեր»/*press groups*): Օտարերկրյա լոբբիստական խմբերը մասնագիտական և քաղաքական համատեքստերում հաճախ հանդիպում են որպես էթնիկ խմբեր: Օտարերկրյա բազմաթիվ խմբերի ակտիվ գործունեության վառ օրինակ է Միացյալ Նահանգները:
6. *Հատուկ լոբբիստական խմբեր*. Իրական լոբբիստները հաճախ ոչ թե իրենք են գործում, այլ՝ իրենց ներկայացուցիչների միջոցով: Հատուկ լոբբիստական խմբերը գործի են դրվում այն ժամանակ, երբ տվյալ ընկերությունն օբյեկտիվ պատճառներով չի կարող արդյունավետ և ուղղակի դերակատարում ունենալ լոբբիստական գործընթացում, ուստի ֆինանսավորում է հատուկ լոբբիստական խմբերին՝ այս կամ այն գործընթացի վրա ազդելու նպատակով¹:

Էթնիկ լոբբիստական խմբեր

Տարբեր մասնագետների բնորոշմամբ, էթնիկ խմբերը, որոնք հաճախ անվանվում են նաև արտաքին քաղաքականության շահերի խմբեր, ձևավորվել են մշակութային, էթնիկական, կրոնական կամ ռասայական կապերի հիման վրա՝ իրենց բնակության երկրի արտաքին քաղաքականության վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն գործելու միջոցով իրենց հայրենիքի կամ ժողովրդի շահերը պաշտպանելու նպատակով: Ինչպես նկատում են մասնագետներից շատերը, էթնիկ լոբբիստական խմբերի զգալի մասը կապեր ունի իրենց հայրենիքի ներսում: Դրանք, որպես կանոն, ունեն քաղաքականացված բնույթ, սակայն կան այնպիսիները, որոնք ապաքաղաքականացված են:

ԱՄՆ պատմության սկզբից նեթ էթնիկ խմբերն ունեցել են որոշակի ազդեցություն այդ երկրի արտաքին քաղաքականության վրա: Չնայած ասիմիլյացիայի ուղղությամբ գործադրվող պե-

¹ *Thomas P. Lyon, John W. Maxwell, "Astroturf: Interest Group Lobbying and Corporate Strategy". Journal of Economics & Management Strategy, Volume 13, Number 4, 2004.*

տական ճնշումներին՝ տարբեր էթնիկ խմբերի ներկայացուցիչներից շատերը պահպանեցին կապերը ԱՄՆ սահմաններից դուրս գտնվող իրենց հայրենիքի և ժողովրդի հետ: Այդ ժամանակ, սակայն, էթնիկ խմբերը չունեին լուրջ կազմակերպվածություն և հստակ մարտավարություն, գործում էին հիմնականում անհատական նախաձեռնությամբ և անձնական կապերի միջոցով: Էթնիկական գործունը միայն 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին դարձավ ամերիկյան հասարակական-քաղաքական կարևոր և ակտուալ հարցերից մեկը՝ պայմանավորված դեպի Միացյալ Նահանգներ զանգվածային ներգաղթի գործընթացներով:

ԱՄՆ-ում ազգային փոքրամասնությունների էթնիկական ինքնագիտակցությունը զգալիորեն խթանվեց հատկապես Առաջին աշխարհամարտից հետո: Նրանք սկսեցին հիմնել լոբբիստական կազմակերպություններ՝ աջակցելու պատերազմի մեջ գտնվող իրենց եվրոպական հայրենիքներին: Գիտնական Թոմաս Ամբրոսիոյի խոսքով՝ «Սառըպատերազմյան շրջանում ԱՄՆ էթնիկ լոբբիստական խմբերի ազդեցությունը երկրի օրենսդիր մարմնում որոշակիորեն սահմանափակված էր՝ պայմանավորված միջազգային ռազմաքաղաքական համակարգով և ԱՄՆ սառըպատերազմյան արտաքին քաղաքականությամբ, որը կենտրոնացած էր երկրի գործադիր իշխանության էլիտաների ձեռքում»¹: Սառըպատերազմյան ժամանակաշրջանի վերջին և հատկապես խորհրդային կարգերի փլուզման արդյունքում, սակայն, համաշխարհային գործընթացներում ԱՄՆ դերակատարման միջազգայնացման գործընթացը զգալիորեն պայմանավորեց տեղի էթնիկ խմբերի հետ փոխհարաբերությունները և նպաստեց վերջիններիս դերի ակտիվացմանը երկրի արտաքին քաղաքական հարցերում:

Մեր օրերում ԱՄՆ-ում էթնիկ լոբբիստական գործունեության ակտիվացմանը նպաստել են նաև երկրի ժողովրդավարա-

¹ *Thomas Ambrosio*, "Ethnic Identity Groups and U.S. Foreign Policy", Printed in the United States of America, 2002.

կան բարեփոխումները, ինչի արդյունքում լոբբիստական գործունեությունը դարձել է առավել ազատ իրավաքաղաքական գործողություններում: Մասնագետների կարծիքով՝ երկրում էթնիկ խմբերի ակտիվությունը պայմանավորված է ԱՄՆ արտաքին քաղաքականության ոչ միակենտրոն կառավարման հանգամանքով: Ինչպես նկատել է Ջրիգնս Բժեզինսկին, ԱՄՆ արտաքին քաղաքականության վրա տարբեր էթնիկ լոբբիստական խմբերի զգալի ազդեցությունը հիմնականում հետևանք է այնպիսի ինստիտուտի բացակայության, որը կկարողանար պլանավորել և համակարգել երկրի արտաքին քաղաքականությունը:

ԱՄՆ Կոնգրեսում լոբբիստական խմբերի գործունեությունն առավել ակտիվ բնույթ ստացավ հատկապես այսպես կոչվող «խորհուրդների» (*caucus*) ստեղծման հետ կապված: Այդ խորհուրդներում սենատորները և Ներկայացուցիչների պալատի անդամները ներկայացնում են տարբեր էթնիկական խմբերին ու նրանց շահերը՝ Կոնգրեսում այս կամ այն որոշման ընդունման կամ մերժման գործընթացում: Ոլորտում հայտնի մասնագետներից մեկի՝ Ջեյմս Լինդսայի (*James Lindsay*) կարծիքով, առկա են մի շարք պայմաններ, որոնք ներգաղթած խմբերը վերածում են էթնիկ լոբբիստական խմբերի կամ կազմակերպությունների¹. նախ՝ ԱՄՆ ներգաղթածները, որոնք եկել են երկիր որպես քաղաքական փախստականներ (օր.՝ կուբացիները), առավել հաճախ են կազմակերպում էթնիկ լոբբիստական խմբեր, քան «տնտեսական» պատճառներով ներգաղթածները (օր.՝ իտալացիները): Երկրորդ՝ հարևան պետությունների հետ հակամարտող երկրներից գաղթածներն (Իսրայել, Հայաստան) իրականացնում են լոբբիստական գործունեություն ի պաշտպանություն իրենց հայրենիքի շահերի և առավել ակտիվ են, քան առավել բարենպաստ երկրներից ներգաղթածները (Նորվեգիա, Գերմանիա և այլն): Երրորդ՝ առավել ուժեղ քաղաքականացված լոբբի ձևավորվում է տնտեսապես հաջողակ էթնիկական խմբերի կողմից (հրեաներ, հայեր, հնդիկներ, հույներ): Եվ

¹ *James Lindsay*, "Getting Uncle Sam's Ear", Council on Foreign Relations (Winter 2002).

չորրորդ՝ էթնիկական լոբբիստական գործունեությունն առավել հաջող է, երբ դրված նպատակներն աջակցություն են գտնում ԱՄՆ քաղաքական էլիտաների կողմից և հակառակը:

Էթնիկ լոբբիստական խմբերը ձգտում են ուղղակի ազդեցություն գործել երկրի (տվյալ դեպքում՝ ԱՄՆ-ի) քաղաքականության վրա երեք հիմնական ճանապարհով՝

- հիմնահարցի ձևակերպում, երբ էթնիկ լոբբիստական խմբերը փորձում են կառավարության օրակարգ մտցնել որևէ հիմնախնդիր և ազդել կառավարության քաղաքականության վրա՝ հիմնահարցի հետ կապված,
- տեղեկատվության ապահովում, երբ էթնիկ լոբբիստական խմբերը զգալի աշխատանքներ են կատարում օրենսդիրներին տվյալ հարցի հետ կապված անհրաժեշտ տեղեկատվական և քաղաքական վերլուծություն տրամադրելու հարցում. բազմապիսի հարցերի հետ առնչվելիս օրենսդիրները, գործելով ժամանակային խիստ սահմանափակումների ռեժիմով, դիմում են այլ խմբերի ու անհատների տրամադրած տեղեկատվությանն ու վերլուծությանը,
- քաղաքականության մոնիթորինգ, երբ էթնիկ խմբերը մանրամասն մոնիթորինգի են ենթարկում տվյալ հարցի առնչությամբ կառավարության քաղաքականությունը և արձագանքում վերջինիս՝ հավելյալ տեղեկատվության տարածման միջոցով (նամակագրական արշավներ, ընտրարշավներում աջակցություն որևէ թեկնածուին և այլն)¹:

Ստորև ներկայացվում են ԱՄՆ-ում գործող էթնիկ լոբբիստական խմբերի գործունեության հիմնական առանձնահատկությունները.

- լոբբիստական խմբերը ԱՄՆ Կոնգրեսի անդամներին և կառավարության ներկայացուցիչներին մատակարարում են անհրաժեշտ տեղեկատվություն այս կամ այն հիմնահարցի շուրջ,

¹ Նույն տեղում:

- լոբբիստական խմբերն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում Կոնգրեսի որոշումների և օրինագծերի մշակման գործընթացներում՝ կապված երկրի ներքին կամ արտաքին քաղաքականության հիմնահարցերի հետ,
- կազմակերպում են քարոզչական և լրատվական մեծածավալ աշխատանք՝ ուղղված ԱՄՆ հասարակական կարծիքի նպատակային ձևավորմանը,
- առանձնահատուկ նշանակություն է տրվում նախընտրական արշավների ժամանակ «սեփական» թեկնածուների ֆինանսական և քաղաքական աջակցության հարցերին:

Մասնագետները միակարծիք չեն ԱՄՆ-ում էթնիկ լոբբիստական գործունեության դերի և նշանակության հարցում: Ումանք գտնում են, որ էթնիկ լոբբինգը ԱՄՆ ազգային քաղաքականության «գլոբալացման» արձագանքն է և նպաստում է ողջ աշխարհում ամերիկյան արժեքների տարածմանն ու ամրապնդմանը: Այլ հեղինակների բնորոշմամբ, ԱՄՆ արտաքին քաղաքականության «մասնավորեցումը» կոռումպացնում է ամերիկյան քաղաքական համակարգը և նվազեցնում նրա նշանակությունն ու գրավչությունը միջազգային հանրության աչքին¹:

Հակիրճ անդրադառնաք Միացյալ Նահանգների լոբբիստական խմբերի վիճակագրությանը: Մասնագետների բնորոշմամբ՝ վերջին 40 տարիներին ԱՄՆ-ում գործող լոբբիստական խմբերի թվաքանակն աճի կայուն միտում ունի: Վաշինգտոնյան լոբբիստների եկամուտների վրա այնքան էլ չի ազդել նույնիսկ համաշխարհային տնտեսական ճգնաժամը. 2008թ. նրանց եկամուտները կազմել են \$3,24 մլրդ, որը զգալիորեն գերազանցում է նախորդ տարիների ցուցանիշները. 2007թ. եկամուտները կազմել են \$2,84 մլրդ, 2005թ.՝ \$2,41 մլրդ²:

¹ John Newhouse, "Diplomacy, Inc. The Influence of Lobbies on U.S. Foreign Policy", Foreign Affairs, May/June 2009.

² «Оборот лоббистской индустрии США увеличивается, несмотря на кризис 2009», Март 12, 2009г., по материалам: WashingtonProfile, liga.net, <http://www.lobbying.com.ua/news/2009-03-12-61>.

«Լոբբինգի բացահայտման ակտի» (1995թ.) ներքո գրանցված լոբբիստների ու պատվիրատուների¹ թվաքանակը 1996-2004թթ.²

| Տարի | Պատվիրատու | | Լոբբիստ | |
|------|------------|-------------------------|-----------|-------------------------|
| | Ընդհանուր | Տարեկան փոփոխություն, % | Ընդհանուր | Տարեկան փոփոխություն, % |
| 1996 | 8.118 | - | 10,798 | - |
| 1997 | 10.013 | 23,34 | 14,946 | 38,41 |
| 1998 | 16.873 | 68,51 | 18,589 | 24,37 |
| 1999 | 13.793 | -18,25 | 21,279 | 14,47 |
| 2000 | 13.865 | 0,52 | 16,342 | -23,20 |
| 2001 | 15.941 | 14,97 | 18,854 | 15,37 |
| 2002 | 17.575 | 10,25 | 21,089 | 11,85 |
| 2003 | 15.317 | -12,85 | 24,872 | 17,94 |
| 2004 | 19.758 | 28,99 | 30,402 | 22,23 |

Աղբյուրը՝ Secretary of Senate, Office of Public Records and CRS calculations.

Լոբբինգի իրականացման տեխնոլոգիաների շուրջ

Լոբբիստական կիրառական և տեսական գործունեությունում հաճախակի կիրառվող տեխնոլոգիաներից կամ մեթոդներից առանձնացվում են հետևյալները՝

1. հասարակական կարծիքի մոբիլիզացում (զանգվածային ակցիաների նախաձեռնում, իշխանություններին հասցեագրված զանգվածային դիմումների կազմակերպում, ակտիվ գործունեություն ՁԼՄ դաշտում, դատական գործընթացների նախաձեռնում),

¹ «Լոբբինգի բացահայտման ակտի» համաձայն, պատվիրատուն այն անհատն է կամ ընկերությունը, որը ծառայության է վերցնում այլ անհատի՝ իր անունից լոբբիստական գործունեություն ծավալելու նպատակով:

² R. Eric Peterson, "Lobbying Reform: Background and Legislative Proposals, 109th Congress", Updated March 23, 2006, CRS Reports for Congress.

2. ընտրարշավների կիրառում (ընտրություններում անհատական մասնակցություն կամ «սեփական» թեկնածուների առաջադրում, ընտրարշավների ֆինանսավորում և քաղաքական աջակցում),
3. ֆորմալ կապերի կիրառում (նորմատիվ-իրավական ակտերի և նախագծերի մշակում և դրանց քննարկումների կազմակերպում, իշխանության մարմինների ներկայացուցիչների խորհրդատվություն և ընդունվող որոշումների փորձաքննություն, տեղեկատվության տրամադրում, մասնակցություն իշխանության մարմիններում ընթացող աշխատանքներին),
4. ոչ ֆորմալ կապերի կիրառում (գիտաժողովների, կլոր սեղանների կազմակերպում և անցկացում, անձնական կապերի օգտագործում, ոչ ֆորմալ հանդիպումների կազմակերպում),
5. խորհրդարանականների և իշխանության գործադիր ներկայացուցիչների վրա հոգեբանական ազդեցության կիրառում (զանգեր, նամակներ, հեռագրեր):

Ստորև ներկայացնենք ԱՄՆ-ում վերջին մի քանի տասնամյակներին ակտիվ կիրառություն ստացած լոբբինգի տեխնոլոգիաներից մեկը, որը բավական արդյունավետ է գործում հատկապես ժողովրդավարական ու քաղաքացիական զարգացած ինստիտուտներ ունեցող հասարակություններում¹: Խոսքը վերաբերում է Միացյալ Նահանգներում մեծ տարածում գտած լոբբինգի՝ «*Lobbying the grassroots*» (խոտի արմատներ) կոչվող մեթոդի մասին: Տեխնոլոգիայի էությունն այն է, որ լոբբիստը դիմում է ոչ թե պաշտոնյային կամ կոնգրեսականին, այլ՝ հասարակության ներկայացուցիչներին, հասարակ քաղաքացիներին,

¹ *Conor McGrath*, “Grass Roots Lobbying: Marketing Politics and Policy ‘Beyond The Beltway’”. Paper Delivered to the conference “Elections on the Horizon: Marketing Politics to the Electorate in the USA and UK”, British Library, 15 March, 2004.

որոնց վրա կարող է ազդել իշխանության այս կամ այն որոշումը: Լոբբիստը բացատրում է իրավիճակը, տվյալ հարցի հետ կապված քաղաքացիների շահերն ու կորուստները, հորդորում քաղաքացիներին կապվել պաշտոնյաների և օրենսդիրների հետ՝ տվյալ որոշումն ընդունելու կամ մերժելու պահանջով: Երբ տվյալ սենատորին հասցեագրվում են տասնյակ նամակներ ու բողոքներ՝ կապված որևէ որոշման ընդունման կամ մերժման հետ, օրենսդիրը ստիպված է լինում հիմնականում լսել և հետևել հասարակական կարծիքին: Հասարակական կարծիքի հաշվառումն էական նշանակություն ունի նաև տվյալ օրենսդրի համար նահանգային կամ տեղական մարմիններում վերընտրվելու հարցում:

«*Lobbying the grassroots*» եզրն առաջին անգամ 1912թ. գործածության մեջ է դրել Ինդիանայի նահանգի սենատոր Ալբերտ Երեմիա Բներիջը, որն այդպես էր բնութագրում սկզբնական շրջանում իր ստեղծած «Առաջադեմ կուսակցությունը»: «*Lobbying the grassroots*» մեթոդը մեծ տարածում է ձեռք բերել ոչ միայն Միացյալ Նահանգներում, այլև Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրներում (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա):

Այս տեխնոլոգիան իրականացնելիս առանձնացվում են հետևյալ հիմնական գործողությունները՝

1. զանգվածային գործողությունների նախաձեռնում (ցույցեր, երթեր՝ լոբբիստի նախաձեռնությանն աջակցելու նպատակով),
2. պաշտոնյաներին ու օրենսդիրներին, ինչպես նաև հանձնաժողովներին և աշխատանքային խմբերին հասցեագրված մշտական հեռախոսազանգերի կազմակերպում՝ տվյալ որոշման հետ կապված: Մշտական հեռախոսազանգերի կազմակերպումը կարող է շարունակվել՝ ընդհուպ մինչև արտաքին աշխարհի հետ նրանց հաղորդակցության անջատումը,

3. էլեկտրոնային հասցեին բազմաքանակ նամակների (սպամների) առաքում՝ այն արգելափակելու նպատակով,
4. բնակչության նամակների, հեռագրերի առաքում՝ լոբբիստի կողմից ներկայացված առաջարկությանն աջակցելու պահանջով,
5. հասարակական ազդեցիկ գործիչների այցերի կազմակերպում՝ տվյալ նախաձեռնության աջակցման կամ մերժման դիմումով¹:

Որպես այդ տեխնոլոգիայի արդյունավետության ապացույց՝ կարելի է հիշատակել ԱՄՆ խոշոր լոբբիստական կազմակերպություններից մեկի՝ «ԱՄՆ զենքի ազգային ասոցիացիայի» գործողությունները 1980-ականներին: Ասոցիացիան հակազդում էր զենքի վաճառքի արգելման մասին օրենքի ընդունմանը և 22 ժամվա ընթացքում ԱՄՆ Կոնգրես ուղարկեց 3 միլիոն հեռագիր, ինչպես նաև հեռախոսազանգերով կազմակերպեց Կոնգրեսի շենքի հեռախոսային շրջափակումը, ինչի արդյունքում օրենքը չընդունվեց: Նշենք նաև, որ նախաձեռնության իրականացման հետևում կանգնած էին ԱՄՆ զենքի արտադրության խոշոր ընկերությունները²:

Լոբբիստական գործունեությունը ԱՄՆ նահանգային մակարդակներում

ԱՄՆ լոբբիստական գործունեության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ վերջինիս՝ կենտրոնից նահանգային կամ տեղական կառավարման համակարգեր փոխանցման միտումն է, որը շոշափելի է դարձել հատկապես վերջին երկու տասնամյակներում: Ազգային խոշոր կորպորացիաները, շահերի խմբերն ու կազմակերպությունները, որոնք ավանդաբար իրենց գործու-

¹ Профессиональный словарь лоббистской деятельности (составитель - к.п.н П.А. Толстых), “Grass roots lobbying”, http://www.lobbying.ru/dictionary_word.php?id=18.

² Նույն տեղում:

ներությունը կազմակերպում էին իշխանության դաշնային մարմինների հետ հարաբերությունների ուղղությամբ, վերջին շրջանում սկսել են մեծացնել իրենց քաղաքական ներկայացվածությունը և ուժեղացնել լոբբիստական գործունեությունը նահանգների օրենսդիր մարմիններում, որոնք այլ կերպ հայտնի են «*Legislatures*» անվամբ¹: Դա կատարվում էր ինչպես դաշնային ծրագրերի մի մասը նահանգների պատասխանատվությանը հանձնելու, այնպես էլ Վաշինգտոնի՝ շահերի լոբբիստական խմբերի ճնշումների թուլացման նպատակներով: Արդյունքում՝ միայն կենտրոնական ինստիտուտների վերահսկողության տակ գտնվող դաշնային ծրագրերի քանակը սկսեց կայուն նվազել: Եթե 20-րդ դարի 70-ականներին նահանգների կառավարություններն ունեին շուրջ \$85 մլրդ բյուջե, ապա 90-ականներին՝ արդեն \$260 մլրդ²: Նման միտման առաջացման համար կարելի է առանձնացնել երեք հիմնական պատճառ

- ԱՄՆ իշխանությունում տեղական կառավարման մարմիններին որոշ լիազորությունների հանձնումն օբյեկտիվ գործընթաց է, որի ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկվեցին ԱՄՆ նախկին նախագահ Ռ.Նիքսոնի օրոք, երբ ընդունվեց դաշնային եկամուտների մասնաբաժինն իշխանության նահանգային և տեղական մարմինների միջև բաշխելու ծրագիրը³: Ընդ որում, նահանգների կողմից իրենց հատկացված ֆինանսների օգտագործման հարցում խիստ պահանջներ չէին գործում, ինչի արդյունքում նահանգապետերը հնարավորություն ստացան կարգավորել ծագած խնդիրները (սպառողների իրավունքների, շրջակա միջավայրի պահպանություն, աշխատատեղերի ստեղծում, առողջապահություն և այլն)⁴,

¹ Словари и энциклопедии на Академике, Легислатура.
<http://dic.academic.ru/dic.nsf/lower/15828>

² Thomas C., Hrebemar R., "Nationalization of Interest Groups and Lobbying in the States". In Interest Group Politics. Ed. by A. Cigler, B. Loomis., Washington, 1991, p.66.

³ Никита Иванов, «Лоббизм в легислатурах американских штатов», Национальная лаборатория внешней политики, 24 апреля 2002г.

⁴ Rosenthal A., The Third House. "Lobbyists and Lobbying in the States", Washington, 1993.

- լոբբիստական խմբերի շահերին առնչվող տեղական նշանակության հիմնախնդիրների ավելացման միտում,
- նահանգային կամ տեղական կազմակերպությունների քաղաքական գործունեության և դիրքերի ամրապնդման գործընթացի ակտիվացում: Երկրի բնակչությունն, իր հերթին, հիմնախնդիրները սկսել է կարգավորել հիմնականում տեղական իշխանությունների հետ¹:

Ակնհայտ է, որ նշված գործունեները չէին կարող չանդրադառնալ նահանգներում լոբբիստական գործունեության և լոբբինգի ինստիտուտի զարգացման գործընթացի վրա առհասարակ: Նահանգներում լոբբիստական գործունեության ակտիվացման լուրջ քայլեր ձեռնարկվեցին հատկապես 1980-ականներին, ինչի արդյունքում տեղական հիմնահարցերում ներգրավվեցին վաշինգտոնյան լավագույն լոբբիստներից շատերը: Ներկայում տեղական կամ նահանգային մակարդակում լոբբիստական գործունեությունն այնքան զարգացած է, որ, ըստ էության, չի տարբերվում դաշնային լոբբինգի մակարդակից: Օրենսդիրների լոբբինգավորման գործում կարևոր գործոն է նահանգի օրենսդրական ժողովի աշխատանքային համակարգը: Տնտեսապես և քաղաքականապես առավել զարգացած նահանգներում ու ռեզիդենտներում (Կալիֆորնիա, Նոր Անգլիա) օրենսդրական մարմիններն աշխատում են նստաշրջանների մշտական ռեժիմով՝ 7-9 ամիս, իսկ այլ նահանգներում, օրինակ՝ Տեխասում մշտական գործող նստաշրջան ընդհանրապես գոյություն չունի: Որքան կարևոր է տվյալ նահանգում օրենսդրության նշանակությունը, այնքան երկար է նստաշրջանը և, հետևաբար՝ ակտիվ լոբբիստական գործունեությունը: Կալիֆորնիայում, որն ամենամեծ և ամենահարուստ նահանգներից մեկն է, օրենսդիր մարմնի դերը զգալիորեն մեծ է: 1993-1994թթ. նահանգի օրենսդրական մարմնում լոբբինգավորման համար ծախսվել է \$250 մլն, ինչը համեմատելի է տասնյակ նահանգներին:

¹ *Никита Иванов*, նշվ. աշխ.:

րում իրականացվող լոբբիստական գործունեությանը հատկացվող ծախսերի հետ¹:

Մյուս կողմից, տվյալ նահանգում շահերի խմբերն առավել ազդեցիկ են, երբ նահանգում գերիշխող դիրքեր ունի որևէ խոշոր կորպորացիա, և երկրորդ՝ երբ նահանգը քիչ է բնակեցված և արդյունաբերական տեսանկյունից քիչ զարգացած²: Նշենք նաև, որ խոշոր լոբբիստական կազմակերպությունների համար կարևոր է շահերի դիվերսիֆիկացման խնդիրը: Այդ պատճառով նրանց մի մասը, ակտիվ լինելով վաշինգտոնյան լոբբիստական գործունեությունում, զբաղված է նաև լոբբինգավորման աշխատանքներով նահանգային մակարդակներում, ունի լոբբիստներ ու շահերի խմբեր այս կամ այն նահանգում:

Միացյալ Նահանգների լոբբինգի ինստիտուտի իրավաբաղաքական հիմքերը

ԱՄՆ-ում լոբբինգն իրականացվում է 1789թ. ընդունված երկրի առաջին սահմանադրական փոփոխության համաձայն (10 փոփոխություն-*Bill of Rights*), որը երաշխավորում է քաղաքացիների իրավունքը բողոքներով իշխանության պաշտոնական մարմիններին դիմելու հարցում: Սահմանադրական փոփոխությունների փաթեթի առաջին փոփոխությունում նշվում է. «Կոնգրեսը չպետք է հրապարակի որևէ օրենք, որը կվերաբերի կրոնի սահմանմանը կամ էլ կարգելի դրա ազատ դավանումը, կամ էլ կսահմանափակի խոսքի կամ մամուլի ազատությունը, կամ էլ ժողովրդի՝ խաղաղ հավաքների կազմակերպման և բողոքների բավարարման համար կառավարությանը դիմելու իրավունքը»³: Սահմանադրական առաջին փոփոխությունները, որոնք առաջարկվել էին ԱՄՆ Կոնգրեսի կողմից, վավերացվեցին 1791թ.:

¹ *Hrebenar R.*, “Interest Group Politics in America”, 3rd edition, New York, 1997.

² *Morehouse S.*, “State Politics, Parties and Policy”, New York, 1981.

³ Конституция Соединённых Штатов Америки. Поправки к Конституции, Билль о Правах (1791)-Поправка I (1791),

http://ru.wikisource.org/wiki/Конституция_Соединённых_Штатов_Америки#.D0.9F.D0.BE.D0.BF.D1.80.D0.B0.D0.B2.D0.BA.D0.B0_I_.281791.29.

Երկրում լոբբիստական խմբերի ակտիվացմանը զուգահեռ առաջ եկավ դրանց գործունեությունն իրավաքաղաքական տեսանկյունից վերահսկելու անհրաժեշտությունը: 1876թ. ընդունվեց օրենք, որի համաձայն՝ լոբբիստական գործունեությամբ զբաղվող բոլոր անձինք պարտավոր էին տեղյակ պահել իրենց մասին և պաշտոնապես գրանցվել խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի քարտուղարի գրասենյակում¹:

Երկար ժամանակ Միացյալ Նահանգներում լոբբիստական գործունեություն ասելով հասկացվում էր առաջին հերթին արտաքին քաղաքականության հարցերի լոբբինգը, և հենց այդ գաղափարն էր ամրագրված 1938թ. ընդունված «Օտարերկրյա գործակալների գրանցման մասին» օրենքում (*Foreign Agents Registration Act – FARA*): Օրենքն ընդունվել է որպես ԱՄՆ-ում նացիստական և կոմունիստական քարոզչության կանխարգելման փորձ²: 1938թ. օրենքի «Սահմանումներ» գլխի 611-րդ պարագրաֆի համաձայն, «օտարերկրյա ներկայացուցչության գործակալ» եզրը (*agent of foreign principal*) տարածվում է այն անձի վրա, որը համարվում է «օտարերկրյա ներկայացուցչության կամ ֆիզիկական անձի հրամանով, պահանջով կամ ուղղորդմամբ, վերահսկողությամբ գործող գործակալ, ներկայացուցիչ կամ ծառայող, որի գործողություններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում են, ղեկավարվում, ուղղորդվում, ֆինանսավորվում կամ սուբսիդավորվում՝ ամբողջական կամ մասնակի տեսքով, օտարերկրյա ներկայացուցչի կողմից կամ այլ անձի միջոցով»³: Օտարերկրյա ներկայացուցչության գործակալ է համարվում այն անհատը, որը՝ ա. Միացյալ Նահանգներում զբաղվում է քաղաքական գործունեությամբ՝ օտարերկրյա ներկայացուցչի շահերի համար, բ. Միացյալ Նահանգներում գործում է որպես հասարակական կապերի գծով խորհրդատու,

¹ “History of the Lobbying Disclosure Act”, Public Citizen, July 23, 2005.

² Նույն տեղում:

³ Foreign Agents Registration Act. United States Department of Justice, <http://www.justice.gov/criminal/fara/links/indx-act.html>

տեղեկատու ծառայող, կամ էլ քաղաքական խորհրդական օտարերկրյա ներկայացուցչության շահերի անունից, գ. Միացյալ Նահանգներում հավաքագրում է, վճարում կամ տալիս է նվիրատվություններ, փոխառություններ, գումար կամ արժեքավոր այլ իրեր օտարերկրյա ներկայացուցչության համար կամ նրա շահերի անունից, դ. Միացյալ Նահանգներում ներկայացնում է օտարերկրյա ներկայացուցչության շահերը Միացյալ Նահանգների կառավարության որևէ գործակալությանը կամ պաշտոնյային¹: «Մահմանումներ» գլխում առանձին կետերով բացատրություններ են տրվում նաև «քաղաքական գործողություններ», «հասարակական կապերի գծով խորհրդատու», «քաղաքական խորհրդական» և այլ հասկացություններին:

Մույն օրենքը պարտավորեցնում էր գրանցվել և հաշվետու լինել կատարած գործունեության համար: Գրանցվողը պետք է նշեր անունը, գործունեության հասցեն կամ հասցեները, իր կարգավիճակին վերաբերող մանրամասները. եթե անհատ է, ապա պետք է նշվի ազգությունը, կազմակերպության դեպքում՝ անունը, հասցեն, ներառված յուրաքանչյուր անդամի ազգությունը («Գրանցման պահանջները» գլխում):

Բացի այդ, «Օտարերկրյա գործակալների գրանցման մասին» օրենքում օտարերկրյա գործակալների գրանցման հարցում գործում են նաև որոշակի բացառություններ, որոնք վերաբերում են՝ ա. դիվանագետների և հյուպատոսությունների այն աշխատակիցներին ու որոշ պաշտոնատար անձանց, որոնց գործունեությունը հայտնի է ԱՄՆ Արդարադատության նախարարությանը, բ. Միացյալ Նահանգների կողմից ճանաչում գտած այլ պետության կառավարության որևէ պաշտոնյային, որը չի հանդիսանում հասարակական կապերի գծով խորհրդատու, տեղեկատու ծառայող կամ էլ Միացյալ Նահանգների քաղաքացի..., գ. յուրաքանչյուր անձին, որը զբաղված է կամ համաձայն է զբաղվել մասնավոր և ոչ քաղաքական գործունեությամբ...²: Օրենքի հիմ-

¹Նույն տեղում:

²Նույն տեղում:

նադրությունների խախտման համար սահմանվում էին տույժեր՝ \$5-10 հազարի սահմաններում կամ 6 ամսից մինչև 5 տարի ազատազրկում՝ ըստ իրավախախտման աստիճանի:

1938թ. ընդունված «Օտարերկրյա գործակալների գրանցման մասին» օրենքում մի քանի փոփոխություն իրականացվեց 1950-60թթ.: Դրանց շարքում կարևոր փաթեթը վերաբերում է 1966թ., երբ ԱՄՆ Կոնգրեսը փոխեց սույն օրենքի բովանդակային մասը՝ դրան տալով լոբբիստական նշանակություն:

1946թ. Միացյալ Նահանգներում ընդունվեց հատուկ օրենք լոբբիստական գործունեության կարգավորման մասին (*Federal Regulation of Lobbying Act - FRLA*), որտեղ սահմանվեց բոլոր պրոֆեսիոնալ լոբբիստների գրանցման անհրաժեշտության պահանջը: Օրենքի հիմնական նպատակն էր լոբբիստների գրանցման և բացահայտման համապարփակ համակարգի ստեղծումը, երկրի իշխանության օրենսդիր մարմինների վրա լոբբիստական խմբերի գործադրած ճնշումների վերաբերյալ պետական տեղեկատվության ապահովումը¹: Օրենքը տարածվում էր միայն ԱՄՆ Կոնգրեսում իրականացվող լոբբիստական գործունեության վրա. օրենքում ոչ մի խոսք չկար երկրի գործադիր իշխանությունում լոբբիստների ակտիվության վերաբերյալ: Օրենքի առանցքային կետերից նշենք մի քանիսը.

- ըստ օրենքի 266-րդ պարագրաֆի (*ով է լոբբիստ համարվում*), օրենքը տարածվում է յուրաքանչյուր անհատի վրա, որն «անմիջականորեն իր ներկայացուցիչների, կամ ծառայողների, կամ այլ անձանց միջոցով հավաքագրում կամ ստանում է դրամական միջոցներ, կամ էլ այլ արժեքավոր իրեր՝ հիմնականում դրանք հետևյալ նպատակներին ծառայեցնելու համար՝ ա. ԱՄՆ Կոնգրեսի կողմից որևէ օրենսդրական ակտի ընդունում կամ մերժում, բ. ուղղակի կամ անուղղակի կերպով ազդեցության կիրառում ԱՄՆ

¹ *Craig Holman*, “Making the U.S. Lobbying Disclosure Act Work as Intended: Implications for the European Transparency Initiative”. “Public Citizen”, 2008.

Կոնգրեսի կողմից որևէ օրենսդրական ակտի ընդունման կամ մերժման վրա:

- 267-րդ պարագրաֆում (*լոբբիստների գրանցման կարգը*) նշվում է Սենատի կամ Ներկայացուցիչների պալատի քարտուղարի կողմից լոբբիստների գրանցման կարգը: Լոբբիստը գրավոր հայտարարություն է ներկայացնում, որտեղ պետք է նշի գրանցվող անհատի կամ ընկերության անունն ու հասցեն, ինչպես նաև այն պատվիրատու անհատի կամ կազմակերպության անունն ու հասցեն, ում շահերից հանդես է գալիս, գործարքի ժամկետը, հատկացված միջոցների չափն ու դրանց ուղղորդման նպատակները: Լոբբիստները պետք է մանրամասն հաշվետվություն ներկայացնեն, որտեղ նշվելու են ստացված ու ծախսված բոլոր ֆինանսական միջոցները՝ առաջադրված նպատակների իրականացման համար, այն անհատները, որոնց փոխանցվել են դրամական միջոցներ, ինչպես և այն օգտագործված փաստաթղթերի, ամսագրերի և այլ հրատարակությունների անունները, որոնցում անհատի նախաձեռնությամբ զետեղվել են հոդվածներ կամ նյութեր՝ տվյալ օրինագծի աջակցման համար¹:
- 268-րդ պարագրաֆի (*իշխանության ինչպիսի՞ ճյուղերի վրա է տարածվում օրենքը*) համաձայն, օրենքը տարածվում է միայն այն լոբբիստների վրա, որոնք գործունեություն են ծավալում ԱՄՆ Կոնգրեսում:
- 269-րդ պարագրաֆում (*լոբբիզմի իրավական սահմանափակումներ*) նշվում են լոբբիստի իրավական սահմանափակումները, ըստ որոնց՝ արգելվում է Ներկայացուցիչների պալատի և Սենատի անդամների բացահայտ կաշառումը. սահմանվել են պատասխանատվության ենթարկելու հետևյալ տույժերը՝ մինչև \$5000 տուգանք կամ էլ ոչ ավելի, քան 12 ամսվա ազատազրկում, կամ էլ առաջին և երկրորդ

¹ “History of the Lobbying Disclosure Act”, Public Citizen, July 23, 2005.

կետերը միաժամանակ: Որպես հավելյալ տույժ՝ երեք տարի լոբբիստական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում:

ԱՄՆ-ում լոբբիստական գործունեության դեմ հզոր հարձակում նախաձեռնվեց 20-րդ դարի 70-ականներին: Կիրառվեցին համապատասխան միջոցներ, որոնք մասնակիորեն կանոնակարգեցին լոբբիստների գործունեությունը, չնայած ոլորտում նոր օրենքի ամրագրման անհրաժեշտությունն ակնհայտ էր: 1971թ. ընդունվեց «Դաշնային ընտրարշավների մասին» օրենքը (*«Federal Election Campaign Act»*)¹, որն ուղղված էր դաշնային ընտրարշավներին հատկացվող ֆինանսական միջոցների հնարավորինս բացահայտմանը: Արդյունքում՝ 1974թ. օրենքում տեղ գտած փոփոխությունների հիման վրա ամրագրվեցին ընտրարշավների համար նախատեսված ֆինանսական հատկացումների իրավական սահմանափակումները, այդ գործընթացների վերահսկողության մեծացման նպատակներով ստեղծվեց նաև «Դաշնային ընտրությունների հանձնաժողովը» (*«Federal Election Commission»*): Այս տարիներին լուրջ պայքար էր ընթանում նաև քաղաքական կուսակցությունների կողմից ընտրարշավներին հատկացվող ֆինանսական միջոցների տրամադրման հարցի շուրջ, ինչի արդյունքում նախկինում առկա իրավական դաշտի ընձեռած հնարավորությունները նույնպես զգալիորեն սահմանափակվեցին: Ընդունված օրենքն ուղղված էր ճնշման խմբերի ազդեցության սահմանափակմանը, որոնք ցանկանում էին ընտրություններին աջակցել և առաջ մղել նախագահի իրենց թեկնածուին: Հայտնի է, որ ԱՄՆ նախագահներից շատերի հետևում, որպես կանոն, կանգնած են եղել ազդեցության որոշակի ուժեր. էյզենհաուերին աջակցում էր ռազմական լոբբին, Ջոնսոնին՝ Տեխասի նավթագործները և այլն:

¹ ԱՄՆ Դաշնային ընտրարշավների մասին օրենսդրությանը մանրամասն կարող էք ծանոթանալ «Դաշնային ընտրությունների հանձնաժողովի» կողմից 2008թ. ապրիլին պատրաստված տեղեկագրից. “Federal Election Campaign Laws”. The Federal Election Commission, April, 2008, <http://www.fec.gov/law/feca/feca.pdf>

1974թ. ընդունվեց օրենսդրական փոփոխություն, որի համաձայն՝ սահմանափակվեցին անհատների ու «Քաղաքական գործողության հանձնաժողովների» ներդրվելիք գումարների չափերը, որոնց միջոցով լոբբիստները ձեռք էին բերում համապատասխան ֆինանսական միջոցներ: Այս օրենսդրական փոփոխության համաձայն, «Քաղաքական գործողության հանձնաժողովները» պետք է հավաքագրեին կամ կուտակեին քաղաքացիների, խմբերի, միությունների միջոցները և Կոնգրեսի ընտրություններին այդ միջոցների բաշխման հարցում որդեգրեին միասնական մոտեցումներ: Մակայն փոփոխությունն այդպես էլ ցանկալի արդյունք չտվեց, քանի որ խոշոր կորպորացիաներն իրենց տրամադրության տակ ունեին ոչ թե մեկ, այլ անհրաժեշտ քանակությամբ «Քաղաքական գործողության հանձնաժողովներ»¹:

1995թ. ԱՄՆ նախկին նախագահ Բիլ Կլինթոնը ստորագրեց նոր լոբբիստական գործունեության բացահայտման մասին առավել խիստ մոտեցումներ պարունակող մի օրենք (*«Lobbying Disclosure Act»*), որն ուժի մեջ մտավ 1996թ. հունվարի 1-ին: Այս օրենքի կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ Ակտն առաջին անգամ տարածվում էր լոբբիստական գործունեության վրա ոչ միայն ԱՄՆ Կոնգրեսում, այլև գործադիր իշխանության վրա, ինչը պայմանավորված էր Միացյալ Նահանգներում իշխանության գործադիր մարմիններում ևս լոբբիստների ու նրանց գործունեության ակտիվացմամբ և գործադրվող ճնշումների ուժեղացմամբ:

Օրենքի երկրորդ գլխի առաջին կետով նշվում էր. «ԱՄՆ կառավարությունը պահանջում է պետական տեղեկատվություն ապահովել Դաշնային կառավարության օրենսդիր և գոր-

¹Քաղաքական գործողությունների հանձնաժողովները (*«Political Action Committee»*) մասնավոր խմբեր են, որոնք կազմավորվում են ընտրությունների ժամանակ տվյալ թեկնածուին աջակցելու կամ էլ որևէ քաղաքական որոշման, օրինագծի ընդունման կամ մերժման համար: 1971թ. ընդունված «Դաշնային ընտրաբաշխման մասին» օրենքի համաձայն, կազմակերպությունը դառնում է «քաղաքական կոմիտե», եթե ստանում է հատկացումներ կամ տալիս միջոցներ՝ ավելի քան \$1,000, դաշնային ընտրության վրա ազդեցություն գործելու նպատակով:

ծաղիր մարմինների պետական որոշումների ընդունման գործընթացի վրա ազդեցություն գործելու համար վարձատրված լոբբիստների գործունեության վերաբերյալ»¹: Նույն գլխի երկրորդ կետում նշվում էր. «Լոբբիստական գործունեության բացահայտման առկա օրենսդրական հիմքերը եղել են անարդյունավետ՝ օրենսդրական ոչ հստակ լեզվի (բառապաշարի- *հեղ.*), թույլ վարչարարական և իրավական հիմնադրույթների և հստակ մի այնպիսի ուղեցույցի բացակայության պատճառով, թե ով պետք է գրանցվի և ինչ է պահանջվում բացահայտման համար»²: Նոր օրենքում ավելացվեց մի դրույթ, ըստ որի՝ օտարերկրյա բոլոր լոբբիստները, որոնք ներկայացնում են կոմերցիոն շահեր, պետք է գրանցվեն իրենց ամերիկացի գործընկերների հետ իրավահավասարության սկզբունքով: Իսկ օտարերկրացի գործակալները, որոնք գտնվում են «*FARA*»-ի գործողության ներքո, այս օրենքով համարվում են միայն օտար երկրի ազդեցության գործակալներ առհասարակ:

1995թ. ընդունված օրենքի համաձայն (Լոբբիստների գրանցման և հաշվետվության կարգը, Չորրորդ գլուխ), «լոբբիստները և լոբբիստական ընկերությունները պարտավոր են գրանցվել ԱՄՆ Սենատի հասարակական արձանագրությունների քարտուղարի գրասենյակում (*Senate Office of Public Records*): Յուրաքանչյուր կես տարին մեկ անգամ լոբբիստներն ու լոբբիստական ընկերությունները պարտավոր են իրենց գործունեության վերաբերյալ մանրամասն հաշվետվություն ուղարկել Սենատի հասարակական արձանագրությունների գրասենյակ (Հինգերորդ գլուխ, Գրանցված լոբբիստների հաշվետվությունները): Նշվում է, որ սույն օրենքը տարածվում է ոչ միայն Կոնգրեսում, այլև իշխանության գործադիր մարմիններում լոբբիստական գործունեության վրա»³:

¹ «Lobbying Disclosure Act», Public Law 104-65, Section 2, (1). 104th Congress. Dec. 1995.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

1995թ. ընդունված օրենքն առանձնանում էր նաև նրանով, որ ներառում էր սահմանումներ, որոնք մինչ այդ գործող օրենսդրական ակտերում գրեթե բացակայում էին: Նշենք դրանցից հիմնականները: Այսպես, օրենքի Երրորդ «Սահմանումներ» գլխի 7-րդ կետում առանձնացվում է «լոբբինգային ակտիվություն» եզրը, ըստ որի՝ «լոբբինգային ակտիվությունը» նշանակում է լոբբինգային հաղորդակցության հաստատում և գործողությունների նախաձեռնում, որոնք ներառում են նախապատրաստական և ծրագրավորման գործողություններ, հետազոտական և այլ աշխատանքներ՝ նախատեսված հստակ ժամանակաշրջանում հաստատված հաղորդակցություններում դրանք կիրառելու և այլոց լոբբիստական գործողությունների հետ համագործակցելու համար»:

Նույն «Սահմանումներ» գլխում առաջին անգամ օրենքով հստակեցվում և սահմանվում էին ԱՄՆ իշխանության գործադիր և օրենսդիր մարմինների բարձրաստիճան և այլ ծառայողները, որոնք կարող էին ենթարկվել լոբբիստական գործունեության ազդեցությանը: Օրենքի համաձայն, այդ պաշտոնյաները ձևակերպվում էին որպես «գործադիր կամ օրենսդիր մարմնի ներառված պաշտոնյա» (լոբբինգին ենթակա) (*Covered Executive/Legislative Branch Official*): «գործադիր մարմնի ներառված պաշտոնյա» կատեգորիան տարածվում էր ԱՄՆ նախագահի, փոխնախագահի և այլ ծառայողների վրա:

Երրորդ «Սահմանումներ» գլխի 8-րդ կետի համաձայն, «Լոբբիստական հաղորդակցություն» (*Lobbying Contact*) եզրը նշանակում է յուրաքանչյուր բանավոր կամ գրավոր հաղորդակցություն (ներառյալ էլեկտրոնային հաղորդակցությունը) լոբբինգի ենթակա իշխանության գործադիր մարմնի պաշտոնյայի կամ իշխանության օրենսդիր մարմնի պաշտոնյայի հետ...»: «Սահմանումներ» գլխի 9-րդ կետի համաձայն, «Լոբբիստական ընկերություն» եզրը նշանակում է այն անձը կամ կազմակերպությունը, որն ունի մեկ կամ ավելի ծառայողներ, որոնք հա-

մարվում են տվյալ պատվիրատուի անունից ներկայացող լոբբիստներ...»: Նույն գլխի 10-րդ կետում «լոբբիստ» եզրը նշանակում է այն անհատը, որը ծառայություն է մատուցում պատվիրատուին կամ վարձու աշխատում է նրա համար՝ մատուցած ծառայությունների համար ֆինանսական կամ այլ փոխհատուցման դիմաց, որոնք (ծառայությունները) ներառում են ավելի քան մեկ լոբբինգային հաղորդակցություն, և որը վեց ամսվա ընթացքում իր գործունեության 20%-ից ավելին հատկացնում է լոբբիստական գործունեությանը¹: Օրենքի համաձայն, խստացումներ մտցվեցին նաև լոբբիստական գործունեության ընթացքում տեղ գտած իրավախախտումների վերաբերյալ, ինչի արդյունքում տույժերը մեծացան հինգ անգամ, սակայն իրավախախտներին ազատազրկում չէր սպառնում:

Նման օրենքի ընդունումն այդ ժամանակաշրջանի հրամայականն էր, ինչը պայմանավորված էր աշխարհում ռազմաքաղաքական, հասարակական ու տնտեսական գործընթացների գլոբալացմամբ, որի արդյունքում լոբբիստական գործունեության ազդեցությունն ԱՄՆ-ում ուժեղացավ: Նոր օրենքի ընդունումը կարևորվում էր նաև նրանով, որ մինչ այդ երկրում գործող հինգ լոբբիստներից միայն մեկն էր, որպես կանոն, գրանցվում, իսկ մնացյալը գերադասում էին չհրապարակել իրենց գործունեությունը և հանդես էին գալիս որպես փորձագետներ, խորհրդատուներ, տեղեկատուներ և այլն:

2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկությունները զգալի ազդեցություն ունեցան Միացյալ Նահանգներում գործող լոբբիստների գործունեության և լոբբինգի ինստիտուտի վրա առհասարակ: Անվտանգության միջոցառումների ուժեղացումը սահմանափակումներ մտցրեց ԱՄՆ Կոնգրեսի շենք լոբբիստների և լոբբիստական կազմակերպությունների մուտքի հարցերում: Արդյունքում՝ լոբբիստական կապերի հաստատման գործում լայնորեն տարածվեցին ժամանակակից հաղորդակցական

¹ «Lobbying Disclosure Act», Public Law 104-65, Section 2, (1). 104th Congress. Dec. 1995.

տեխնոլոգիաները, ստեղծվեցին պրոֆեսիոնալ էլեկտրոնային կայքեր և այլ տեխնոլոգիաներ՝ օրենսդիրների հետ հաղորդակցման և այս կամ այն որոշման ընդունման գործընթացի վրա ազդեցություն գործելու նպատակներով:

Գալով իշխանության՝ ԱՄՆ գործող նախագահ Բարաք Օբաման իր հերթին զգալի ուշադրություն հատկացրեց ԱՄՆ իշխանության գործադիր և օրենսդիր մարմիններում լոբբիստական գործունեության վրա՝ փորձելով կանոնակարգել նրանց հարաբերությունները: Ի տարբերություն նախորդ նախագահների, Օբաման առավել կենտրոնացավ հատկապես ԱՄՆ գործադիր իշխանությունում լոբբիստական բարոյական սկզբունքների և իշխանության վրա լոբբիստների գործունեության ազդեցության խնդիրների շուրջ:

2009թ. հունվարի 21-ին նախագահ Օբաման հրապարակեց թիվ 13490 որոշումը՝ «Գործադիր իշխանության անձնակազմի բարոյական հանձնարարականներ» խորագրով (*«Ethics Commitments by Executive Branch Personnel»*), որտեղ հստակեցվում էին գործադիր իշխանության յուրաքանչյուր պաշտոնյայի համար անհրաժեշտ լոբբինգի բարոյական նորմերը: Այդ որոշմամբ խստացվեցին լոբբիստների և լոբբիստական գործունեության համար գործող նախկին կանոնները: Բ.Օբամայի խոսքով՝ «լոբբիստների համար կներմուծվեն ամենախիստ սահմանափակումները ԱՄՆ նախագահական վարչակազմերի ողջ պատմության ընթացքում»: Նախագահական նոր նախաձեռնության համաձայն, նախ՝ արգելվում էր լոբբիստների կողմից վարչակազմի աշխատակիցներին տրվող նվերների ընդունման ավանդույթը, երկրորդ՝ արգելվում էր նորանշանակ պաշտոնյային նշանակման օրվանից երկու տարվա ընթացքում զբաղվել նախկին լոբբիստական գործունեության հետ առնչվող գործարքներով (*«Revolving door»*): Եվ երրորդ՝ պահանջվում էր, որպեսզի կառավարական աշխատանքի տեղավորման հարցում առաջ-

նորոգվեն որակական հատկանիշներով, գիտելիքներով և փորձառությամբ, այլ ոչ թե քաղաքական կապերով»¹:

2009թ. մարտ-հուլիսին Բ.Օբաման ստորագրեց հուշագրեր, որոնք կոչված էին կառավարելու գրանցված լոբբիստների և իշխանության գործադիր մարմնի՝ 2009թ. ընդունված «Ամերիկյան վերականգնման և վերներդրումային ակտի» («*American Recovery and Reinvestment Act of 2009*») հիմնադրամները ղեկավարող ծառայողների միջև հաղորդակցությունները: Նշենք, որ «Ամերիկյան վերականգնման և վերներդրումային ակտը», որն ընդունվեց ԱՄՆ Կոնգրեսի կողմից 2009թ. փետրվարի 29-ին, տնտեսության խթանման ծրագրերի և գործողությունների փաթեթ էր՝ \$787 մլրդ արժողությամբ: Ակտը վերաբերում էր պետության գործունեության տարբեր ոլորտների զարգացման խթանմանը. առողջապահություն, կրթություն, գործազրկության և կենսաթոշակային հիմնադրամներ, էներգետիկա, գիտահետազոտական ասպարեզ և այլն: Խնդիրն այն է, որ Սպիտակ տան վարչակազմը որոշակի սահմանափակումներ մտցրեց լոբբիստների գործունեությունում՝ կապված «Ամերիկյան վերականգնման և վերներդրումային ակտի» հետ, քանզի մտավախություն ուներ, թե լոբբիստները կարող էին զգալի ազդեցություն ունենալ Ակտի իրագործման գործընթացների և նպատակների վրա: «Ամերիկյան վերականգնման և վերներդրումային ակտի» մասով լոբբիստական գործունեության սահմանափակումները վերաբերում էին լոբբիստների և իշխանության գործադիր մարմնի ծառայողների միջև ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր հաղորդակցություններին²: ԱՄՆ նախագահի հուշագիրը պահանջում էր իշխանության գործադիր մարմնի յուրաքանչյուր գործակալությունից էլեկտրոնային կայքէջում ամփոփագիր տեղադրել լոբբիստների հետ բանավոր և գրավոր կապերի վերաբերյալ:

¹ Executive Order 13490. “Ethics Commitments by Executive Branch Personnel”, 74 *Federal Register* 4673. January 26, 2009.

² *Jacob R. Straus*, “Lobbying the Executive Branch: Current Practices and Options for Change”, Congressional Research Service, Dec. 1, 2009.

Այսպես, 2009թ. մարտի 20-ին նախագահ Օբաման հրապարակեց «Նախագահական հուշագիրը» («*Presidential Memorandum*»)՝ հասցեագրված գործադիր իշխանության ղեկարտամենտների և գործակալությունների ղեկավարներին, որտեղ ներկայացվում էին վերոնշյալ «Վերականգնման ակտի» հետ կապված լոբբիստների հետ բանավոր հաղորդակցության սահմանափակումները: Նախագահական հուշագիրը «Վերականգնման ակտի» հիմնադրամների բաշխման հարցում գործադիր իշխանության ղեկարտամենտների և գործակալությունների համար սահմանում էր 4 քաղաքական ուղեգիծ՝

- երաշխավորել, որ ընդունվող որոշումն արժանահավատ է դրամաշնորհներ և դաշնային ֆինանսական այլ աջակցության հատկացման համար,
- խուսափել «ոչ խելամիտ» նախագծերի ֆինանսավորումից,
- երաշխավորել գրանցված լոբբիստների հետ հաղորդակցությունների թափանցիկությունը,
- հուշագրի իրականացման համար ապահովել «Կառավարման և բյուջեի գրասենյակի» ղեկարտամենտներին և գործակալություններին ցուցաբերվող աջակցությունը¹:

Գրանցված լոբբիստների հետ հաղորդակցություններ հաստատելիս անհրաժեշտ թափանցիկության երաշխավորման համար նախագահական հուշագրի Երրորդ գլխում առանձնացվում է լոբբիստների հետ փոխգործակցության հինգ խորհուրդ կամ ուղենիշ.

- Գործադիր իշխանության ղեկարտամենտներն ու գործակալությունները չեն կարող հաշվի առնել լոբբիստների տեսակետները՝ կապված նախագծերի, հայտարարությունների հետ,

¹ The President: “Memorandum of March 20, 2009: Ensuring Responsible Spending of Recovery Act Funds”, 74 *Federal Register* 12531, March 25, 2009.

- գործակալության պաշտոնյաները չեն կարող բանավոր հաղորդակցվել (մարդու միջոցով կամ հեռախոսով) գրանցված լոբբիստների հետ՝ «Վերականգնման ակտի» նախագծերի, հայտարարությունների կամ ֆինանսավորման հայտարարությունների վերաբերյալ և պետք է տեղեկանան, որ անհատները կամ կազմակերպությունները չեն հանդիսանում 1995թ. ընդունված «Լոբբիստների բացահայտման ակտով» գործող լոբբիստներ¹,
- գրանցված լոբբիստի գրավոր հաղորդակցությունը պետք է պաշտոնապես տեղադրվի հասցեատեր գործակալության կամ կառավարական կազմակերպության կողմից վերջինիս էլեկտրոնային կայքէջի համապատասխան մասում՝ ստացման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում²,
- գործադիր իշխանության ղեպարտամենտներն ու գործակալությունները կարող են բանավոր հաղորդակցվել գրանցված լոբբիստների հետ, եթե տվյալ նախագծերը, հայտարարությունները չեն քննարկվել,
- գործակալության պաշտոնյաները հաղորդակցությունների ցուցակագրման ժամանակ պետք է վերահաստատեն, որ հաղորդակցություններին մասնակից որևէ անհատ կամ ընկերություն չի հանդիսանում գրանցված լոբբիստ կամ լոբբիստական խումբ³:

2009թ. ապրիլի 7-ին Կառավարման և բյուջեի գրասենյակի ղեկավարի կողմից ընդունվեց «Վերականգնման ակտի» նախագահական հուշագրի մի ուղեցույց, որը ենթասպասարկող և փոխլրացնող փաստաթուղթ էր (վերջինս՝ համապատասխան փոփոխություններով, վերահրատարակվեց 2009թ. հուլիսի 24-ին):

¹ Հուշագրի համաձայն, լոբբիստները կարող են առաջարկել իրենց մեկնաբանությունները գրավոր տեսքով և հասցեագրել գործադիր իշխանության ղեպարտամենտներին և գործակալություններին:

² Յուրաքանչյուր գործակալություն պետք է ունենա Վերականգնման ակտի կայքէջ:

³ The President: “Memorandum of March 20, 2009: Ensuring Responsible Spending of Recovery Act Funds”, 74 *Federal Register* 12533, March 25, 2009.

Օբամայի «Վերականգնման ակտի» հուշագիրն արժանացավ երկրի տարբեր անհատ լոբբիստների, լոբբիստական խմբերի քննադատությանը, որոնք հանդես եկան նախագահին ուղղված կոչերով՝ դադարեցնել հուշագրի իրավասությունները կամ էլ փոփոխություններ մտցնել դրանցում: 2009թ. մարտի 31-ին մի շարք կազմակերպություններ՝ «Ամերիկյան քաղաքացիական ազատությունների միությունը» (*The American Civil Liberties Union*)-*ACLU*), «Վաշինգտոնում հանուն պատասխանատվության և էթիկայի քաղաքացիներ» (*Citizens for Responsibility and Ethics in Washington*)-*CREW*) և «Լոբբիստների ամերիկյան լիգան» (*The American League of Lobbyists*)-*ALL*¹) քննադատական նամակ հասցեագրեցին Սպիտակ տան խորհրդական Գրեգորի Քրեյգին և միևնույն ժամանակ կազմակերպեցին մամուլի ասուլիս՝ դիմելով Սպիտակ տանը՝ սահմանափակումները չեղյալ հայտարարելու կոչով: Ըստ նրանց՝ սահմանափակումների մասին հուշագիրը խախտում էր ԱՄՆ Սահմանադրությունը և այնտեղ ամրագրված «կառավարությանը բողոքներով դիմելու քաղաքացիների իրավունքը»²: Նամակում նաև նշվում էր, որ «Նախագահական հուշագրի իրավասությունը նեղացված է այն առումով, որ չի տարածվում չգրանցված լոբբիստների վրա»³: Նկատենք, որ 2009թ. հուլիսի 24-ին Սպիտակ տան կողմից հրապարակված «Վերականգնման ակտի» նորացված փաստաթղթում հաշվի էին առնվել վերոնշյալ կազմակերպությունների առաջարկած որոշ փոփոխություններ: Մասնավորապես, նորացված ուղեցույցում

¹ 1979թ. Միացյալ Նահանգներում ձևավորվեց լոբբիստների պրոֆեսիոնալ ասոցիացիան՝ «Լոբբիստների ամերիկյան լիգան»: Կազմակերպությունը զբաղվում է լոբբիստի մասնագիտության հատուկ դերի և նշանակության քարոզչությամբ՝ շեշտելով դրանց կարևորությունը պետական որոշումների կայացման գործընթացում: Լիգան հրապարակում է նաև ամսագիր:

² Citizens for Responsibility and Ethics in Washington, the American Civil Liberties Union, and the American League of Lobbyists, “Diverse Coalition of Organizations Call for White House to Rescind Rule Restricting Lobbyist Communications on Bailout Funds: ACLU, CREW, and ALL Argue Rule Will Not Improve Transparency and Accountability,” press release, March 31, 2009, <http://www.alldc.org/press/pr033109.pdf>.

³ Նույն տեղում:

ընդարձակվեցին ներառված սահմանափակումները՝ տարածվելով «Դաշնային կառավարությունից դուրս գործող բոլոր այն անհատների վրա (ոչ թե միայն դաշնային համակարգում գրանցված լոբբիստների), ովքեր նախաձեռնում են բանավոր հաղորդակցություններ «Վերականգնման ակտի» ներքո՝ ընթացիկ մրցակցային հայտարարությունների հետ կապված»¹:

Սպիտակ տունը չսահմանափակվեց գործադիր իշխանության հետ հաղորդակցության գործում գրանցված լոբբիստների և լոբբիստական խմբերի իրավական սահմանափակումներով: 2009թ. սեպտեմբերի 23-ին Բ.Օբաման հայտարարեց նոր քաղաքականության մասին, որով սահմանափակումներ էին մտցվելու գործակալությունների խորհրդատվական խորհուրդներում և հանձնաժողովներում («Դաշնային խորհրդատվական հանձնաժողովներ»/«*Federal Advisory Committees*», գործում են մոտավորապես 1000 նման հանձնաժողովներ) աշխատող գրանցված լոբբիստների թվաքանակի մեջ՝ «Վաշինգտոնում հատուկ շահերի խմբերի ազդեցության թուլացման կամ նվազեցման նպատակներով»²: Այս նախաձեռնությունը հիմնականում ուղղված էր այն բանին, որ գործակալությունների խորհրդատվական խորհուրդներում և հանձնաժողովներում չկարողանան նշանակվել գրանցված լոբբիստները: Նախաձեռնության համաձայն, գործադիր իշխանության գործակալությունների խորհրդատվական հանձնաժողովները նոր նշանակումների ժամանակ այսուհետ չպետք է այլևս վերանշանակվեն այն անհատներին, որոնք գրանցված լոբբիստներ են³:

¹ Office of Management and Budget, Peter R. Orszag, director, *Updated Guidance Regarding Communications With Registered Lobbyists About Recovery Act Funds*, M-09-14, Washington, DC, July 24, 2009, p. 1,

http://www.whitehouse.gov/omb/assets/memoranda_fy2009/m09-24.pdf. [Hereafter, Orszag, *Updated Guidance*.]

² The White House. "Lobbyists on Agency Boards and Commissions", Blog Post. September 23, 2009.

³ Norm Eisen. "Lobbyists on Agency Boards and Commissions", September 23, 2009 <http://www.whitehouse.gov/blog/Lobbyists-on-Agency-Boards-and-Commissions>

ԱՄՆ նախագահի՝ Էթիկայի և կառավարության բարեփոխումների հարցերով հատուկ խորհրդական Նորմ Լ. Էյսենի բնորոշմամբ, «Նախագահը կոչ արեց ամերիկացի ժողովրդին նվազեցնել Վաշինգտոնում լոբբիստների ազդեցությունը, որոնք անցյալում չափից ավելի հաճախ են հասել անհամաչափ ազդեցության կառավարության որոշում կայացնողների վրա...»¹:

Գործակալությունների խորհրդատվական հանձնաժողովներում գրանցված լոբբիստների գործունեության (գրանցված լոբբիստները հանձնաժողովների անդամներ են) դադարեցման նախագահական նախաձեռնությանն անհապաղ հետևեց լոբբիստների առաջին խիստ արձագանքը: 2009թ. հոկտեմբերի 19-ին ԱՄՆ նախագահին նամակ էին հղել գործակալությունների Արդյունաբերական խորհուրդների և հանձնաժողովների լոբբիստները (*Industry Trade Advisory Committees-ITAC*)²: Նամակում նշվում էր. «Մենք գրում ենք՝ արտահայատելով մեր խորին դժգոհությունը վերջերս հայտարարված քաղաքականության վերաբերյալ, որը նախատեսում է հեռացնել գրանցված լոբբիստներին առևտրի խորհրդատվական հանձնաժողովների աշխատանքներից... Դիմում ենք Ձեզ, որպեսզի օգտագործեք ձեր զիտելիքները Խորհրդատվական հանձնաժողովների համակարգի և այն կարևոր դերակատարման վերաբերյալ, որ այն իրականացնում է առևտրի հավասարակշռված քաղաքականության զարգացման գործում, և որպեսզի հայտնեք Ձեր ընդդիմությունն այս քաղաքականության վերաբերյալ և փորձեք այն փոփոխել»³: Բողոքի այս ակցիային հետևեց 2009թ. հոկտեմբերի 28-ին «Լոբբիստների ամերիկյան լիգայի» նախագահ Դևիդ Գ.Ուենհոլդի (*David G. Wenhold*) և Լիգայի տնօրենների խորհրդի անդամ Փիթեր Գ.Մեյբերիի (*Peter G. Mayberry*)՝ նախագահ Բ.Օբամային հասցեագրված քննադատական նամակը⁴:

¹ Նույն տեղում:

² Letter to President Obama on Industry Trade Advisory Committies, October 19, 2009.

³ Նույն տեղում:

⁴ Letter from David G. Wenhold, president, American League of Lobbyists, and Peter G. Mayberry, board of directors, American League of Lobbyists, to President Barack Obama, October 28, 2009, <http://www.whitehouse.gov/files/documents/10-09-Letter-to-WH-Advisory-Committees.pdf>.

ԱՄՆ գործող լոբբիստների գործունեության ուղղությամբ վերջին իրավական սահմանափակումները փոփոխությունների ենթարկեցին լոբբիստների և «ներառված գործադիր իշխանության պաշտոնյաների» միջև փոխհարաբերությունները: 2008թ. որոշակիորեն նվազեց վաշինգտոնյան գրանցված լոբբիստների թիվը. եթե 2007թ. նրանց թվաքանակը 15.405 էր, ապա 2008թ.՝ 15.150: Ընդ որում, լոբբիստների թվաքանակի նվազման միտումն առաջին անգամ էր վերջին տասնամյակի ընթացքում. 2000թ. ի վեր նրանց թվաքանակը կայուն աճման միտում է արձանագրել¹:

ԱՄՆ-ում լոբբիստական գործունեության վերաբերյալ, նշյալ օրենսդրական հիմքերից գատ, գոյություն ունեն նաև լոբբիստների և լոբբիստական գործունեության խորհրդարանական իրավաբարոյական կանոններ ինչպես Ներկայացուցիչների պալատում, այնպես էլ Սենատում: Լոբբիստների և նրանց լոբբիստական գործունեության վարքականոնին վերաբերող հայեցակարգային առաջին սկզբունքների ձևավորման անհրաժեշտություն առաջացավ արդեն հիշատակված ադմլահարույց միջադեպերից հետո (Ջեք Աբրամոֆ)²: Այդ կանոնները սահմանում են ԱՄՆ Կոնգրեսի անդամների և ծառայողների վարքականոնը և էթիկական նորմերը: Բացի այդ, գործում են նաև պրոֆեսիոնալ լոբբիստական կամավոր կազմակերպությունների կողմից սահմանված բարոյական նորմեր: Լոբբիստական գործունեությունում էթիկական կարևոր իրավական հիմքերից էր ԱՄՆ Կոնգրեսի ընդունած «Ազնիվ լիդերության և Բաց կառավարության մասին» 2007թ. ակտը (*110-th Congress, First Session, "Honest Leadership and Open Government Act of 2007"*)³, որը ստորագրվեց ԱՄՆ նախկին նախագահ Ջ.Բուշի կողմից 2007թ. սեպտեմբերի 14-ին: Ակտով պահանջվում էր՝

¹ «Оборот лоббистской индустрии США увеличивается, несмотря на кризис 2009», Март-12/09. По материалам: WashingtonProfile, liga.net /http://www.lobbying.com.ua/news/2009-03-12-61.

² Craig Holman, "Making the U.S. Lobbying Disclosure Act Work as Intended: Implications for the European Transparency Initiative". "Public Citizen", 2008.

³Նույն տեղում:

1. ներկայացնել լոբբիստների գործունեության հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները, որոնք հասանելի կլինեն պետական տեղեկատվական դաշտին, կհամապատասխանեն գրավոր ներկայացված տարբերակներին,
2. ձևավորել լոբբիստական գործունեության բացահայտման վերաբերյալ ամբողջությամբ հասանելի էլեկտրոնային շտեմարան, ինչը թույլ կտա Ներկայացուցիչների պալատի և Սենատի քարտուղարներին ստեղծել լոբբիստական կազմակերպությունների և դրանց գործունեության շտեմարան, ինտերնետային փնտրման առումով հասանելի կամ մատչելի համակարգ,
3. եռամսյակը մեկ կազմել լոբբիստական ֆինանսական գործունեության հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակ, ինչը հնարավորություն կտար պետությանն առավել երկար ժամանակ տրամադրել և մանրակրկիտ անդրադառնալ դրանց,
4. արգելել լոբբիստների և լոբբիստական կազմակերպությունների կողմից որոշում կայացնող պաշտոնյաներին նվերներ տալն ու անվճար ուղևորությունների (գրոսաշրջիկություն) հնարավորության տրամադրումը:

Օրենքի կարևոր կետերից մեկն էլ վերաբերում էր լոբբիստների կողմից պաշտոնաթող պաշտոնյային ապագա լավ վարձատրվող ծառայություն տալու խոստումների արգելքին. ԱՄՆ Կոնգրեսի պաշտոնաթող անդամների 43%-ը (բացառությամբ մահվան և դատապարտվելու դեպքերի) հետագայում դարձել են բավական լավ վարձատրվող լոբբիստներ և ներկայացրել այս կամ այն խմբի շահերը:

ԳԼՈՒԽ 5.
ԱՄՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՔԲԻՆ.
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄՆ ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԼՈՔԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Միացյալ Նահանգներում հայկական լոքբին ձևավորվել է այդ երկիր արտագաղթած հայության ինքնակազմակերպման գործընթացին զուգահեռ: ԱՄՆ հայկական լոքբին, սակայն, որպես լավ կազմակերպված համայնքային համակարգ ներկայացավ, թերևս, 20-րդ դարի երկրորդ կեսերից, երբ ԱՄՆ օրենսդիր և գործադիր իշխանությունում հայության խնդիրների բարձրացման և համապատասխան որոշումների կայացման գործում սկսեցին էապես կարևորել հայության շահերը պաշտպանող լոքբիստական խմբերի և կազմակերպությունների ստեղծման հարցը: Միացյալ Նահանգների հայկական լոքբինգի գործունեությանը նոր շունչ հաղորդեցին խորհրդային կարգերի փլուզմամբ նորանկախ Հայաստանի Հանրապետության հռչակումն ու արցախյան հերոսամարտը, ինչի արդյունքում ԱՄՆ հայկական լոքբինգի գործունեությունը դարձավ մի կողմից առավել բազմակողմանի ու բարդ, մյուս կողմից՝ նոր հնարավորությունների դաշտ բացվեց ՀՀ-Հայություն համագործակցության համատեքստում ԱՄՆ-ում հայության և ՀՀ շահերի պաշտպանության խնդիրներում:

Ներկայում հայկական լոքբին հիմնականում գործունեությունը կենտրոնացնում է Միացյալ Նահանգների օրենսդիր իշխանության երկու պալատներում՝ Ներկայացուցիչների պալատում և Սենատում, որտեղ կանոնավոր ու ավանդական են

դարձել Հայության շահերին վերաբերող այս կամ այն հիմնահարցի քննարկումները, հայանպաստ որոշումների կայացումը: Հայկական լոբբինգը, սակայն, չի սահմանափակվում միայն ԱՄՆ օրենսդիր իշխանությունում ծավալած գործունեությամբ, այլև ներգրավված է ԱՄՆ նախագահի վարչակազմի և կառավարության տարբեր շրջանակներում լոբբիստական ակտիվ աշխատանքներում, կազմակերպում է Հայության շահերին առնչվող հարցերի առաջմղման նպատակով ստորագրահավաքներ, քննարկումներ, կլոր սեղաններ՝ տարբեր պաշտոնյաների մասնակցությամբ, նամակներ հասցեագրում ԱՄՆ նախագահին և կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներին:

Միացյալ Նահանգներում գործող հայկական լոբբիստական խմբերն ու անհատ լոբբիստները հետևողական աջակցություն են ցուցաբերում երկրի օրենսդիր և գործադիր իշխանությունում Հայության շահերին առնչվող այնպիսի հարցերում, ինչպիսիք են Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը, ԱՄՆ կառավարության կողմից ՀՀ-ին ու ԼՂՀ-ին ցուցաբերվող ֆինանսական աջակցության հատկացման ապահովումը: Հայկական լոբբինգն ակտիվ գործունեություն է ծավալել Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական և քաղաքական շրջափակման վերացման, այդ համատեքստում ԱՄՆ կառավարության կողմից Ադրբեջանին ցուցաբերվող տարեկան ֆինանսական աջակցության սահմանափակման («Ազատության աջակցման մասին ակտի» 907-րդ բանաձև), ՀՀ և Ադրբեջանի միջև ռազմական հավասարակշռությունը չխախտելու և արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի ուղղությամբ:

Ստորև առավել հանգամանորեն անդրադառնանք Միացյալ Նահանգների հայկական լոբբիստական հիմնական խմբերին և կազմակերպություններին, նրանց գործունեությանն ու

առաջադրած նպատակներին վերաբերող հիմնահարցերի լուսաբանմանը: Առանձնահատուկ կարևորություն է տրվում ԱՄՆ հայկական լոբբիստական խմբերի գործունեության հիմնական ձեռքբերումների ու արդյունքների, ինչպես նաև անելիքների ներկայացման ու վերլուծման հարցերին:

Ամերիկայի հայկական համագումար
(Armenian Assembly of America)

Նախորդ դարի 70-ականների սկզբներին Միացյալ Նահանգների հայությունը որոշում կայացրեց հիմնել մի կազմակերպություն, որը կներկայացնէր Հայության շահերը և կաջակցեր դրանց: Այդ կազմակերպությունը՝ Ամերիկայի հայկական համագումարը (ԱՀՀ), հիմնվեց 1972թ.: ԱՀՀ-ն Միացյալ Նահանգներում գործող առաջին հայկական լոբբիստական կազմակերպություններից էր, որն ակտիվորեն ներգրավվեց Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրի աջակցմանը: Կազմակերպությունը զգալի հասարակական-քաղաքական և տեղեկատվական աջակցություն է ցուցաբերել նաև Հայաստանի Հանրապետության և Արցախի անկախացման շարժումներին: ԱՀՀ-ն ակտիվացնելով հայանպաստ գործունեությունը Միացյալ Նահանգների ինչպես գործադիր և օրենսդիր իշխանությունում, այնպես էլ հասարակական-քաղաքական մակարդակներում՝ կազմակերպված լոբբիստական գործունեության շնորհիվ զգալի ներդրում ունեցավ Վաշինգտոնի կողմից ՀՀ-ին ու ԼՂՀ-ին հատկացվող ֆինանսական աջակցության հարցերում:

Ամերիկայի հայկական համագումարն իր լոբբիստական գործունեությամբ ակտիվ մասնակցություն է ցուցաբերել նաև Միացյալ Նահանգների Կոնգրեսի անդամներին Հայության խնդիրների լուծման գործին ներգրավելու ուղղությամբ, ինչի արդյունքում հիմնվեց Հայկական հարցերին նվիրված կոնգրե-

սական հանձնախումբը (*Congressional Caucus on Armenian Issues*): ԱՄՆ հայկական լոբբիստական գործունեության շնորհիվ Հայկական կոնգրեսական հանձնախումբը դարձավ երկրում գործող խոշոր էթնիկ լոբբիստական ինստիտուտներից մեկը, որը հայ-ամերիկյան կապերի ամրապնդման ու Հայության շահերի պաշտպանության գործում ակտիվորեն համագործակցում էր ԱՀՀ-ի հետ: Հայաստանի Հանրապետության ու Միացյալ Նահանգների միջև հարաբերությունների ամրապնդման, ԱՄՆ հայության գործունեության ակտիվացման, ինչպես նաև երկրում լոբբիստական գործունեությանն այլ հայկական և օտարերկրյա կազմակերպությունների ու անհատների ներգրավման նպատակներով ԱՀՀ-ն 1988թ. բացեց առաջին մշտական Արևմտյան գրասենյակը Երևանում:

Կազմակերպությունը մինչ օրս շարունակում է աջակցել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքին, արցախյան հիմնախնդրում թուրք-ադրբեջանական ագրեսիային ՀՀ դիմակայմանը: Ամերիկայի հայկական համագումարի և Միացյալ Նահանգներում հայության այլ լոբբիստական խմբերի՝ ԱՄՆ Կոնգրեսում իրականացված ակտիվ լոբբիստական գործունեության արդյունքում Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական և քաղաքական շրջափակումը հակազդվեց առանձին օրենսդրության ամրագրմամբ, երբ ընդունվեցին Ազատության աջակցման ակտի 907-րդ բանաձևն ու Հումանիտար օգնության միջանցք ակտը:

Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով 1997թ. Ամերիկայի հայկական համագումարի շրջանակներում հիմնվեց Հայկական ազգային ինստիտուտը: Ինստիտուտի գործունեությունը հիմնականում կենտրոնանում է հայերի դեմ իրագործված ցեղասպանության վերաբերյալ ճանաչողական, տեղեկատվական և կրթական հետազոտությունների, ցեղասպանության պատ-

մական արխիվների (միջազգային փաստաթղթեր, պայմանագրեր և այլն) ուսումնասիրության ու ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին աջակցելու հարցերի շուրջ:

Ամերիկայի հայկական համագումարի գործունեության հիմնական ուղղություններն են՝

1. աջակցել և ուժեղացնել կազմակերպության ներուժը, կազմակերպություն, որը Միացյալ Նահանգների հայության շահերը պաշտպանող առաջատար հաստատություններից է,
2. ապահովել առավելագույն հնարավորություններ՝ խթանելու ԱՄՆ հայության բոլոր կազմակերպությունների ու անհատ գործիչների ակտիվ մասնակցությունը ԱՄՆ ժողովրդավարական գործընթացներին՝ դաշնային, նահանգային և տեղական մակարդակներով,
3. զարգացնել և ընդլայնել կազմակերպության առաջադեմ հետազոտական, կրթական ու խորհրդատվական գործունեությունը՝ ուղղված Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի աջակցման աշխատանքներին,
4. աջակցել ու խորացնել ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ հարաբերությունները՝ հիմնվելով ժողովրդավարության, օրենքի գերակայության, ազատ շուկայական հարաբերությունների, տարածաշրջանային անվտանգության հարցերի շուրջ ընդհանրական մոտեցումների վրա,
5. ակտիվ մասնակցություն ցուցաբերել Միացյալ Նահանգների և այլ երկրների հայության կազմակերպությունների հետ համագործակցության զարգացմանը:

Ամերիկայի հայկական համագումարի շրջանակներում ակտիվ գործունեություն է իրականացնում նաև Հայ-ամերիկյան գործողությունների հանձնաժողովը (*The Armenian-American Action Committee-ARAMAC*), որը կազմակերպության հասարակության շրջանում իրականացվող տեղեկատվական-

քարոզչական գործունեության հիմնական ինստիտուտն է: Վերջինս աջակցություն է ցուցաբերում հասարակության տեղեկատվական ու հակաքարոզչական նախաձեռնություններին՝ ազդեցություն ապահովելով ԱՄՆ Կոնգրեսում ընդունվող օրենսդրության վրա (*grassroots activism*): Հանձնաժողովի գործունեության շնորհիվ ԱՄՆ Կոնգրեսում ներկայացվում են Հայության հարցերի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն և վերլուծություն, կազմակերպվում Հայության դեմ իրականացվող իրականությանը չհամապատասխանող քարոզչության հակազդման քաղաքականություն: Հանձնաժողովն ակտիվորեն ներգրավված է Միացյալ Նահանգների հայկական համայնքների մոբիլիզացման ու աջակցման գործընթացին՝ տեղեկատվության տարածման, Կոնգրեսի անդամների հետ հաղորդակցության հաստատման և Հայության հարցերին վերաբերող օրենսդրության ուղղությամբ ազդեցություն գործելու հարցերում:

Այժմ հակիրճ անդրադառնանք ԱՀՀ լոբբիստական գործունեության ֆինանսական հատկացումների տվյալներին: ԱՀՀ-ն ԱՄՆ օրենսդիր, ինչպես նաև գործադիր իշխանությունում իրականացրած լոբբիստական գործունեության ուղղությամբ տարեկան հատկացնում է զգալի ֆինանսական միջոցներ: Հեղինակավոր «*Center for Responsive Politics*»/*OpenSecrets.org* կենտրոնն ուշագրավ տվյալներ է պարունակում 1998-2009թթ. Ամերիկայի հայկական համագումարի կողմից լոբբիստական գործունեությանը հատկացված ֆինանսական միջոցների վերաբերյալ: ԱՀՀ լոբբիստական գործունեությանը տրամադրված ֆինանսական հատկացումների զարգացման դինամիկայում չի պահպանվում կայուն միտում, կատարվել են գումարային վայրիվերումներ, ինչը պայմանավորված է դաշնային կառավարության կողմից ԱՄՆ հայության շահերին վերաբերող հարցերի կարևորման աստիճանով, ինչպես նաև միջազգային ու հարավկովկասյան տարածաշրջանային գործընթացներով: 1998-2009թթ. Ամերիկայի հայկական համագումարն իր լոբբիստական գործունեու-

թյանը հատկացրած առավելագույն տարեկան գումարը տրամադրել է 2009թ., որը կազմել է \$332,5 հազար¹: Բարձր է եղել նաև 2007թ. գումարը՝ \$320 հազար: Այլ է պատկերը 2008թ., երբ կազմակերպության տարեկան հատկացումները կազմել են \$182,3 հազար: 2000թ. այդ գումարը կազմել է \$270.000, 2001թ. և 2004թ.՝ համապատասխանաբար \$240.000 և \$220.000, իսկ ահա 2006թ.՝ \$180.000: Կենտրոնը վիճակագրական տվյալներ է ներկայացնում նաև Ամերիկայի հայկական համագումարի կողմից լոբբիստական գործունեությանը հատկացված դրամական միջոցների վերաբերյալ՝ ըստ առանձնացված ոլորտի դասակարգման: Վիճակագրության համաձայն, կազմակերպությունն իր լոբբիստական ֆինանսավորումն ամբողջությամբ ուղղել է արտաքին և պաշտպանական քաղաքականությանը: Այսպես, 2009թ. արտաքին և պաշտպանական քաղաքականության ոլորտում ԱՄՆ-ում իրականացված ընդհանուր ֆինանսական հատկացումները՝ ըստ լոբբիստական կազմակերպությունների, կազմել են \$4,324 մլն: Իր բարձր ֆինանսական հատկացումներով Ամերիկայի հայկական համագումարը 32 կազմակերպությունների շարքում զբաղեցրել է 6-րդ հորիզոնականը՝ \$332,5 հազար²:

Ազատության աջակցման ակտի 907-րդ բանաձևը

ԱՄՆ հայության և առաջին հերթին ԱՀՀ լոբբիստական գործունեության հետ է ասոցիացվում Ազատության աջակցման ակտի 907-րդ բանաձևի ընդունման գործընթացը: 1992թ. հոկտեմբերի 24-ին ԱՄՆ նախկին նախագահ Ջ.Բուշը ստորագրեց այսպես

¹ Armenian Assembly of America
<http://www.opensecrets.org/lobby/clientsum.php?year=2009&lname=Armenian+Assembly+of+America&id=>

² Foreign & Defense Policy
<http://www.opensecrets.org/lobby/indusclient.php?year=2009&lname=Q04&id=>

կոչված Ազատության աջակցման ակտը (*«Freedom for Russia and Emerging Eurasian Democracies and Open Markets Support Act» or «Freedom Support Act»*), որն ուղղված էր Խորհրդային Միության փլուզմամբ առաջացած նորանկախ հետխորհրդային հանրապետություններում ազատ շուկայական տնտեսությունների ու ժողովրդավարական բարեփոխումների աջակցման ամերիկյան ծրագրերի իրականացմանը: Ջ.Բուշի բնորոշմամբ, «Այս պատմական օրենսդրությունը սահմանում է մի շարք ծրագրերի իրականացում՝ աջակցելու Ռուսաստանում, Ուկրաինայում, Հայաստանում և նախկին Խորհրդային Միության այլ հանրապետություններում ազատ շուկայական տնտեսություններին ու ժողովրդավարական բարեփոխումներին... Հպարտ եմ, որ Միացյալ Նահանգներն ունի այս պատմական հնարավորությունն աջակցելու աշխարհի այս չափազանց կարևոր հատվածում ժողովրդավարությանն ու ազատ շուկայական տնտեսություններին»²:

Ինչպես նշվեց, Ազատության աջակցման ակտի (*Public Law 102-511*) մշակման և ընդունման աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ունեցել նաև Միացյալ Նահանգների հայկական լոբբիստական խմբերն ու կազմակերպությունները և առաջին հերթին՝ Ամերիկայի հայկական համագումարը՝ զգալի ներդրում ունենալով օրենքում Հայաստանին վերաբերող հարցերում հայանպաստ մոտեցումների ամրագրման գործում: ԱՄՆ հայ լոբբիստների և լոբբիստական խմբերի արդյունավետ գործունեության արդյունքում փաստաթղթում առանձին կետով ամրագրված է հայտնի 907-րդ բանաձևը, որը փաստորեն Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական և քաղաքական շրջափակման հաստատմանը հակազդելու քաղաքական ուղեգիծ է: Ազատության աջակցման ակտի 9-րդ՝ «Այլ հիմնադրույթ-

¹ «Ազատության աջակցման ակտը» տե՛ս «Փաստաթղթեր» բաժնում:

² Statement on Signing the Freedom Support Act, *October 24, 1992*, <http://www.presidency.ucsb.edu/ws/?pid=21658>

ներ» գլխի 907-րդ՝ «Ադրբեջանին ցուցաբերվող աջակցության սահմանափակում» բանաձևում («*Restriction on Assistance To Azerbaijan*») նշվում է. «Այս կամ այլ օրենքով (բացառությամբ սույն ակտի 5-րդ գլխով նախատեսվող աջակցության) Միացյալ Նահանգների աջակցությունը կարող է չապահովվել Ադրբեջանի կառավարությանը մինչև նախագահի կողմից որոշում ընդունելը, Կոնգրեսին զեկուցելը, որ Ադրբեջանի կառավարությունը ձեռնարկում է փաստարկված քայլեր՝ դադարեցնելու Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ կիրառվող բոլոր տեսակի շրջափակումները և ուժի կիրառման այլ ազդեցիկ ձևերը»¹: Արդյունքում՝ սույն օրենքի համաձայն, Ադրբեջանը համարվում էր նախկին Խորհրդային Միության միակ երկիրը, որին իրավասություն չէր տրվում Ազատության աջակցման ակտի համաձայն ստանալ Միացյալ Նահանգների կառավարության ֆինանսական աջակցությունը:

Իրավիճակը փոխվեց, սակայն, 2001թ. սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո, ինչի արդյունքում 907-րդ բանաձևը փոփոխությունների ենթարկվեց՝ հակաահաբեկչական պայքարում Ադրբեջանի հետ ԱՄՆ համագործակցության նկատառումներից ելնելով: ԱՄՆ Կոնգրեսը, Սպիտակ տան վարչակազմի, Ադրբեջանի իշխանությունների և նրա նավթարդյունաբերության ոլորտում ներգրավված խոշոր դաշնակիցների ճնշումների արդյունքում տեղի տվեց և փոխեց բանաձևը՝ հոգուտ Ադրբեջանի: 2001թ. հոկտեմբերի 24-ին ԱՄՆ Սենատն ընդունեց 907-րդ բանաձևի հետաձգման մասին որոշում, ըստ որի՝ ԱՄՆ նախագահը կարող էր մերժել կամ հետաձգել դրա իրավական կիրառությունը: ԱՄՆ նախագահը մինչ օրս իրավական տեսանկյունից հետաձգում է սույն բանաձևը: 2002թ. վավերացված «Արտաքին գործողությունների, արտաքին ֆինանսավորման և

¹ Freedom Support Act (Enrolled as Agreed to or Passed by Both House and Senate), Titel IX—Other Provisions, <http://thomas.loc.gov/cgi-bin/query/D?c102:5:./temp/~c102YegHO1>:

հավելյալ ծրագրերի հատկացման ակտ» օրենքում նշվում է. «Ազատության աջակցման ակտի 907-րդ բանաձևը չի կիրառվի՝

- այն գործողությունների նկատմամբ, որոնք կոչված են աջակցելու ժողովրդավարությանը կամ աջակցություն ցուցաբերել Ազատության աջակցման ակտի 5-րդ գլխի և 104-201 որոշման ներքո, կամ զանգվածային ոչնչացման զենքի չտարածմանը,
- յուրաքանչյուր աջակցության վրա, որը կապահովվի Առևտրի և զարգացման գործակալության կողմից՝ 1961թ. ընդունված Ազատության աջակցման ակտի 661-րդ բանաձևի համաձայն,
- յուրաքանչյուր գործողության վրա, որը կիրականացվի «Միացյալ Նահանգներ և Արտաքին կոմերցիոն ծառայության» (*United States and Foreign Commercial Service*) որևէ անդամի կողմից իր պաշտոնական իրավասությունների կատարման ժամանակ,
- յուրաքանչյուր ապահովագրության, վերապահովագրման, երաշխավորման կամ այլ տեսակի աջակցության նկատմամբ, որը կապահովվի Արտաքին մասնավոր ներդրումային կորպորացիայի (*Overseas Private Investment Corporation*) կողմից՝ 1961թ. ընդունված Ազատության աջակցման ակտի առաջին գլխի երկրորդ մասի 4-րդ ենթաբաժնով,
- որևէ ֆինանսավորման նկատմամբ, որը կապահովվի 1945թ. ընդունված Արտահանման-ներմուծման բանկի ակտի համաձայն (*Export-Import Bank Act*),
- հումանիտար աջակցության նկատմամբ»¹:

¹ Foreign Operations, Export Financing, And Related Programs Appropriations Act, 2002, Public Law 107-115, 107th Congress, http://frwebgate.access.gpo.gov/cgi-bin/getdoc.cgi?dbname=107_cong_public_laws&docid=f:publ115.107

Նույն օրենքում նաև նշվում է, որ «ԱՄՆ նախագահը կարող է մերժել կամ հետաձգել Ազատության աջակցման ակտի 907-րդ բանաձևը, եթե նա նման որոշում ընդունի և հանձնարարական ներկայացնի Հատկացումների հանձնաժողովներին (*Committees on Appropriations*)՝ ելնելով հետևյալից.

1. այն անհրաժեշտ է Միացյալ Նահանգների միջազգային հակաահաբեկչական գործողությունների աջակցման համար, կամ
2. անհրաժեշտ է Միացյալ Նահանգների զինված ուժերի կամ կռալիցիոն գործընկերների օպերատիվ պատրաստվածության աջակցման համար՝ միջազգային հակաահաբեկչական պայքարում, կամ
3. կարևոր է Ադրբեջանի սահմանային անվտանգության համար, և
4. չի խոչընդոտի ընթացիկ ջանքերը՝ ուղղված Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության խաղաղ կարգավորման բանակցություններին կամ չի օգտագործվի Հայաստանի դեմ ագրեսիվ/հարձակողական նպատակների համար»¹:

Նույն օրենքի համաձայն, ԱՄՆ նախագահը կարող էր երկարաձգել 907-րդ բանաձևի մերժման իրավասությունը տարեկան հիմունքներով 2002թ. դեկտեմբերի 31-ին կամ դրանից հետո, եթե նա որոշում ընդունի և ներկայացնի հանձնարարական Հատկացումների հանձնաժողովներին... Մույն օրենքի կիրառումից 60 օրվա ընթացքում նախագահը պետք է զեկույց ուղարկի հատկացումների կոնգրեսական հանձնաժողովներին՝ մանրամասն հստակեցնելով հետևյալը՝

1. Ադրբեջանի կառավարությանը հատկացված բոլոր տեսակի աջակցությունների էությունը և քանակը համապատասխանում են սույն օրենքին,

¹ Նույն տեղում:

2. Ադրբեջանի ու Հայաստանի միջև ռազմական հավասարակշռության կարգավիճակը և այդ հավասարակշռության վրա Միացյալ Նահանգների աջակցության ազդեցությունը,
3. Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ բանակցությունների կարգավիճակը և այդ բանակցությունների վրա Միացյալ Նահանգների աջակցության ազդեցությունը¹:

Սահմանափակելով կառավարություն-կառավարություն ուղիղ օգնության տարբեր տեսակների տրամադրումը, ներառյալ՝ ռազմական ֆինանսական աջակցությունը, 907-րդ բանաձևը, սակայն, չկանխեց հումանիտար, ժողովրդավարության կառուցման, հանցագործությունների չտարածմանն աջակցելուն ուղղված ավելի քան \$200 մլն-ի հատկացումը Ադրբեջանի կառավարությանը: Այնուհանդերձ, ավելի քան 9 տարի 907-րդ բանաձևը հանդիսացավ ԱՄՆ կառավարության կարևորագույն գործիքը Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական և քաղաքական շրջափակմանը հակազդելու հարցում:

Հումանիտար աջակցման միջանցք ակտը

ԱՀՀ-ն, ինչպես և այլ հայկական կազմակերպություններ լուրջ քայլեր ձեռնարկեցին Հումանիտար աջակցման միջանցք ակտի ընդունման ուղղությամբ՝ ՀՀ տնտեսական ու քաղաքական շրջափակման վերացման համատեքստում: 1995թ. հունիսի 29-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը հաստատեց Հումանիտար աջակցման միջանցք ակտը (*Humanitarian Aid Corridor Act*), որով արգելվում էր Միացյալ Նահանգների կողմից աջակցության ցուցաբերումն այն երկրներին, որոնք արգելում կամ սահմանափակում են Միացյալ Նահանգների հումանիտար օգնության փոխադրումը կամ մատակարարումները: Ակտի 3-

¹Նույն տեղում:

րդ կետում՝ «Սահմանափակումներ այն երկրներին ցուցաբերվող աջակցության նկատմամբ, որոնք սահմանափակում են Միացյալ Նահանգների հումանիտար աջակցության փոխադրումը կամ մատակարարումները», նշվում է՝

1. Միացյալ Նահանգների կողմից ցուցաբերվող աջակցության համար հատկացրած միջոցները կարող են հասանելի չլինել որևէ պետության, որի կառավարությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն արգելում կամ սահմանափակում է Միացյալ Նահանգների հումանիտար աջակցության փոխադրումը կամ մատակարարումները,
2. մերժում. առաջին ենթակետով նախատեսվող արգելքը չի կիրառվի, եթե նախագահը որոշում ընդունի և գրավոր տեղեկացնի Կոնգրեսին, որ տվյալ պետությանը նման աջակցության ապահովումը բխում է Միացյալ Նահանգների ազգային անվտանգության շահերից,
3. աջակցության վերականգնում. որևէ երկրին Միացյալ Նահանգների կողմից ցուցաբերվող աջակցության հետաձգումը կամ դադարեցումը՝ առաջին ենթակետի համաձայն, կդադարի լինել արդյունավետ, երբ նախագահը գրավոր ներկայացնի հանձնարարական Ներկայացուցիչների պալատի խոսնակին և Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովին, որ այդ երկիրն այլևս ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի արգելում կամ սահմանափակում Միացյալ Նահանգների հումանիտար աջակցության փոխադրումը կամ մատակարարումները (Հումանիտար աջակցման միջանցք ակտին կարող էք ծանոթանալ «Փաստաթղթեր» բաժնում)¹:

¹ Humanitarian Aid Corridor Act. HR 942 IH, 104th Congress, 1st Session, The House of Representatives, February 14, 1995
[http://thomas.loc.gov/cgi-bin/query/z?c104:H.R.942:](http://thomas.loc.gov/cgi-bin/query/z?c104:H.R.942)

**Հայ-ամերիկյան քաղաքական գործողությունների
հանձնաժողով (The Armenian-American
Political Action Committee)**

Երկու խոսք Քաղաքական գործողությունների հանձնաժողովների («*Political Action Committee*») վերաբերյալ: Դրանք մասնավոր խմբեր են, որոնք կազմակերպվում են ընտրությունների ժամանակ, տվյալ թեկնածուին կամ էլ որևէ քաղաքական որոշման, օրինագծի ընդունմանը կամ մերժմանն աջակցելու նպատակով: 1971թ. ընդունված «Դաշնային ընտրաբաշխման մասին» օրենքի համաձայն, կազմակերպությունը դառնում է «քաղաքական կոմիտե», եթե ստանում կամ տալիս է ավելի քան \$1000-ի հատկացումներ՝ դաշնային ընտրության վրա ազդեցություն գործելու նպատակով: 1974թ. ընդունվեց օրենսդրական փոփոխություն, որով սահմանափակվեցին անհատների ու «Քաղաքական գործողության հանձնաժողովների» լոբբիստների համար նախատեսված հատկացումները: Այս օրենսդրական փոփոխությամբ «Քաղաքական գործողության հանձնաժողովները» պետք է հավաքագրեին քաղաքացիների, խմբերի միջոցները և Կոնգրեսի ընտրություններին այդ միջոցների բաշխման հարցում որդեգրեին միասնական մոտեցումներ:

Հայ-ամերիկյան քաղաքական գործողությունների հանձնաժողովը (ՀԱՔԳՀ) անկախ, երկկուսակցական կազմակերպություն է¹: ՀԱՔԳՀ-ն ակտիվ գործունեություն է ծավալում դաշնային այն թեկնածուների աջակցման ուղղությամբ, որոնք իրենց գործողություններով նպաստում են Կովկասյան տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատմանը, ԱՄՆ հայության խնդիրների կարգավորմանը: Հանձնաժողովը քաջալերում է ամերիկահայության ակտիվ մասնակցությունը Միացյալ Նահանգների քաղաքական համակարգում: Հանձնաժողովն ակտիվ

¹ The Armenian-American Political Action Committee
<http://www.armenpac.org/>

գործունեություն է իրականացնում ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի անդամների համալրման և վերջինիս հայանպաստ գործունեության զարգացման ուղղությամբ:

Հայ-ամերիկյան քաղաքական գործողությունների հանձնաժողովն ակտիվ լրբիստական գործունեություն է ծավալել նաև Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության՝ Միացյալ Նահանգների կողմից ճանաչման վերաբերյալ բանաձևերի մշակման ու ընդունման գործում: Նման բանաձևերից էր նաև 2009թ. մարտի 17-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում կոնգրեսականներ Ադամ Շիֆի, Ռադանովիչի, Փալոնեի, Քիրքի, Բերմանի, Քանտորի, ՄաքՔոթերի, Աքերմանի և այլոց ներկայացրած 252-րդ բանաձևը Միացյալ Նահանգների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, որտեղ նրանք կոչ էին անում «ԱՄՆ նախագահին երաշխավորելու, որ Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունն արտահայտում է համարժեք ըմբռնում մարդու իրավունքների հարցերի, էթնիկ զտումների և ցեղասպանության փաստաթղթերի վերաբերյալ՝ հայերի դեմ իրականացված ցեղասպանության համատեքստում, և որ ԱՄՆ նախագահին իր ամենամյա ապրիլյան չորսյան ուղերձում այդ իրադարձությունները պետք է որակի որպես ցեղասպանություն» (փաստաթուղթն ամբողջությամբ տե՛ս «Փաստաթղթեր» բաժնում)¹:

¹ Text of H. Res. 252: Affirmation of the United States Record on the Armenian Genocide Resolution, 111th Congress, 1st Session, H. RES. 252, <http://www.govtrack.us/congress/billtext.xpd?bill=hr111-252>

***ԱՄՆ-Հայաստան հասարակական հարցերով հանձնախումբ
(U.S.-Armenia Public Affairs Committee-USAPAC)***

2006թ. դեկտեմբերին Միացյալ Նահանգներում հիմնադրվեց տեղի հայության լոբբիստական ևս մեկ կազմակերպություն՝ ԱՄՆ-Հայաստան հասարակական հարցերով հանձնաժողովը: Հանձնաժողովի գործադիր տնօրեն նշանակվեց հայտնի լոբբիստ Ռոս Վարթյանը, իսկ կառույցը հիմնադրվել էր հայտնի բարերար Ջերարդ Գաֆեսյանի կողմից: Ռոս Վարթյանն ազդեցիկ անձնավորություն է՝ հայտնի կոնգրեսականների հետ կապերով և անձնական սերտ շփումներով: Նրա ղեկավարած նոր լոբբիստական խումբը նպատակ ունի ուժեղացնել հայկական լոբբիստական աշխատանքը Միացյալ Նահանգներում: Կազմակերպությունը կարևորում է ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ հարաբերությունների սերտացումը, որի ուղղությամբ զգալի աշխատանքներ է իրականացնում: Հայկական լոբբիստական խումբն ուսումնասիրել է Վաշինգտոնում գործող հրեական լոբբիստական խմբերի փորձառությունը, և Վարթյանի խոսքերով, արդեն իսկ լավ կապեր է հաստատել ԱՄՆ հրեական կառույցների հետ:

ԱՄՆ-Հայաստան հասարակական հարցերով հանձնաժողովը պատրաստվում է դիմակայել նոր մարտահրավերների: Վարթյանի խոսքերով՝ «ԱՄՆ-ը ֆիզիկական կախվածություն է ձեռք բերել նավթից: Եվ այդ պատճառով մենք մարտահրավեր ունենք Ադրբեջանում: Ադրբեջանը վերահսկում է ոչ միայն իր նավթն ու գազը: Աշխարհագրական դիրքը հնարավորություն է տալիս այդ երկրին նաև խողովակաշարերի միջոցով վերահսկել նավթի ու գազի հոսքն իր արևելյան հարևաններից: Խողովակաշարը հզոր գենք է, որ այդ երկիրն օգտագործում է, և այդ պատճառով Ադրբեջանն ավելի շատ ազդեցություն ունի Վաշինգտոնում, քան արժանի է դրան»¹: «Մյուս մարտահրավերը Լեռնային

¹ ԱՄՆ-ում ստեղծվել է հայկական նոր լոբբիստական խումբ, 13.12.2006թ., <http://www.armenialiberty.org/content/article/1585633.html>

Ղարաբաղի խաղաղ գործընթացն է: Այն խաղաղ գործընթացը, որ մենք ենք հասկանում, և այն, ինչ ամերիկացի որոշ քաղաքական գործիչներ են հասկանում, միանգամայն տարբերվում են միմյանցից: Մեր խնդիրն է վերացնել այդ տարբերությունը»: Կազմակերպությունը Հայության առջև ծառայած երրորդ մարտահրավերը տեսնում է Հայաստանի Հանրապետության մեկուսացվածության խնդրում՝ կապված Թուրքիայի և Ադրբեյջանի կողմից պարտադրված տնտեսական ու քաղաքական շրջափակման հետ: «Մյուս խնդիրը վերաբերում է էներգետիկային: Դժբախտաբար, Հայաստանը կախված է ոչ անվտանգ միջուկային էներգիայից: Եվ մենք պետք է կենտրոնանանք նաև էներգիայի հարցերի վրա»: USAPAC-ը, ըստ Վարթյանի, ցանկանում է նաև լուծել հայ-ամերիկյան առևտրական հարցերը: Ամերիկահայ այս լոբբիստական խումբը նպատակ ունի օգնել մեծացնելու հայ-ամերիկյան առևտրի ծավալը¹:

Նախատեսվում էր, որ լոբբիստական խումբն ունենալու է չորս առանձին կառույց՝ Կրթական աջակցության խումբ, ԱՄՆ-Հայաստան քաղաքական գործողության կոմիտե, Ընտրական գործընթացների խումբ և ԱՄՆ-Հայաստան հարցերի հանձնաժողով: Այս կառույցները հնարավորություն են տալու անմիջականորեն ներգրավվել ամերիկյան ընտրական գործընթացներին՝ հայկական հարցերն առաջ մղելու և ամերիկահայության քաղաքական ազդեցությունն ուժեղացնելու նպատակներով:

***ԱՄՆ հայ ազգային կոմիտե կամ Հայ դատի հանձնախումբ
(The Armenian National Committee of America-ANCA)***

1918թ. հիմնադրված ԱՄՆ հայ ազգային կոմիտեն ԱՄՆ հայության խոշոր և ազդեցիկ լոբբիստական կազմակերպություններից է, իրականացնում է համայն Հայության շահերի պաշտպանության քաղաքականություն տարբեր ոլորտներում: Գործելով ԱՄՆ

¹Նույն տեղում:

ողջ տարածքում և համագործակցելով Հայ դատի աշխարհի մյուս հանձնախմբերի հետ՝ ակտիվորեն առաջ է մղում ԱՄՆ հայ համայնքի շահերը: ANCA-ն Առաջին աշխարհամարտից հետո Վահան Քարդաշյանի հիմնադրած Անկախ Հայաստանի ամերիկյան կոմիտեի (ACIA) իրավահաջորդն է: Քարդաշյանը Վաշինգտոնում Օսմանյան կայսրության հյուպատոսն է եղել: ACIA-ն ուներ 23 շրջանային գրասենյակ ԱՄՆ 13 նահանգներում:

ԱՄՆ հայ ազգային կոմիտեի գործունեության հիմնական նպատակներից են՝

- հասարակական տեղեկացվածության խթանումը՝ ի շահ ազատ, միացյալ և անկախ ՀՀ-ին աջակցման,
- ԱՄՆ քաղաքականության ուղղորդումը՝ կապված ԱՄՆ հայության շահերի հետ,
- ԱՄՆ պետական քաղաքականության հարցերի վերաբերյալ ԱՄՆ հայության համընդհանուր մոտեցումներն ընտրողների ու պաշտոնյաների փոխհարաբերություններում ներկայացնելը:

ԱՄՆ հայ ազգային կոմիտեն ակտիվ գործունեություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության՝ որպես անվտանգ, հեռանկարային և ժողովրդավարական երկրի կայացման և ուժեղացման, ԼՂՀ ինքնորոշման իրավունքի աջակցման, նրա անկախացման, ՀՀ-ին հատկացվող տնտեսական ու ժողովրդավարական զարգացմանն ուղղված ԱՄՆ ֆինանսական աջակցության ծավալների ավելացման, ԼՂՀ-ին ԱՄՆ ֆինանսական աջակցության ուղղակի հատկացման ապահովման, հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման և ՀՀ-ի նկատմամբ Թուրքիայի ու Ադրբեջանի քաղաքական և տնտեսական շրջափակման վերացման և այլ հայանպաստ հարցերի ուղղությամբ: ԱՄՆ հայ ազգային կոմիտեն 1990-ական թթ. սկզբներից ակտիվ մասնակցություն է ցուցաբերել նաև Ազատության աջակցման ակտի 907-րդ բանաձևի պաշտպանության գործընթացներում:

ԱՄՆ հայ ազգային կոմիտեն ակտիվորեն ներգրավված է նաև ԱՄՆ ընտրական գործընթացներում՝ դաշնային, նահանգային և տեղական մակարդակներով: Կոմիտեն տեղեկատվություն և ուսուցողական-ճանաչողական գործունեություն է ծավալում ընտրված պաշտոնյաների հետ ԱՄՆ հայությանը վերաբերող հարցերի շուրջ, ինչպես նաև ապահովում է տեղի հայությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ԱՄՆ հայության և հայկական շահերին վերաբերող հարցերին այս կամ այն թեկնածուի մոտեցումների վերաբերյալ:

Հանձնախումբը լոբբիստական գործունեություն է ծավալում ինչպես ԱՄՆ պետական ու կոնգրեսական շրջանակներում, այնպես էլ պետքարտուղարության պաշտոնյաների շրջանում: Հանձնախմբի Լոու Անջելեսի գրասենյակն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Կալիֆոռնիայի նահանգային խորհրդարանում մարդու իրավունքների ու ցեղասպանության առարկաների դասավանդման օրինագծի վավերացման (1985թ.), ինչպես նաև նահանգային կրթական ծրագրում հայերի դեմ իրականացված ցեղասպանության հիշատակման (1988թ.) գործում¹:

***Հայկական ազգային կոմիտե քաղաքական
գործողությունների հանձնաժողով
(The Armenian National Committee-Political
Action Committee-ANC-PAC)***

Հայկական ազգային կոմիտե քաղաքական գործողությունների հանձնաժողովը դաշնային օրենսդրությունում գրանցված կազմակերպություն է, որի նպատակն է Կոնգրեսի՝ հայանպաստ դիրքորոշում ունեցող անդամների ընտրարշավներին աջակցելը: Հանձնաժողովն ակտիվ գործունեություն է իրականացնում նաև ընտրարշավների հանձնաժողովներին (*campaign commi-*

¹ Հայ սփյուռք հանրագիտարան, «Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Հայ դատի հանձնախումբ», Երևան, 2003թ.:

tees) ֆինանսական հատկացումներ տրամադրելու ուղղությամբ: Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ԱՄՆ կոնգրեսականների օգտին ընտրարշավներում տեղի հայության քվեների ապահովմանը՝ նրանց կողմից հայության շահերին վերաբերող համապատասխան մոտեցումներ ակնկալելով: Հանձնաժողովը ներգրավված է ԱՄՆ Կոնգրեսի և Սպիտակ տան քաղաքական գործընթացներում¹: Հայկական ազգային կոմիտե քաղաքական գործողությունների հանձնաժողովը մեծ ներդրում ունի նաև ընտրություններում տեղի հայության շրջանում քաղաքական մասնակցության մակարդակի բարձրացման գործում: Հանձնաժողովը զգալի լոբբիստական գործունեություն է կատարում ԱՄՆ Կոնգրեսի անդամներին Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցի վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովելու և համապատասխան բանաձևեր առաջադրելու ուղղությամբ, աջակցում է ԱՄՆ-ՀՀ տնտեսական կապերի ամրապնդման ու ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանության գործընթացներին:

***Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախումբը
(Congressional Caucus on Armenian Issues)***

Երկու խոսք կոնգրեսական հանձնախմբերի և դրանց գործունեության վերաբերյալ: Կոնգրեսական հանձնախումբը (*congressional caucus*) ԱՄՆ Կոնգրեսի անդամների խումբն է, որը միասնական դիրքորոշում է ցուցաբերում օրենսդրական այս կամ այն որոշման ընդունման կամ մերժման հարցում: Խմբերը ձևավորվում են որպես կոնգրեսական անդամ կազմակերպություններ և գործում են հիմնականում ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում և այդ պալատի օրենսդրության համաձայն (կոնգրեսական խմբեր կան նաև Սենատում): Դրանք հաճախ անվանվում են կոալիցիաներ, աշխատանքային խմբեր և այլն:

¹ The Armenian National Committee-Political Action Committee ,
<http://www.ancpac.org/>

ԱՄՆ կոնգրեսականները գործունեություն են ծավալում միաժամանակ կոնգրեսական մի քանի հանձնախմբերում, ինչպես նաև կարող են ստեղծել սեփական նմանատիպ հանձնախմբեր՝ ըստ կոնգրեսականի գործունեության առանձնահատկությունների և ուղղվածության: Կարելի է ասել, որ ԱՄՆ Կոնգրեսի շրջանակում գործող կոնգրեսական հանձնախմբերը և ներգրավված կոնգրեսականները ԱՄՆ արտաքին և ներքին քաղաքականության իրացման կարևոր հավասարակշռող, փոխլրացնող գործոններ են: Սակայն այստեղից ամենևին էլ չի հետևում այն տրամաբանությունը, թե կոնգրեսական հանձնախմբերը զուտ երկրի որոշումների կայացման գործընթացում անհրաժեշտ միջոց են. դրանք հաճախ կարող են զգալի ազդեցություն ունենալ այդ գործընթացի վրա՝ հոգուտ այս կամ այն հանձնախմբի կողմից առաջ մղված շահերի պաշտպանության:

Հայկական հարցերով կոնգրեսական խումբը հիմնադրվել է 1995թ.՝ կոնգրեսականներ Ֆրենկ Փալոնեի և Էդվարդ Փորթերի կողմից: Այն օրենսդիրներից բաղկացած երկկուսակցական խումբ է, որն իրականացնում է ԱՄՆ-ՀՀ հարաբերությունների զարգացման և ամրապնդման, տեղի հայության շահերի պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման, Հայաստանի Հանրապետության շրջափակման վերացման, հայերի դեմ իրագործված ցեղասպանության՝ ԱՄՆ-ի կողմից պաշտոնապես ճանաչման խնդիրները:

Ներկայում Հայկական հանձնախմբի համանախագահներն են դեմոկրատ Ֆրենկ Փալոնեն և հանրապետական Մարկ Քիրքը, որոնք երկուսն էլ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամներ են: Միացյալ Նահանգների հայության և Հայկական հանձնախմբի համանախագահների առաջնորդության շնորհիվ հանձնախմբի անդամների թիվը գրեթե կրկնապատկվել է 2001թ. ի վեր: 2010թ. փետրվարի 4-ի դրությամբ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի 150 անդամ աշխատում է Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի օգտին: Ստորև ներ-

կայացվում է 2010թ. մարտի 2-ի դրությամբ Ներկայացուցիչների պալատի՝ հայկական հարցերով հանձնախմբին աջակցող անդամների ցուցակը՝ ըստ կուսակցական և նահանգային պատկանելության:

Աղյուսակ 5.1

Ներկայացուցիչների պալատի Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի անդամների ցուցակը՝ ըստ կուսակցական և նահանգային պատկանելության (2010թ. մարտի 2-ի դրությամբ)

| Արիզոնա (1) | |
|--|----------|
| Ռաուլ Գրիժալվա Raul Grijalva | դեմոկրատ |
| Արքանզաս (1) | |
| Վիկ Սնայդեր Vic Snyder | դեմոկրատ |
| Կալիֆորնիա (38) | |
| Մայք Թոմփսոն Mike Thompson | դեմոկրատ |
| Դորիս Մաթսույ Doris Matsui | դեմոկրատ |
| Լին Ուլսի Lynn Woolsey | դեմոկրատ |
| Ջորջ Միլլեր George Miller | դեմոկրատ |
| Նենսի Փելոսի Nancy Pelosi | դեմոկրատ |
| Բարբարա Լի Barbara Lee | դեմոկրատ |
| Էլեն Թոսխեր Ellen Tauscher | դեմոկրատ |
| Ջեքի Սփեյեր Jackie Speier | դեմոկրատ |
| Ֆորթնի «Փիթ» Սթարք Fortney "Pete" Stark | դեմոկրատ |
| Աննա Էշու Anna Eshoo | դեմոկրատ |
| Մայքլ Հոնդա Michael Honda | դեմոկրատ |

| | |
|--|--------------|
| Ջոի Լոֆգրեն Zoe Lofgren | դեմոկրատ |
| Դենիս Կարդոզա Dennis Cardoza | դեմոկրատ |
| Ջորջ Ռադանովիչ George Radanovich | հանրապետական |
| Ջիմ Կոստա Jim Costa | դեմոկրատ |
| Դևին Նանես Devin Nunes | հանրապետական |
| Լոիս Քափս Lois Capps | դեմոկրատ |
| Էլթոն Գալեգլի Elton Gallegly | հանրապետական |
| Հովարդ ՄաքՔեոն Howard McKeon | հանրապետական |
| Դևիդ Դրեյեր David Dreier | հանրապետական |
| Բրեդ Շերման Brad Sherman | դեմոկրատ |
| Հովարդ Բերման Howard Berman | դեմոկրատ |
| Ադամ Շիֆ Adam Schiff | դեմոկրատ |
| Հենրի Վաքսման Henry Waxman | դեմոկրատ |
| Խավիեր Բեկերա Xavier Becerra | դեմոկրատ |
| Ջուդի Չու Judy Chu | դեմոկրատ |
| Դայան Վաթսոն Diane Watson | դեմոկրատ |
| Լուսիլ Ռոյբալ-Ալարդ Lucille Roybal-Allard | դեմոկրատ |
| Գրեյս Նապոլիտանո Grace Napolitano | դեմոկրատ |
| Լինդա Սանչես Linda Sanchez | դեմոկրատ |
| Էդվարդ Ռոյս Edward Royce | հանրապետական |
| Գարի Միլեր Gary Miller | հանրապետական |
| Ջոզեֆ Բակա Joseph Baca | դեմոկրատ |

| | |
|--|--------------|
| Քեն Քալվերթ Ken Calvert | հանրապետական |
| Լորետա Սանչես Loretta Sanchez | դեմոկրատ |
| Դարրել Իսա Darrell Issa | հանրապետական |
| Բոբ Ֆիլներ Bob Filner | դեմոկրատ |
| Սուզան Դևիս Susan Davis | դեմոկրատ |
| Կոլորադո (4) | |
| Ջերեդ Փոլիս Jared Polis | դեմոկրատ |
| Մայք Բոֆման Mike Coffman | հանրապետական |
| Դուգ Լեմբորն Doug Lamborn | հանրապետական |
| Էդ Փերլմյութեր Ed Perlmutter | դեմոկրատ |
| Քոնեքթիկուտ (3) | |
| Ջոն Լարսոն John Larson | դեմոկրատ |
| Ռոզա ԴեԼաուրո Rosa DeLauro | դեմոկրատ |
| Քրիս Մերֆի Chris Murphy | դեմոկրատ |
| Կոլումբիայի շրջան (1) | |
| Էլեանոր Նորթոն Eleanor Norton | դեմոկրատ |
| Ֆլորիդա (3) | |
| Գաս Բիլիրակիս Gus Bilirakis | հանրապետական |
| Իլեանա Ռոս-Լեիթինեն Ileana Ros-Lehtinen | հանրապետական |
| Լինքոլն Դիազ-Բալարթ Lincoln Diaz-Balart | հանրապետական |
| Իլինոյս (10) | |
| Բոբի Ռաշ Bobby Rush | դեմոկրատ |
| Ջեսսի Ջեքսոն Jesse Jackson | դեմոկրատ |
| Դեն Լիպինսկի Dan Lipinski | դեմոկրատ |

| | |
|--|--------------|
| Լուիս Գուտիերես Luis Gutierrez | դեմոկրատ |
| Փիթեր Ռոսկամ Peter Roskam | հանրապետական |
| Դենի Դևիս Danny Davis | դեմոկրատ |
| Ջենիս Դ. Շակովսկի Janice D. Schakowsky | դեմոկրատ |
| Մարկ Քիրք Mark Kirk | հանրապետական |
| Ջերի Քոստելո Jerry Costello | դեմոկրատ |
| Ջոն Շիմկուս John Shimkus | հանրապետական |
| Ինդիանա (2) | |
| Փիթեր Վիսկլոսկի Peter Visclosky | դեմոկրատ |
| Մարկ Սոուդեր Mark Souder | հանրապետական |
| Այովա (1) | |
| Բրյուս Բրեյլի Bruce Braley | դեմոկրատ |
| Քանզաս (3) | |
| Ջերի Մորան Jerry Moran | հանրապետական |
| Դենիս Մուր Dennis Moore | դեմոկրատ |
| Թոդ Թիարթ Todd Tiahrt | հանրապետական |
| Քենթուքի (1) | |
| Բեն Քենդլեր Ben Chandler | դեմոկրատ |
| Մերիլենդ (3) | |
| Ջոն Սարբանես John Sarbanes | դեմոկրատ |
| Սթենի Հոյեր Steny Hoyer | դեմոկրատ |
| Քրիստոֆեր վան Հոլլեն Christopher Van Hollen | դեմոկրատ |
| Մասաչուսեթս (10) | |
| Ջոն Օլվեր John Oliver | դեմոկրատ |
| Ռիչարդ Նիլ Richard Neal | դեմոկրատ |
| Ջեյմս ՄաքԳովերն James McGovern | դեմոկրատ |
| Բերնի Ֆրենկ Barney Frank | դեմոկրատ |

| | |
|---|--------------|
| Նիկի Ցոնգաս Niki Tsongas | դեմոկրատ |
| Ջոն Թիրնի John Tierney | դեմոկրատ |
| Էդվարդ Մարքի Edward Markey | դեմոկրատ |
| Մայքլ Քափուանո Michael Capuano | դեմոկրատ |
| Սթիվեն Լինչ Stephen Lynch | դեմոկրատ |
| Ուիլյամ Դելահանթ William Delahunt | դեմոկրատ |
| Միջիցան (12) | |
| Վերնոն Էլերս Vernon Ehlers | հանրապետական |
| Դեյվ Քեմփ Dave Camp | հանրապետական |
| Դեյլ Քիլդի Dale Kildee | դեմոկրատ |
| Ֆրեդ Ափթոն Fred Upton | հանրապետական |
| Մայքլ Ռոջերս Michael Rogers | հանրապետական |
| Գարի Փիթերս Gary Peters | դեմոկրատ |
| Քենդիս Միլեր Candice Miller | հանրապետական |
| Թադեուս ՄաքՔոթեր Thaddeus McCotter | հանրապետական |
| Սանդեր Լևին Sander Levin | դեմոկրատ |
| Քարոլին Քիլպատրիք Carolyn Kilpatrick | դեմոկրատ |
| Ջոն Կոնյերս John Conyers | դեմոկրատ |
| Ջոն Դինգել John Dingell | դեմոկրատ |
| Մինետրա (4) | |
| Թիմ Վոլց Tim Walz | դեմոկրատ |
| Բեթի ՄաքՔոլլում Betty McCollum | դեմոկրատ |
| Մայքլ Բաչման Michele Bachmann | հանրապետական |

| | |
|--------------------------------------|--------------|
| Քոլին Փիթերսոն Collin Peterson | դեմոկրատ |
| Նսադա (1) | |
| Շելլի Բերքլի Shelley Berkley | դեմոկրատ |
| Նյու Ջերսի (9) | |
| Ռոբերտ Էնդրյուս Robert Andrews | դեմոկրատ |
| Ֆրենկ Լոբիոնդո Frank LoBiondo | հանրապետական |
| Քրիսթոֆեր Սմիթ Christopher Smith | հանրապետական |
| Սքոթ Գարեթ Scott Garrett | հանրապետական |
| Ֆրենկ Փալոնե Frank Pallone | դեմոկրատ |
| Բիլ Փասքրել Bill Pascrell | դեմոկրատ |
| Սթիվեն Ռոթմեն Steven Rothman | դեմոկրատ |
| Դոնալդ Փեյն Donald Payne | դեմոկրատ |
| Ռաշ Հոլթ Rush Holt | դեմոկրատ |
| Նյու Յորք (14) | |
| Սթիվ Իսրայել Steve Israel | դեմոկրատ |
| Փիթեր Քինգ Peter King | հանրապետական |
| Քարոլին ՄաքԲարթի Carolyn McCarthy | դեմոկրատ |
| Գարի Աքերման Gary Ackerman | դեմոկրատ |
| Գրեգորի Միքս Gregory Meeks | դեմոկրատ |
| Ջոզեֆ Քրոուլի Joseph Crowley | դեմոկրատ |
| Էնթոնի Վեյներ Anthony Weiner | դեմոկրատ |
| Նիդիա Վելասկես Nydia Velazquez | դեմոկրատ |
| Քարոլին Մելոնի Carolyn Maloney | դեմոկրատ |

| | |
|--------------------------------------|--------------|
| Չարլզ Ռենջել Charles Rangel | դեմոկրատ |
| Էլիոթ Էնգել Eliot Engel | դեմոկրատ |
| Նիտա Լովի Nita Lowey | դեմոկրատ |
| Մաուրիս Հինչի Maurice Hinchey | դեմոկրատ |
| Մայքլ Արքուրի Michael Arcuri | դեմոկրատ |
| Օհայո (4) | |
| Մերսի Քափթուր Marcy Kaptur | դեմոկրատ |
| Դենիս Կուչինիչ Dennis Kucinich | դեմոկրատ |
| Սթիվեն ԼաՏուրեթ Steven LaTourette | հանրապետական |
| Ջաչարի Սփեյս Zachary Space | դեմոկրատ |
| Օրեգոն (1) | |
| Իրլ Բլումենաուեր Earl Blumenauer | դեմոկրատ |
| Փենսիլվանիա (7) | |
| Չաքա Ֆաթահ Chaka Fattah | դեմոկրատ |
| Ջիմ Գերլախ Jim Gerlach | հանրապետական |
| Էլիսոն Շվարց Allyson Schwartz | դեմոկրատ |
| Մայք Դոյլ Mike Doyle | դեմոկրատ |
| Չարլզ Դենթ Charles Dent | հանրապետական |
| Ջոզեֆ Փիթս Joseph Pitts | հանրապետական |
| Թիմ Հոլդեն Tim Holden | դեմոկրատ |
| Ռոդ Այլենդ (2) | |
| Փաթրիկ Քենեդի Patrick Kennedy | դեմոկրատ |
| Ջեյմս Լանգևին James Langevin | դեմոկրատ |

| Հարավային Կարոլինա (1) | |
|---|--------------|
| Ջո Վիլսոն Joe Wilson | հանրապետական |
| Հարավային Դաքոտա (1) | |
| Սթեֆանի Հերսեթ Սենդլին Stephanie Herseth Sandlin | դեմոկրատ |
| Թենեսի (1) | |
| Չաք Վամփ Zach Wamp | հանրապետական |
| Տեխաս (5) | |
| Մայքլ ՄաքՔոլ Michael McCaul | հանրապետական |
| Չարլզ Գոնսալես Charles Gonzalez | դեմոկրատ |
| Քենի Մարչանթ Kenny Marchant | հանրապետական |
| Լլոյդ Դոգեթ Lloyd Dogget | դեմոկրատ |
| Էդի Բ. Ջոնսոն Eddie B. Johnson | դեմոկրատ |
| Յութա (1) | |
| Ռոբ Բիշոփ Rob Bishop | հանրապետական |
| Վիրջինիա (2) | |
| Էրիկ Քանթոր Eric Cantor | հանրապետական |
| Ջեյմս Մորան James Moran | դեմոկրատ |
| Վաշինգտոն (2) | |
| Ջիմ ՄաքԴերմոթ Jim McDermott | դեմոկրատ |
| Ադամ Սմիթ Adam Smith | դեմոկրատ |
| Վիսկոնսին (2) | |
| Փոլ Ռայան Paul Ryan | հանրապետական |
| Ջեյմս Սենսենբրեններ James Sensenbrenner | հանրապետական |

Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբում մեծամասնություն են կազմում դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչները. հանձնախմբի 150 անդամներից միայն 37-ն են ներկայացնում հանրապետական կուսակցությունը, մնացյալ 113 անդամները դեմոկրատ են: Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի անդամների շարքում, ըստ նահանգային պատկանելության կամ ներկայացվածության, թվաքանակով առանձնանում են Կալիֆորնիան ներկայացնող կոնգրեսականները՝ 38, որին հաջորդում են Նյու Յորքի (14), Միչիգանի (12) և Իլլինոյսի ու Մասաչուսեթսի անդամները՝ համապատասխանաբար ներկայացված են 10-ական անձով:

ԱՄՆ հայկական լոբբիստական կազմակերպությունների և Ներկայացուցիչների պալատի հայկական հարցերով հանձնախմբի անդամների ակտիվ ջանքերի շնորհիվ 2010թ. մարտի 4-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում քվեարկության դրվեց հայերի դեմ իրականացված ցեղասպանության 252-րդ բանաձևը, որն ընդունվեց 46 հոգուց բաղկացած հանձնաժողովի 23 կողմ և 22 դեմ քվեների հարաբերակցությամբ (1 անդամ այդպես էլ չներկայացավ քվեարկությանը): Ստորև ներկայացնում ենք հայերի դեմ իրականացված ցեղասպանության 252-րդ բանաձևի քվեարկության պատկերն ըստ անդամների (տե՛ս *Աղյուսակ 5.2*):

252 բանաձևը կոչ է անում ԱՄՆ նախագահին «ապահովել, որպեսզի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը պատշաճ ըմբռնում ցուցաբերի հայերի դեմ իրագործված ցեղասպանությանը՝ Միացյալ Նահանգների արձանագրություններում փաստված մարդու իրավունքների, էթնիկ գտումների և ցեղասպանության հարցերի առնչությամբ», ինչպես նաև ապրիլքսանչորսյան իր ամենամյա ուղերձում «ճշգրիտ կերպով բնորոշել մեկուկես միլիոն հայերի պարբերական և կանխամտածված բնաջնջումը որպես ցեղասպանություն»¹:

¹ ԱՄՆ Կոնգրեսի հանձնաժողովը հավանություն տվեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագծին, 05.03.2010թ., <http://www.armenialiberty.org/content/article/1974951.html>

Աղյուսակ 5.2

«ԱՄՆ-ի կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության ճանաչման 252-րդ բանաձևն» ըստ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամների քվեների¹

| Անդամ | Քվե | Անդամ | Քվե |
|-------------------|------|---------------------|------|
| Հովարդ Բերման | կողմ | Ջիմ Կոստա | կողմ |
| Գարի Աքերման | կողմ | Քեյթ Էլիսոն | կողմ |
| Էնի Ֆալեոնավաեզա | կողմ | Գաբրիել Գիֆորդս | կողմ |
| Դոնալդ Ս. Փեյն | կողմ | Ռոն Բլեյն | կողմ |
| Բրեդ Շերման | կողմ | Իլեանա Ռոս-Լեյթինեն | դեմ |
| Էլիոթ Էնգել | կողմ | Քրիսթոֆեր Հ. Սմիթ | կողմ |
| Բիլ Դելահանթ | դեմ | Դեն Բարթոն | դեմ |
| Գրեգորի Վ. Միքս | դեմ | Էլթոն Գալեգլի | կողմ |
| Դայան Է. Վաթսոն | կողմ | Դանա Ռոհրաբախեր | կողմ |
| Ռաս Քարնահան | դեմ | Դոնալդ Ա. Մանգուլո | կողմ |
| Ալբիո Միրես | կողմ | Էդվարդ Ռ. Ռոյս | կողմ |
| Գերալդ Է. Քոնոլի | դեմ | Ռոն Փոլ | դեմ |
| Մայքլ Է. ՄաքՄահոն | դեմ | Ջեֆ Ֆլեյք | դեմ |
| Ջոն Ս. Թաներ | դեմ | Մայք Փենս | դեմ |
| Գենե Գրին | կողմ | Ջոու Ուիլսոն | դեմ |
| Լին Ուիլսի | կողմ | Ջոն Բուզման | դեմ |
| Շելլա Ջեքսոն Լի | - | Ջ. Գրեշամ Բարթե | դեմ |
| Բարբարա Լի | կողմ | Քոնի Մեք | դեմ |
| Շելի Բերքլի | կողմ | Ջեֆ Ֆոլթենբերի | դեմ |
| Ջոզեֆ Բրոուլի | կողմ | Մայքլ Թ. ՄաքՔոուլ | դեմ |
| Մայք Ռոս | դեմ | Թեդ Փոու | դեմ |
| Բրեդ Միլեր | դեմ | Բոբ Ինգլիս | դեմ |
| Դևիդ Սքոթ | դեմ | Գաս Բիլիբակիս | կողմ |

Բանաձևի ծանոթագրություններում հստակ նշվում է. «Հայերի դեմ իրագործված ցեղասպանությունը ծրագրվել և իրականացվել է Օսմանյան կայսրության կողմից 1915-1923 թվականներին, որի արդյունքում տեղահանվել են երկու միլիոն հայեր:

¹ http://hcf.house.gov/hearing_notice.asp?id=1156&show=votes

Նրանցից մեկուկես միլիոնը սպանվել է, կես միլիոն վերապրածներ վտարվել են իրենց տներից: Այս ամենի արդյունքում վերացվեց հայերի 2500 տարվա ներկայությունն իրենց պատմական հայրենիքում»: Նշենք, որ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարցերի հանձնաժողովը նման բովանդակությամբ բանաձևեր ընդունել է 2000, 2005 և 2007 թվականներին: Թեև այդ բանաձևերը մեծ աջակցություն էին վայելում Կոնգրեսում, Ներկայացուցիչների պալատի լիազուստում նիստում քվեարկության չեն դրվել, քանի որ թե՛ նախագահ Բիլ Քլինթոնը և թե՛ նախագահ Ջորջ Բուշը կտրականապես դեմ արտահայտվեցին բանաձևերի ընդունմանը՝ պատճառաբանելով, որ թուրքերը կարող են պատասխան քայլերի դիմել¹:

Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ղեկավարը Հովարդ Բերմանն է, որը նույնպես կողմ է քվեարկել 252-րդ բանաձևին: Հովարդ Բերմանը, որը միաժամանակ թուրք-ամերիկյան կոնգրեսական հանձնախմբի անդամ է, ակտիվ գործունեություն է ծավալել ԱՄՆ-Իսրայել հարաբերությունների ամրապնդման և զարգացման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի չտարածման գործում: Հովարդ Բերմանը նշանակվել է Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ղեկավար 2008թ. մարտին, հայտնի է նաև երկկուսակցական կոալիցիաների ձևավորման հարցում իր արդյունավետ գործունեությամբ: Պետք է նկատել, որ 252-րդ բանաձևին կողմ քվեարկած անդամներից մի քանիսը ղեկավարում են Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովները: Դոնալդ Փեյնը, օրինակ, Աֆրիկայի և համաշխարհային առողջապահության հանձնաժողովի ղեկավարն է, Էնի Ֆալեոնավաեզան ղեկավարում է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան և գլոբալ բնապահպանություն հանձնաժողովը, Բրեդ Շերմանը՝ Ահաբեկչություն, չտարածում և առևտուր, Գարի Աքերմանը՝ Մերձավոր Արևելք և Հարավային Ասիա, Էլիոթ Էնգելը՝ Արևմտյան կիսագունդ ենթահանձնաժողովները:

¹ Նույն տեղում:

Նկատենք, որ 252-րդ բանաձևի քվեարկության ընթացքում Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի գրեթե բոլոր անդամները բացահայտ ճանաչել են հայերի դեմ իրականացված ցեղասպանությունը, սակայն դեմ քվեարկածներն իրենց դիրքորոշումը պայմանավորել են ԱՄՆ-Թուրքիա ռազմավարական հարաբերություններով և այն պատճառաբանությամբ, որ բանաձևի ընդունումը կվնասի այդ հարաբերություններին, կամ էլ ոչ պատշաճ ժամանակի ընտրությամբ՝ կապված հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացի հետ՝ Աֆղանստանում ամերիկյան զորքերը չվտանգելու առումով և այլն:

Անհրաժեշտ է հստակեցնել, որ ԱՄՆ Կոնգրեսում հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման վերաբերյալ բանաձևերի քվեարկումը, որպես կանոն, ակտիվանում է հատկապես ապրիլի 24-ի նախաշեմին՝ պայմանավորված Միացյալ Նահանգներում հայկական լոբբինգի ակտիվացմամբ: Մյուս կողմից, սակայն, նման բանաձևերի քվեարկությունը, իսկ արդյունքում՝ դրանց ընդունումը կամ մերժումը էապես պայմանավորված են ինչպես ԱՄՆ-Թուրքիա, այնպես էլ ԱՄՆ-ՀՀ փոխհարաբերություններով: Կոնգրեսական նման քննարկումները կարևոր նախադրյալ են Սպիտակ տան վարչակազմի համար՝ ճնշումներ բանեցնելու առաջին հերթին Թուրքիայի վրա: Հարցն առավել քան ակտուալ էր հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացում դրական արդյունքներ ստանալու՝ Միացյալ Նահանգների ղեկավարության ակնկալիքների հետ կապված:

Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախումբը, ԱՄՆ հայության լոբբիստական խմբերի ակտիվ աջակցության և պաշտպանության հովանու ներքո, ներգրավված է նաև ԱՄՆ կառավարության կողմից Հայաստանի Հանրապետությանը հատկացվող ֆինանսական աջակցության գործում, որը 1992-ից առայսօր կազմել է \$1,4 մլրդ: Հայկական լոբբին ակտիվորեն

ներգրավված է նաև Լեոնային Ղարաբաղին ԱՄՆ ֆինանսական աջակցության հատկացման գործում. այդ լոբբիստական ջանքերի արդյունքում ԼՂՀ-ն ստանում է ԱՄՆ կառավարության առանձին կետով սահմանված, ուղղակի ֆինանսական (հումանիտար) աջակցությունը: 2009թ. մարտի 25-ին ԱՄՆ հայկական համագումարը հերթական անգամ դիմեց Ներկայացուցիչների պալատի Պետական, արտաքին գործողությունների և այլ ծրագրերի ենթահանձնաժողովին 2010թ. ՀՀ-ին տրամադրելու ոչ պակաս, քան \$70 մլն ԱՄՆ կառավարական օգնություն, իսկ ԼՂՀ-ին՝ \$10 մլն հումանիտար աջակցություն՝ հաշվի առնելով Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական շրջափակումը, Արցախյան հիմնախնդրի չկարգավորվածությունն ու Ադրբեջանի իշխանությունների ռազմատենչ մոտեցումները (տե՛ս «Փաստաթղթեր» բաժնում)¹:

2009թ. մարտին Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահներ Ֆրենկ Փալոնեն և Մարկ Քիրքն իրենց հերթին շրջանառության մեջ դրեցին մի նամակ, որով գործընկերներին կոչ էին անում միանալ 2010 ֆինանսական տարվա բյուջեի նախագծի օտարերկրյա օգնության բաժնում Հայաստանի Հանրապետությանը և Լեոնային Ղարաբաղին վերաբերող հոդվածներով տրամադրվող աջակցությունն ավելացնելու նախաձեռնությանը: Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի տեղեկացմամբ, մարտի 24-ին տարածած նամակով Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահներն առաջարկել են ավելացնել ՀՀ-ին տրամադրվող տնտեսական աջակցությունը՝ 2009թ. նախատեսված \$48 միլիոնից հասցնելով \$70-ի, իսկ որպես ռազմական աջակցություն նախատեսվող \$3.3 միլիոնի փոխարեն՝ \$5 միլիոն: Առաջարկվում էր նաև ավելացնել Լեոնային Ղարաբաղին տրամադրվող ամերիկյան աջակցության ծավալները՝ 2009-ին նախատեսված \$8 միլիոնից հասցնելով \$10 միլիոնի, և վերացնել Լեոնային Ղարաբաղի՝

¹ Armenian Assembly of America, «Recommendations For Fiscal Year (FY) 2010», March 25, 2009, http://www.aaainc.org/fileadmin/aaainc/pdf_1/Q2_2009/Foreign_Ops_Testimony_FY_2010_VAN.pdf

ժողովրդավարության չափանիշներին համապատասխանող քվեարկությամբ ընտրված ղեկավարների նկատմամբ կիրառվող սահմանափակումները՝ Միացյալ Նահանգներ մեկնելու և ամերիկացի պաշտոնյաների հետ շփումների առումով:

2010թ. մարտի 22-ին կոնգրեսական Տրենկ Փալոնեն Կոնգրեսի 27 անդամների հետ համատեղ նամակ հղեց Արտաքին հատկացումների հանձնաժողովի Պետության, արտաքին գործողությունների և այլ ծրագրերի ենթահանձնաժողովի նախագահին առ այն, որ ենթահանձնաժողովը 2011թ. ԱՄՆ տարեկան ֆինանսական հատկացումներում հավանություն տա ՀՀ-ի համար նախատեսվող ԱՄՆ Կոնգրեսի ֆինանսավորման ծրագրին: Փալոնեն նաև կոչ էր անում պահպանել ռազմական հավասարակշռությունը ՀՀ-ի և Ադրբեջանի միջև քաջալերելով զարգացնել ԱՄՆ-ԼՂՀ հարաբերությունները և ավելացնել Միացյալ Նահանգների կողմից ԼՂՀ-ին ցուցաբերվող հումանիտար և զարգացման ֆինանսական աջակցության ծավալները¹: Նամակում կոնգրեսականները հիշատակում էին, որ Հայաստանի Հանրապետությունը շարունակում է կրել Թուրքիայի և Ադրբեջանի տնտեսական և քաղաքական ապօրինի շրջափակման հետևանքները, որոնք, Համաշխարհային բանկի տվյալներով, գնահատվում են տարեկան միջինը \$720 մլն: Կոչ էր արվում ամրապնդել նաև 907-րդ բանաձևի իրավական ուժը՝ որպես Ադրբեջանի կողմից ՀՀ շրջափակման և ՀՀ-ին ու ԼՂՀ-ին հասցեագրված ադրբեջանական սպառնալիքների հակազդման ուժեղ գործիք²:

Որոշ տվյալներ արցախյան լրբբիի վերաբերյալ

ԱՄՆ Արդարադատության նախարարության՝ լրբբիստական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ 2008թ. տարեկան հաշվետվության համաձայն, ԱՄՆ-ում ակտիվ լրբբիստական գործունեություն է ծավալել նաև ԼՂՀ-ն: ԼՂՀ կառա-

¹ U.S. Congressmen push for parity in military assistance between Armenia and Azerbaijan, 24.03.2010, <http://www.panarmenian.net/news/eng/print/?nid=44676>

² Նույն տեղում:

վարությունը հատկացրել է \$103,5 հազար *Office of the Nagorno-Karabakh Republic in the USA* կազմակերպությանը՝ Վաշինգտոնի հետ կապերի հաստատման և ամրապնդման, հասարակայնության և ՋԼՄ-ի հետ կապերի ամրապնդման ու արցախյան հիմնահարցի խաղաղ կարգավորման գործընթացի վերաբերյալ տեղեկատվական նյութերի տարածման նպատակներով: Բացի այդ, չհստակեցված գումար ստացել է հասարակայնության հետ կապերի մասնագետ Ուիլյամ Սփենսերը՝ ԼՂՀ շահերը պաշտպանող Վարդան Բարսեղյանից¹:

Թուրքական լոբբի

Միացյալ Նահանգների Արդարադատության նախարարության լոբբիստական խմբերի գործունեության վերաբերյալ 2008թ. տարեկան հաշվետվությունում նշվում է, որ Թուրքիան դասվել է ԱՄՆ Կոնգրեսում իրենց շահերը համեմատաբար հաճախակի լոբբինգի ենթարկած առաջատար երկրների շարքին (2268 անգամ): Երկիրը զբաղեցրել է 4-րդ դիրքն այլ երկրների ցանկում՝ ըստ լոբբիստական գործունեությանը հատկացրած ծախսերի՝ \$4,2 մլն, և զիջել է միայն Միացյալ Արաբական Էմիրություններին (\$11 մլն), Մեծ Բրիտանիային (\$6 մլն) և Ճապոնիային (\$4,23 մլն)²: Նույն տվյալների համաձայն, թուրքական շահերը պաշտպանող լոբբիստներն առավել ակտիվ գործունեություն են ծավալել, մասնավորապես, 2007թ. տարեվերջին, երբ ԱՄՆ Կոնգրեսում քննարկման էր դրվել Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծը: Այդ ժամանակ մեկ ամսվա ընթացքում թուրքական լոբբիստներն անցկացրին 673 հանդիպում ԱՄՆ կոնգրեսականների և Կոնգրեսի հրեական լոբբիի ներկայացուցիչների հետ:

¹ Расходы на лоббизм и иностранные лоббисты в США в 2008 году, 20.03.2009, <http://gtmarket.ru/news/state/2009/03/20/1947>

² «Турция - один из самых активных иностранных лоббистов в США», Август 26, 2009г., <http://www.lobbying.com.ua/news/2009-08-26-80>.

ԱՄՆ թուրքական լոբբիստական կազմակերպություններն իրենց գործունեությունը ծավալում են երկու հիմնական ուղղություններով.

- հայ-թուրքական, հայ-ադրբեջանական հարաբերություններ, որոնք ենթադրում են հակազդել ԱՄՆ Կոնգրեսում և գործադիր իշխանությունում հայերի դեմ իրականացված ցեղասպանության ճանաչման հարցի շուրջ ցանկացած քննարկման, բանաձևի կամ որոշման առաջնդման գործընթացին, խոչընդոտել ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ համագործակցության խորացմանն ու ՀՀ-ին և ԼՂՀ-ին ցուցաբերվող ԱՄՆ ֆինանսական աջակցման հարցերին, հակազդել ու սահմանափակել ԱՄՆ հայկական լոբբինգը և նրա ազդեցությունը ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների ուղղությամբ:
- ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններ, որոնք ենթադրում են ամրապնդել և խորացնել ԱՄՆ-Թուրքիա ռազմաքաղաքական, ռազմավարական համագործակցությունը, ապահովել Միացյալ Նահանգներից Թուրքիային տրամադրվող ռազմատեխնիկական, տնտեսական և այլ տեսակի աջակցությունը, այլ տարածաշրջանային հարցեր (Կիպրոս, քրդական հիմնահարց և այլն):

Թուրքիայի կառավարությունը և ԱՄՆ թուրքական համայնքը սերտ շփումներ են հաստատել ԱՄՆ լոբբիստական մի շարք հեղինակավոր կազմակերպությունների հետ, որոնք նպաստում են երկրի օրենսդիր և գործադիր իշխանական մարմիններում թուրքական շահերի առաջնդմանը: ԱՄՆ-ում թուրքական շահերը պաշտպանում են այնպիսի հեղինակավոր լոբբիստական կազմակերպություններ, ինչպիսիք են *Neusner Communications*, *Fleishman-Hillard*, *Livingston Group*, *Jones Walker & DiNovo Strategies* ընկերությունները: Դրանց աշխատանքները կոորդինացնում է ԱՄՆ-Թուրքիա բարեկամության միջխորհրդարանական խմբի համանախագահ, դեմոկրատ, նախկին

կոնգրեսական, «Խաղաղություն Մերձավոր Արևելքում» վերլուծական կենտրոնի ղեկավար Ռոբերտ Վեքսլերը¹: Վերջինն ակտիվ գործունեություն է ծավալում հայ-թուրքական հարաբերությունների բարելավման ուղղությամբ և բազմիցս կոչ է արել Թուրքիայի իշխանություններին ամեն կերպ վավերացնել հայ-թուրքական արձանագրությունները և չձախողել այդ գործընթացը: ԱՄՆ-ում պաշտոնական Անկարայի հետ համագործակցության համատեքստում իրականացված հակահայ լոբբիստական գործունեությամբ աչքի է ընկնում *Livingston Group* ընկերությունը, որն այդ ոլորտում սերտորեն համագործակցում է Թուրքիայի կառավարության, տեղի թուրքական համայնքի և թուրքական այլ լոբբիստական խմբերի հետ: Ընկերությունը հիմնադրվել է 1999թ. նախկին կոնգրեսական Ռոբերտ Լիվինգսթոնի կողմից, որը ժամանակին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի հանրապետական անդամ էր Լուիզիանա նահանգից: Ընկերության առաջատար խորհրդականներն են Իրլ Թոմաս Քոլեմանը (*Earl Thomas Coleman*), Էնդի Իրլենդը (*Andy Ireland*), Ռոն Փ. Քլինքը (*Ron P. Klink*), Էնթոնի Ջ. Մոֆեթը (*Anthony J. Moffett*), Ուիլյամ Հ. Չելիֆը (*William H. Zeff Jr.*), Եվա Քլեյթոնը (*Eva Clayton*), Բոբ Կլեմենթը (*Bob Clement*) և այլք²:

Livingston Group-ը համագործակցում է այնպիսի կազմակերպությունների, կառավարությունների և քաղաքական գործիչների հետ, ինչպիսիք են Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանը, Ռոյա Ռոյսը, Թուրքիայի կառավարությունը, Լոքսիդ Մարտինը, Լիբիայի նախագահ Մուամար Քադաֆին և այլք: Ընկերությունն առանձնահատուկ կապեր է հաստատել Թուրքիայի կառավարության հետ՝ վերջինիս շահերը ԱՄՆ գործադիր ու օրենսդիր իշխանությունում լոբբինգի ենթարկելու համար: Որոշ տվյալների համաձայն, 2000 թվականից ընկերությունը պաշտոնական Անկարայից ստացել է ավելի քան \$13

¹Նույն տեղում:

²The Livingston Group, <http://www.livingstongroupdc.com/>

մին՝ ԱՄՆ կառավարությունում հակահայ լոբբիստական գործունեություն ծավալելու նպատակներով (հիմնականում ցեղասպանության հարցում): Միայն 2006թ. ընկերությունը Թուրքիայի հետ ստորագրեց \$1,8 մլն արժողությամբ մեկ տարվա պայմանագիր¹: Ներկայում *Livingston Group*-ն ակտիվորեն ներգրավված է նախագահ Օբամայի վարչակազմում, ինչպես նաև սերտ կապեր ունի ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատներում էլ:

Livingston Group-ն ակտիվ համագործակցում է *Jones Walker* ընկերության հետ՝ 1999թ. նրանց միջև ձևավորված «ռազմավարական դաշնակցային հարաբերությունների» հիման վրա, որոնց համաձայն՝ ընկերությունները համատեղ ջանքերով լոբբիստական աշխատանքներ են իրականացնում տարբեր կառավարություններին, այդ թվում և Թուրքիային իրենց ծառայություններն առաջարկելու ուղղությամբ²:

Gephardt Group-ը նույնպես դասվում է այն լոբբիստական կազմակերպությունների շարքին, որոնք ակտիվ համագործակցում են Թուրքիայի կառավարության հետ՝ Միացյալ Նահանգներում թուրքական շահերի առաջնորդական հարցում և առաջին հերթին հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի խափանման և մերժման ուղղությամբ: *Gephardt Group* ընկերությունը հիմնադրել է ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի նախկին կոնգրեսական, Միսուրի նահանգը ներկայացնող դեմոկրատ Ռիչարդ Գեֆարդը՝ 2007թ.: Ընկերությունը բազմագործառնության խորհրդատվական կազմակերպություն է, որը մասնագիտացած է աշխատանքային հարաբերությունների կարգավորման, քաղաքական ու հասարակական ռազմավարությունների, գործարարության զարգացման, կառավարման համակարգին առնչվող ոլորտներում³: Ընկերության ստեղծման և կայացման գործում զգալի է կազմա-

¹ Turkey changes lobbying firm in US Congress, 02 April 2008,

<http://www.todayszaman.com/tz-web/detaylar.do?load=detay&link=137900>

² Jones Walker, Strategic Alliances, <http://www.joneswalker.com/practices-65.html>

³ Gephardt Government Affairs, <http://www.gephardtgc.com/about.php>

կերպության համահիմնադիր Թոմ Օդոնելի, ավագ փոխնախագահ Շերոն Դենիելսի, փոխնախագահ Քեթերին Գուդի, գործադիր փոխնախագահ Անդրեա Քինգի և այլոց ավանդը: Թուրքիայի կառավարությունից բացի, լոբբիստական այս հեղինակավոր ընկերության հետ համագործակցել են այնպիսի խոշոր կազմակերպություններ, ինչպիսիք են «Բոինգ» ընկերությունը, «Վիզա» ամերիկյան կազմակերպությունը: Վերջերս ընկերության լոբբիստական ծառայություններից սկսել է օգտվել նաև Վրաստանի կառավարությունը: Վերջինս 2010թ. հունվարին տարեկան \$440.000-ի պայմանագիր ստորագրեց Ռիչարդ Գեֆարդի հետ՝ նրա ղեկավարած *Gephardt Group* ընկերության լոբբիստական ծառայություններից օգտվելու և ԱՄՆ Կոնգրեսում ու գործադիր իշխանությունում Վրաստանի շահերի պաշտպանության նպատակներով¹:

DLA Piper ընկերությունը 2007թ. Թուրքիայի կառավարությունից ստացել է շուրջ \$1,2 մլն գումար՝ հայերի դեմ իրականացված ցեղասպանության ճանաչման հարցի շուրջ ԱՄՆ Կոնգրեսում քննարկումները կանխելու նպատակով²: Թուրքիայի կառավարության հետ հաստատած կապերի և համագործակցության զարգացման գործում զգալի է եղել (2008թ.) ընկերության քաղաքական հարցերով ավագ խորհրդական Ռիչարդ Արմիի (*Richard Arme*) դերակատարությունը: Նշենք, որ կազմակերպությունը 2009թ. լոբբիստական գործունեությունից ստացել է \$10.560.000 մլն եկամուտ:

ԱՄՆ թուրքական լոբբինգն ակտիվացավ նաև 2010թ. մարտի սկզբներին՝ կապված ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում մարտի 4-ին քվեարկության դրված 252-րդ բանաձևի հետ, ինչի արդյունքում

¹ Georgia hired another lobbying firm 03/09/2010, <http://news.am/en/news/16162.html>

² Turkey's New "Gephardt" Contract Seeks To Block Even "Debate" On Armenian Genocide, 2007-06-05, http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=1199

կենտրոնացվեցին թուրքական շահերը պաշտպանող մի շարք խոշոր ամերիկյան ընկերությունների ռեսուրսները: Բանաձևի քվեարկության նախօրեին ԱՄՆ ավիացիոն և պաշտպանական արդյունաբերության մի շարք կորպորացիաներ փետրվարի 26-ին նամակով դիմեցին Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովարդ Բերմանին և հանձնաժողովի անդամներին՝ հորդորելով չընդունել հայերի դեմ իրագործված ցեղասպանությունը ճանաչող օրինագիծը, որը, ըստ նրանց, կարող է վտանգել ամերիկյան արտահանումները դեպի Թուրքիա: *Lockheed Martin, Boeing, Raytheon, United Technologies* և *Northrop Grumman* կորպորացիաներն իրենց համատեղ նամակում նշում են, որ օրինագծի ընդունումը կվատթարացնի ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները և ռիսկի կենթարկի ամերիկյան աշխատատեղերը. «ՆԱՏՕ-ի նշանակալից դաշնակցին ու առևտրային գործընկերոջն օտարելը բացասական հետևանքներ կունենա ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի, արտահանումն ու աշխատատեղերի ստեղծումը խթանելու ջանքերի վրա»¹: Կորպորացիաների ղեկավարների բնորոշմամբ, ամերիկյան ռազմական և ավիացիոն արտադրանքի արտահանումները դեպի Թուրքիա 2009թ. կազմել են ավելի քան \$7 մլրդ, նախատեսվում է ծավալների աճ 2010թ.²: *Aerospace Industries* կորպորացիան, որում 270-ից ավելի ընկերություն է ընդգրկված, առանձին նամակ է հղել՝ նույնպես հայտնելով իր մտահոգությունը:

¹ «ԱՄՆ Ավիացիոն և ռազմական արդյունաբերության հսկաները կոչ են անում մերժել ցեղասպանության բանաձևը», Հեղինե Բունիայան, Հրաչ Մելքումյան, Ռուզաննա Ստեփանյան, Արմեն Քոլոյան, մարտ 03, 2010թ., <http://www.armtown.com/news/am/rfe/20100303/1973398/>

²Նույն տեղում:

***Թուրքիայի և Միացյալ Նահանգների թուրքերի
հարցերով կոնգրեսական հանձնախումբ
(«Congressional Caucus on Turkey and
Turkish Americans»-Turkey Caucus)***

Թուրքիայի և Միացյալ Նահանգների թուրքական համայնքի հարցերով կոնգրեսական հանձնախումբը ստեղծվել է ԱՄՆ կոնգրեսականներ Ռոբերտ Վեբսլերի (դեմոկրատ, Ֆլորիդա), Էդ Ուայթֆիլդի (հանրապետական, Քենթուքի) և Քեյ Գրենգերի (հանրապետական, Տեխաս) կողմից 2001թ. մարտին: Ըստ «ԱՄՆ թուրքական կոալիցիա» լոբբիստական հայտնի կազմակերպության տվյալների, 2009թ. սեպտեմբերի 18-ի դրությամբ թուրքական կոնգրեսական հանձնախմբի անդամներն 94 էին: Հանձնախումբը երկկուսակցական համակարգով գործող օրենսդրական կառույց է, որը հիմնականում ներգրավված է ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների, Միացյալ Նահանգների թուրքական համայնքի և Թուրքիայի շահերի պաշտպանության խնդիրներում: Հանձնախմբի անդամներից 53-ը պատկանում են դեմոկրատական կուսակցությանը, 41-ը հանրապետական են:

«ԱՄՆ թուրքական կոալիցիա» լոբբիստական կազմակերպության տեղեկատվական տվյալների հիման վրա ներկայացնենք 2010թ. մարտի 2-ի դրությամբ Թուրքիայի խմբի բոլոր անդամների (որոնք 104-ն են) ցուցակը՝ ըստ կուսակցական և նահանգային պատկանելության: Ինչպես ցույց է տրված աղյուսակում, թուրքական կոնգրեսական հանձնախմբում ընդգրկված անդամների շարքում, ըստ նահանգային պատկանելության, թվաքանակով առանձնանում են Տեխասի կոնգրեսականները՝ 13 անդամ, որոնց հաջորդում են Հյուսիսային Կարոլինան և Փենսիլվանիան ներկայացնող կոնգրեսականները՝ համապատասխանաբար 9 և 6 անդամ:

Աղյուսակ 5.3

Թուրքիայի կոնգրեսական խմբի անդամների ցուցակը՝ ըստ
կուսակցական և նահանգային պատկանելության,
2010թ. մարտի 2-ի դրությամբ

| Քենթուքի (3) | | |
|-----------------------------|----------------------------------|-----------|
| Համանախագահ Էդ Ուիթֆիլդ | Co-Chair Ed Whitfield (R-KY) | հանրապետ. |
| Բեն Չենդլեր | Ben Chandler(D-KY) | դեմոկրատ |
| Ջեֆ Դևիս | Geoff Davis (R-KY) | հանրապետ. |
| Տեխաս (13) | | |
| համանախագահ Քեյ Գրեյնջեր | Co-Chair Kay Granger (R-TX) | հանրապետ. |
| Ջո Բարթոն | Joe Barton (R-TX) | հանրապետ. |
| Հենրի Բյուելլա | Henry Cuellar(D-TX) | դեմոկրատ |
| Ջոն Բալբերսոն | John Culberson (R-TX) | հանրապետ. |
| Լլոյդ Դոգեթ | Lloyd Doggett(D-TX) | դեմոկրատ |
| Ջին Գրին | Gene Green (D-TX) | դեմոկրատ |
| Ջեբ Հենսարլինգ | Jeb Hensarling (R-TX) | հանրապետ. |
| Շելիա Ջեքսոն Լի | Shelia Jackson Lee (D-TX) | դեմոկրատ |
| Էդի Բեռնիս Ջոնսոն | Eddie Bernice Johnson (D-TX) | դեմոկրատ |
| Փիթ Օլսոն | Pete Olson (R-TX) | հանրապետ. |
| Սոլոմոն Օրտիզ | Solomon Ortiz(D-TX) | դեմոկրատ |
| Միլվեստր Բեյես | Silvestre Reyes (D-TX) | դեմոկրատ |
| Փիթի Սեսիոնս | Pete Sessions (R-TX) | հանրապետ. |
| Թենեսի (4) | | |
| Համանախագահ Սթիվեն Քոհեն | Co-Chair Stephen Cohen (D-TN) | դեմոկրատ |
| Լինքոլն Դևիս | Lincoln Davis (D-TN) | դեմոկրատ |
| Ջոն Թաներ | John Tanner (D-TN) | դեմոկրատ |
| Ջաք Վամփ | Zach Wamp (R-TN) | հանրապետ. |
| Ալաբամա (2) | | |
| Ռոբերտ Ադերհոլթ | Robert Aderholt (R-AL) | հանրապետ. |
| Սփենսեր Բեչուս | Spencer Bachus (R-AL) | հանրապետ. |

| Լուիզիանա (5) | | |
|---------------------------------|--------------------------|-----------|
| Ռոդնի Ալեքսանդր | Rodney Alexander(R-LA) | հանրապետ. |
| Չարլզ Բոուսթին | Charles Boasting (R-LA) | հանրապետ. |
| Բիլ Քեսսիդի | Bill Cassidy(R-LA) | հանրապետ. |
| Չարլի Մելանկոն | Charlie Melancon (D-LA) | դեմոկրատ |
| Սթիվ Սքեյլիս | Steve Scalise (R-LA) | հանրապետ. |
| Վաշինգտոն (3) | | |
| Բրայան Բեյրդ | Brian Baird (D-WA) | դեմոկրատ |
| Նորմ Դիքս | Norm Dicks (D-WA) | դեմոկրատ |
| Ադամ Սմիթ | Adam Smith (D-WA) | դեմոկրատ |
| Հարավային Կարոլինա (2) | | |
| Գրեշամ Բարեթ | Gresham Barrett (R-SC) | հանրապետ. |
| Ջո Ուիլսոն | Joe Wilson (R-SC) | հանրապետ. |
| Հյուսիսային Կարոլինա (9) | | |
| Գ.Կ. Բաթերֆիլդ | G. K Butterfield (D-NC) | դեմոկրատ |
| Հովարդ Կոբլ | Howard Coble (R-NC) | հանրապետ. |
| Բոբ Էթերիջ | Bob Etheridge (D-NC) | դեմոկրատ |
| Վիրջինիա Ֆոքս | Virginia Foxx (R-NC) | հանրապետ. |
| Ուոլթեր Ջոնս Կրտսեր | Walter Jones, Jr. (R-NC) | հանրապետ. |
| Լարի Կիսել | Larry Kissell (D-NC) | դեմոկրատ |
| Բրեդ Միլլեր | Brad Miller(D-NC) | դեմոկրատ |
| Դևիդ Փրայս | David Price (D-NC) | դեմոկրատ |
| Հիթ Շուլեր | Heath Shuler (D-NC) | դեմոկրատ |
| Կալիֆորնիա (3) | | |
| Հովարդ Բերման | Howard Berman (D-CA) | դեմոկրատ |
| Ուոլի Հերգեր | Wally Herger (R-CA) | հանրապետ. |
| Հենրի Վաքսման | Henry Waxman (D-CA) | դեմոկրատ |
| Արքանզաս (4) | | |
| Մարիոն Բերի | Marion Berry (D-AK) | դեմոկրատ |
| Վիկ Սնայդեր | Vic Snyder (D-AR) | դեմոկրատ |
| Ջոն Բուզման | John Boozman (R-AK) | հանրապետ. |
| Մայք Ռոս | Mike Ross (D-AR) | դեմոկրատ |
| Ինդիանա (5) | | |
| Դեն Բարթոն | Dan Burton (R-IN) | հանրապետ. |
| Անդրե Քարսոն | Andre Carson (D-IN) | դեմոկրատ |
| Բրեդ Էլսվորթ | Brad Ellsworth (D-IN) | դեմոկրատ |
| Բարոն Հիլ | Baron Hill (D-IN) | դեմոկրատ |
| Մայք Փենս | Mike Pence(R-IN) | հանրապետ. |

| Միսուրի (2) | | |
|----------------------------|----------------------------|-----------|
| Ռաս Քարնահան | Russ Carnahan (D-MO) | ղեմոկրատ |
| Այք Սքելթոն | Ike Skelton (D-MO) | ղեմոկրատ |
| Փենսիլվանիա (6) | | |
| Քրիսթոֆեր Քարնի | Christopher Carney (D-PA) | ղեմոկրատ |
| Ջիմ Գերլախ | Jim Gerlach (R-PA) | հանրապետ. |
| Ջո Փիթս | Joe Pitts (R-PA) | հանրապետ. |
| Թոդ Փլատս | Todd Platts (R-PA) | հանրապետ. |
| Բիլ Շուսթեր | Bill Shuster (R-PA) | հանրապետ. |
| Գլեն Թոմփսոն | Glen Thompson (R-PA) | հանրապետ. |
| Կոլորադո (2) | | |
| Մայք Քոֆման | Mike Coffman(R-CO) | հանրապետ. |
| Ջեդիդ Փոլիս | Jared Polis (D-CO) | ղեմոկրատ |
| Օրյահոմա (1) | | |
| Թոմ Բոուլ | Tom Cole (R-OK) | հանրապետ. |
| Վիրջինիա (4) | | |
| Գերի Քոնոլլի | Gerry Connolly (D-VA) | ղեմոկրատ |
| Ջիմ Մորան | Jim Moran(D-VA) | ղեմոկրատ |
| Գլեն Նայ | Glenn Nye (D-VA) | ղեմոկրատ |
| Ռոբ Ուիթման | Rob Wittman (R-VA) | հանրապետ. |
| Իլինոյս (3) | | |
| Դենի Դևիս | Danny Davis (D-IL) | ղեմոկրատ |
| Ջեսսի Ջեքսոն Կրոսեր | Jesse Jackson, Jr. (D-IL) | ղեմոկրատ |
| Թիմ Ջոնսոն | Tim Johnson(R-IL) | հանրապետ. |
| Մասսչուսեթս (1) | | |
| Ուիլյամ Դելահանթ | William Delahunt (D-MA) | ղեմոկրատ |
| Մինեսոթա (2) | | |
| Քեյթ Էլիսոն | Keith Ellison (D-MN) | ղեմոկրատ |
| Բեթի ՄաքՔոլում | Betty McCollum (D-MN) | ղեմոկրատ |
| Արիզոնա (2) | | |
| Թրենթ Ֆրենկս | Trent Franks (R-AZ) | հանրապետ. |
| Ջոն Շադեգ | John Shadegg (R-AZ) | հանրապետ. |
| Ամերիկյան Սամոա (1) | | |
| Էնի Ֆալեոմավաեգա | Eni Faleomavaega (D-AS) | ղեմոկրատ |
| Ֆլորիդա (4) | | |
| Ալսի Հասթինգս | Alcee Hastings (D-FL) | ղեմոկրատ |
| Ադամ Փուրթնեմ | Adam Putnam (R-FL) | հանրապետ. |
| Իլեանա Ռոս-Լեիթինեն | Ileana Ros-Lehtinen (R-FL) | հանրապետ. |
| Քլիֆ Սթեարնս | Cliff Stearns (R-FL) | հանրապետ. |

| Քննչություն (2) | | |
|--|----------------------------|-----------|
| Ջիմ Հայմս | Jim Himes (D-CT) | դեմոկրատ |
| Քրիստոֆեր Մրֆի | Christopher Murphy (D-CT) | դեմոկրատ |
| Նյու Ջերսի (2) | | |
| Ռաշ Հոլթ | Rush Holt (D-NJ) | դեմոկրատ |
| Բիլ Փասկրել | Bill Pascrell (D-NJ) | դեմոկրատ |
| Ջորջիա (3) | | |
| Հենրի Ջոնսոն | Henry C. Johnson (D-GA) | դեմոկրատ |
| Ջոն Լյուիս | John Lewis (D-GA) | դեմոկրատ |
| Դևիդ Սքոթ | David Scott (D-GA) | դեմոկրատ |
| Նյու Յորք (3) | | |
| Գրեգորի Վ. Միքս | Gregory W. Meeks (D-NY) | դեմոկրատ |
| Մայքլ ՄաքՄահոն | Michael McMahon (D-NY) | դեմոկրատ |
| Էդոլֆուս Թոունս | Edolphus Towns (D-NY) | դեմոկրատ |
| Միչիգան (1) | | |
| Քարոլին Քիլփատրիկ | Carolyn Kilpatrick (D-MI) | դեմոկրատ |
| Օհայո (2) | | |
| Ժան Շմիտ | Jean Schmidt (R-OH) | հանրապետ. |
| Ռոբերտ Է. Լատա | Robert E. Latta (R-OH) | հանրապետ. |
| Կանզաս (1) | | |
| Դենիս Մուր | Dennis Moore (D-KS) | դեմոկրատ |
| Պուերտո Ռիկո ազատ ասոցիացված պետություն (1) | | |
| Պեդրո Պիերլիուսի | Pedro Pierluisi (D-PR) | դեմոկրատ |
| Հյուսիսային Դակոտա (1) | | |
| Էրլ Փոմերոյ | Earl Pomeroy (D-ND) | դեմոկրատ |
| Մոնտանա (1) | | |
| Դենի Ռեհբերգ | Denny Rehberg (R-MT) | հանրապետ. |
| Մերիլենդ (2) | | |
| Դաթ Ջ Դուպերսբերգեր | Dutch Ruppersberger (D-MD) | դեմոկրատ |
| Ռոսքոու Բարթլիթ | Roscoe G. Bartlett (R-MD) | հանրապետ. |
| Միսսիսիպի (2) | | |
| Ջին Թեյլոր | Gene Taylor (R-MS) | հանրապետ. |
| Բենի Թոմպսոն | Bennie Thompson (D-MS) | դեմոկրատ |
| Այդահո (1) | | |
| Մայք Սիմպսոն | Mike Simpson (R-ID) | հանրապետ. |
| Արևմտյան Վիրջինիա (1) | | |
| Նիք Ռահալ | Nick Rahall (D-WV) | դեմոկրատ |

Աղբյուրը՝ ԱՄՆ թուրքական կոալիցիա (Turkish Coalition of America)

Թուրքիայի հարցերով կոնգրեսականների մեջ կան մարդիկ, որոնք նաև հայկական կոնգրեսական հանձնախմբի անդամներ են: Կոնգրեսականների ներկայացվածությունը միաժամանակ երկու և ավելի լոբբիստական հանձնախմբերում պայմանավորված է երկու գլխավոր հանգամանքով. նախ՝ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամները, որոնց ընդհանուր թվաքանակը 435 է (օրենքով սահմանված կարգով՝ քվեարկող կոնգրեսականներ), եթե ներառված լինեին ընդամենը մի քանի կոնգրեսական լոբբիստական հանձնախմբերում, ապա Ներկայացուցիչների պալատի որոշումները կլինեին այդ խմբերի խիստ վերահսկողության ներքո: Երկրորդ՝ կոնգրեսականները, ներկայացված լինելով տարբեր հանձնախմբերում, իսկ ավելի հաճախ՝ այն խմբերում, որոնք միմյանց հետ կապված են լոբբիստական գործունեության նպատակներով (հայկական և թուրքական, հունական և թուրքական հանձնախմբեր և այլն), կարողանում են ԱՄՆ արտաքին կամ ներքին քաղաքականության խնդիրներում լինել առավել տեղեկացված և ճկուն իրենց փոխհարաբերություններում: Օրինակ, Ներկայացուցիչների պալատի անդամ, Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովարդ Բերմանը, որն ԱՄՆ հայկական կոնգրեսական հանձնախմբի անդամ է և կողմ է քվեարկել Ներկայացուցիչների պալատում Միացյալ Նահանգների կողմից ընդունված՝ հայերի դեմ իրականացված ցեղասպանությունը ճանաչող 252-րդ բանաձևին, միաժամանակ Թուրքիայի հարցերով կոնգրեսական հանձնախմբի և Ամերիկա-թուրքական միջխորհրդարանական խմբի անդամ է: Մյուս կողմից, չպետք է մոռանալ, որ Հովարդ Բերմանը ներկայացնում է նաև Կալիֆորնիայի նահանգը, որտեղ հայերն առավել շատ են: Ասել է թե՛ հայանպաստ քաղաքական և օրենսդիր գործունեություն իրականացնելու գործում մեծ է Կալիֆորնիայի հայության գործոնը, որից զգալիորեն կախված են նահանգային հաջորդ ընտրություններին Հովարդ Բերմանի հաջողությունները: Կամ, օրինակ, դեմոկրատ, Մասաչուսեթսի

նահանգը ներկայացնող Ուիլյամ Դելահանթը, որը հայակական ու թուրքական կոնգրեսական հանձնախմբերի անդամ է, 2010թ. փետրվարի սկզբին որոշում կայացրեց ընդգրկվելու հունական կոնգրեսական հանձնախմբի կազմում¹:

***Թուրքիայի հարցերով կոնգրեսական հետազոտական խումբ
(Congressional Study Group On Turkey)***

Միացյալ Նահանգներում թուրքական լոբբիի առաջնդման գործում զգալի ավանդ ունի նաև Կոնգրեսի նախկին անդամների ամերիկյան ասոցիացիա կազմակերպության շրջանակներում և Միացյալ Նահանգների Գերմանական Մարշալի հիմնադրամի աջակցությամբ 2005թ. հիմնադրված Թուրքիայի հարցերով կոնգրեսական հետազոտական խումբը²: Այն իրականացնում է Միացյալ Նահանգների և Թուրքիայի խորհրդարանների ու խորհրդարանականների ակտիվ համագործակցության ծրագիր՝ կանոնավոր կյոթ սեղանների և քննարկումների, Միացյալ Նահանգներում կամ այլ երկրներում տարեկան սեմինարների, ճանաչողական-հետազոտական նշանակության այցելությունների կազմակերպմամբ: ԱՄՆ-Թուրքիա տարեկան սեմինարները հնարավորություն են տալիս Կոնգրեսի անդամներին ստանալ ամփոփ տեղեկատվություն և վերլուծություն Միացյալ Նահանգների կարևոր դաշնակիցներից մեկի՝ Թուրքիայի մասին՝ այս կամ այն հարցի առնչությամբ: 2010թ. ԱՄՆ-Թուրքիա տարեկան 6-րդ սեմինարը նախատեսվում էր կազմակերպել 2010թ.

¹ Rep. William Delahunt joined Congressional Caucus on Hellenic Issues, 02 February 2010, <http://usa.greekreporter.com/2010/02/02/rep-william-delahunt-joined-the-congressional-caucus-on-hellenic-issues/>

² Կոնգրեսի նախկին անդամների ամերիկյան ասոցիացիան, որը հիմնադրվել է 1970թ.՝ որպես կրթական-հետազոտական և սոցիալական կազմակերպություն, զբաղվում է ԱՄՆ օրենսդիր իշխանության նախկին պաշտոնյաների՝ տարբեր հասարակական ծրագրերին ու նախաձեռնություններին ներգրավելու աշխատանքներով: Ասոցիացիան գործում է ԱՄՆ Կոնգրեսի իրավասությունների շրջանակներում, սակայն չի ֆինանսավորվում նրա կողմից: Ասոցիացիայի ենթակայության տակ գործում են մի քանի կոնգրեսական հետազոտական խմբեր՝ Գերմանիայի, Թուրքիայի, Ճապոնիայի և Մեքսիկայի խմբերը:

առաջին կիսամյակում, Վաշինգտոնում (նահանգ, որտեղ զգալի են թուրքական ներդրումները) և նվիրված էր լինելու երկկողմ ռազմավարական համագործակցության խնդիրներին, ինչպես նաև Միացյալ Նահանգներում թուրքական ներդրումներին ու էներգետիկային վերաբերող հարցերին:

Կոնգրեսական հետազոտական խումբը ներկայում ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում, որի աշխատանքներին ներգրավված են Ներկայացուցիչների պալատի երկու անդամներ, հետազոտական խմբի նախագահներ՝ նախկին կոնգրեսական Ռոբերտ Վեքսլերն (դեմոկրատ, Ֆլորիդա) ու Էդ Ուայթֆիլդը (հանրապետական, Քենթոքսի): Վերջինս նաև Թուրքիայի և Միացյալ Նահանգների թուրքական համայնքի հարցերով կոնգրեսական հանձնախմբի համանախագահն է և դրանով իսկ ակտիվ դերակատարում ունի թուրքական շահերը լոբբինգի ենթարկող երկու կազմակերպությունների համագործակցության համատեքստում: Հետազոտական խումբն ունի նաև փոխնախագահներ՝ Ներկայացուցիչների պալատի անդամներ Վիրջինիա Ֆոքսը և Թուրքիայի հարցերով կոնգրեսական խմբի համանախագահ Սթիվ Քոհենը: Հետազոտական խումբը գործունեություն է ծավալում նաև Թուրքիայի և Միացյալ Նահանգների կառավարությունների հետ կապերի հաստատման ու զարգացման հարցերում, ինչպես նաև երկու երկրների գործարար, ուղեղային կենտրոնների ու լրագրողական, գիտական, ակադեմիական շրջանակների հետ՝ անձնական և ինստիտուցիոնալ կապերի հաստատման և ամրապնդման հարցերում:

Հետազոտական խումբն աշխատանքների կազմակերպման և ուղղորդման գործում մեծ աջակցություն է ստանում Միացյալ Նահանգների Գերմանական Մարշալ հիմնադրամից (*German Marshall Fund of the United States*) և Թուրքիայի Տնտեսական քաղաքականության հետազոտության հիմնադրամից (*Economic Policy Research Foundation of Turkey-TEPAV*) տրամա-

դրվող դրամաշնորհներից և հավելյալ այլ աղբյուրներից: Հետագոտական խմբի սեմինարների անցկացման համար դրամաշնորհներ և ֆինանսական միջոցներ է հատկացնում նաև 2007թ. փետրվարին հիմնադրված Ամերիկայի թուրքական կոալիցիան (*The Turkish Coalition of America*), որն ակտիվորեն համագործակցում է Թուրքիայի հարցերով կոնգրեսական հանձնախմբի հետ¹: Այն հետագոտական խմբին տրամադրում է նաև ֆինանսական միջոցներ՝ կազմակերպելու կոնգրեսականների այցելությունները Թուրքիա: Վերջին տարիների կտրվածքով, սակայն, Ամերիկայի թուրքական կոալիցիան և այլ թուրքական կրթական-բարեգործական կազմակերպություններ, ոլորտում իրականացված ԱՄՆ վերջին օրենսդրական փոփոխությունների համաձայն, իրավասու չէին զբաղվելու քաղաքական գործունեությամբ: Արդյունքում՝ հիմնվեց ևս մեկ թուրքական լոբբիստական կազմակերպություն՝ ԱՄՆ թուրքական կոալիցիա Քաղաքական գործողությունների կոմիտեն (*TC-USA-PAC*), որը գործում է Ամերիկայի թուրքական կոալիցիայից անկախ²: Թուրքական քաղաքական գործողությունների կոմիտեն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ԱՄՆ քաղաքական (հիմնականում՝ կոնգրեսական) թեկնածուների ընտրություններին և աջակցում թուրքանպաստ մոտեցումներ ունեցող գործիչներին ու օրենսդիրներին: Կոմիտեն զգալի ներդրում ունի նաև ԱՄՆ նախագահի թեկնածուների ֆինանսավորման հարցում: Այն ակտիվ աջխատանք է տարել թուրքական համայնքների և կազմակերպությունների կողմից 2006թ. հունիսին Չիկագոյում ավելի քան \$105.000 հավաքագրելու գործում՝ աջակցելու համար դեմոկրատ թեկնածու Հիլարի Բլինթոնին³:

¹“The Turkish Coalition of America”.

<http://www.turkishcoalition.org/organization.html>.

²“Turkish Coalition USA Political Action Committee”,

<http://tc-usa-pac.org/>

³“American-Turks Organize On Political Arena”, 15 March 2007,

http://www.turkofamerica.com/index.php?Itemid=165&id=75&option=com_content&task=view

Ադրբեջանական լոբբի

ԱՄՆ-ում ադրբեջանական շահերի սատարմանը զգալի աջակցություն է ցուցաբերում Ադրբեջանի կառավարությունը: ԱՄՆ Արդարադատության նախարարության 2008թ. լոբբիստական գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունում նշվում է, որ *Chlopak, Leonard Schechter Associates* ընկերությունը Ադրբեջանի ԱԳՆ-ից ստացել է \$41,6 հազար՝ Միացյալ Նահանգներում հասարակայնության հետ կապերի ամրապնդման նպատակներով, իսկ *JWI* ընկերությունն Ադրբեջանի Միջազգային բանկից ստացել է \$167,8 հազար՝ ՋԼՄ-ի հետ կապերի զարգացման համար: *Livingstone Group* ընկերությունն այդ երկրի ԱԳՆ-ից ստացել է \$325 հազար՝ ԱՄՆ Կոնգրեսի անդամների հետ քաղաքական խորհրդակցությունների, ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների զարգացման և այլ միջոցառումների կազմակերպման նպատակներով¹: ԱՄՆ Արդարադատության նախարարության հաշվետվության համաձայն, 2008թ. Միացյալ Նահանգներում Ադրբեջանի դեսպանատունը *Melwood Communications* ընկերությանը փոխանցել է որոշակի գումար (չափը չի նշվում) Ադրբեջանի շահերին համապատասխան մեդիա-ռազմավարություն մշակելու նպատակով²: Իսկ Ադրբեջանի գլխավոր հյուպատոսությունը *Sitrick and Company* ընկերությանը տրամադրել է գրեթե \$8.9 հազար՝ Լոս Անջելեսի ՋԼՄ-ի հետ կապերի կազմակերպմանն աջակցելու նպատակով³:

ԱՄՆ-ում ադրբեջանական լոբբիի աշխատանքների կազմակերպման և ուղղորդման գործում զգալի է նաև Թուրքիայի կառավարության և ԱՄՆ թուրքական լոբբիստական կազմակերպությունների աջակցությունը: Միացյալ Նահանգներում

¹«Опубликован очередной отчет о лоббизме иностранных государств в США», Ноябрь 7, 2008г., <http://www.lobbying.com.ua/news/2008-11-07-40>.

²Американские лоббисты получили от Азербайджана более полумиллиона долларов, Март 17, 2009, <http://www.armtown.com/news/ru/pan/20090317/29542/>

³Նույն տեղում:

գործող թուրքական և ադրբեջանական լոբբիստական խմբերը, սերտ հարաբերություններ հաստատելով միմյանց և ԱՄՆ գործադիր ու օրենսդիր իշխանության պաշտոնյաների ու օրենսդիրների հետ, ակտիվ և հետևողական լոբբիստական քաղաքականություն էին իրականացնում ԱՄՆ հայության և ՀՀ-ի ու Արցախի դեմ:

Ադրբեջանական կոնգրեսական հանձնախումբ

ԱՄՆ Ադրբեջանի կոնգրեսական հանձնախումբը (*Congressional Azerbaijan Caucus-CAC*) հիմնադրվել է 2004թ. սկզբին կոնգրեսականներ Կուրտ Ուելդոնի (*Curt Weldon*, հանրապետական, Փենսիլվանիա) և Սոլոմոն Օրտիզի (*Solomon Ortiz*, դեմոկրատ, Տեխաս) կողմից, որոնք հանձնախմբի հիմնադիր համանախագահներն են: Կոնգրեսական Ուելդոնը գլխավորել է մի քանի պատվիրակությունների այցն Ադրբեջան և ակտիվորեն ներգրավվել ԱՄՆ-Ադրբեջան երկկողմ հարաբերությունների զարգացմանը: 2008թ. հուլիսի դրությամբ ադրբեջանական խումբն, ըստ ԱՄՆ ադրբեջանցիների համացանց կոչվող լոբբիստական կազմակերպության տվյալների, բաղկացած էր 42 կոնգրեսականից¹: Խմբի համանախագահներն են հանրապետականներ Սոլոմոն Օրտիզը և Բիլ Շուսթերը (*Bill Shuster*, Փենսիլվանիա): Ադրբեջանական կոնգրեսական հանձնախումբը կարևոր դերակատարություն է ունեցել Կոնգրեսում Կասպյան ավազանի էներգետիկայի և Հարավային Կովկասի աշխարհաքաղաքականության, ԱՄՆ-Ադրբեջան երկկողմ տնտեսական, անվտանգության և ռազմական համագործակցության զարգացման, ինչպես նաև ՀՀ-ին ու ԼՂՀ-ին վերաբերող հարցերի արծարծման ուղղությամբ: *Աղյուսակ 5.4-ում* ներկայացնում ենք ադրբեջանական հանձնախմբի անդամների ցուցակը 2008թ. հուլիսի դրությամբ՝ ըստ ԱՄՆ ադրբեջանցիների համացանցի տվյալների²:

¹ Այդ տվյալների համաձայն, ադրբեջանական կոնգրեսական հանձնախմբում ներառված է նաև նախկին կոնգրեսական Ռոբերտ Վեքսլերը, ուստի հանձնախմբի անդամների թիվը 41 է:

² <http://www.usazeris.org/congressional-azerbaijan-caucus.php>

Աղբբեջանական կոնգրեսական խմբի անդամները, 2008թ. հուլիս

| Լուիզիանա | | |
|-----------------------------|-----------------------|-----------|
| Ռոդնի Ալեքսանդր | Rodney Alexander | հանրապետ. |
| Հարավային Կարոլինա | | |
| Գրեշեմ Բարեթ | Gresham Barrett | հանրապետ. |
| Ջո Վիլսոն | Joe Wilson | հանրապետ. |
| Հենրի Բրաուն | Henry Brown, Jr. | հանրապետ. |
| Մերիլենդ | | |
| Ռոսքո Բարթլեթ | Roscoe Bartlett | հանրապետ. |
| Տեխաս | | |
| Ջո Բարթոն | Joe Barton | հանրապետ. |
| Մայքլ Քոնոլվեյ | Michael Conaway | հանրապետ. |
| Ջին Գրին | Gene Green | դեմոկրատ |
| Էդի Բեռնիս Ջոնսոն | Eddie Bernice Johnson | դեմոկրատ |
| Սոլոմոն Փ. Օրտիզ | Solomon P.Ortiz | դեմոկրատ |
| Սիլվեստր Ռեյես | Silvestre Reyes | դեմոկրատ |
| Փիթ Սեշնս | Pete Sessions | հանրապետ. |
| Արքանզաս | | |
| Ջոն Բուզման | John Boozman | հանրապետ. |
| Ֆլորիդա | | |
| Քորին Բրաուն | Corrine Brown | դեմոկրատ |
| Էլսի Լ. Հասթինգս | Alcee L. Hastings | դեմոկրատ |
| Ռոբերտ Վեքսլեր ¹ | Robert Wexler | դեմոկրատ |
| Նյու Յորք | | |
| Փիթեր Քինգ | Peter King | հանրապետ. |
| Էդոլֆուս Էդ Թոունս | Edolphus Ed Towns | դեմոկրատ |
| Նիդիա Վելասկես | Nydia Velazquez | դեմոկրատ |
| Ինդիանա | | |
| Դեն Բարթոն | Dan Burton | հանրապետ. |
| Թենեսի | | |
| Սթիվ Քոհեն | Steve Cohen | դեմոկրատ |
| Փենսիլվանիա | | |
| Ջոզեֆ Փիթս | Joseph Pitts | հանրապետ. |
| Թոդ Փլատս | Todd Platts | հանրապետ. |
| Էլիսոն Շվարց | Allyson Schwartz | դեմոկրատ |
| Բիլ Շուստեր | Bill Shuster | հանրապետ. |

¹Նախկին կոնգրեսական Ռոբերտ Վեքսլեր:

| Ամերիկյան Սամոա | | |
|-----------------------------|---------------------|-----------|
| Էնի Ֆալեոմավաեգա | Eni Faleomavaega | ղեմոկրատ |
| Կալիֆորնիա | | |
| Դարել Իսա | Darrell Issa | հանրապետ. |
| Դայան Վաթսոն | Diane Watson | ղեմոկրատ |
| Նյու Ջերսի | | |
| Ֆրենկ ԼոԲիոնդո | Frank LoBiondo | հանրապետ. |
| Հյուսիսային Կարոլինա | | |
| Վիրջինիա Ֆոքս | Virginia Foxx | հանրապետ. |
| Սյու Միրիկ | Sue Myrick | հանրապետ. |
| Հովարդ Բոբլ | Howard Coble | հանրապետ. |
| Օհայո | | |
| Թիմ Ռայան | Tim Ryan | ղեմոկրատ |
| Շան Շմիթ | Jean Schmidt | հանրապետ. |
| Քենթուքի | | |
| Էդ Ուայթֆիլդ | Ed Whitfield | հանրապետ. |
| Միսուրի | | |
| Թոդ Ակին | Todd Akin | հանրապետ. |
| Վիրջինիա | | |
| Ռոբերտ Ուիթման | Robert Wittmann | հանրապետ. |
| Ջիմ Մորան | Jim Moran | ղեմոկրատ |
| Մոնտանա | | |
| Դենիս Ռեհբերգ | Dennis Rehberg | հանրապետ. |
| Արևմտյան Վիրջինիա | | |
| Շելլի Մուր Բափիթոն | Shelly Moore Capito | հանրապետ. |
| Նիք Ռահալ | Nick Rahall | ղեմոկրատ |
| Օկլահոմա | | |
| Դեն Բորեն | Dan Boren | ղեմոկրատ |

Աղբյուրը՝ ԱՄՆ ադրբեջանցիների համացանց (U.S. Azeris Network, <http://www.usazeris.org/congressional-azerbaijan-caucus.php>)

Կոնգրեսի ադրբեջանական խումբը վերջին մի քանի տարիների կտրվածքով սկսել է ակտիվ լոբբիստական աշխատանք ծավալել այսպես կոչված «Խոջալուի դեպքերի» հարցի իրավաքաղաքական շահարկման ուղղությամբ, որն ադրբեջանցիների կողմից ակտիվանում է հատկապես յուրաքանչյուր տարվա փետրվարի 25-26-ին: Այսպես, 2008թ. փետրվարի 25-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի հերթական նիստի լսումների ժամանակ ադրբեջանական հանձնախմբի անդամ, հանրապետ-

տական Վիրջինիա Ֆոքսը (Հյուսիսային Կարոլինա), որը միաժամանակ թուրքական կոնգրեսական հանձնախմբի անդամ է, իր ելույթում (*Remembering The Tragedy of Khojaly*) կոչ արեց կոնգրեսականներին «Սոմալիի, Ռուանդայի, Բոսնիայի, Դարֆուրի իրադարձությունների կողքին լուսաբանել 1992թ. փետրվարի 25-26-ին տեղի ունեցած այսպես կոչված «Խոջալուի դեպքերը»: Կոնգրեսական Ֆոքսի՝ իրականությանը չհամապատասխանող բնորոշմամբ, «հայկական գորքերը ռուսական գորքերի աջակցությամբ քանդեցին Խոջալուն՝ դաժանաբար սպանելով 613 բնակչի...»¹:

Իսկ հաջորդ՝ 2009թ. փետրվարի 26-ին այսպես կոչված «Խոջալուի դեպքերի» հարցը ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում բարձրացրեց Թուրքիայի կոնգրեսական հանձնախմբի համանախագահ և ադրբեջանական կոնգրեսական հանձնախմբի անդամ Էդ Ուայթֆիլդը, որն իր ելույթում «այդ դեպքերը» որակեց որպես «մեծ ողբերգություն»²:

Վերջին շրջանում ԱՄՆ-ում տեղի թուրքական լոբբինգի աջակցությամբ ադրբեջանական լոբբիստական կազմակերպությունները հետևողական աշխատանքներ են իրականացնում նաև մեկ այլ՝ Ազատության աջակցման ակտի 907-րդ բանաձևի իրավական ուժի դադարեցման ուղղությամբ: 2009թ. հունիսի 15-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամներ Բիլ Շուսթերը, Էդի Բերնիս Ջոնսոնը և Սոլոմոն Օրտիզը նամակ հասցեագրեցին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հատկացումների հանձնաժողովի Պետական, արտաքին գործողությունների և այլ ծրագրերի ենթահանձնաժողովի նախագահ Նիտա Լովիին և ենթահանձնաժողովի անդամ Քեյ Գրենգերին, որտեղ հանդես էին գալիս Ադրբեջանին ԱՄՆ աջակցության հատկացման, ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների զարգացման հարցերի պաշտպանության օգտին: Նամակում համահեղինակները

¹ The House Of Representatives, Congressional Record—Extensions of Remarks, Remembering The Tragedy Of Khojaly, Virginia Fox, February 25, 2008.

² The House Of Representatives, Congressional Record—Extensions of Remarks, Ed. Whitfield, February 26, 2009.

նշում էին, որ «չնայած 2002թ. Արտաքին գործողությունների համար հատկացումների ակտը ապահովում է ԱՄՆ նախագահի իրավասությունը՝ տարեկան հիմունքով մերժելու 907-րդ բանաձևը, այնուհանդերձ, այժմ ժամանակն է դադարեցնել 907-րդ բանաձևի իրավական ուժը, ինչը թույլ կտա չեղյալացնել ԱՄՆ-Ադրբեջան երկկողմ հարաբերությունների ամրապնդման գործընթացը կանխարգելող կարևոր խոչընդոտները»¹: Նամակի համահեղինակների բնորոշմամբ, «Նախագահ Օբամայի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկն իսլամական աշխարհի հետ ԱՄՆ հարաբերությունների ամրապնդումն է: Որպես Միացյալ Նահանգների վստահելի դաշնակից, որը դաշնակցում է այնպիսի առանցքային ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկ անվտանգությունն ու միջազգային ահաբեկչության դեմ պատերազմը, Ադրբեջանը պետք է լինի իսլամական ժողովուրդների շարքում առաջիններից մեկը, որի հետ ձգտում ենք ուժեղացնել մեր հարաբերությունները»²: Կոնգրեսականներն իրենց նամակում կարևորում էին Ադրբեջանի աշխարհագրական դիրքն Աֆղանստանում ամերիկյան գործողությունների արդյունավետության բարձրացման տեսանկյունից՝ «Ադրբեջանի ռազմավարական աշխարհագրական դիրքն աստիճանաբար մեծ կարևորություն է ներկայացնում Աֆղանստանում իրականացվող գործողությունների աջակցման առումով»: Ըստ նրանց՝ «2009թ. մարտի 17-ին ԱՄՆ Տրանսպորտային հաղորդակցությունների հրամանատարության ղեկավար, գեներալ Դունքան ՄաքՆեբը ԱՄՆ Սենատի Ռազմական ծառայությունների հանձնաժողովում հաստատեց, որ 2009թ. հիմնադրելով Հյուսիսային բաշխման համացանցը՝ Կովկասի և Կենտրոնական Ասիայի միջով դեպի Աֆղանստան տանող այլընտրանքային ուղիները դարձել են խիստ գերակայական»³: Նշենք, որ Հյուսիսային բաշխման համացանցում (*Northern Distribution Network*) ընդգրկված

¹ Congress of The United States, Letter To The Chairwoman Of Subcommittee on State, Foreign Operations and Related Programs, Nita Lowey, From Bill Shuster, Eddie Bernice Johnson, Solomon Ortiz, Members Of Congress, June 15, 2009.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

երկրներն են Լատվիան, Ադրբեջանը, Վրաստանը, Ղազախստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը: Կոնգրեսականները նաև կոչ էին անում Պետական, արտաքին գործողությունների և այլ ծրագրերի ենթահանձնաժողովի նախագահին ու ենթահանձնաժողովի կոնգրեսականներին Ադրբեջանին հատկացնել հավելյալ ռազմական ֆինանսավորում, իսկ ԼՂՀ-ին տրամադրվող ԱՄՆ տարեկան հումանիտար աջակցությունում ներառել նաև այսպես կոչված «ադրբեջանական փախստականներին ու ներքին տեղահանվածներին»:

***Այլ ազդեցիկ լոբբիստական կոնգրեսական
խմբեր. հունական լոբբի***

Որոշ տվյալներով՝ Միացյալ Նահանգներում բնակվում է ավելի քան 2 մլն հույն: ԱՄՆ-ում հունական շահերը պաշտպանում են մի շարք հունական լոբբիստական կազմակերպություններ, որոնցից են Ամերիկա-հունական առաջադիմական լուսավորչական կազմակերպությունը (*AHEPA*), Միացյալ հունա-ամերիկյան կոնգրեսը (*AHC*), Հունա-ամերիկյան միությունը (*AHA*) և այլն: ԱՄՆ հունական լոբբիստական կազմակերպությունների կազմակերպչական և կոորդինացիոն աշխատանքներն իրականացնում է Ամերիկյան հելլենական ինստիտուտը (*American Hellenic Institute*): Նշյալ լոբբիստական կազմակերպությունների հիմնական նպատակներն են ԱՄՆ հունական համայնքների ազգային ինքնության պահպանումը, Միացյալ Նահանգներում Հունաստանի շահերին սատարելը, ԱՄՆ-Հունաստան հարաբերությունների ամրապնդումն ու զարգացումը և այլն:

Ամերիկյան հելլենական ինստիտուտը հիմնադրվել է 1974թ., սկզբնական շրջանում այն հիմնականում զբաղվում էր Կիպրոսի հիմնախնդրով՝ նպաստելով Միացյալ Նահանգների օրենսդիր և գործադիր իշխանությունում Թուրքիայի նկատմամբ քաղաքական և իրավական ճնշումների բանեցմանը, որոնք կարգելեին պաշտոնական Անկարային հարձակողական նպատակ-

ներով օգտագործել ԱՄՆ-ից մատակարարվող զինամթերքն ու ռազմական սարքավորումները: Երկարատև լոբբիստական աշխատանքների արդյունքում ինստիտուտին հաջողվեց ստանալ ԱՄՆ Կոնգրեսի հավանությունն այն օրենքի ընդունման հարցում, որն արգելք էր դնում Թուրքիային ԱՄՆ ռազմամթերքի մատակարարումների հարցում (1974թ.): Ամերիկայի հելլենական ինստիտուտի գործունեության ձեռքբերումների մեջ առանձնացվում է նաև 1995թ. ԱՄՆ դրամաշնորհային (սուբսիդային) տնտեսական աջակցության բացառումը Թուրքիային, ինչպես և Թուրքիայի դեմ այլ ճնշումների աջակցման քայլերը:

ԱՄՆ հունական լոբբինգի զգալի ռեսուրսների մասին է վկայում այն, որ 2008թ. նախընտրական մրցապայքարում ԱՄՆ նախագահի թեկնածուները ձգտում էին ազդեցություն ունենալ երկրի հունական համայնքի վրա՝ վերջինիս ներկայացուցիչների քվեները ստանալու ակնկալիքով: Պատահական չէր, որ 2008թ. սկզբներին Վաշինգտոնում կազմակերպվեց հունա-կիպրական նստաշրջան, որտեղ օրակարգ էին մտցվել հունական շահերին առնչվող խնդիրներ: Հունական լոբբիստական կազմակերպություններն իրենց հերթին են ֆինանսական աջակցություն ցուցաբերել նախագահ Օբամայի և պետքարտուղար Հ.Թրիթանի նախընտրական արշավին:

Հունական լոբբին ակտիվորեն համագործակցում է Միացյալ Նահանգների այլ ազդեցիկ լոբբիստական խմբերի և կազմակերպությունների հետ: Բավական արդյունավետ է հայհունական լոբբիստական խմբերի համագործակցությունն այնպիսի խնդիրների շուրջ, ինչպիսին են հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչումը, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական շրջափակման վերացումը, Կիպրոսի խնդիրը և այլն: Ինչպես նկատում են փորձագետներից շատերը, ԱՄՆ ազդեցիկ երկու էթնիկ լոբբիների համագործակցությունը խթանեց հրեական և թուրքական լոբբիստական խմբերի համագործակցության խորացումը:

ԱՄՆ-ում հունական շահերին սատարում է Կոնգրեսի հունական հանձնախումբը: Համանախագահներն են ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամներ Քարոլին Մելոնին և Գաս Բիլիրակիսը, ունի 149 անդամ (2010թ. փետրվարի 16-ի դրությամբ) և Միացյալ Նահանգների էթնիկ լոբբիստական ազդեցիկ կոնգրեսական խմբերից է¹: Կոնգրեսական խումբը հիմնադրվել է 1996թ. Քարոլին Մելոնիի և նախկին կոնգրեսական Մայքլ Բիլիրակիսի կողմից: Հունական կոնգրեսական հանձնախմբի համանախագահներից մեկը՝ Գաս Բիլիրակիսը, նաև հայկական կոնգրեսական հանձնախմբի անդամ է և Ներկայացուցիչների պալատի այն անդամներից է, որոնք աչքի են ընկել իրենց հայանպաստ որոշումներով և մոտեցումներով և հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման հարցի ջատագովներն են: Այդ կոնգրեսականներից կարելի է առանձնացնել Մարկ Քիրքին, Ջիմ Կոստային, Նենսի Փելոսիին, Գարի Աքերմանին, Դեն Լիպինսկիին, Ֆրենկ Փալոնեին, Ջորջ Ռադանովիչին և այլոց: Հունական կոնգրեսական հանձնախմբում, սակայն, կան այնպիսի կոնգրեսականներ, որոնք նաև թուրքական կոնգրեսական հանձնախմբում են, օր.՝ Էդ Ուայթֆիլդը, Ռաս Քարնահանը և այլք:

ԱՄՆ հունական համայնքի, նրա ազդեցիկ լոբբիստական կազմակերպությունների և անհատ լոբբիստների, ինչպես նաև ԱՄՆ Կոնգրեսի հունական հանձնախմբի ակտիվիստների ջանքերի շնորհիվ ԱՄՆ Կոնգրեսում մինչ օրս բարձրացվել են ավելի քան վեց տասնյակ, ընդունվել ավելի քան տասնյակ որոշումներ կամ բանաձևեր, որոնք առնչվել են ԱՄՆ-Հունաստան, Հունաստան-Թուրքիա հարաբերություններին և Կիպրոսի հիմնախնդրին: 110-րդ Կոնգրեսի օրենսդրական որոշումների և բանաձևերի մեջ կարելի է առանձնացնել Ներկայացուցիչների պալատ ներկայացված 620-րդ բանաձևը Թուրքիայի կողմից Կիպ-

¹ “Report On Hellenic Issues. Congressional Caucus On Hellenic Issues_History And Accomplishments”, February 16, 2010.

րոսի Հանրապետության 34-ամյա ռազմական օկուպացիային վերջ տալու մասին: Բանաձևը ներկայացվել էր Ներկայացուցիչների պալատի կոնգրեսական, դեմոկրատ Ալբիո Սիրեսի կողմից և արժանացել 64 կոնգրեսականների հավանությանը (Գարի Աքերման, Ռոբերտ Անդրյուս, Գաս Բիլիրակիս, Ադամ Շիֆ, Ֆրենկ Փալոնե, Ջոու Նոլենբերգ և այլք): Նրանց մեջ էր նաև ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ, դեմոկրատ Ռաս Քարնահանը, որն, ի դեպ, Թուրքիայի հարցերով կոնգրեսական հանձնախմբի անդամ է և դեմ է քվեարկել հայերի դեմ իրագործված ցեղասպանության ճանաչման 252-րդ բանաձևին:

Հրեական լոբբի

Միացյալ Նահանգներում գործող ազդեցիկ էթնիկ լոբբիստական խմբերի և կազմակերպությունների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հրեական լոբբին: Պատահական չէ, որ մասնագետներից շատերն այն դասում են Միացյալ Նահանգների այնպիսի ազդեցիկ ու խոշորագույն լոբբիստական խմբերի և կազմակերպությունների շարքին, ինչպիսիք են Ջենքի ազգային ասոցիացիան և Թոշակառուների ամերիկյան ասոցիացիան: Միացյալ Նահանգներում հրեական լոբբիստական առաջատար կազմակերպություններից է Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտեն կամ ԱՄՆ իսրայելամետ լոբբին (*The American Israel Public Affairs Committee-AIPAC*), որը լոբբինգ է իրականացնում ԱՄՆ ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր իշխանությունում: Հրեական կոմիտեն համակարգում է Միացյալ Նահանգներում իրականացվող հրեական լոբբին:

Կոմիտեի ներկայիս նախագահն է Դավիթ Վիկտորը (Միչիգան), այն անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն է և ֆինանսավորվում է իր անդամների հատկացրած միջոցներից: Ամերիկա-իսրայելյան հասարակական հարցերով կոմի-

տեին անդամակցում են Միացյալ Նահանգների թե՛ դեմոկրատ և թե՛ հանրապետական պաշտոնյաներ, ինչպես նաև անկուսակցական քաղաքական գործիչներ: Հրեական կոմիտեն ստեղծվել է ԱՄՆ սիոնիստական խորհրդի (*American Zionist Council*) հիմքի վրա, որն իր հերթին ձևավորվել է 1949թ.՝ նորաստեղծ հրեական պետությանը Միացյալ Նահանգների կառավարության կողմից քաղաքական ու ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով: Հրեական կոմիտեն ստեղծվել է Իսայահ Լեո Քենենի կողմից, որը 1954թ. հիմնադրեց Ամերիկյան սիոնիստական հասարակական կոմիտեն Ամերիկյան սիոնիստական խորհրդի կազմում՝ որպես լոբբիստական բաժին, որը և 1959թ. վերանվանվեց Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտե¹: Կոմիտեի ձևավորումը կապված էր Միացյալ Նահանգների կառավարության կողմից նորաստեղծ հրեական պետությանն աջակցելու, ԱՄՆ-Իսրայել տնտեսական, քաղաքական և ռազմական կապեր հաստատելու և զարգացնելու, Մերձավոր Արևելքում ԱՄՆ արտաքին քաղաքականության խնդիրներն իրագործելու հետ:

Հրեական կոմիտեն, սակայն, ԱՄՆ Կոնգրեսում կայացվող որոշումների գործընթացի վրա սկսեց զգալի ազդեցություն ունենալ միայն 1970-ական թթ. կեսերից: Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտեի ջանքերի շնորհիվ Իսրայելը Երկրորդ աշխարհամարտից հետո ԱՄՆ արտաքին ֆինանսական ամենախոշոր աջակցությունն ստացած պետությունն է: Կոնգրեսի հետազոտական ծառայության 2009թ. զեկույցի համաձայն, 1949-2009թթ. Իսրայելը Միացյալ Նահանգներից ստացել է ավելի քան \$106 մլրդ ֆինանսական աջակցություն, որի զգալի մասը կազմել է ռազմական աջակցությունը (*Աղյուսակ 5.5*): Տարբեր գնահատականներով՝ Իսրայել պետությունն ԱՄՆ-ից տարեկան միջին հաշվարկով ստանում է մինչև

¹ 1951-1953թթ. Քենենը Ամերիկյան սիոնիստական խորհրդի ներկայացուցիչն էր Վաշինգտոնում:

² Congressional Research Service. “U.S. Foreign Aid To Israel”, Jeremy M. Sharp, December 4, 2009.

\$3 մլրդ ֆինանսական աջակցություն. նշենք, որ Միացյալ Նահանգները տարբեր երկրների ընդհանուր առմամբ տարեկան միջինը \$18 մլրդ-ի ֆինանսական աջակցություն է հատկացնում:

Աղյուսակ 5.5

ԱՄՆ ֆինանսական աջակցությունն Իսրայելին (\$ մլն), Կոնգրեսի հետազոտական ծառայության 2008թ. զեկույցի տվյալներով

| Տարի | Ընդհանուր | Ռազմական | Տնտեսական | Գաղթի | ԱՂԶ ¹ | Այլ |
|--------------|------------------|-----------------|-----------------|----------------|------------------|-----------------|
| 1949-1996 | 68,030.9 | 29,014.9 | 23,122.4 | 868.9 | 121.4 | 14,903.3 |
| 1997 | 3,132.1 | 1,800.0 | 1,200.0 | 80.0 | 2.1 | 50.0 |
| 1998 | 3,080.0 | 1,800.0 | 1,200.0 | 80.0 | ? | ? |
| 1999 | 3,010.0 | 1,860.0 | 1,080.0 | 70.0 | ? | ? |
| 2000 | 4,131.85 | 3,120.0 | 949.1 | 60.0 | 2.75 | ? |
| 2001 | 2,876.05 | 1,975.6 | 838.2 | 60.0 | 2.25 | ? |
| 2002 | 2,850.65 | 2,040.0 | 720.0 | 60.0 | 2.65 | 28.0 |
| 2003 | 3,745.15 | 3,086.4 | 596.1 | 59.6 | 3.05 | ? |
| 2004 | 2,687.25 | 2,147.3 | 477.2 | 49.7 | 3.15 | 9.9 |
| 2005 | 2,612.15 | 2,202.2 | 357.0 | 50.0 | 2.95 | ? |
| 2006 | 2,534.5 | 2,257.0 | 237.0 | 40.0 | ? | 0.5 |
| 2007 | 2,500.2 | 2,340.0 | 120.0 | 40.0 | ? | 0.2 |
| Ընդհ. | 101,190.8 | 53,643.4 | 30,897.0 | 1,518.2 | 140.3 | 14,991.9 |

Ֆինանսական խոշոր աջակցություն հատկացնելուց բացի, ԱՄՆ-ը զգալի քաղաքական աջակցություն է ցուցաբերում Իսրայելին, որում մեծ ավանդ ունի առաջին հերթին Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտեն: 1972-2006թթ. ԱՄՆ-ը վետոտ է դրել ՄԱԿ-ում Իսրայելին քննադատող 42 բանաձևերի վրա²: Տարբեր տվյալներով՝ կոմիտեն տարեկան ներգրավվում է Միացյալ Նահանգների շուրջ 100 օրենսդրական և

¹ «Ամերիկյան դպրոցներ և հիվանդանոցներ» դրամաշնորհ:

² Этнические лобби в США, Евгений ИВАНОВ 20.01.2010, http://www.armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=20469.

քաղաքական նախաձեռնություններում, որոնք վերաբերում են Մերձավոր Արևելքում ԱՄՆ արտաքին քաղաքականության հարցերին և ԱՄՆ-Իսրայել ռազմավարական հարաբերությունների զարգացմանը:

Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտեի 2002թ. տարեկան գիտաժողովին ներկա էին 50 սենատոր և Ներկայացուցիչների պալատի 190 անդամ: Կոմիտեն ակտիվ գործունեություն է ծավալում նաև ԱՄՆ և Իսրայելի գործադիր ու օրենսդիր իշխանության բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումների կազմակերպման և կապերի ամրապնդման ուղղությամբ: Հրեական կոմիտեն, որոշ տվյալների համաձայն, կոորդինացնում և գլխավորում է Միացյալ Նահանգներում գործող ավելի քան 7 տասնյակ հրեական լոբբիստական խմբերի և կազմակերպությունների աշխատանքը: Այն ներկայում ակտիվ լոբբիստական գործունեություն է իրականացնում աֆղանական (նախկինում՝ նաև իրաքյան) ռազմական կամպանիայի, «Հեգբոլլահ» շարժման և Իրանի միջուկային ծրագրի շուրջ զարգացումներում:

ԱՄՆ-ում գործող երկրորդ հրեական խոշոր լոբբիստական կոորդինացնող կազմակերպությունը Ամերիկա-հրեական խոշոր կազմակերպությունների նախագահների գիտաժողովն է (*Conference of Presidents of Major American Jewish Organizations*): Գիտաժողովն ԱՄՆ հրեության կոորդինացիոն կենտրոնական կազմակերպությունն է, ընդգրկում է 52 հրեական գործակալություններ ու կազմակերպություններ¹: Գիտաժողովի կազմակերպություններից են նաև Ամերիկա-հրեական հասարակական հարցերով կոմիտեն, 1913թ. ստեղծված Հակազրպարտման լիգան (*Anti-Defamation League*), ինչպես նաև 1897թ. հիմնադրված ԱՄՆ սիոնիստական կազմակերպությունը: Գիտաժողովի գլխավոր նպատակներից են ԱՄՆ-Իսրայել հարաբերություններ-

¹ Conference of Presidents of Major American Jewish Organizations, <http://www.conferenceofpresidents.org/content.asp?id=55>

րի խորացումը, ԱՄՆ օրենսդիր և գործադիր իշխանության շրջանակներում Իսրայել պետության և ԱՄՆ հրեական համայնքների շահերի պաշտպանությունը, համայն հրեության անվտանգության ապահովումը:

2006թ. հուլիսի 27-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում հիմնվեց մեկ այլ լոբբիստական կազմակերպություն՝ Իսրայելի դաշնակիցների խումբը (*Israel Allies Caucus*), որտեղ ներգրավվեցին ԱՄՆ-Իսրայել հարաբերությունների ամրապնդման, Միացյալ Նահանգներում իսրայելամետ որոշումների ու նախաձեռնությունների կողմնակից կոնգրեսականներ: Լոբբիստական այս խմբի հիմնադիր անդամներն են Դեյվ Ուելդոնը (հանրապետական, Ֆլորիդա), Էլիոթ Էնգելը (դեմոկրատ, Նյու Յորք), Թրենթ Ֆրենքսը (հանրապետական, Արիզոնա) և Գենե Գրինը (դեմոկրատ, Տեխաս)¹:

«Center for Responsive Politics» կենտրոնի տրամադրած տվյալների համաձայն, 2009թ. Միացյալ Նահանգներում Իսրայել պետության շահերը լոբբինգի ենթարկելու գործում 10 ընկերություններ հատկացրել են ընդհանուր առմամբ տարեկան \$3.650.488 միջոցներ: Այդ հատկացումների մեծ մասը՝ \$2.769.721, ստացվել է Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտեից, \$299.900-ը՝ Ամերիկայի սիոնիստական կազմակերպությունից²:

Հնդկական կոնգրեսական հանձնախումբը

ԱՄՆ Կոնգրեսի աշխատանքներին ներգրավված կոնգրեսական լոբբիստական ազդեցիկ խմբերից է նաև Հնդկաստանի և ԱՄՆ հնդիկների հարցերով կոնգրեսական հանձնախումբը: Այն ձևավորվել է 1993թ. դեմոկրատ Ֆրենկ Փալոնեի (Նյու Ջերսի) և

¹ International Israel Allies Caucus Foundation (IIACF),

<http://www.iiacf.org/index.php/site/about/>

² «Center for Responsive Politics», Annual Pro-Israel Lobby,

<http://www.opensecrets.org/lobby/indusclient.php?lname=Q05&year=2009>

հանրապետական Բիլ ՄաքՔոլումի (Ֆլորիդա) կողմից: 2009թ. ապրիլի 21-ի դրությամբ կոնգրեսական հանձնախումբը ներառում էր 152 կոնգրեսականների և ԱՄՆ Կոնգրեսում ներգրավված կոնգրեսական լոբբիստական խոշոր խմբերից էր: Ընդգրկված ներկայացուցիչների մեծամասնությունը՝ 107 անդամ, հարում է դեմոկրատական կուսակցությանը, մնացյալ 45 կոնգրեսականները՝ հանրապետական են¹: Հնդկաստանի և ԱՄՆ հնդիկների կոնգրեսական հանձնախումբն ակտիվ լոբբիստական գործունեություն է ծավալում ԱՄՆ Կոնգրեսում, այնպիսի հարցերում, ինչպիսիք են ահաբեկչության դեմ պայքարը, Հնդկաստան-Պակիստան հարաբերությունները, ԱՄՆ-Հնդկաստան երկկողմ կապերի ամրապնդումն ու Միացյալ Նահանգներում բնակվող հնդիկների շահերի պաշտպանությունը: Հնդկաստանի հարցերով կոնգրեսական հանձնախումբն ակտիվ է ինչպես ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում, այնպես էլ Սենատում: Խումբն ընդգրկում է ԱՄՆ Սենատի 37 անդամների (2009թ. օգոստոսի դրությամբ)²:

Վրաստանն ակտիվացնում է լոբբինգն ԱՄՆ-ում

Միացյալ Նահանգների օրենսդիր և գործադիր իշխանությունում իր լոբբիստական գործունեությունն էապես ակտիվացրել է Վրաստանի կառավարությունը, հատկապես 2003թ. «վարդերի հեղափոխությունից» հետո, երբ իշխանության եկած նոր ուժերը սկսեցին ակտիվ համագործակցել պաշտոնական Վաշինգտոնի հետ: Ընդ որում, գալով իշխանության՝ Վրաստանի գործող դեկավարությունը՝ ի դեմս նախագահ Մ.Սահակաշվիլու, որդեգրեց բավական կոշտ հակառուսական քաղաքականություն, ինչը և արտացոլվեց ԱՄՆ-ում Վրաստանի շահերի լոբբիստական գործընթացներում: Այդ գործունեությունն էլ ավելի ակտի-

¹ Կոնգրեսական խմբի անդամների ամբողջական ցուցակին կարող եք ծանոթանալ <http://www.usindiafriendship.net/congress1/housecaucus/members.htm> կայքում:

² <http://www.usindiafriendship.net/congress1/senatecaucus/members.htm>

վացավ հատկապես 2008թ. օգոստոսյան վրաց-հարավօսական պատերազմից հետո:

Վրաստանի կառավարությունը սկսեց օգտվել *Gephardt Group* ընկերության լոբբիստական ծառայություններից: 2010թ. հունվարին Վրաստանը տարեկան \$440.000-ի պայմանագիր ստորագրեց Ռիչարդ Գեֆարդի հետ՝ ԱՄՆ Կոնգրեսում և գործադիր իշխանությունում Վրաստանի շահերը պաշտպանելու համար: Վրաստանի կառավարությունը վերջին շրջանում սկսել է համագործակցել նաև մեկ այլ հեղինակավոր լոբբիստական կազմակերպություններից մեկի՝ *Podesta Group* ընկերության հետ: Ընկերությունը հիմնադրվել է 1988թ. Ջոն և Թոնի Փոդեստա եղբայրների կողմից: Լոբբիստական այս կազմակերպությունը համագործակցում է ԱՄՆ կորպորացիաների, ասոցիացիաների և այլ երկրների կառավարությունների հետ: Ընկերության զեկույցի համաձայն, վերջինս 2008թ. լոբբիստական գործունեությունից ստացել է \$16 մլն եկամուտ: 2007թ. Թոնի Փոդեստան Վաշինգտոնի երրորդ ազդեցիկ լոբբիստն էր, իսկ Ջոն Փոդեստան՝ նախագահ Օբամայի նախընտրական արշավի առանցքային դեմքերից մեկը: 2010թ. հունվարին Վրաստանի կառավարությունը *Podesta Group* լոբբիստական կազմակերպության հետ \$300.000 արժողությամբ կես տարվա պայմանագիր ստորագրեց, որի համաձայն, ընկերությունը Վրաստանի կառավարությանը պետք է ապահովեր լոբբինգով, կառավարական կապերով և հասարակական հարաբերությունների հաստատմամբ, ինչպես նաև լրատվական կառավարման ծառայություններով և կոնգրեսականների ու գործադիր իշխանության պաշտոնյաների հետ համապատասխան հանդիպումների կազմակերպմամբ¹:

Վրաստանի իշխանությունները համագործակցում են նաև 1988թ. հիմնադրված *Public Strategies* գործարար-խորհրդատվական լոբբիստական կազմակերպության հետ, որը մասնագիտա-

¹ Georgia Hires Podesta Lobbying Firm, 8 Mar.'10, <http://www.civil.ge/eng/article.php?id=22061>

ցած է օրենսդրական հարցերի նախաձեռնման ու կառավարման, կառավարական հարաբերությունների զարգացման, քաղաքական գործողությունների հանձնաժողովների կառավարման, լրատվամիջոցների հետ կապերի հաստատման և այլ ոլորտներում: 2009թ. սկզբներին Վրաստանի կառավարությունը կես տարի ժամկետով \$300.000 արժողությամբ պայմանագիր ստորագրեց այս լոբբիստական ընկերության հետ: Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն, ընկերությունը պարտավորվեց ապահովել Վրաստանի կառավարությանը լրատվական և հասարակական հարաբերությունների խորհրդատվությամբ՝ ուժեղացնելու «Վրաստանի կառավարության հեղինակությունը»¹: *Public Strategies* ընկերությունում Վրաստանի հարցերով զբաղվելու էին ԱՄՆ դեմոկրատական կուսակցության որոշ ազդեցիկ ներկայացուցիչներ՝ Ջեֆ Էլլերը (*Jeff Eller*), որը նախագահ Բ.Քլինթոնի ժամանակ ղեկավարում էր Սպիտակ տան՝ ՋԼՄ-ի հետ կապերը, Ռոբերտ Լյուդկեն (*Robert Ludke*)՝ բյուջետային ու հարկային հարցերով դեմոկրատական կուսակցության նախկին վերլուծաբանը:

Վրաստանի կառավարությունը ԱՄՆ Կոնգրեսում և գործադիր իշխանությունում իր շահերը լոբբինգի ենթարկելու նպատակներով համագործակցում է երկու խորհրդականների՝ Գրեգորի Մանիատիսի և Դանիել Կունինի հետ, որոնք նախագահ Սահակաշվիլու խորհրդականներն են եղել մի քանի տարի շարունակ: Նրանց հետ ստորագրված պայմանագիրն արժե \$470.000², որով նախատեսվում է Վրաստանի արտաքին քաղաքականությունում և, առաջին հերթին, Միացյալ Նահանգների հետ հարաբերություններում ապահովել երկրի կառավարությանը ռազմավարության և հաղորդակցությունների խորհրդատվությամբ:

¹ Georgia Hires Lobbying, PR Firms in Washington, 21 Mar. '09
<http://www.civil.ge/eng/article.php?id=20591>

² Նույն տեղում:

Վրաստանի կառավարությունը 2008թ. օգոստոսին \$320.000 արժողությամբ պայմանագիր է ստորագրել ռազմավարական հաղորդակցությունների ոլորտում մասնագիտացած մեկ այլ ազդեցիկ լոբբիստական կազմակերպության՝ *Glover Park Group* ընկերության հետ: Վրաստանի հետ ընկերության համագործակցության նպատակներից մեկն էլ ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցի լոբբիստական աջակցումն էր: 2009թ. ընկերությունը լոբբիստական գործունեությունից ստացել է տարեկան \$4.410.000 եկամուտ, նրա լոբբիստական ծառայություններից օգտվել են «Կոկա-կոլա» ընկերությունը, «Ամերիկյան բանկիրների ասոցիացիան» և այլն¹:

Պաշտոնական Թբիլիսիի հետ լոբբիստական ոլորտում հաստատված համագործակցությունում ավանդական գործընկերներից է *Orion Strategies* ընկերությունը, որը 2008թ. Վրաստանի կառավարությունից ստացել էր \$150.000՝ Վրաստանի շահերին սատարելու համար: 2004թ. ի վեր ընկերությունը Վրաստանի կառավարությունից ստացել է \$800.000 ֆինանսական հատկացումներ: Սահակաշվիլին Վրաստանի շահերն ԱՄՆ օրենսդիր և գործադիր իշխանությունում լոբբինգի ենթարկելու հարցում վստահում է նաև հայտնի լոբբիստ Ռենդի Շյունեմանին (*Randy Scheunemann*) և նրա հետ անձնական կապեր է հաստատել: Վերջինս ԱՄՆ նախագահի հանրապետական թեկնածու Ջոն ՄաքՔեյնի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդականն էր: Վրաստանի կառավարությունը ոլորտում համագործակցային կապեր է հաստատել նաև *Chlopak, Leonard Schechter Associates* ընկերության հետ:

ԱՄՆ-ում վրացական լոբբիստական գործունեության ակտիվացմանը զուգահեռ ուժեղացել է նաև Ռուսաստանի լոբբինգը, որը հիմնականում կրում է հակավրացական ուղղվածություն: ԱՄՆ Արդարադատության նախարարության՝ լոբբիստա-

¹ Glover Park Group,
<http://www.opensecrets.org/lobby/firmsum.php?lname=Glover+Park+Group&year=2009>

կան կազմակերպությունների գործունեության 2008թ. տարեկան հաշվետվության համաձայն, 2008թ. առաջին վեց ամիսներին ՌԴ կառավարությունը հաղորդակցությունների գծով մասնագիտացած *Ketchum* հեղինակավոր լոբբիստական կազմակերպությանը հատկացրել է \$2.436.000՝ «Մեծ ութնյակում» որպես նախագահող ՌԴ դերի քարոզման նպատակով: Ստորագրված պայմանագիրը նախատեսում էր նաև ընկերության կողմից բազմակողմանի հաղորդակցությունների ապահովում՝ լրագրողների և քաղաքական գործիչների հանդիպումների կազմակերպում, տեղեկատվական նյութերի պատրաստում և այլն: ՌԴ կառավարությունը պայմանագիր է ստորագրել մեկ այլ լոբբիստական ընկերության՝ *Integrated Solutions Group* կազմակերպության հետ՝ լոբբինգի և կառավարական հարաբերությունների զարգացման նպատակով (պայմանագրի արժեքը չի նշվում):

ԱՄՆ և Կանադայի հայ բողոքական համայնքները

Տասնամյակների ընթացքում Սփյուռքում Հայ բողոքական զանազան համայնքներ են ձևավորվել: Դրանց թվում կարևոր տեղ են զբաղեցնում ԱՄՆ և Կանադայի հայ բողոքական համայնքները: Դրանք կարևոր դեր ունեն ԱՄՆ և Կանադայի հայության կյանքում ընդհանրապես և հոգևոր, կրթական, մշակութային, հասարակական ոլորտներում՝ մասնավորապես:

ԱՄՆ և Կանադայի հայ բողոքական եկեղեցիներն ընդգրկված են Հյուսիսային Ամերիկայի Հայ ավետարանական միության (*Armenian Evangelical Union of North America*) մեջ: Այս միությունը հիմնադրվել է 1971թ. Դեթրոյթ քաղաքում: Հյուսիսային Ամերիկայում ցրված Հայ Ավետարանական եկեղեցիները 20-րդ դարի սկզբին ստեղծել էին 2 միություն: 1901թ. կազմավորվեց ԱՄՆ Արևելյան նահանգների միությունը (որը ներառում էր նաև Կանադայի հայ ավետարանականներին), իսկ 1908թ.՝ Կալիֆորնիայի Հայ ավետարանական միությունը: Մակայն հետագայում առավել կազմակերպված գործելու հրամայականը հարկադրեց այս միություններին միավորվել և ստեղծել Հյուսիսային Ամերիկայի հայ ավետարանական միությունը, որը ներառում է ինչպես ԱՄՆ, այնպես էլ Կանադայի տարածքում գործող Հայ Ավետարանական եկեղեցիները:

Հյուսիսային Ամերիկայի Հայ ավետարանական միության կենտրոնը գտնվում է Գլենդեյլում, հովիվն է (գործադիր տնօրենը) Հովսեփ Մաթոսյանը: Վերջինս այս պաշտոնում ընտրվել է 2004թ., իսկ 2008թ. վերընտրվել չորս տարի ժամկետով¹: Հյուսիսային Ամերիկայի հայ ավետարանական միությունը կարևոր նշանակություն ունի մայրցամաքի հայ ավետարանականներին համախմբելու և նրանց բնականոն կենսագործունեությունն ապահովելու գործում:

¹ Տե՛ր Մարգհսեան-Գրիգորեան Ն., Հայ ավետարանական համայնք. Հյուսիսային Ամերիկայի Հայ Ավետարանական միության գործունեությունը
http://www.chanitz.org/2008/12/blog-post_18.html

ԱՄՆ հայ բողոքական համայնքը

ԱՄՆ տարածքում հայերը սկսել են հաստատվել 17-րդ դարից, իսկ ԱՄՆ հայկական համայնքը ձևավորվել է 1870-ական թթ. վերջերին: Այնուհետև այն զգալիորեն ստվարացել է Օսմանյան կայսրությունում համիդյան կոտորածների, ապա՝ Ցեղասպանության հետևանքով: Այժմ ԱՄՆ-ում բնակվող հայերի թիվը հասնում է մոտ 1 մլն 270 հազարի¹, որոնց մեջ հայ ավետարանականների թիվը մոտ 25 հազար է²: Սակայն նրանց դերը ԱՄՆ հայ համայնքի կյանքում շատ մեծ է թվաքանակի համեմատ: «Փոքր, բայց ուժեղ - Հայկական բողոքական համայնք» հայ բողոքականների համայնքը, համաձայն տարածված կարծիքի, համարվում է ԱՄՆ սփյուռքի ամենահին և աչքի ընկնող մասերից մեկը³: Այս ձևակերպումը բնութագրում է ԱՄՆ հայ բողոքական համայնքի արժեքը, կատարած դերը և ունեցած ներուժը: ԱՄՆ հայ բողոքականներն ԱՄՆ հայ համայնքի անբաժանելի մասն են: Հայ Ավետարանական եկեղեցիներն ԱՄՆ-ում ունեն կարևոր կազմակերպչական նշանակություն երկրում հայ համայնքի բնականոն գործունեության կազմակերպման, հայկական տարատեսակ քաղաքակրթական գործունեության հանդես գալու առումով: Եկեղեցական կառույցների, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, հայրենակցական միությունների, զանազան ընկերակցությունների ու միությունների և այլոց թվում Հայ Ավետարանական եկեղեցին ուրույն և անփոխարինելի տեղ է զբաղեցնում:

ԱՄՆ-ում հայ ավետարանականները հաստատվել են 19-րդ դարում, 20-րդ դարի սկզբին կազմակերպել են իրենց առաջին միությունները: Մկսած այդ ժամանակներից՝ նրանք կարևոր դերակատարում են ունեցել ԱՄՆ հայ համայնքի կյանքում: ԱՄՆ-ում հայ ավետարանականները ծավալել են եկեղեցական, կրթական, մշակութային, ընկերային, հասարակական բուռն գործունեություն: ԱՄՆ Հայ Ավետարանական եկեղեցու կառույցը բաղկացած է եկեղեցիներից, միսիոներական, եկեղեցական ընկերություններից և այլ կազմակերպություններից:

¹ Մայիսյան Մ., Հայերն աշխարհում, Երևան, 2007, էջ 94:

² Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 47; Հայերն աշխարհում, հանրագիտական համառոտ բառարան, Երևան, 1995, էջ 21:

³ Մասունյան Հ., Ամերիկահայ կառույցներ, «Ազգ», 23.12.2006
<http://www.azg.am/AM/2006122325>

Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից հրատարակվող *AMAA Directory 2010: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide*-ի տվյալների համաձայն, այսօր ԱՄՆ-ում գործում են 26 Հայ Ավետարանական եկեղեցիներ, որոնցից 14-ը՝ Կալիֆորնիայի նահանգում: Հայ Ավետարանական եկեղեցիների թվով երկրորդ տեղում Մասաչուսեթսի նահանգն է, որտեղ գործում է 3 Հայ Ավետարանական եկեղեցի: Նյու Յորքի նահանգում կա 2 Ավետարանական եկեղեցի: Բլինտյսի, Միչիգանի, Նյու Ջերսիի, Նևադայի, Նյու Հեմփշիրի, Փենսիլվանիայի, Ռոդ Այլենդի, Յուտայի նահանգներում գործում են մեկական Հայ Ավետարանական եկեղեցիներ: Բացի Հայ Ավետարանական եկեղեցիներից, գործում են նաև հինգ Հայ ավետարանական եղբայրություններ (ընկերակցություններ)¹:

Բարեգործական և կրթական ակտիվ գործունեություն է ծավալում 1918թ. հունիսի 7-ին Մասաչուսեթս նահանգի Ուստր քաղաքում ստեղծված Հայ Ավետարանական եկեղեցիների ավետարանչական գործունեության կազմակերպիչ գործադիր մարմինը՝ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերությունը (ՀԱԸ): ՀԱԸ-ն մասնաձյուղեր և գրասենյակներ ունի աշխարհի մոտ 20 երկրում, այդ թվում՝ ՀՀ-ում (1991 թվականից) և ԼՂՀ-ում (1995-ից): ՀԱԸ-ն ծրագրերը ՀՀ-ում և Արցախում իրականացնում է Ֆրանսիայի «Հույս Հայաստանի համար» կազմակերպության հետ համատեղ: Ծրագրերն ունեն երկու ուղղվածություն՝ բարեգործական և կրթական: ՀԱԸ կարևոր խնդիրներից են 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժից տուժած շրջանների վերականգնմանն աջակցելը, զոհված ազատամարտիկների և ծնողազուրկ երեխաների խնամակալությունը, աճող սերնդի քրիստոնեական դաստիարակությունը, բժշկական ծառայություններ մատուցելը, ինչպես նաև գյուղատնտեսության, շինարարության, կրթության բնագավառներում հայկական երկու պետություններին աջակցելը²: «Մասնագետներից շատերն են համաձայն, որ իր երկար պատմության շնորհիվ այս խմբավորումն ունի ֆինանսական հզոր բազա և բարձր մակարդակի արհեստավարժ աշխատողներ Մ. Նահանգներում»³:

¹ AMAA Directory 2010: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, p. 17-19. <http://www.amaa.org/Directory%20for%20website.pdf>

² Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 703:

³ *Մասունցան Հ.*, Ամերիկահայ կառույցներ, «Ազգ», 23.12.2006 <http://www.azg.am/AM/2006122325>

Օրինաչափ կարելի է համարել այն հանգամանքը, որ Նյու Ջերսիում է գտնվում Հայ Ավետարանական եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը: Մա վկայում է այն մասին, որ ԱՄՆ հայ բողոքական համայնքը կարևոր տեղ է զբաղեցնում հայ բողոքական իրականության մեջ: Խորհուրդն ունի գործադիր մարմին, որի հրավիրած ժողովներին մասնակցում են Հայ ավետարանական հինգ միությունների (Մերձավոր Արևելք, Ֆրանսիա, Եվրասիա, Հայաստան, Հյուսիսային Ամերիկա), Հայ ավետարանչական ընկերակցության ներկայացուցիչները: Ժողովների ընթացքում քննարկվում են Հայ Ավետարանական եկեղեցիների գործունեությանը, հայապահպանությանը վերաբերող հարցեր: Ժողովի ընթացքում խորհուրդն ընտրում է դիվանի կազմը՝ նախագահ, փոխնախագահ, քարտուղար, գանձապահ և գործադիր տնօրեն¹:

Հայ Ավետարանական եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը ևս ձգտում է բնականոն հարաբերություններ հաստատել և ակտիվորեն համագործակցել ինչպես Հայ Առաքելական եկեղեցու, այնպես էլ Հայաստանի Հանրապետության հետ: Սրա հաստատումն է 2001թ. օգոստոսին տեղի ունեցած Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի գործադիր հանձնախմբի ժողովի անցկացումը Հայաստանում: Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի հատուկ պատվիրակությունն այցելեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ին՝ ավելի մերձեցնելու Մայր եկեղեցու և Հայ Ավետարանական եկեղեցու փոխհարաբերությունները, իսկ խորհրդի կազմի և ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի հանդիպման ընթացքում շոշափվեցին հարցեր արտագաղթի և ժողովրդի սոցիալական դժվարին կացության վերաբերյալ²:

Անփոխարինելի նշանակություն ունեն ԱՄՆ հայ ավետարանականների կապերը Հայաստանի հետ: Այս համագործակցությունը նպաստում է ինչպես հայ ավետարանականների և հայ առաքելականների փոխգործակցությանը, այնպես էլ Հայաստան-Միյուռք կապերի ամրապնդմանը: Այս առումով հատկանշական է ԱՄՆ Հայ ավետա-

¹Հայ Ավետարանական եկեղեցիների Համաշխարհային խորհրդի գործադիր մարմնի հերթական ժողովը (17 հոկտեմբեր 2008)
<http://www.azad-hye.net/media/rl/armenian-evangelical-world-council.htm>

²Բաղայյան Մ., Հայ ավետարանական համաշխարհային խորհուրդը Հայաստանում, «Ազգ», 25.08.2001 - <http://www.azg.am/AM/2001082516>

րանական համայնքի ներկայացուցիչների համագործակցությունը ՀՀ Սփյուռքի նախարարության հետ: Այս համագործակցության շրջանակներում կարևորվում է ՀՀ-ԼՂՀ-Սփյուռք կապերն ամրապնդելուն ուղղված միասնական գործողությունների իրականացումը: ԱՄՆ-ում գործող հայ բողոքական համայնքի առջև ծառայած խնդիրները, անշուշտ, ունենալով դավանանքային ուրույն երանգավորում, կազմում են բովանդակ Սփյուռքի և համայն Հայության հիմնախնդիրների բաղկացուցիչ մասը:

ԱՄՆ հայ ավետարանականներն անմասն չեն մնում այդ երկրում, ինչպես նաև ամբողջ աշխարհում կատարվող իրադարձություններից: Վերջինիս ապացույց պետք է համարել Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից Հաիթիի երկրաշարժից տուժածներին օգնության ցուցաբերումը¹: Սա վկայում է ԱՄՆ հայ ավետարանականների քրիստոնեական, մարդասիրական արժեքներով առաջնորդվելու մասին: Այսպիսով, կարելի է նշել, որ ԱՄՆ Հայ ավետարանականների ծավալած գործունեությունը չի սահմանափակվում միայն հայ իրականությամբ և հնարավորություն է տալիս ԱՄՆ հայ բողոքականներին մաս կազմելու բողոքական քաղաքակրթական համակարգին: Այս համատեքստում հարկ է կարևորել համաշխարհային և ազգային արժեքների համադրումը և փոխլրացումը: Մրաշնորհիվ հզորանում է հայ բողոքականների գործընդհանուր հայկական քաղաքակրթությունում, ինչն իր հերթին նպաստում է հայկական գործընդհանուր ամրապնդմանն աշխարհում:

ԱՄՆ հայ ավետարանական համայնքի կյանքում կարևոր դերակատարություն ունեն հայ ավետարանական կրթական հաստատությունները:

Շառլոթ և Էլիզ Մերտինյան հայ ավետարանական ամենօրյա վարժարանը հիմնվել է 1982թ. Շերման Օքսում՝ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության, Հյուսիսային Ամերիկայի հայ ավետարանական միության նախաձեռնությամբ և հովանավորությամբ: Ունի մանկապարտեզ, տարրական և միջին բաժիններ, երգչախումբ, մարզական խմբեր: Ուսուցանվում են հայոց լեզու, պատմություն, կրոն, երաժշտություն, արվեստ: Աշակերտների թիվը՝ մոտ 250: Հրատա-

¹ Armenian Evangelicals praised for Haiti relief efforts
<http://www.reporter.am/go/article/2010-03-02-armenian-evangelicals-praised-for-haiti-relief-efforts>

րակում է «Շողեր և հեռանկարներ» տարեգիրքը: Տնօրենն է Հովսեփ Ինճեճիկյանը: Իսկ Սահակ-Մեսրոպ Հայկական Քրիստոնեական դպրոցը գտնվում է Ալտադենայում: Դպրոցի տնօրենն է Շահե Գարաբեդյանը: Կրթական բարձր մակարդակի կողքին առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հայեցի և քրիստոնեական դաստիարակությանը:

20-րդ դարի սկզբից հայ ավետարանականներն ԱՄՆ-ում ունեն իրենց պարբերական մամուլը: Հենց այս շրջանում հայ ավետարանական մամուլի ի հայտ գալը ԱՄՆ-ում պայմանավորված էր այս երկրում Հայ ավետարանական համայնքի ուժեղացման, կազմակերպչական կառույցների ձևավորման հետ:

ԱՄՆ հայ ավետարանականները հրատարակել են «Կոչնակ» (1900-1960թթ., Բոստոն, Նյու Յորք), «Ջանասեր» (1916-1923թթ.), «Ավետագիր» (1945-1947թթ., Նյու Յորք) հանդեսները: Ներկայում լույս են տեսնում Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության «Լրաբեր» (1965 թվականից, Նյու Ջերսի) ամսագիրը, Հյուսիսային Ամերիկայի Հայ Ավետարանական միության «Forum» (1975 թվականից) և «Ձեռք մեր հանապազօրդ», «AMAA» (*Armenian Missionary Association of America*) պարբերականները¹:

Կանադայի հայ բողոքական համայնքը

Կանադայում հայերը բնակություն են հաստատել 19-րդ դարի վերջին: Սակայն Կանադայի հայ համայնքը ձևավորվել է 1950-ական թթ.: Ներկայում Կանադայում ապրում է շուրջ 81,5 հազար հայ²:

Կանադայի հայ համայնքի մաս են կազմում նաև հայ բողոքականները: Նրանց կազմակերպչական միավորներն են Հայ Ավետարանական չորս եկեղեցիները և Կանադայի Հայկական միսիոներական ստոցիացիան: Այստեղ Հայ Ավետարանական եկեղեցին, մեծաթիվ հետևորդներ չունենալով հանդերձ, այս պետության հայ համայնքի կարևոր կառույցներից է:

Այստեղ ևս հայ ավետարանականներն անմասն չեն մնում հայ համայնքի կյանքին մասնակցելուց, և այս առումով դավանանքային

¹ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 50-51:

² Կանադայի հայ համայնքը

<http://hayernaysor.am/newsday.php?p=0&c=0&t=0&r=0&year=2009&month=10&day=07&shownews=3812&LangID=4#3812>

յուրահատկությունները լուրջ խոչընդոտ չեն հանդիսանում: Ընդհակառակը, Կանադայի հայ ավետարանական համայնքում արդիական են հայկական մշակութային, հասարակական-քաղաքական, ընկերային, կրթական այն նույն խնդիրները, ինչ Կանադայի մնացյալ հայության համար:

Կանադայի հայ ավետարանականության շրջանում արդիական են Հայության առջև ծառայած ազգային խնդիրները: Ասվածի օրինակ է 2005թ. հունիսի 10-ին Տորոնտոյում Ջորյան ինստիտուտի կազմակերպած «Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցության ու Հայաստանի հետ նրա հետագա հարաբերությունների մասին» պրոֆ. Ստեփան Աստուրյանի դասախոսությունը, որին օժանդակել է Հայ Ավետարանական եկեղեցին¹:

Սա վկայում է այն մասին, որ Կանադայի հայ համայնքում հոգևոր-ընկերային գործունեություն ծավալելուց զատ Հայ Ավետարանական եկեղեցին բարձրաձայնում է հայոց ազգային հիմնահարցերը: Այս հանգամանքը կարևորվում է Հայության մյուս շերտերի հետ համատեղ հայ բողոքականների միասնական կենսագործունեություն ծավալելու համատեքստում:

1960թ. Տորոնտոյում հիմնադրվեց Հայ Ավետարանական եկեղեցին, որի ղեկավարն է վերապատվելի Մամվել Ալբարյանը: Մոնրեալում գործում են Հայ Ավետարանական երկու եկեղեցիներ՝ Հայ Ավետարանական եկեղեցին և Առաջին Հայ Ավետարանական եկեղեցին: Վերջինի ղեկավարն է վերապատվելի Գեորգիս Դաբբոն, իսկ Հայ Ավետարանական եկեղեցունը՝ Ջոն Զարաֆյանը: 1979թ. Քեմբրիջում հիմնադրվեց Հայ Ավետարանական եկեղեցին: Սա Կանադայի չորրորդ Հայ Ավետարանական եկեղեցին էր, որն այժմ ղեկավարում է վերապատվելի Հովհաննես Մարմազյանը: Բացի այս չորս եկեղեցիներից, Կանադայում գործում է ևս մի կարևոր հայ ավետարանական կառույց՝ Կանադայի Հայկական միսիոներական ասոցիացիան: Այն կարևոր դերակատարություն ունի Կանադայի Հայ Ավետարանական համայնքի կազմակերպչական խնդիրների լուծման, ընկերային-հասարակական, եկեղեցական, մշակութային կյանքի կազմակերպման մեջ: Կանադայի

¹ Շուրիկյան Հ., «Եվրոպական հանրաքվեները և հայ-թուրքական հարաբերությունները», «Ազգ», 06.07.2005 - <http://www.azg.am/AM/2005070601>

Հայկական միսիոներական ասոցիացիայի նախագահին է Դավիթ Թոռունյանը, իսկ գործադիր տնօրենը՝ Միհրան Ջիզմեջյանը¹:

Կանադայում հայ ավետարանականները ծավալում են նաև հրատարակչական գործունեություն: 1981 թվականից Մոնրեալի Հայ Ավետարանական եկեղեցին հրատարակում է «Լուսարձակ» եռամյա հանդեսը, որտեղ տպագրվում են տեղական և միջազգային կրոնական, նաև հայկական մշակութային նորություններ²:

Այսպիսով, ԱՄՆ և Կանադայի Հայ բողոքական համայնքները կազմում են նշված պետությունների հայության անբաժան մասը: ԱՄՆ-ում և Կանադայում գործում են հայ ավետարանական մի շարք եկեղեցիներ, միսիոներական կազմակերպություններ, պարբերականներ: Հայ ավետարանական զանազան կազմակերպությունների բնականոն գործունեությունը համակարգում է Հյուսիսային Ամերիկայի հայ ավետարանական միությունը: Հայ բողոքականները, ունենալով բազմաթիվ առանձնահատկություններ, այնուամենայնիվ, ակտիվորեն մասնակցում են տեղի հայության կյանքին: Նրանց գործունեությունը հաճախ դուրս է գալիս ներհամայնքային շրջանակներից և ընդգրկում բովանդակ Հայության սահմանները: Նրանք մեծ դեր են կատարում ԱՄՆ և Կանադայի հայ համայնքների եկեղեցական, ազգային, հասարակական, ընկերային, մշակութային կյանքի կազմակերպման ամենատարբեր բնագավառներում:

¹ AMAA Directory 2010: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, p. 9. <http://www.amaa.org/Directory%20for%20website.pdf>

² Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 341:

ԱՄՆ և Կանադայի հայ կաթոլիկ համայնքները

ԱՄՆ հայ կաթոլիկները

Ներկայումս ԱՄՆ մեկ միլիոնից ավելի հայության մաս են կազմում նաև երեսունհինգ հազար հայ կաթոլիկները: 19-րդ դարի սկզբին աշխատանք փնտրելու նպատակով Արևմտյան Հայաստանից ԱՄՆ է գաղթել Օսմանյան կայսրությունում ապրող հայ կաթոլիկների մի հատված՝ հիմնականում Էրզրումի գյուղերից, Կ.Պոլսից, Մարդինից և այլ վայրերից: Նույն դարի վերջին այստեղ են հաստատվում նաև համիդյան ջարդերից մազապուրծ հայերը, որոնք կենտրոնանում են մի շարք քաղաքներում, մասնավորապես՝ Նյու Յորքում: 1896թ. հայ կաթոլիկներին քահանայելու նպատակով Ազարյան պատրիարքի պահանջով այստեղ է ուղարկվում Հայ կաթոլիկ քահանա Մկրյանը, որը հետագայում կազմակերպեց նաև Ցեղասպանության տարիներին Ամերիկայում ապաստանած և ցիրուցան եղած հայ կաթոլիկների համայնքը:

Սակայն Նյու Յորքը միակ քաղաքը չէր, որտեղ կային հայ կաթոլիկներ. մշակութային և հասարակական կյանքը կազմակերպելու նպատակով ստեղծվեցին ևս մի քանի համայնքներ՝ Նյու Ջերսիում, Բոստոնում, Լոս Անջելեսում, Դեթրոյթում, Կալիֆորնիայում: Այս կարևոր նախաձեռնությունը, չնայած կրթական հաստատությունների և սեփական եկեղեցու բացակայությանը, որքան հնարավոր է կասեցրեց հետագայում մեծ չափերի հասնող ձուլման գործընթացը:

Կրթական հաստատություններ հիմնվեցին այն քաղաքներում, որտեղ հայ կաթոլիկները մեծամասնություն էին կազմում: Ֆիլադելֆիայում և Բոստոնում հիմնվեցին Հայ քույրերի վարժարանները, որտեղ կրթվում էին հարյուրավոր երեխաներ: Հետագայում նույն վար-

Ժարանին պատկանող մի հաստատություն էլ սկսում է գործել Լուս Անջելեսում: Հայապահպանության խնդիրներով մտահոգ էր նաև Միսիթարյան միաբանությունը, որի նպատակաուղղված ջանքերի շնորհիվ Լուս Անջելեսում հիմնվեց Միսիթարյան վարժարանը:

Համայնքի ներքին կյանքին ավելի կազմակերպված տեսք տալու համար 1981թ. Հայ կաթողիկե Եպիսկոպոսների սինոդի և Հովհաննես Պողոս Բ պապի հաստատումով, հիմնվում է Հյուսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկե Էքզարքությունը:

Նորանշանակ եպիսկոպոս Ներսես Մեթյանը կարողանում է մնայուն կապեր հաստատել ԱՄՆ-ում և Կանադայում ցաքուցրիվ եղած հայ կաթողիկեների հետ: 1983թ. Նյու Յորքում վերջնականապես հաստատվում է հայ կաթողիկեների արքեպիսկոպոսարանը, կարդինալ Թերնս Կուկի կողմից համայնքին տրամադրվում է Մանհեթեն թաղամասի Սբ. Աննա եկեղեցին, որը հետագայում վերանորոգվեց տեղի հայ բարերարների կողմից:

Ներկայում Սբ. Աննայի ժողովրդապետությունում հաշվվում է շուրջ 200 ընտանիք, թեև Հայ կաթողիկեի տվյալներով՝ մոտ հազարի հասնող ընտանիքներ են բնակվում Նյու Յորքի տարբեր թաղամասերում: Այս ցրիվ վիճակը դժվարացնում է եպիսկոպոսարանի աշխատանքը, քանի որ ֆինանսական պայմանները հնարավորություն չեն տալիս յուրաքանչյուր թաղամասում եկեղեցի կառուցել: Շատերը ստիպված են լինում հաճախել Լատին կամ էլ Հայ Առաքելական եկեղեցի:

Հայ կաթողիկեների առավել մեծ հոսք ԱՄՆ և Կանադա նկատվեց Մերձավոր Արևելքի հայկական գաղթօջախներից՝ Լիբանանից և Սիրիայից, 1970-ական թթ. և հետագա տարիներին: Համայնքներն ստվարացան նաև տնտեսական ճգնաժամի պատճառով Արգենտինայից հեռացած և ԱՄՆ արտագաղթած հայերով: Միևնույն ժամանակ, ԱՄՆ տարածքում հայ կաթողիկեների տեղաշարժերը և նորահաստատ խմբերը ստեղծեցին համայնքներ Սան Ֆրանցիսկոյում, Սան Դիեգոյում, Չիկագոյում, Վաշինգտոնում, Ատլանտայում, Մայամիում և Ինդիանապոլիսում: Առհասարակ, հայ կաթողիկե համայնքների մեծագույն խնդիրը հոգևորականության պակասն է: Նույն խնդիրն ի հայտ է գալիս նաև ԱՄՆ-ում, և վերոհիշյալ քաղաքների հայ կաթողիկեների հոգևոր պահանջները կատարում են մերձակա շրջանների քահանաները, ինչը, բնականաբար, արդյունավետ չէ՝ հաշվի առնելով, որ այցելություններն այդ քաղաքներ մշտական բնույթ չեն կրում:

2005թ., Հոռնի պապ Բենեդիկտոս 16-րդի՝ սեպտեմբերի 12-ի որոշմամբ ԱՄՆ և Կանադայի հայ կաթոլիկ համայնքների (*Armenian Catholic Exarchate of the USA and Canada*) կարգավիճակը բարձրացվեց անկախ թեմի՝ եպարքոթյան: Այն մոտավորապես պետք է սպասարկեր ԱՄՆ 35.000 և Կանադայի 10.000-անոց հայ կաթոլիկ համայնքները: Թեմի առաջնորդ դարձավ Մանուել եպս. Բատիկյանը¹:

Տարբեր քաղաքներում բնակվող հայ կաթոլիկ համայնքների ներկայիս հոգևոր և մշակութային խնդիրները լուսաբանելու, միմյանց իրազեկելու համար անհրաժեշտ համարվեց ստեղծել ամսագրեր: Թվաքանակով խոշոր որոշ համայնքների եկեղեցականներ և աշխարհիկ նվիրատուներ կարողացան հաջողությամբ պսակել այդ գործը: Այսօր ԱՄՆ հայ կաթոլիկների համար հրատարակվում են մեկ տասնյակի հասնող հայերեն և անգլերեն պարբերաթերթեր:

Ամերիկյան սոցիալ-մշակութային արեալում բնակվող հայ կաթոլիկները պարբերաբար հետամուտ են սեփական կազմակերպություններ ստեղծելուն: Ստեղծվել են երիտասարդական և տիկնանց միություններ, գործում են նաև երգչախմբեր և այլ խմբակներ: Այդ երկրում անցկացվող համահայկական նշանակության ցանկացած միջոցառման իրենց մասնակցությունն են բերում նաև հայ կաթոլիկները:

Ուշագրավ է, որ ամերիկահայերի վերաբերյալ ԱՄՆ կառավարության 2004թ. կատարած ուսումնասիրության մեջ նաև տեղ է հատկացվել հայ կաթոլիկներին, որտեղ մասնավորապես նշվում է. «Միացյալ Նահանգներում ապրող հայ կաթոլիկները փոքր մասն են կազմում ամերիկահայ համայնքի (մոտ 35 հազար անդամով): 1990-ականների վերջերին սոցիալ-ժողովրդական կառույցներն ընդարձակելու և ամրապնդելու ջանքերը տվեցին դրական արդյունքներ, և խմբավորումն այժմ առավել լավ է կազմակերպված: Հետամուտ է քաղաքական և սոցիալական բնագավառներում առավելապես պահպանողական արժեքների պահպանմանը, որոնք համապատասխանում են Լիբանանում գտնվող Հայ կաթոլիկների պատրիարքոթյան պահանջներին»²: Ըստ ուսումնասիրության՝ Մ. Նահանգներում գործում են Հայ կաթոլիկների 10 ծխական կենտրոններ, որոնք գտնվում են Նյու Յորքում, Լոս Անջելեսում, Բոստոնում և Նյու Ջերսիում:

¹ Հայ կաթոլիկ եկեղեցու թեմ ԱՄՆ-ում և Կանադայում, «Ազգ», 09.21.05:

² Ամերիկահայ կառույցներ, «Ազգ», 12.23.06:

Կրթական հաստատությունները

Թեմի դաստիարակչական առաքելությունը ստանձնել է 4 դպրոց.

1. Հայ քույրերու վարժարան, Բոստոն: Տնօրենուհի՝ քույր Սեսիլ Քեհեյան: 150 աշակերտ:
2. Հայ քույրերու վարժարան, Ֆիլադելֆիա: Տնօրենուհի՝ քույր Լուիզա Գասարճյան: 188 աշակերտ:
3. Հայ քույրերու վարժարան, Լոս Անջելես: Տնօրենուհի՝ քույր Լուիսա Հայեք: 298 աշակերտ:
4. Մխիթարյան վարժարան, Լոս Անջելես, տնօրեն՝ Հ. Օգոստինոս Վ. Սեքուլյան: 135 աշակերտ: (Այս թվերը վերաբերում են 2004-2005 տարեշրջանին):

Հրատարակությունները

Առաջնորդարանն ունի եռալեզու տարեկան պաշտոնաթերթ՝ «Ջահ»: Գրեթե բոլոր ժողովրդապետություններն ունեն իրենց պարբերաթերթերը:

- «Սրբ. Աննա Աթոռանիստ Եկեղեցվո Պարբերաթերթ», Բրուքլին, Նյու Յորք:
- «Հայ ընտանիք», Բոստոն:
- «Parish News», Ֆիլադելֆիա, ամսաթերթ:
- «Լապտեր», Դեթրոյթ:
- «Վերելք», Գլենդեյլ¹:

Կանադայի հայ կաթոլիկները

Կանադայի հայ կաթոլիկ համայնքը մտնում է Հյուսիսային Ամերիկայի թեմի մեջ և վերջինիս հետ միասնաբար է գործում: Կանադայում հայերի զանգվածային հաստատման շրջանը, իրավամբ, կարելի է համարել 1895-1915 թվականները: Այդ թվականների հայտնի իրադարձություններից հետո Հայ օգնության միության միջոցով այս երկիր տեղափոխվեցին հարյուրավոր որբեր և տեղավորվեցին Օնտարիոյում: Հայ կաթոլիկների փոքրաթիվ առաջին խմբերը Քվեբեքում հաստատվեցին Կանադային սահմանակից ԱՄՆ Փենսիլվանիայի նահանգից: Նրանց մեծ մասը սերում էր Մարդինի հայ կաթոլիկներից, որոնք փորձում էին աշխատանք փնտրել հանքավայրերում:

¹ http://armeniancatholic.com/inside.php?lang=am&page_id=30401

